

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ.
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐ

**INSTITUT OF ORIENTAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC
OF ARMENIA**

**MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF
ARMENIA**

VAHAN BAIBURTIAN

**THE ARMENIAN COMMUNITY OF IRAN
ACTUAL ISSUES**

**The book is recommended for publication by the Scientific
Council of the Institute of Oriental Studies, National
Academy of Sciences, Republic of Armenia**

**YEREVAN
2013**

ՀՏԴ 323
ՊՄԴ 66.3
Բ260

**ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ**

**THIS PUBLICATION IS SPONSORED BY THE MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA**

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ**

Վ. Բայբուրդյան

**Բ260 Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ: Վահան Բայբուրդյան
(պ. գ. դ., պրոֆեսոր) – Եր., Լուսակն, 2013 թ. - 212 էջ**

Գրքում համակողմանի քննության է ենթարկվում Մերձավոր ու Միջին Արևելքի ամենահինագույն հայ համայնքներից մեկի՝ Իրանի հայ համայնքի արդի հիմնախնդիրները, նրանում հայկական կրոնական և աշխարհիկ կառույցների միությունների, կրթական ու մշակութային հաստատությունների, հայապահպանման, ինքնության, իրանական հասարակության մեջ հայերի ինտեգրման, համայնքի ներուժի, համայնքի ու Հայաստանի միջև կապերի, համայնքի հեռանկարների հետ կապված հիմնահարցերը: Լուսաբանվում են իրանահայության նկատմամբ իրանական իշխանությունների և հասարակության վերաբերմունքի հետ կապված խնդիրները, հայ համայնքի ներգրավվածությունը երկրի հասարակական-քաղաքական, մշակութային, տնտեսական կյանքում, ներհամայնքային մտահոգությունները, համայնքում առկա հայ քաղաքական կուսակցությունների առկայությունն ու նրանց գործունեությունը, համայնքի հիմնական գործող ուժերը, հայ կրոնական փոքրամասնության իրավասությունների խնդիրը և բազմապիսի այլ հարցեր: Որոշակի տեղ է հատկացված նաև համայնքի պատմության հարցերին:

Գիրքը հասցեագրված է իրանագետներին և Իրանի հայ համայնքի հարցերով հետաքրքրվողներին, լայն առումով արևելագետներին, հայ սփյուռքի պատմությանը զբաղվողներին, փորձագիտական հանրությանը և ընթերցող լայն շրջանակներին:

ISBN 978-9939-834-53-5

© Վահան Բայբուրդյան
© «Լուսակն» հրատ.

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Իրանի հայ համայնքը Մերձավոր ու Միջին Արևելքի հնագույն, ավանդական և ամենախոշոր ու աչքի ընկնող համայնքներից է: Աշխարհասփյուռ հայ գաղթօջախների մեջ այն բացառիկ է առաջին հերթին նրանով, որ դարերի ընթացքում անխզելի ու սերտ կապերով կապված է եղել Մայր Հայրենիքի, հատկապես, նրա արևելյան հատվածի հետ: Անշուշտ դա պայմանավորված է աշխարհագրական այն իրողությամբ, որ Իրանը հանդիսացել է պատմական Հայաստանի անմիջական սահմանակից երկիր և երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և իրանցիների միջև շփումները կրել են անընդմեջ ու մշտական բնույթ:

Իրանահայ համայնքի բացառիկությունը կայանում է նաև նրանում, որ եթե Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հայ համայնքները հիմնականում ձևավորվել կամ վերակազմավորվել են նոր և նորագույն ժամանակներում, հատկապես հայոց ցեղասպանությունից և Արևմտյան Հայաստանի հայաթափումից հետո, Իրանի հայ համայնքը գոյություն է ունեցել խորը հնությունից սկսած, աչքի ընկնելով որպես կատարելապես ձևավորված ու հաստատուն մի համայնք: Ուստի անվարան կարելի է ասել, որ այն իրավունք ունի կոչվելու Սփյուռքի մայր համայնք:

Անժխտելի իրողություն է, որ ուշ միջնադարում իրանահայ համայնքը հայ ժողովրդի կյանքում ունեցել է պատմական առաքելություն: Երբ XVII դարի հենց արշալույսին իրանական շահ Աբբաս Ա-ն Արևելյան Հայաստանից, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի մի շարք երկրամասերից ավելի քան երեք հարյուր հազար հայերի բռնի տարագրեց Իրան, ամբողջովին հայաթափ անելով Հայաստանի արևելյան հատվածը, Իրանում կուտակվեց հայ բնակչության հսկայական զանգված, ձևավորելով կուռ կառույցներ ունեցող մի համայնք, որն իր կազմակերպվածությամբ ու հայ ժողովրդի կյանքում խաղացած դերով թերևս բացառիկ է ողջ մերձավորարևելյան տարածաշրջանում: Հայության այդ աննախադեպ բռնագաղթը իր անջնջելի դրոշմն է թողել

հայ ժողովրդի ողջ հետագա պատմական ճակատագրի վրա: Այդ եղերական իրադարձությունից հետո հետագա երկու հարյուրամյակների ընթացքում Արևելյան Հայաստանում բազմացել ու արմատներ էին նետել թյուրքալեզու բազմաթիվ վաչկատուն ու կիսաքոչվոր ցեղեր: Հայաստանի արևելյան հատվածի կենսունակությանը հասցվել էր մեծագույն հարված, արիեստականորեն կասեցնելով նրա զարգացումը: Ընդհատվել էր հայրենի հողի վրա հայ ժողովրդի համախմբման ու կոնսոլիդացման գործընթացը: Նման պայմաններում, երբ բուն Հայաստանում տիրապետող էր համատարած ավերը, տնտեսական քայքայումն ու մտավոր աղքատացումը, Իրանի հայ գաղթօջախները, և նրանց մեջ առաջին հերթին Նոր Զուղան, դարձան տնտեսական ծաղկման, մշակութային վերելքի և մտավոր վերածնության կղզյակներ: Հիրավի, ողջ XVII դարի ընթացքում հայ ժողովրդի պատմության երկնականարում Նոր Զուղայի գաղթօջախը փայլել է անզուգական փայլով: Ընդհուպ մինչև պատմության նոր դարաշրջանի արշալույսը, այն եղել է գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնը, հայության քաղաքական, գաղափարական, գիտական ու մշակութային ամենանշանավոր օջախը: Առանց չափազանցության կարելի է ասել, որ նա է եղել համայն հայության կյանքի ուղենիշ աստղը, նա է տոն ու ընթացք տվել համահայկական նշանակություն ունեցող գրեթե բոլոր երևույթներին:

Իրանահայ համայնքի բացառիկությունը կայանում է նաև նրանում, որ այն իր գոյությամբ ծնունդ է տվել մի շարք հայ նոր գաղութների ու գաղթօջախների: Հանրահայտ իրողություն է, որ XVII-XVIII դարերում Հնդկաստանում, Հարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի մի շարք երկրներում ձևավորված հայ համայնքները ըստ էության հանդիսացել են իրանահայ գաղթօջախների, մասնավորապես Նոր Զուղայի, շարունակությունը: Այդ գաղութներն ու գաղթօջախները կյանքի են կոչվել միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականների կողմից, որոնց հիմնադրած առևտրական կայանների հիմքի վրա նշված երկրներում ծնունդ են առել մեծ ու փոքր հայ գաղութներ ու գաղթօջախներ: Սփյուռքի մնացած բոլոր գաղթօջախների հետ համեմատած

իրանահայ համայնքն ունի տարբերակիչ մեկ այլ հատկանիշ ևս. դա այն է, որ այդ համայնքի գործածական լեզուն արևելահայերենն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական լեզուն: Բացի այդ, նշված համայնքի բնակչության հոգեկերտվածքը, աշխարհըմբռնումը և մտածելակերպի շատ առանձնահատկություններ ևս հար և նման է արևելահայության նույնատիպ հատկանիշներին: Դարերի ընթացքում ապրելով բուն հայրենիքի սահմաններից դուրս, Իրանի հայ համայնքը հանդիսացել է արևելահայ լեզվի, մշակույթի և հարուստ ավանդույթների պահպանման, զարգացման և հարստացման բացառիկ կարևոր օջախներից մեկը:

Իրանահայ համայնքի բացառիկ կարևոր դերը հայ ժողովրդի կյանքում չի սահմանափակվում նշված իրողություններով: Օրինակ, չափազանց մեծ է եղել այդ համայնքի դերը բռնագաղթի հետևանքով հայաթափ եղած Արևելյան Հայաստանում հայահավաքի և հայության համախմբման ու կոնսոլիդացման գործում:

1828 թ. կնքված ռուս-իրանական Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածով բուն Իրանի տարածքում ապրող հայությանը իրավունք տրվեց ցանկության դեպքում, իրենց ընտանիքներով վերադառնալ նախնիների բնօրրանը՝ Արևելյան Հայաստան: Ըստ այնմ, սկսվեց հայ բնակչության զանգվածային ներգաղթ հայրենիք, որի հետևանքով Երևանի և Նախիջևանի նահանգներ տեղափոխվեց շուրջ 45 հազար հայ բնակչություն: Նրանց մեծ մասը դիմեց այդ քայլին, քանի որ նրանց մեջ դարերի ընթացքում չէր մեռել հայրենիքի կարոտը:

1828-1830 թվականներին տեղի ունեցած իրանահայության գաղթը նշանավոր է նրանով, որ դա հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ներգաղթն էր և առաջին հայահավաքը, որը կոչված էր նոր շունչ ու կենսունակություն հաղորդել Մայր Հայրենիքի արևելյան հատվածին: Հետագայում, շնորհիվ այդ ներգաղթի, ինչպես նաև ռուս-թուրքական պատերազմի հետևանքով 1829 թ. կնքված Ադրիանապոլսի պայմանագրի համապատասխան դրույթի, որով արևմտահայերին նույնպես արտոնվում էր ներգաղթել Ռուսաստանի հսկողության տակ անցած Արևելյան Հայաստան, Հայաստանի արևելյան

հատվածը դարձավ հայ ժողովրդի քաղաքական համախմբման օջախ: Հետագայում նաև այդ ներգաղթած արևելահայերի ու արևմտահայերի սերունդների հերոսական ջանքերի շնորհիվ էր, որ ծնունդ առավ 600 տարի առաջ կորսված հայոց պետականությունը՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Իրանահայ համայնքը մեր ժողովրդի անքակտելի մասն է կազմում: Այդ համայնքի գոյությունը վառ վկայությունն է այն իրողության, որ իրենց պատմական զարգացման ճանապարհին հաղորդակից լինելով տարբեր ժողովուրդների հետ և ճակատագրի ու պատմական գանազան վայրիվերումների ու արհավիրքների բերումով հարկադրված լինելով ապրել հայրենիքից հեռու ու մոտ օտար երկրներում, հայերը մշտապես պայքարել են իրենց ազգային դիմագիծն ու ինքնությունը անաղարտ կերպով պահպանելու համար: Ավելին, դրսևորելով ճկունություն, բնածին աշխատասիրություն և նվիրվածություն իրենց լեզվին, կրոնին և դարավոր ավանդույթներին, հայերը միաժամանակ հախուռն թափով մասնակցել են գաղափարների խաչաձևման, հոգևոր-մշակութային արժեքների կերտման և քաղաքակրթությունների մշակման գործին: Հիրավի, աշխարհասփյուռ հայությունը իրեն հյուրընկալած և ասպնջական վերաբերմունք դրսևորած ոչ մի երկրում երբեք չի հանդիսացել տվյալ երկրի պատմական զարգացման պասիվ և կրավորական դիտորդ: Նրան միշտ բնորոշ է եղել հարաշարժությունը, ստեղծագործ ոգին, բնական ձգտումը դեպի լույսն ու առաջադիմությունը: Իզուր չէ, որ նույնիսկ օտարները հայ ժողովրդին համարել են Առաջավոր Ասիայի և Կովկասի քաղաքակրթությունների շարժիչը: Ոչ ոք չի կարող ժխտել այն հանրահայտ իրողությունը, որ չափազանց մեծ է եղել նաև իրանահայության դերը Իրանի արդիականացման ու եվրոպականացման գործում: Անկասկած դրանում իրենց որոշակի լուծման են ներդրել նաև պարսկական պետական, հասարակական-քաղաքական և զինվորական ծառայության մեջ գտնված հայ բազմաթիվ գործիչներ, որոնց մի մասը իրերի բերումով, դավանափոխ լինելով և ընդունելով իսլամը, անմիջական մասնակցություն չի ունեցել իրանահայերի համայնքային կյանքին:

Սակայն չի կարելի այդ գործիչներին կտրել մեր պատմությունից, առավել ևս, որ նրանցից շատերը զուրկ չեն եղել ազգային զգացումից և փորձել են պահպանել իրենց ազգային դիմագիծն ու նկարագիրը և օգտակար լինել սեփական ժողովրդին:

Իրանահայությունը միշտ էլ հանդես է եկել որպես իր միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ: Ժամանակակից պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին հատուկ շեշտում է այն իրողությունը, որ հայերն Իրանում թեև մահմեդական բնակչության ծովում կազմում էին չնչին փոքրամասնություն, սակայն չնայած դրան, անչափ մեծ ավանդ, դերակատարություն ու ներդրում են ունեցել Իրանի հասարակական զարգացման, մշակութային առաջընթացի և առհասարակ ինտելեկտուալ ու քաղաքական կյանքի բնագավառում: Առաջին հայացքից այդ անհասկանալի երևույթը պարսիկ հետազոտողը անվանում է արտառոց և պարադոքսալին: Սակայն ընդհանուր գծերով հենց ինքն էլ ցույց է տալիս, որ դրա մեջ ոչ մի արտառոց բան չկա, որ իսկապես բացառիկ մեծ է հայերի դերը Իրանում ժամանակակից եվրոպական քաղաքական ու սոցիալական գաղափարների ու դոկտրինների տարածման, եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումները և տեխնոլոգիական նվաճումները Իրանի հողում արմատավորելու, գիտությունն ու մշակույթը զարգացնելու, իրանական քաղաքական կուլտուրայի ձևավորմանը նպաստելու գործում և այլն: Չաքերին գտնում է, որ իրանահայության ներգրավվածության մասշտաբները Իրանի քաղաքական կյանքում ուղղակի զարմանք են առաջացնում: Ընդ որում, անկախ նրանից, թե այդ հայերը ծնվել են բուն Իրանում, թե նրա սահմաններից դուրս:

Չաքերին նաև վճռականորեն մերժում է ավանդապաշտ գաղափարներով տարված իրանցիների, իր իսկ արտահայտությամբ «պարսկա-իսլամական մտավորականության» այն տեսակետը, որ քրիստոնյաները երբեք չեն կարող լինել իսկական իրանցիներ, որ նրանք հանդիսանում են մի տեսակ արտերկրացի խորթ տարր իրանական հասարակության մեջ: Նա հանգում է այն եզրակացության, որ իրանահայերի քաղաքական ակտիվության կարևորագույն շար-

ժառիթը այն էր, որ նրանք հայրենասիրական կապվածությամբ կապված են եղել այն երկրի հետ, որը նրանք համարել են իրենց հայրենի տունը կամ երկրորդ հայրենիքը¹: Հիրավի գիտակցելով իրենց քաղաքացիական պարտավորությունները՝ իրանահայերը՝ Իրանի ողջ պատմության ընթացքում եղել են իրանական ժողովրդի կողքին:

Իրանում հայերը մշտապես մասնակից են եղել այդ երկրի տնտեսական, հասարակական և մշակութային զարգացումներին, իսկ իրանական ժողովուրդը երբեք նրանց չի դիտել որպես երկրի համար օտար և խորթ տարր: Ընդհակառակը, հայերին հատկացրել է իրավունքներ ու արտոնություններ կազմակերպելու իրենց ազգային կյանքը, ազատորեն դավանելու սեփական կրոնը, կառուցելու եկեղեցիներ ու աղոթատեղիներ, սովորելու մայրենի լեզուն, զարգացնելու ազգային մշակույթը: Մեկ պետության տարածքում համատեղ կյանքը մշակել էր մահմեդականների ու այլադավանների միջև հարաբերությունների որոշակի նորմեր, որոնք պահպանվում էին և՛ իշխանությունների և՛ բնակչության կողմից: Օրենսդրական կարգով հայերը վերցվել էին պետության հովանավորության տակ և ձեռք բերել «հավատարիմ ժողովրդի» կարգավիճակ: Հայերի իրավական դրությունը ապահովված էր ոչ միայն շահական հրովարտակներով, իսկ ավելի ուշ շրջանում նաև օրենսդրական նորմերով, այլև երկրի ավանդությունների և սովորույթների ուժով:

Շնորհիվ իրանական ժողովրդի հյուրընկալ վերաբերմունքի, քաղաքական լայնախոհության, հանդուրժողականության և օտարատյացության բացակայության, հնարավոր եղավ վերջին չորս հարյուր տարիների ընթացքում Իրանում պահպանել հայկական ինքնությունն ու համայնքային կառույցները: Ճշմարիտ է նաև, որ հայ և իրանական ժողովուրդների միջև մերձեցման պայմաններ էր ստեղծում նաև ինքը՝ իրանահայությունը, իր վերին աստիճանի օրինապահ ըն-

¹ Stéu Chaqueri C., Introduction to the Armenians in Iran: A Historical Persual; The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1998, p. 72.

թացքով, աշխատասիրությամբ և զնահատելի ծառայություններով Իրանի տնտեսական, քաղաքական, հասարակական և կրթական-մշակութային մարզերում:

1991 թ. Հայաստանի անկախության հռչակումը նոր էջ բաց արեց Հայաստանի և Իրանի, այդ երկու հարևան և բարեկամ երկրների և նրանց ժողովուրդների դարավոր տարեգրության մեջ: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման և միջպետական կապերի զարգացման երկու տասնյակ տարիների ճանապարհ անցած Հայաստանը և Իրանը արձանագրել են մեծ նվաճումներ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ բազմապիսի բնագավառներում: Անկասկած այդ գործում զգալի դերակատարություն է ունեցել, ներկայումս էլ ունի նաև Իրանի հայ համայնքը: Հիրավի, իրանահայ մեր հայրենակիցներն արել են ամեն ինչ Հայաստանին սատարելու, դժվարին պահերին նրան օգնության ձեռք մեկնելու, իրենց հայրենիքի հեղինակությունը անշեղորեն բարձրացնելու և դարերի հուլովություն կողք-կողքի ապրած երկու հնագույն ժողովուրդների՝ հայերի և իրանցիների դարավոր բարեկամությունն ամրապնդելու համար:

Իրանահայ համայնքում առկա հիմնախնդիրների՝ ինքնության, հայապահպանության, հայեցի կրթության, հայկական դպրոցների, մշակութային հիմնարկությունների, հայ եկեղեցու, ներհամայնքային խնդիրների, համայնք-պետություն հարաբերությունների, համայնքի անդամների արտագաղթի, իրանական հասարակության հետ ինտեգրման, իրանահայ համայնք-Հայաստան հարաբերությունների, և, վերջապես, համայնքի հեռանկարի հետ կապված հարցերի ուսումնասիրությունն անկասկած ունի ինչպես գիտական, ճանաչողական, այնպես էլ քաղաքական ու գործնական նշանակություն:

Առանց նշված խնդիրների քննության՝ անհնար է ամբողջական պատկերացում կազմել Մերձավոր ու Միջին Արևելքի ամենահնագույն համայնքի և նրանում ընթացող գործընթացների մասին:

Իրանի հայ գաղթօջախների անցյալի պատմությունը հայ գրչի մշակների կողմից բավականաչափ ուսումնասիրված է, մի բան, որ չի կարելի ասել այդ համայնքի ներկա վիճակի ու զարգացումների

մասին: Մինչդեռ այդ խնդիրը խիստ արդիական է և ոչ զուրկ քաղաքական իմաստից, մանավանդ Մերձավոր ու Միջին Արևելքում ընթացող հասարակական-քաղաքական ներկա բարդ և պայթյունավտանգ գործընթացների համատեքստում:

Ինչպես նշված տարածաշրջանի համարյա ամենց բացառության բոլոր հայ համայնքները, այնպես էլ իրանահայ համայնքը, որը դարերի ընթացքում մեր սփյուռքի առավել վառ ազգային հայեցի նկարագիր ունեցող հատվածներից մեկն է եղել, այսօր կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Այդ համայնքին հուզող արդի խնդիրները հիմնականում առնչվում են մեր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ, որոնք իրենց արտացոլումն են գտնում իրանահայ համայնքի առօրյա կյանքի տարբեր ոլորտների վրա:

Սույն հետազոտությունում, որն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության և Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի համատեղ ջանքերով, առաջին անգամ փորձ է արվում ուրվագծել իրանահայ համայնքի ներկա վիճակը և պատկերացում տալ նրանում առկա հիմնախնդիրների մասին, դրանք դիտարկելով համայնքի հեռանկարի համատեքստում:

Նկատի ունենալով, որ սույն աշխատանքը այդ բարդ ու ծավալուն խնդրի ուսումնասիրության բնագավառում կատարվող առաջին փորձն է, մենք չենք բացառում, որ այն կարող է զերծ չլինել թերություններից, փաստական տվյալների որոշ անձշտություններից, կամ տվյալների հնացած լինելուց: Այդ առթիվ մենք հայցում ենք մեր հարգարժան ընթերցողների ներողամտությունը:

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Իրանի Իսլամական Հանրապետությունում
ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան
Վահան Բայրուրյան*

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայերն Իրանում բնակվելու հազարամյակների պատմություն ունեն: Այդ երկու հնդեվրոպական ժողովուրդներին՝ հայերին և իրանցիներին շատ ընդհանուր բան է միավորում: Աղբյուրների վկայությամբ, դեռևս մ. թ. ա. VI դարի առաջին կեսին մարական պետության մեջ (Մարաստան, Մեդիա) եղել է հայ բնակչություն: Հայերի թիվն Իրանում ավելի ստվարացել է մ. թ. ա. 550 թվականից սկսած, երբ մեդական պետության կործանումից հետո ստեղծվել է Աքեմենյան աշխարհակալ պետությունը²: Որպես վասալական պարտավորություն հայերը աքեմենյան արքաներին տրամադրել են զինվորական ստորաբաժանումներ, նրանց մղած պատերազմներին մասնակցելու համար: Այդ ստորաբաժանումներն Իրանի առանձին վայրերում ունեցել են իրենց բանակատեղիները, որոնք և հանդիսացել են հայկական բնակավայրեր: Տեսակետ կա նաև այն մասին, որ Հայաստանի սահմաններից ժամանակավորապես դուրս գտնվող այդ հայկական զորամասերից բացի, Աքեմենյան Իրանում գոյություն են ունեցել նաև առանձին վայրերում ցրված ոչ մեծ հայկական մշտական գաղթօջախներ: Հավանական է, որ դրանց բնակչության մի ստվար զանգվածը հանդիսացել են վաճառականներ, արհեստավորներ և այլն:

Աքեմենյանների շրջանում հայ-իրանական հարաբերությունների վերաբերյալ մենք տեղեկություններ ենք քաղում Դարեհ Ա արքայի Բեհիսթունյան արձանագրությունից, որը բացառիկ կարևոր աղբյուր է հայերի և իրանցիների շփումները հավաստի կերպով լուսաբանելու տեսակետից: Այդ բևառագիր արձանագրությունը առաջին գրավոր հիշատակարանն է, որտեղ խոսվում է հայերի և նրանց «Արմինա» երկրի մասին:

² Տես Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.), Երևան, 1998:

Աբեմենյան պետության համակարգում հայերն ունեցել են առանձնահատուկ արտոնյալ վիճակ, որի պատճառներն առավելապես քաղաքական էին: Որոշակի փաստեր կան, որոնք գալիս են ապացուցելու, որ ամբողջ Հայկական լեռնաշխարհը և Քուր-Արաքսի ավազանում գտնվող տարածությունը մինչև այժմյան Ղարաբաղի և Մուղանի դաշտերը, իսկ քիչ ավելի ուշ նաև Կասպից ծովի ափերը, պարսկական արքունիքը վստահել էր հայ ռազմիկ ցեղապետերին ու սատրապներին, որպեսզի նրանք պահպանեն պետության հյուսիսային սահմանները:

Հայ-իրանական փոխհարաբերություններն առանձնակի սերտ բնույթ ունեին Հայաստանում պարթևական ծագում ունեցող Արշակունիների արքայատոհմի տիրապետության շրջանում (մ. թ. 63-428 թթ.)³:

Հնագույն ժամանակներից սկսած, հայերն Իրանում ապրել են ոչ միայն որպես ժամանակավոր գաղութաբնակներ, կամ վասալական զինվորական պարտականություն կատարող հավաքականություններ, այլև որպես բնիկներ պատմական Պարսկահայքում, որն այդ ժամանակներում հանդիսանում էր Հայաստանի անբաժանելի մասը⁴:

Մ. թ. 226 թ. Իրանում իշխանության գլուխ անցած Սասանյանների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ձեռք էր բերել թշնամական դիմակայության և կոշտ առձակատումների բնույթ, որի պատճառները գլխավորապես կրոնական-քաղաքական էին: Սասանյանների կողմից պարբերաբար կազմակերպվում էին Հայաստանից հայ բնակչության զանգվածային բռնագաղթեր դեպի Իրան⁵: Առաջին տեղեկությունը Սասանյանների Հայաստանից տարած մեծ թվով գերիների մասին հաղորդում է պատմիչ Ագաթանգեղոսը: Նա

³ Տե՛ս Քարամյան Ն., Պարթևները Պարսկաստանում և նրանց հարաբերությունները հայոց հետ, Վաղարշապատ, 1897:

⁴ Տե՛ս Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, Երևան, 1927: Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, Ի Ա, 1964:

⁵ Տե՛ս Նեոլիդեթ Թ., Պատմություն Սասանյան տերության, Վաղարշապատ, 1896: Տե՛ս նաև Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան և ապագան, մասն Ա., Վիեննա, 1911:

հայտնում է, որ Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր թագավորը (226-241 թթ.) հարձակվելով Հայաստանի վրա, մեծ թվով հայերի է գերեվարել դեպի Իրան:

Սասանյանների կազմակերպած հայերի առավել խոշոր բռնագաղթը տեղի է ունեցել IV դարի երկրորդ կեսին՝ Շապուհ Բ արքայի Հայաստան կատարած արշավանքի ժամանակ: Հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների համաձայն, III-IV դարերում Իրան է գաղթեցվել մի քանի հարյուր հազար հայ: VII դարում, երբ Իրանը նվաճվեց արաբների կողմից, գաղթեցված հայ բնակչությունը ընդունելով իսլամը ծուլվել և փոշիացել է:

Իրանում հայկական նոր գաղթօջախներ են ստեղծվել XI դարում գլխավորապես սելջուկների կողմից կազմակերպված բռնի գաղթերի ու գերեվարությունների հետևանքով: Կայուն կերպով հիմնավորվելով Իրանի տարածքում և այնտեղ ստեղծելով կենտրոնացված և ուժեղ պետականություն, սելջուկներն աշխատում էին հնարավորին չափով փոխել այդ երկրի էթնիկական կազմը, միաժամանակ իրենց համար հայթայթելով ձրի աշխատուժ: Պատահական չէ, որ սելջուկները Հայաստանի բնակչությանը քշել տարել են գլխավորապես դեպի Իրան: Հայերի խոշոր գերեվարություն սելջուկները կատարել են 1048 թվականին: Այնուհետև նման գերեվարությունները պարբերաբար կրկնվում են Հայաստանի զույգ հատվածներում⁶:

Այդ բռնագաղթի ու տարագրությունների հետևանքով XI-XII դարերում Իրանի հյուսիսային շրջաններում՝ Մակվում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում, Թավրիզում, Մարաղայում, Մարանդում, Սուլթանիեում, Ղարաղաղում և այլն, ինչպես նաև հարավում (Սպահանի մերձակա շրջաններում) ստեղծվում են հայկական նոր բնակավայրեր և գոյանում են հայ գաղթօջախներ⁷:

Մոնղոլական տիրապետության շրջանում (1220-1385) պարսկահայ գաղթօջախներն էլ ավելի մեծացան, իրենց մեջ ընդունելով գաղթականական նոր հոսանքներ: Հայաստանում մոնղոլների կատա-

⁶ Տե՛ս Բուռնազյան Ս., Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Երևան, 1980:

⁷ Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:

րած ամենամեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236-1237 թթ., որի մասին հանգամանալից ու հավաստի տեղեկություններ է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին⁸:

Պետք է նշել նաև, որ մոնղոլական տիրապետության շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան նաև կամովին, ո՛չ բռնագաղթի ճանապարհով: Հայաստանում ստեղծված ծանր տնտեսական պայմանները, քաղաքական անապահովությունը, անձի և գույքի անվտանգության ապահովման հրամայականը ստիպել են հայերին կամովին լքել հայրենիքը և տեղափոխվել հարևան Իրան և հաստատվել առևտրաշատ և տնտեսապես բարվոք ու աշխույժ կենտրոններում, հատկապես Թավրիզ-երզրում բանուկ առևտրական ճանապարհների հանգուցային կայաններում: Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանից դեպի Իրան հայության այդ հոսքի հետևանքով Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Մարաղայում, Ռեյում, ինչպես նաև Կասպից ծովի հարավային ափերին՝ Ռեշտում և այլ քաղաքներում եղած հայ գաղթօջախների բնակչությունը դարձել է բավականին ստվարաթիվ:

Հարկ է նաև նշել, որ հայկական պետականության անկման հետևանքով, Մակուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի Ղարադաղի և այլ նահանգների հայկական շրջանները մտան իրանական պետության կազմի մեջ, այդ երկրում ծնունդ տալով նոր, ստվարաթիվ հայ գաղթօջախների: Այդ շրջանում Իրանում հայերը այն աստիճանի հոծ թիվ են կազմել, որ նույնիսկ անհրաժեշտություն է զգացվել ստեղծելու երկու թեմեր, որոնք են Հեր և Ջարևանդի, և Սալմաստի ու «դրանն Պարսից» թեմերը:

XIV դարի վերջերից մինչև XV դարի սկիզբը, այսինքն Իրանում նոր կառավարող հարստության՝ Սեֆյանների հանդես գալը, պարսկահայ գաղթօջախներն ապրել են աննկարագրելի կողոպուտի, կո-

⁸ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961: Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964: Մաղաքիա աբեղա (Գրիգոր Ակնեցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, ՍՊԲ, 1870:

տորածների, կրոնական ու տնտեսական հալածանքների և գերեվարության մի սոսկալի շրջան⁹: Հատկապես օրհասական է դառնում պարսկահայ գաղթօջախների վիճակը Լանկ Թամուրի աշխարհավերարշավանքների ժամանակ: Սակայն նրանից հետո ևս գաղթօջախներում շարունակվում են կողոպուտն ու թալանը, հալածանքները և այլն: Թյուրք վաչկատուն ցեղերի առաջնորդներ Ղարա-Յուսուֆի (1389-1405), Իսկանդարի (1420-1437), Ջհան շահի (1444-1466) արյունոտ տիրապետության շրջանում հայ գաղթօջախները հյուծվում և արյունաքամ են լինում: Վրանաբնակ-քոչվոր ռազմատենչ այդ ցեղերի տիրապետության մղձավանջային շրջանում թեև պարսկահայ գաղթօջախները ծանր կորուստներ կրեցին, նվազեց նրանցում հայ բնակչության թիվը, մարեց տնտեսական աշխուժությունը, տեղի ունեցավ մշակութային անկում և այլն, սակայն այդ բոլորով հանդերձ, այդ գաղթօջախները չոչնչացան ու չվերացան, և վերապրելով ծանր հոգևարքը, պահպանեցին իրենց գոյությունը:

Պետք է նշել սակայն, որ չնայած Իրանում XI-XV դարերում բավականին մեծ թվով հայ բնակչության առկայությանը, հայությունը դեռևս միասնական համայնք չէր կազմում: Հայաբնակ այդ օջախները փոքրաթիվ էին, մասնատված ու ցրված:

XVI դարում իրանա-թուրքական համարյա անընդմեջ և արյունահեղ պատերազմների ընթացքում մարտնչող կողմերը ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած վայրերի հայ բնակչությանը ենթարկում էին զանգվածային տեղահանության:

Հատկապես Սեֆյան շահ Թահմասպ Ա-ն Իրանի և Թուրքիայի միջև «մեռյալ տարածություն» ստեղծելու նպատակով, հաջող արշավանքների դեպքում, բռնի տեղահանության էր ենթարկում ինչպես Իրանի, այնպես էլ Թուրքիայի սահմանամերձ շրջանների հայ բնակչությանը, նրանց վերաբնակեցնելով իր պետության ներքին շրջաններ:

⁹ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1-2, Երևան, 1951, 1956:

րում¹⁰: Այսպիսով, XVI դարում իրանահայ գաղթօջախը դառնում էր ավելի ստվարաթիվ: Նրա մեծացմանն ու ընդարձակմանը հետագայում նպաստեց նաև այն, որ Արևելյան Հայաստանի զգալի մասը ռազմակալած օսմանյան թուրքերի սահմանած ծանր հարկապահանջության, հալածանքների, սոցիալական և ազգային ճնշման ու հարստահարությունների հետևանքով Արցախից, Սյունիքից ու մի շարք այլ շրջաններից հայ բնակչության առանձին խմբեր լքեցին հայրենիքը և գաղթեցին Իրան¹¹:

Իրանում հայաբնակ խոշոր օջախներ ստեղծվեցին XVII դ. սկզբին՝ շահ Աբբաս Ա-ի (1587-1629) կազմակերպած հայերի գանգվածային բռնագաղթի հետևանքով: Դա հայության տոտալ տարագրություն էր, որի հետևանքով Արևելյան Հայաստանը և Արևմտյան Հայաստանի մի մասը իսպառ հայաթափ եղավ: Գաղթեցված հայ բնակչության թիվն անցնում էր երեք հարյուր հազարից (որոշ տվյալներով 400-500 հազար): Բռնագաղթը կազմակերպվել էր անօրինակ դաժան եղանակներով: Բռնագաղթի ենթարկվածների կեսից ավելին ոչնչացան ճանապարհներին, շատերն էլ ջրախեղդ եղան Արաքսից անցման ժամանակ:

Այդ իրադարձությունը, որը պատմության մեջ է մտել «մեծ սուրգուն» անունով, իր թափով ու ընդգրկման ծավալով աննախադեպ մի բռնագաղթ էր:

XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին իր «Պատմություն» երկում¹² վկայում է, որ Իրան գաղթեցված հայերի մի մասը տեղավորվեց Թավրիզում և մոտակա շրջաններում, Կասպից ծովի ափերին գտնվող Գիլանի (Ռաշտ, Էնզելի) և Մազանդարանի նահանգներում, Քաշանում, Դազվինում և Թավրիզից մինչև մայրաքաղաք Սպահան ընկած հազար կիլոմետր ձգվող ճանապարհի հարակից բնակավայ-

¹⁰ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:

¹¹ Տե՛ս Առաքելյան Հ., Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ, («Գեղունի», 1904, թիւ 1-10):

¹² Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:

րերում: Գաղթական հայերի հիմնական մասը բնակեցվեց Սպահանում և նրա արվարձաններում, ինչպես նաև Սպահանի նահանգի շրջաններում (Լնջան, Ալինջան, Փերիա, Քյարվանդ), Բախթիարիում (Չհարմիալ), և Սուլթանաբադի (ներկայումս՝ Արաք) շրջակա Բուրվարի և Գյափլա շրջաններում: Հայերի մանր խմբեր բնակեցվեցին Շիրազում, Համադանում և այլ վայրերում¹³:

Հատուկ հրովարտակով Սպահանի հարավային մասում, Ջաենդերուդ գետի ափին, շահապատկան հողերից շահ Աբբաս Ա-ը հայերին հատկացրեց մի ընդարձակ տարածք, որի վրա նրանք կառուցեցին Նոր Ջուղա ավանը¹⁴:

Բռնագաղթի ենթարկված և օտար միջավայրում հանգրվան գտած հայությունը այլ կրոնի, բարքերի ու սովորույթների առկայության պայմաններում ոչ միայն չտարալուծվեց, չկորցրեց իր ազգային դիմագիծը, մոռացության չմատնեց իր մշակութային արժեքները, այլև կարողացավ ստեղծել կազմակերպված համայնք, ունեցավ հավաքական կյանք, անադարտ կերպով պահպանեց իր մայրենին, ազգային սովորություններն ու դավանանքը: Ավելին, իր գոյության ողջ ընթացքում իր անկրկնելի ինքնատիպությամբ աչքի ընկած համայնքը բազմաթիվ տեսանելի և անտեսանելի թելերով կենդանի կապ է ունեցել Մայր Հայրենիքի հետ:

Բռնագաղթի ենթարկված հայ բնակչության նկատմամբ շահ Աբբաս Ա-ը վարում էր նրանց իրանական հողում ամրակայելու և հայության ներուժը իր տնտեսական ու քաղաքական նպատակներին ծառայեցնելու քաղաքականություն: Հայերի գալով՝ երկրում ավելի է ծաղկում մշակույթը, ակտիվանում առևտուրը, զարգանում են արհեստներն ու արտադրությունը:

Իրանում աստիճանաբար տարագիրների զանգվածը, շնորհիվ հայության կենսունակության, վերաճեց կազմակերպված համայնքի, որը ձգտում էր ոչ միայն ձուլման չենթարկվել, այլև ամեն կերպ պահ-

¹³ Տե՛ս Գորոյան Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968: Մինասյան Լ. Գ., Պատմություն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս, 1971:

¹⁴ Տե՛ս Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007:

պանել ազգային ինքնությունը, իր լեզուն, դավանանքը և Հայաստանից իր հետ բերած դարավոր ավանդույթներն ու հարուստ մշակութային ժառանգությունը: Այդ գործընթացում, անկասկած, անգնահատելի մեծ ներդրում է ունեցել հայ Առաքելական եկեղեցին:

Եթե Շահ Աբբաս Ա-ից հետո նրա գահը ժառանգած շահ Սեֆին (1629-1642) և շահ Աբբաս Բ-ն (1642-1666) իրանահայության նկատմամբ վարում էին հարաբերականորեն բարյացակամ քաղաքականություն, ապա շահ Սուլեյմանի (1666-1694) և նրա հետնորդ շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722) տիրապետության շրջանում Սեֆյան կառավարության տիրապետող վերնախավի քաղաքականությունը հայության նկատմամբ կտրուկ փոփոխության է ենթարկվում: Կառավարությունը ծանր հարկեր է դնում հայերի վրա, սկսում է դրամ կորզել նրանցից և այլն: Դրան գալիս է լրացնելու բռնի դավանափոխության քաղաքականությունը¹⁵:

XVIII դ. 20-ական թվականներից սկսած իրանահայությունը սկսում է ելք որոնել իր համար ստեղծված անձուկ վիճակից: Ծայր է առնում զանգվածային արտագաղթ դեպի Լևանտի առևտրական կենտրոնները, մասնավորապես Կոստանդնուպոլիս, Չմյուռնիա, Հալեպ և այլն, ինչպես նաև եվրոպական և ասիական երկրներ՝ Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Լեհաստան, Ռուսաստան, Հնդկաստան, Բիրմա, Ինդոնեզիա և այլն¹⁶: XVIII դարի կեսերից սկսած իրանահայ համայնքն արագորեն դատարկվում էր: Արտագաղթի հետևանքով Եվրոպայի և Ասիայի հայ գաղթօջախները, որոնցից շատերը XVI-XVII դարերում հիմնվել էին հայ վաճառականների կողմից, գնալով ավելի բազմամարդ էին դառնում, ծնավորելով հայ սփյուռքը կամավոր գաղթի միջոցով:

¹⁵ Տե՛ս Յարութին Տէր-Յովհաննէանց, Պատմութիւն Նոր Ջուլայու որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուլա, 1880, հ. II, Նոր Ջուլա, 1881:

¹⁶ Տե՛ս Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVIII в. (Роль Новой Джульфы в ирано-западноевропейских политических и экономических связях), Ереван, 1969.

Արդեն XVIII դ. վերջին և XIX դ. առաջին քառորդին իրանահայ գաղթօջախներից շատերին մենք գտնում ենք խամրած վիճակում: Իրանահայությունը օրորվում էր քաղաքական վայրիվերումների հորձանուտում: Հայ եկեղեցին, Էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, իրավասու չէր միջամտելու իրանահայ թեմի ու նրա հոտի աշխարհիկ-քաղաքական գործերին: Ուստի աշխատում էր գեթ ուժի մեջ թողնել նախկին ժամանակներում իրանական շահերից ստացած հայերի վերաբերյալ իրավունքներն ու արտոնությունները: 1796 թ. իրանական գահի վրա հաստատվեց Աղա Մոհամմադ շահը, հիմք դնելով Ղաջարների թյուրքալեզու արքայատոհմին: Նրա օրոք երկրում հաստատվել էր արյունոտ բռնատիրության վարչակարգ: Դեպի Անդրկովկաս կազմակերպած իր արշավանքի ժամանակ, միայն Թիֆլիս քաղաքից, որտեղ հայերը կազմում էին մեծ զանգված, շահը գերեվարեց և Իրանի խորքերը քշեց 15 հազար մարդ: Մարդորսությունը, գերիներ ձեռք բերելու և ստրկավաճառանոցներում նրանց վաճառքի միջոցով եկամուտ ստանալու «արհեստը» այդ մուրթ և անապահով ժամանակներում դարձել էր բռնակալների ամենօրյա զբաղմունք:

Աղա Մոհամմադ շահի անագորույն վարչակարգն ավարտվեց նրա սպանությամբ (1797 թ.): 1804-1813 և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների ժամանակ նույնպես, ինչպես նախկին ժամանակներում, Արևելյան Հայաստանից մեծ թվով հայեր տարագրվեցին բուն Իրանի տարածքը, որոնց մեծ մասին պարտադրվեց իսլամը¹⁷: Այդ ժամանակներում Իրանի ոչ մահմեդական բնակչությունը՝ քրիստոնյաները (հայերն ու ասորիները), փարսերը (գյաբրերը կամ զրադաշտականները) և հուդայականները գտնվում էին նվաստացուցիչ վիճակում: Նրանց համար կային շարիաթական օրենսդրությունից բխող բազմաթիվ սահմանափակումներ¹⁸: Որպեսզի մահմե-

¹⁷ Տե՛ս Բայբուրդյան Վ., Էջեր իրանահայության պատմությունից XIX դարում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, 2005:

¹⁸ Տե՛ս Waterfield R., Christians in Persia, Assyrians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973. Տե՛ս նաև George A. Bournoutian, Armenians in Nineteenth-Century Iran. The Armenians of Iran. The

դական միջավայրում կարողանան պահպանել իրենց կյանքն ու զույքը, այլադավանները ստիպված էին վերին աստիճանի ձկունորեն վերաբերվել դավանական խնդիրների նկատմամբ: Նրանք ապրում էին փակ, մեկուսացված կյանքով: Նրանց շփումները մահմեդականների հետ սահմանափակ էր՝ միայն աշխատանքի բերումով: Այլադավանները բանակում ծառայելու և զենք կրելու իրավունք չունեին, չէին կարող զբաղեցնել զինվորական ու վարչական պաշտոններ, քանի որ օրենքը արգելում էր այլադավանին իշխել մահմեդականի նկատմամբ: Տարբեր վայրերում պարբերաբար բռնկում էին քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչության ջարդեր, հալածանքներ և այլն: Դրանց պատճառը կարող էր լինել նախանձը հայ հաջողակ վաճառականների նկատմամբ, նրանց ունեցվածքին տիրանալու ձգտումը, կամ պարզապես մահմեդականի և քրիստոնյայի միջև դատարկ վեճը, որը ճարպկորեն ուռճացվում ու օգտագործվում էր տեղական իշխանությունների և մոլեռանդ հոգևորականության կողմից: 1807 թ., օրինակ, Թավրիզում մոլեռանդ ամբոխը հարձակում գործեց հայկական եկեղեցիների և հայերին պատկանող վաճառատների վրա: Հաճախ հայերին և մյուս ոչ մահմեդական էթնիկ խմբերին հալածանքների ենթարկելու համար շահագրգիռ կողմերն օգտագործում էին նաև քաղաքների ապադասակարգայնացված տարրերին՝ «լոթիներին» (պարսկերեն «լութի») այս կամ անձին ունեզրկելու համար: 1848 և 1850 թթ. դարձյալ Թավրիզում, որն այդ ժամանակներում Իրանի ամենահայաշատ քաղաքն էր, տեղի ունեցան հակահայկական երկու խոշոր ելույթներ: Այդ նույնը կրկնվեց նաև Սպահանում (1848-1849 թթ.), իսկ 1851 թ. Թեհրանում մոլեռանդ ամբոխը տակն ու վրա արեց հայկական թաղամասը, որն ուղեկցվեց հայ բնակչության ջարդով¹⁹: 1890 թ. Շիրազում տեղի ունեցած իսլամական մոլե-

Paradoxical Role of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, edited by Cosroe Chaqueri, Harvard University Press, Cambridge Massachusetts, 1998, pp. 57, 72.

¹⁹ Տե՛ս Arasteh Reza, The Character, Organisation and Social Role of the Luti (Javanmardan) in the Traditional Iranian Society of the Nineteenth Century, "Journal of Economic and Social History of the Orient", 1961, February. Տե՛ս

ռանդության հերթական պոռթկումներից մեկի ժամանակ կոչ էր արվում քրիստոնյաներին վճռել երկրից:

Պարսից շահերը աշխատում էին զսպել անսանձ տարրերին և պաշտպանել իրենց այլադավան հպատակներին: Այսպես, Ֆաթի Ալի շահը 1842 թ. անձամբ բանակի գլուխ անցած մի ամբողջ ռազմական արշավանք կազմակերպեց դեպի Սպահան՝ հայ բնակչությանը հարստահարող ու նեղող տարրերին պատժելու համար:

XIX դ. երկրորդ կեսին, Նասր-էդ-Ղին (1848-1896) և Մոզաֆար-էդ-Ղին (1896-1906) շահերի կառավարման շրջանում իրանահայության վիճակում տեղի ունեցան դրական առումով կարևոր փոփոխություններ: Դրա պատճառներից մեկը երկրում օտարերկրյա տերությունների ազդեցության մեծացումն էր, ինչպես նաև այն, որ շահական կառավարությունը զգում էր արհեստավորների, առևտրականների մեծ կարիք: Իրանի այդ երկու տիրակալներն աշխատում էին մղում տալ հայության գործարար և հոգևոր եռանդին ու ակտիվությանը: Երկիրը տնտեսական լճացման վիճակից դուրս բերելու, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով նրանք հրապարակեցին մի շարք ֆիրմաններ (հրամանագրեր), որոնցով վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած սահմանափակումներին, արգելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կանոնավորվում էր հայ քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկահավաքման գործը, օրինականացվում էին հայ եկեղեցիների կալվածքները և այլն: Հայերին վստահվեցին արքունի և պետական բարձր պաշտոններ²⁰: Հայերից ոճանք այդպիսի պաշտոններ էին գրավում ընդհուպ մինչև XX դարի 30-ական թվականները: Մի խոսքով օրենսդրական կարգով հայերը վերցվեցին պետության հովանավորության տակ:

XIX դ. 90-ական թթ. Արևմտյան Հայաստանում սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կողմից կազմակերպված հայերի զանգվածային ջարդերի

նաև Кузнецова Н. А., Политическое и социально-экономическое положение Ирана в конце XVIII – первой половине XIX в. В кн. Очерки новой истории Ирана, Москва, 1978.

²⁰ William S. Haas, Iran, New York, 1946, p. 108-109.

ժամանակ, իրանական կառավարությունը անարգել թույլատրում էր հայ փախստականներին անցնելու իրանական սահմանը և ապաստան գտնելու Իրանի հյուրընկալ հողում²¹: Պարսիկ պատմաբան Խոսրով Չաքերին իրավացիորեն նշում է, որ Իրանում այդ ժամանակ պետությունը հովանավորում ու պաշտպանում էր հայերին նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք Իրանի տարածքն օգտագործելով «հայ-դուկային պատերազմ էին մղում թուրքերի դեմ»:

XIX դ. երկրորդ կեսին իրանական կառավարության հայանպաստ քաղաքականության խոսուն վկայությունը կարող է հանդիսանալ նաև Իրանի հայ բնակչության արագ աճը: Եթե XIX դ. 50-60-ական թթ. Իրանում կար շուրջ 20 հազար հայ բնակիչ, ապա 1890 թ. այն արդեն կազմում էր 80 հազար²²: XIX դարում հայերը սփռված էին ողջ Իրանի տարածքով մեկ: Երկրի մայրաքաղաքը՝ Թեհրանը, աստիճանաբար դառնում էր հայության կենտրոնացման վայր, որտեղ ստեղծվեց կազմակերպված հայ համայնք:

Իրանահայությունը իր մասնակցությունն է բերել Իրանի 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխությանը: Հատկապես աչքի են ընկել Եփրեմ խան Դավթյանը, Արշակ Գաֆալյանը (Քեռի), Նիկոլ Դումանը և ուրիշներ²³: Այդ հեղափոխությանը իրենց ակտիվ մասնակցությունն են բերել նաև սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության և հայ քաղաքական այլ կուսակցությունների ու հոսանքների ներկայացուցիչները:

Իրանական սահմանադրական հեղափոխությունից հետո Իրանի հասարակական-քաղաքական կյանքում նկատվեցին որոշ դրական

²¹ Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Երևան, 1974:

²² Տե՛ս Issawi Ch., The Economic History of Iran. 1800-1914, Chicago-London, 1971, pp. 22, 60.

²³ Տե՛ս Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911, published in United States of America by West View Press. Colorado and in the United Kingdom by West View Press, 2001; Էլմար, Եփրեմ, Թեհրան, 1964; Manukyan A., Hezbe Dashnak va Nehzate Mashruie, Tehran, Entesharate Ramrang, 1383/2004 (պարսկ. լեզվով):

տեղաշարժեր, այդ թվում նաև իրանահայության համար: Հայերն ընտրվեցին տեղական ինքնավարության մարմիններում: Իրանահայությունը իրավունք ստացավ ունենալու երկու պատգամավոր իրանական խորհրդարանում՝ մեջլիսում:

1908 թ. փետրվարի 17-ին վերջնականապես կազմակերպվեց Թեհրանի հայոց Ազգային խորհուրդը, որի խնդիրն էր, իբրև տեղի հայոց բարձրագույն իշխանություն, միջնորդ հանդիսանալ հայ համայնքի և կառավարության ու մեջլիսի միջև: 1911 թ. Ազգային խորհուրդը պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»: Այդ վարչության ընդունած օրենքով 1917 թ. կազմվեցին Համադանի, Սուլթանաբադի (ներկայումս՝ Արաք) և այլ հայաշատ վայրերի համայնական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչներից էլ ստեղծվեց «Իրանահայ ընդհանուր խորհուրդը»:

Առաջին համաշխարհային պատերազմն իր ծանր հետևանքներն է թողել նաև իրանահայության վրա: 1918 թ. թուրքական զորքերը ներխուժելով Ատրպատական, կոտորել են զգալի թվով հայ բնակչություն, ավերել բազմաթիվ հայկական գյուղեր, թալանել ու կողոպտել հայ եկեղեցիներ և այլն²⁴: Արևմտահայության եղեռնից փրկված ու վերապրած բազմաթիվ հայեր ապաստան են գտել իրանական հողում:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Իրանի հայ համայնքի համար ստեղծված վտանգավոր պայմանները առաջնահերթ խնդիր դարձրին այսպես կոչված «Պարսկահայ խորհուրդ» ստեղծելու հարցը: Դա հանդիսանում էր ամբողջ պարսկահայությունը ներկայացնող բարձրագույն մարմին: 1915-1916 թթ. տազնապալից օրերին, երբ Ատրպատականի հայաշատ վայրերում մոլեգնում էր թուրքական զորքերի արյունոտ տեռորը հայ բնակչության նկատմամբ, Պարսկահայ խորհուրդը, հիրավի, փրկարար դեր կատարեց վտանգված վայրերի հայ ազգաբնակչության համար:

²⁴ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, Երևան, 1984:

Այդ օրերին, երբ Ատրպատականի մեծ մասը ռազմակալման ենթարկելուց հետո թուրքական զորքերը սպառնում էին շարժվել Թեհրանի վրա, Պարսկահայ խորհրդին հաջողվում է իր դիմումներով հայերի համար պաշտպանության խոստում ստանալ իրանական կառավարությունից: Միաժամանակ Խորհրդի եռանդուն ջանքերի շնորհիվ Թեհրանում Իսպանիայի դեսպանությունը համաձայնություն է տալիս, որպեսզի պատերազմում չեզոքություն պահպանած երկրի կարգավիճակ ունեցող Իսպանիայի դրոշները պարզվեն մայրաքաղաքի մի քանի մեծ շենքերի վրա, հայերին հնարավորություն տալով կենտրոնանալու այդ շենքերում և իսպանական պետության հովանու ներքո ապահովելու իրենց անվտանգությունը:

Բարեբախտաբար Ռուսաստանի և Անգլիայի՝ Եռյակ համաձայնության դաշինքի գծով այդ դաշնակից պետությունների գինված ուժերի հարվածների հետևանքով թուրքերին չհաջողվեց իրականացնել Թեհրանը գրավելու և տեղի հայերի հետ ևս հաշվեհարդար տեսնելու իրենց չարաշուք ծրագրերը:

Ատրպատականում հայ բնակչության նկատմամբ թուրքական զորքերի գործած վայրագությունների, Վանի հերոսամարտի և ապա Վասպուրականի հայության գաղթի հետևանքով հազարների հասնող տարագիր հայության համար ստեղծված անտանելի պայմաններում իրանահայ համայնքը եղբայրական օգնության ձեռք մեկնեց և պատսպարեց հայ տարագիրներին և ցեղասպանությունից վերապրածներին:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունից և նրան հաջորդած բոլշևիկյան հեղաշրջումից հետո զգալի թվով հայեր արտագաղթել են Իրան, ստվարացնելով հայ համայնքը: Նման արտագաղթ տեղի է ունեցել նաև 1920 թ., երբ Հայաստանի առաջին Հանրապետության կործանումից հետո մեծ թվով հայեր անցնելով Արաքսը վտարանդության են մեկնել հարևան Իրանի հյուրընկալ հողը:

Ի դեպ Իրանը առաջին պետություններից մեկն էր, որ 1918 թ. պաշտոնապես ճանաչեց Հայաստանի առաջին Հանրապետության

անկախությունը և նրա հետ հաստատելով դիվանագիտական հարաբերություններ, ցուցաբերեց տնտեսական ու քաղաքական աջակցություն հայկական նորաստեղծ պետությանը:

Հայաստանում 1920 թ. խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ինչպես ողջ սփյուռքահայությունը, իրանահայ համայնքը ևս չի զլացել իր օգնությունը հայկական երկրորդ հանրապետությանը: Սփյուռքահայ գաղթօջախներից Թավրիզն առաջինն է եղել, որ կազմակերպել է Թավրիզի ՀՕԿ-ի մասնաճյուղը (1922 թ. ապրիլի 21-ին): Շատ չանցած Հայաստանի Օգնության Կոմիտեներ են ստեղծվել նաև Իրանի գրեթե բոլոր հայ գաղթօջախներում՝ Թեհրանում, Նոր Ջուղայում, Ռաշտում, Էնգելիում, Ղազվինում, Աիվազում, Նիշապուրում, Մաշհադում և այլն:

XX դարի 30-ական թվականներին ստալինյան հալածանքների հետևանքով խորհրդային Միության տարածքից այսպես կոչված «Իրանահպատակ» հայերը բռնի կերպով դեպորտացվեցին դեպի Իրան, ստվարացնելով տեղի հայ գաղթօջախները: Հավատարիմ մնալով ասպնջականության իր դարավոր ավանդույթներին, իրանական պետությունը և ժողովուրդը գրկաբաց ընդունեց հայրենագրված այդ հայությունը:

1925 թ. Իրանում Ղաջարների թյուրքական դինաստիան տապալվեց և իրանական գահի վրա նստեց պետական հեղաշրջումն իրականացրած Ռզա խանը, որն ընդունեց Ռզա շահ Փահլավի գահակալական անունը, դրանով իսկ Իրանում հիմք դնելով կառավարող մի նոր հարստության՝ Փահլավի արքայատոհմին:

Իրանի նոր տիրակալը սկսեց վարել երկրում «կարգ ու կանոն» հաստատելու քաղաքականություն, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռազմական դիկտատուրայի հաստատում: Նրա կողմից առաջ քաշված պանիրանիզմի (համաիրանականության) գաղափարախոսության և «Ազգային միասնության» ամրապնդման շարժումը ուղեկցվում էր մեծապետական շովինիզմի, կայսերապաշտության և պարսիկների ռասայական ու մշակութային գերազանցության վերաբերյալ քարոզչությամբ: Ռզա շահը ձգտում էր երկիրը միատարր դարձնել և բոլոր

ազգերին ու ժողովուրդներին համաձուլել մեկ միասնական «իրանական ազգի» մեջ: Համաձուլման այդ քաղաքականությունը շահը իրականացնում էր ոչ միայն այլադավան փոքրամասնությունների (հայերի, ասորիների, գրադաշտականների, հրեաների), այլև դավանակից, սակայն այլ էթնիկական ծագում ունեցող ժողովուրդների (ազերիների, քրդերի, արաբների) և այլոց նկատմամբ:

Մինչև XX դ. 30-ական թվականների կեսերը Ռգա շահը խրախուսում էր իրանահայության գործադրած ջանքերը հօգուտ Իրանի և նրա զարգացման: Սակայն ավելի ուշ նա որդեգրեց կրոնական փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման քաղաքականություն, առաջնորդվելով իրանական ազգայնականության պանիրանիզմի մեծապետական-շովինիստական սկզբունքներով: Իրանական իշխանությունների այդ քաղաքականության արդյունքները հատկապես բացասաբար անդրադարձան հայ բնակչության վիճակի վրա:

1936 թ. Ռգա շահի հանձնարարությամբ այսուհետև հայկական դպրոցներում դասավանդումը պետք է կատարվեր պարսկերեն լեզվով, որը նշանակում էր վերջ տալ հայկական դպրոցների գոյությանը: Հայկական դպրոցների փակմանը հաջորդեց մշակութային աշխատանքների արգելումը: Չէր թույլատրվում հայերեն լեզվով կարդալ դասախոսություններ, կազմակերպել ներկայացումներ, տպագրել որևէ բան, նույնիսկ հասարակ հայտարարություն, մահազդ և մինչև անգամ այցետոմս: Առանց բացառության ողջ երկրով մեկ ջնջվեցին կամ հանվեցին հայերեն լեզվով գրված բոլոր ցուցանակները: Մոլեռանդները փողոցներում, ավտոբուսների մեջ, շուկայում և այլն հայերեն խոսողներից պահանջվում էին «հասկանալի» լեզվով խոսել²⁵:

Ռգա շահի ազգայնական քաղաքականությունը չէր սահմանափակվում լոկ հայ փոքրամասնության նկատմամբ կիրառված վերոհիշյալ քաղաքականությամբ: Այն տարածվում էր նաև ամերիկյան,

²⁵ Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 292-293:

անգլիական, ֆրանսիական միսիոներական դպրոցների վրա, որոնք բոլորը փակվեցին:

Այդ հայահալած քաղաքականությունը տևեց մոտ տասը տարի: Նշված տարիների ընթացքում իրանահայ գաղութը չհաշտվեց իրեն պարտադրված ազգային-մշակութային կյանքի այդ սահմանափակումների հետ: Համարյա բոլոր հայկական բնակավայրերում, տնային պայմաններում, կառավարության խուզարկու աչքից հեռու, կազմակերպվում էին հայոց լեզվի դասընթացներ, գրադարաններ, հայոց պատմությունն ու գրականությունն ուսումնասիրող խմբակներ և այլն: Հայ դպրոցական-կրթական կյանքը, այդպիսով շարունակվեց, սակայն «ընդհատակյա» պայմաններում: Այդ գործում չափազանց մեծ դեր խաղացին հայ կանայք և նրանց կազմակերպությունները: 1941 թ. Ռզա շահի անկումով վերացվեց հալածանքը և իրանահայությունը վերստին տեր կանգնեց իր իրավունքներին: Հայկական դպրոցները վերաբացվեցին, վերականգնվեցին նաև մշակութային և հանրային հաստատությունները, ասպարեզ եկան մշակութային նորանոր միություններ: Առհասարակ պետք է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին իրանահայ համայնքի համար, զարգացնելու ու ծավալելու իրենց դպրոցական ցանցը, մարզա-մշակութային միությունները և այլն: Այդ տարիներին, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում, դպրոցական շինարարությունը հատկապես մեծ թափ ստացավ Թեհրանում, որի բնակչությունը հախուռն տեմպով աճում էր:

1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխության հետևանքով շահական վարչակարգը տապալվեց: Իրանահայությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել այդ հեղափոխությանը և տվել բազմաթիվ զոհեր: 1979 թ. մարտի 26-ին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը հայ համայնքի ստվարաթիվ պատվիրակության ուղեկցությամբ այցելել է իսլամական հեղափոխության առաջնորդ իմամ Խոմեյնիին և շնորհավորել նրան ու Իրանի ժողովրդին հեղափոխության հաղթանակի առթիվ: Սրբազանը միաժամանակ հայտնել է իրանահայերի պատրաստա-

կանությունը շարունակելու օժանդակել հեղափոխության գործին: Այդ հանդիպման ժամանակ իմամ Խոմեյնիին ասել է. «Այս հեղափոխության ձեռքբերումներն իրենց դրական ազդեցությունը կունենան նաև Իրանի փոքրամասնությունների վրա: Իսլամը բարյացակամ է ուրիշ կրոնների ու գաղափարախոսությունների նկատմամբ»:

Հանդիպման վերջում Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը մի գրություն է հանձնել իմամ Խոմեյնիին, որտեղ ասվում էր, որ «իրանահայերն Իրանի անկախությունն ու միասնականությունը պաշտպանելը համարում են իրենց ազգային գերպարտականությունը»:

Իրանահայությունը իր եռանդուն մասնակցությունն է բերել նաև 1980-1988 թվականների Իրան-իրաքյան պատերազմին: Այդ ժանր ու երկարատև պատերազմին մասնակցել է 17 հազար հայ, որոնցից 260-ը հերոսաբար զոհվել են:

Իրանի Իսլամական Հեղափոխության քաղաքական ղեկավարությունը պատշաճ կերպով գնահատանքի է արժանացնում Իրանի հայ համայնքի նվիրվածությունը իրանական հայրենիքին, որի հյուրընկալ հողի վրա հայերը ապրել են դարեր ի վեր:

ԻՐԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԲԱՇՆՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Իրանը բազմազգ պետություն է, որտեղ բնակվում են երկրի ողջ տարածքում ցրված ավելի քան 40 ազգեր ու ազգություններ: Ըստ լեզվական հատկանիշի, այդ երկրի բնակչությունը բաժանվում է երեք հիմնական խմբերի. իրանախոս, թրքախոս և արաբախոս, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է էթնիկական մեծ բազմազանությամբ: Ոչ մահմեդական կրոնական փոքրամասնությունների կազմի մեջ են մտնում քրիստոնյաները, զրադաշտականները և հուդայականները (հրեաները): Իրենց թվաքանակով կրոնական փոքրամասնությունների մեջ հայերը միշտ գրավել են առաջին տեղը: Նրանք մշտապես կրկնակի ավել են եղել Իրանի մյուս կրոնական փոքրամասնություններից՝ ասորիներից, հրեաներից և զրադաշտականներից:

Հայերի թվաքանակն Իրանում մշտապես ունեցել է կտրուկ տատանումներ, կախված երկրի քաղաքական կայունության վիճակից, տնտեսական իրադրությունից և այլ գործոններից: Օրինակ, առաջին համաշխարհային պատերազմի սկզբին հայերի թիվը կազմել է 60 հազար մարդ²⁶: Սակայն այդ բնակչության կեսից ավելին՝ մոտ 35 հազար մարդ, պատերազմի հենց սկզբին, խուսափելով Իրանի տարածքը ներխուժած թուրքական զորքերի հալածանքներից, Իրանի հյուսիսային շրջաններից փախել է Կովկաս և Ռուսաստան: Նրանց մեծ մասը պատերազմի ավարտից հետո վերադարձել է Իրան, իսկ մյուս մասը՝ 1932-1935 թվականներին²⁷:

Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1944 թ.) իրանահայության թիվը անցնում էր 100 հազարից: Մինչև 1979 թ. իրանական հեղափոխությունը հայերի թիվն Իրանում հաշվվում էր մոտ 200 հազար մարդ, որի 70%-ը քաղաքային բնակչություն էր և հիմնականում կենտրոնացած էր Թեհրանում: Մեծ թվով հայ

²⁶ Տե՛ս Խաթանասյան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965:

²⁷ Նույն տեղում:

բնակչություն կար նաև Թավրիզում և Ատրպատականի մյուս քաղաքներում, հարավային, կենտրոնական և հյուսիսային Իրանի քաղաքներում (Սպահան, Նոր Ջուղա, Շիրազ, Աբադան, Աիվազ, Արաք, Էնզելի, Ռաշտ, Ղազվին և այլն): Առհասարակ հայերն Իրանում հիմնականում քաղաքաբնակներ էին, թեև առկա էր նաև գյուղական բնակչություն: 1946 թ. կազմակերպվեց իրանահայության ներգաղթ դեպի Խորհրդային Հայաստան: Իրանահայության մի մասին հաջողվեց ներգաղթել հայրենիք: Սակայն ինչ-ինչ պատճառներով, ներգաղթողների համար միանգամայն անսպասելի կերպով, ներգաղթն ընդհատվեց և երկրի տարբեր մասերից Թեհրան հորդած հայ բնակչությունը, որն իր նախնիներն բնակավայրերում արդեն վաճառել էր իր տուն-տեղը և ունեցվածքը, այլևս չէր կարող հետ վերադառնալ և ստիպված էր հաստատվել Թեհրանում, որի հայ համայնքն, այդպիսով, արձանագրեց կտրուկ աճ.:

Ըստ որոշ տվյալների, 1950-ական թվականների վերջին թեհրանահայության թիվը հասել էր 65 հազարի, իսկ 1970-ական թվականների վերջին այն կազմում էր 120 հազար մարդ:

Տարբեր նահանգներից ու գավառներից Թեհրան եկած հայերի համար հայրենադարձության ընդհատման պատճառով ստեղծվել էր ծանր վիճակ: Աստիճանաբար հարմարվելով ստեղծված վիճակին, նրանք բնակություն հաստատեցին Թեհրանի տարբեր թաղամասերում Բեհջաթաբադում, Յուսեֆաբադում, Ղըզըլ-Ղալեում, Հեշմաթեում, Մաջիդիեում, Վահիդիեում, Ջարքեշում և Նարմաքում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերը Թեհրանում բնակվում էին նաև Նադերի, Ղավամ-էս-Սալթանե, Շահ, Յուսեֆաբադ, Մանուչեհրի և այլ կենտրոնական փողոցներում, այսինքն հիմնականում քաղաքի կենտրոնական ու հյուսիսային թաղամասերում, տեղ-տեղ բավականին համահավաք խմբերով: Հետպատերազմյան շրջանում երկրի տարբեր վայրերից Թեհրան տեղափոխված հայերը բնակություն հաստատեցին նաև քաղաքի արևելյան և արևմտյան մասերում: Ներկայումս Թեհրանում հայերը գլխա-

վորապես բնակվում են Մաջիդիե, Ջարքեշ, Հեշմաթիե, Նարմաք և մի շարք այլ թաղամասերում:

Մինչև 1970-ական թվականները հայերը ինչ-որ չափով ներգրավված էին պետական համակարգում և տնտեսական ու իրավաբանական ոլորտներում, կային նաև բանակային, սպայական ծառայության մեջ գտնվող հայեր: Քիչ չէին խոշոր ձեռնարկատերերը: Ջգալի թիվ էին կազմում նավթարդյունաբերության ոլորտի աշխատողները: 1950-ական թվականներից սկսած աճ է արձանագրել նաև հայ մտավորականության թիվը (բժիշկներ, իրավաբաններ, ուսուցիչներ, ճարտարագետներ և այլն), որոնց մի մասը մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացել էր արևմուտքի երկրներում:

1978 թ. վերջերին հակաշահական զանգվածային հուզումների պայմաններում զգալի թվով հայեր արտագաղթեցին ԱՄՆ, Եվրոպա, Մերձավոր Արևելքի երկրներ և այլն: 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո տիրող անկայուն կացության, անուղղակի խտրական վերաբերմունքի և այլ պատճառներով արտագաղթն ընդունեց խոշոր չափեր, որի հետևանքով հայության թիվն Իրանում կրկնակի կրճատվեց:

Ներկայումս պաշտոնական վիճակագրություն Իրանում հայերի թվի մասին գոյություն չունի: Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ նրանց թիվը հասնում է հազիվ 50 հազար մարդու, այսինքն՝ չորս անգամ պակաս, քան իսլամական հեղափոխությունից առաջ: Ընդ որում, հայերի ջախջախիչ մեծամասնությունն ապրում է Թեհրանում: Դժբախտաբար ստույգ տվյալներ գոյություն չունեն նաև մայրաքաղաքում նրանց թվաքանակի մասին: Հայերի հիմնական զանգվածի կենտրոնացումը Թեհրանում պայմանավորված է նրանով, որ Իրանում գյուղական բնակչության տեսակարար կշիռը ներքին միգրացիոն գործընթացների հետևանքով մշտապես կրճատվում է: Ընդ որում, ներքին տեղափոխությունների հիմնական ուղղվածությունը «գյուղ-քաղաք» ուղղությունն է: Գյուղական վայրերից Թեհրանը դեպի իրեն է ձգում հազարավոր գյուղացիների և համեմատաբար փոքր քաղաքների բնակիչների: Ներկայումս Թեհրանը հանդիսա-

նուն է Մերձավոր ու Միջին Արևելքի խոշորագույն քաղաքներից, ինչպես նաև աշխարհի արագ ուրբանիզացվող քաղաքներից մեկը: Այդ մեգապոլիսուն է կենտրոնացած երկրի արդյունաբերական ձեռնարկությունների 60%-ից ավելին, երկրի ողջ պետական ծառայողների 35%-ը, մասնագետ-ճարտարագետների 44%-ը և երկրի ողջ բանվորության 1/3 մասը: Թեհրանում է կենտրոնացված ստեղծագործական մտավորականության, «ազատ մասնագիտությունների» (բժիշկներ, ճարտարապետներ, փաստաբաններ, իրավաբաններ, ուսուցիչներ, բանկային ծառայողներ և այլն) ներկայացուցիչների հիմնական մասը, երկրի ողջ ուսանողության մոտ կեսը:

Հայերը Թեհրան են մեկնում ոչ միայն աշխատանք գտնելու, այլև կյանքի ավելի հարմարավետ պայմաններ որոնելու, ուսում ստանալու, հավելյալ դրամ վաստակելու, ինչպես նաև հայկական միջավայրի հետ ակտիվ շփումներ ունենալու նպատակով: Հայ միգրանտներին ձգում է նաև մեծ քաղաքում կյանքի հրապուրանքը:

Թեհրանի ազգային կազմը բավականին խայտաբղետ է: Ընդհանուր առմամբ այդ քաղաքում տարբեր ազգություններ ապրում են խառը վիճակում: Սակայն կան թաղամասեր և փողոցներ, որոնք գերազանցապես բնակեցված են որոշակի էթնիկական կամ կրոնական խմբերով՝ պարսիկներով, ազերիներով, քրդերով, զրադաշտականներով և այլն: Հայերը նույնպես համախումբ ձևով ապրում են որոշակի թաղամասերում (Մաջիդիե, Ջարքեշ, Նարմաք, Հեշմաթե և այլն), թեև կան նաև ամբողջ քաղաքում ցրված հայ ընտանիքներ:

Ներկայումս Իրանում գյուղական հայ բնակչություն այլևս համարյա գոյություն չունի: Մինչդեռ ոչ հեռավոր անցյալում եղել է բավականին մեծ թվով հայ գյուղացիություն: XVII դարում մեծ բռնագաղթի ժամանակ շահ Աբբաս Ա-ն գյուղական հայ բնակչության մի հոծ զանգված (12 հազար ընտանիք, մինչև 70 հազար մարդ) բնակեցրել էր Կենտրոնական Իրանում, երկրի այն ժամանակվա մայրաքաղաք Սպահանից արևմուտք, հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք ընկած գավառներում (Փերիա, Չհարմահալ, Բուրվարի, Քյամարա, Լնջան, Ալնջան, Քյարվանդ, Քյազագ, Ջախլադ, ավելի ուշ՝ Ղարա-

ղան): Բուրվարին (Սպահանից 200 կմ հյուսիս-արևմուտք, Սպահան-Համադան ավտոճանապարհի միջնամասում) եղել է Իրանի ամենահայաշատ գավառներից մեկը: Բուրվարիի հայ բնակչությունը գաղթեցվել է հիմնականում Մեծ Հայքի Մանազկերտի, Ալաշկերտի և Կարս-Կաղզվանի շրջաններից: XVII դ. երկրորդ կեսին Բուրվարի գավառում կար շուրջ 30 հայաբնակ գյուղ, 1903 թ. շուրջ 20 գյուղ (4000 հայ), 1933 թ. 22 գյուղ (5900 հայ): 1946 թ. Բուրվարի գավառից (23 գյուղ – 6320 հայ) Հայաստան ներգաղթեց մոտ 2000 մարդ: Բուրվարիի վերջին երկու հայաբնակ գյուղերը (Խորզենդ և Ֆարաջաբադ) հայաթափվել են 1970-ական թթ. սկզբին:

Չհարմահալը (Սպահանից 70 կմ հարավ-արևմուտք) եղել է Իրանի հայաշատ գավառներից մեկը: Չհարմահալի հայ բնակչությունը Իրան է գաղթեցվել Մեծ Հայքի Բասեն գավառից (Հասանկալա-Կաղզվան): Չհարմահալի գավառի ամենահին հայաբնակ գյուղն է Վաստիգանը: 1869-72 թթ. և 1918 թ. Չ. Գ.-ի հայ բնակչությունը ի թիվս մի շարք այլ գավառների մեծապես տուժել է ահավոր սովից: 1917 թ. Չ. Գ.-ի 9 գյուղերում բնակվում էր մոտ 4300 հայ, 1928 թ. 12 գյուղերում 620 տուն (3100 հայ): 1946 թ. Խորհրդային Հայաստան ներգաղթեց Չհարմահալի հայաբնակ գյուղերից 6-ը (Աղբուլաղ, Սինազան, Մամուռան, Լիվասիան, Ներքին Քոնարք և Վերին Քոնարք – 1144 հոգի): Չհարմահալի գավառի վերջին 3 հայաբնակ գյուղերը (Մամուքա, Հաջիաբադ, Սիրաք – 1949 թ. 836 հոգի, 1960 թ. մոտ 30 հոգի) վերջնականապես հայաթափվել են 1960-ական թթ. վերջին: Սրանց բնակչությունը հիմնականում տեղափոխվել է Թեհրան և Աբադան:

Փերիան (Սպահանից հյուսիս-արևմուտք) եղել է Իրանի առավել հայաշատ գավառը: Փերիայի հայությունը գաղթեցվել է հիմնականում Մեծ Հայքի Վասպուրական նահանգից (Վան, Արձեշ, Արծկե): 1851 թ. Փերիայի 19 հայաբնակ գյուղերում բնակվում էր 880 տուն – 5600 մարդ, 1901 թ. 24 գյուղերում 1430 տուն – 9300 մարդ, 1918 թ. 26 գյուղերում 1790 տուն – 13450 մարդ, 1946 թ. 24 գյուղերում 2265 տուն – 15100 մարդ (դրանցից Հայաստան են ներգաղթել 370 տուն –

2400 մարդ), 1965 թ. 17 գյուղերում 1550 տուն – 10365 մարդ: Իրանի հայաբնակ գավառներից Փերիան վերջինն է հայաթափվել 1990-ական թթ.: 2003 թ. Փերիայում հայաբնակ էր միայն Բոլորան գյուղը:

Ղարաղան գավառը գտնվում է Թեհրանից 150-180 կմ հարավ-արևմուտք՝ Ղազվին-Սավե-Համադան քաղաքների եռանկյունում: Ղարաղանում հայերը բնակություն են հաստատել 1750 թ. սկսած: Առաջին հայաբնակ գյուղը եղել է Լարը (այլ տվյալներով Քոշքաբարը), որի բնակչությունը այստեղ է տեղափոխվել Բուրվարի գավառից: Երկրորդ հայաբնակ գյուղն է Չարիհադը, ուր տեղափոխվել են Փերիայից, Քյազազից, Քյամարայից: Ժամանակի ընթացքում Ղարաղանի հայաբնակ գյուղերի թիվը հասել է 12-ի: 1940 թ. գավառի 9 հայաբնակ գյուղերում բնակվում էր 405 տուն – 2057 մարդ: 1962 թ. Ղազվինի 7.5 բալանոց ավերիչ երկրաշարժը ճակատագրական եղավ Ղարաղանի համար: Մարդկային և նյութական զգալի կորուստներ կրած գյուղերը հետագա մեկ-երկու տարում շատ արագ հայաթափվեցին: Վերջին Վերին Չանախչի գյուղը դատարկվեց 1973 թ.: Ղարաղանի հայ բնակչության հիմնական մասը տեղափոխվեց Թեհրան²⁸:

Իրանում հայկական գյուղերի հայաթափման այդ նույն տխուր վիճակը առկա է նաև Ատրպատականում: Ուրմիա (Կասպուտան) լճի և Կասպից ծովի միջև ընկած Ատրպատականը (ավելի քան 100000 քառ. կմ) հարավ-արևելքից հարևան լինելով Մեծ Հայքին, դեռևս մ. թ. ա. ընկած ժամանակաշրջանից ամենայն հավանականությամբ հայաբնակ է եղել: IV-VII դարերում Առաջավոր Ասիայում տեղի ունեցած ռազմաքաղաքական մեծ ցնցումների հետևանքով (387 թ. Հայաստանի անկախության կորուստ և VII դ. առաջին կես՝ արաբական նվաճումներ) Ատրպատականին միացվեցին Մեծ Հայքի որոշ տարածքներ: Պարսկահայքը, Վասպուրականի արևելյան մասը և Փայ-

²⁸ Վերևում բերված նյութը անփոփոխ քաղել ենք «Իրան-իրանահայ համայնք», Երևան, 2005 թ. քարտեզից, որի հեղինակ-կազմողն է Ռաֆայել Թադևոսյանը, խմբագիրը Վահե Շահմուրադյանը և համակարգչային խմբագիրը Վահե Ղավթյանը:

տակարանը (հետագայում Ղարադաղ) մինչև XIX դ. սկիզբը հոծ հայություն ունեցող Ատրպատականը (65.000 մարդ) զգալիորեն հայաթափվեց 1828 թ. Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրին հաջորդած դեպի ռուսահայ տիրույթներ հայերի զանգվածային ներգաղթի (45.000 մարդ) հետևանքով: XX դ. սկզբին Ատրպատականի մասամբ կամ զուտ հայաբնակ 134 գյուղերում և քաղաքներում բնակվող հայ համայնքի թիվն էր 6123 տուն – մոտ 37 հազար հոգի: Առավել հայաշատ գավառներն էին Ատրպատականի հյուսիս-արևելյան մասում գտնվող Ղարադաղը (ավելի քան 6000 հայ) և Ուրմիա լճից արևմուտք ընկած Սալմաստ-Ուրմիա շրջանը (ավելի քան 15.000 հայ): Համայնքին և հատկապես Մակու-Խոյ-Սալմաստ-Ուրմիա շրջանին ծանր հարված հասցրեց 1918 թ. թուրքական ներխուժումը, որի հետևանքով զոհվեց ավելի քան 7000 հոգի, իսկ հազարավոր հայեր դարձան փախստական: 1946 թ. մեծ ներգաղթի հետևանքով Ատրպատականի հայ համայնքն էլ ավելի նոսրացավ: 1948 թ. այն կազմում էր ոչ ավելի քան 15.000 մարդ: 2005 թ. Ատրպատականի հայ համայնքում (ներառյալ Թավրիզը) արդեն հաշվվում էր մոտ 2000 հայ²⁹:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ իրանահայերի մեծ մասը բնակվում էր Թավրիզ, Թեհրան, Սպահան, Աբադան, Արաք, Ահվազ, Մասջեդսոլեյման և մի շարք այլ քաղաքներում: Ներկայումս հայության մեծ մասը կենտրոնացված է Թեհրանում: Սակայն բացի մայրաքաղաքից հայ բնակչություն կա Սպահանում (Նոր Ջուղան ներառյալ), Շահինշահիրում, ավելի պակաս Թավրիզում (մինչև 1000 հայ, որոնք ապրում են «Լիլավա», «Ղալա» և «Բարոն Ավազ» թաղամասերում), Արաքում, Շիրազում և այլն:

Այսօր իրանահայ համայնքի և համայնքային կառույցների առջև ծառայած գերխնդիրներից ամենագլխավորը ահագնացող չափերի հասնող արտագաղթն է: Հանրահայտ իրողություն է, որ բոլոր ժամանակներում, հատկապես Իրանի պատմության ճգնաժամային պահե-

²⁹ Տե՛ս «Իրան-իրանահայ համայնք» քարտեզը:

րին, հայերը դիմել են արտագաղթի: Գլխավորապես հենց այդ պատճառով Իրանի հայ բնակչության թվաքանակը աճ չի արձանագրել (եթե նկատի ունենանք, որ միայն XVIII դարում Հայաստանից բռնագաղթի միջոցով այդ երկիրն էր տեղափոխվել ավելի քան 300-400 հազար հայ բնակչություն): Նորագույն ժամանակներում իրանահայության խոշոր արտագաղթ տեղի ունեցավ 1979 թ. իսլամական հեղափոխության տարիներին ու նրան հաջորդող շրջանում, ինչպես նաև 1980-1988 թթ. Իրան-իրաքյան պատերազմի շրջանում:

Ներկայումս թեև բացակայում է հետհեղափոխական շրջանին բնորոշ արտագաղթելու նախատրամադրվածությունը, սակայն ապագայի նկատմամբ մտահոգ իրանահայության մի որոշակի զանգվածի մոտ այնուամենայնիվ տիրապետող է այն մտայնությունը, որ վաղ թե ուշ իրենք ևս պետք է վերցնեն գաղթականի ցուպը: Ուստի ավելի լավ է դա անել հենց հիմա, քանի դեռ չեն փակվել արտագաղթելու հնարավորությունները և քանի դեռ հնարավոր է անշտապ, հանգիստ պայմաններում, առանց խուճապի իրացնել իրենց անշարժ գույքը և տեղափոխվել այլ երկիր:

Անկասկած հայության արտագաղթն ունի բազմաթիվ շարժառիթներ. ա. տնտեսական: Արևմուտքի երկրների և առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները երկրի բնակչության համար ստեղծել են ծանր վիճակ. իրանական դրամական միավորը՝ ռիալը, սրընթաց կերպով արժեզրկվում է, սղաճի տեմպերն ընդունել են մեծ չափեր, տեղի է ունենում արանքների և ծառայությունների հարաճուն թանկացում, հետևաբար նաև բնակչության կենսամակարդակի անկում: Թեև իրանահայերը մեծ մասամբ ապրում են նյութական ապահով ու բարեկեցիկ կյանքով, սակայն ինքնստիճյան հասկանալի է, որ նրանք ևս անմիջապանորեն իրենց վրա զգում են այդ բոլոր դժվարությունների բեռը:

բ. Արտագաղթի քաղաքական շարժառիթներ. շատերի մոտ իշխող է դարձել այն մտայնությունը, որ Իրանի միջուկային ծրագրի կապակցությամբ արևմուտքի հետ խորը առձակատումը, իրանական կառավարության արմատական կեցվածքը Իսրայելի հանդեպ և մի

շարք այլ գործոններ իրենց մեջ պարունակում են զինված դիմակայության վտանգ: Առհասարակ այն հանգամանքը, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը մշտապես արտաքին ճնշումների տակ է, մարդկանց մոտ առաջ է բերում ոչ միայն մտահոգություն, այլև տագնապ:

Արտագաղթը կապված է նաև տարածաշրջանում տիրող իրավիճակի հետ: Կյանքը համոզիչ փաստերով ապացուցել է, որ մեր օրերում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում ցանկացած անկայունության ժամանակ թիրախ են դառնում փոքրամասնությունները: Միանգամայն ակնհայտ է նաև, որ այսպես կոչված «արաբական գարնան» իրադարձությունները, ինչպես նաև կրոնական-իսլամիստական ծայրահեղականների ակտիվությունը խոցելի են դարձնում առհասարակ քրիստոնեությունը դավանող ժողովուրդների դիրքերը: Մարդիկ ակնառու կերպով տեսնում են, որ այսօր Սիրիայի և Եգիպտոսի երբեմնի ծաղկուն ու բարգավաճ հայ համայնքներն արդեն վերացման շեմին են: Նույնը վերաբերում է Իրաքի, Հորդանանի և Պաղեստինի հայ համայնքներին: Նույնիսկ «փոքրիկ Հայաստան» հորջորջված լիբանանահայ համայնքը, որն ընդամենը մի քանի տասնամյակ առաջ հանդիսանում էր Սփյուռքի ամենահայաշատ և ամենամեծ ու ամենաաչքի ընկնող կենտրոնը, այսօր կանգնած է նույն մարտահրավերների առջև: Այդ համայնքում ևս հայ բնակչության թիվը էականորեն կրճատվել է, առկա են նաև մտահոգիչ խնդիրներ հայապահպանության տեսանկյունից:

Ներկայումս անկասկած Իրանում հայերի համայնքային կյանքն իր վրա կրում է սիրիական իրադարձությունների ազդեցության կնիքը, քանի որ Իրանը, առավել քան տարածաշրջանի որևէ այլ երկիր, ներքաշված է այն իրադարձությունների մեջ, որոնցով պայմանավորված են սիրիական ձգնաժամի հանգուցալուծմանը միտված քայլերը: Այդ առումով իրանցիներն իրենց բախտակից են համարում սիրիացիների հետ, իսկ իրանահայերը՝ սիրիահայերի:

գ. Առկա են նաև իրանահայության արտագաղթի զուտ կենցաղային բնույթի պատճառներ: Դրանք են տարածաշրջանում կրոնակազ-

վության (կրոնական գործոնի) մակարդակի աճը, մասնավորապես իսլամական ծայրահեղականների ակտիվացումը Մերձավոր ու Միջին Արևելքի մի շարք երկրներում իրանահայության շրջանում առաջացրել են որոշակի մտավախություն և իրենց անվտանգությանն առնչվող ներքին տագնապ: Մյուս կողմից իրենց բնակության վայրում իսլամական միջավայրը և դրանից բխող որոշակի սահմանափակումները հայերի համար ստեղծում են ինչ-ինչ անհարմարության զգացողություն:

Հայերի արտագաղթին նպաստող գործոններից մեկն էլ այն է, որ արտագաղթողներն ազգականներ ունեն շատ երկրներում: Հայտնի իրողություն է նաև, որ առհասարակ բոլոր ժողովուրդների մոտ անխտիր արտագաղթի հարցում ուժգին կերպով գործում է ուրիշների օրինակին հետևելու ֆենոմենը կամ իներցիայի ուժը: Բացի այդ, արևմուտքի մի շարք երկրներ Իրանից արտագաղթողներին համեմատական հեշտությամբ հատկացնում են մուտքի և ապրելու արտոնագրեր: Իրանահայ հայրենակիցների պատմածի համաձայն, Իրանում գործունեություն է ծավալել «ՀԱՅԱԶ» կոչվող հրեական մի կազմակերպություն, որը մասնագիտացած է հատկապես հայերի արտագաղթի կազմակերպման հարցերում Միացյալ Նահանգներ: Յուրաքանչյուր անձից արտագաղթը դյուրին և առանց թղթաբանական քաշքշուքների կազմակերպելու համար, այդ կազմակերպությունը գանձում է 5000 ԱՄՆ դոլար, ընդ որում գումարն արտասահմանում հետ վերադարձնելու պայմանով: Որքան էլ որ զարմանալի ու անհավատալի է, չնայած կազմակերպության իսրայելական լինելու մեծ հավանականությանը, այն Իրանում փաստորեն գործում է անխափան ու անարգել: Շատերն այն կարծիքին են, որ դեռևս XIX դարում հիմնված հրեական այդ կազմակերպությունը հայության արտագաղթի վրա մեծ գումարներ է վաստակում: Կան նաև տեսակետներ, որ դա տարածաշրջանի հայաթափման ծրագիր է: Ընդ որում, ուշագրավն այն է, որ «ՀԱՅԱԶ»-ի ծրագիրը տարածվում է միայն կրոնական փոքրամասնությունների վրա, այսինքն մուսուլմանները ներգրավված չեն ծրագրի շրջանակների մեջ:

Իրանահայ համայնքի արտագաղթողների մի մասն էլ երիտասարդներ են, որոնք գնում են ուսանելու և չեն վերադառնում: Մի խոսքով, անկանխատեսելի զարգացումների հեռանկարը իրանահայության մի մասին մղում է արտագաղթի հեռու և մոտ երկրներ:

Իրանից հայերը հիմնականում արտագաղթում են ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Շվեդիա, Հոլանդիա, մասամբ Շվեյցարիա, ինչպես նաև Եվրամիության այլ երկրներ: Կան նաև արտագաղթողներ Ծոցի նավթ արդյունահանող հարուստ երկրներ՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Կատար և Բահրեյն:

Հայաստանի անկախացումից հետո սկսվեց նաև իրանահայության արտագաղթ դեպի հայրենիք: Դրան մեծապես նպաստեց սփյուռքահայերին կեցության վերաբերյալ 10-ամյա ժամկետով հատուկ անձնագրերի տրամադրումը Հայաստանի կառավարության կողմից, ինչպես նաև երկքաղաքացիության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից օրենքի ընդունումը: Ճիշտ է, Իրանի օրենսդրությամբ արգելվում է երկքաղաքացիությունը, տվյալ դեպքում Իրանի քաղաքացիների այլ երկրների քաղաքացիություն ձեռք բերելը, սակայն երկրի իշխանությունները փաստորեն չեն խոչընդոտում իրենց քաղաքացիներին, այդ թվում նաև հայերին, այլ երկրների քաղաքացիություն ձեռք բերել:

Հայաստան արտագաղթած իրանահայերից շատերը արդյունավետ գործունեություն են ծավալել հայրենիքում: Նրանք ձգտում են հայաստանյան շուկայում զբաղեցնել տեղ: Սակայն Իրանի տարադրամի շուկայում տիրող իրավիճակը հնարավորություն չի տալիս իրանահայերին ավելի մեծ ծավալներով ներդրումներ կատարել Հայաստանի տնտեսության մեջ: Իրանական արժույթի աննախադեպ անկումը և արտարժույթի ձեռք բերման հետ կապված դժվարությունները չեն նպաստում հայաստանյան տնտեսության մեջ իրանահայության ինտեգրմանը: Հայաստանում իրանահայ ներդրողների մի մասը հասել է հաջողության, մեկ այլ մասը ծախողվել է: Կան նաև մարդիկ, որոնց ձեռնարկատիրական և ներդրումային գործունեությամբ

յունը նրանց մոտ ոչ դրական տրամադրություններ է առաջացրել, ուստի հրաժարվել են իրենց այդ գործունեությունից, կամ ուղղակի Հայաստանից հեռացել են այլ երկրներ:

Դրանով հանդերձ, իրանահայերից շատերի համար այսօր ամենաապահով հանգրվանը համարվում է Մայր Հայրենիքը: Այդ է պատճառը, որ նվազագույն ֆինանսական միջոցներ ունեցող իրանահայն Իրանում էժան գնով վաճառում է իր տունը և շտապում է Հայաստանում ձեռք բերել որևէ բնակարան: Իրանահայերի Հայաստանում հաստատվելը ունի նաև այն առավելությունը, որ հայրենիք մեկնողը և այնտեղ բնակարան ձեռք բերողը կարող է Իրանում չվաճառել իր տունը, խանութը կամ արհեստանոցը: Համակարգչային տեխնիկական և հեռահաղորդակցության մյուս միջոցները հնարավորություն են տալիս հեռավորության վրա կարգադրելու իր գործերը, իսկ ցանկության դեպքում առկա է Հայաստան-Իրան օդային և ցամաքային կապը, որի օգնությամբ նրանք մեկ ժամից քիչ ավելի, կամ մեկ օրվա ընթացքում կարող են լինել իրանական հողի վրա:

Ցավոք, սակայն, պետք է նշել, որ իրանահայության մի զգալի մասը գերադասում է ներգաղթել ոչ թե հայրենիք, իր նախնիների բնօրրանը, այլ ԱՄՆ, Կանադա, Եվրամիության երկրներ, Ավստրալիա և ուր հնարավոր է: Իսկ դա վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ բոլոր իրանահայերի կողմից է ընկալվում որպես իրենց երազած հայրենիք:

Մի խոսքով, որքան էլ որ ցավալի է հայ մարդու նման մոտեցումը, իրանահայության արտագաղթն իրողություն է: Հայերն Իրանից անդադրում կերպով արտագաղթում են և առաջիկայում ևս կշարունակեն արտագաղթել, չնայած որ շատերի համար, որոնք կրթություն չունեն, մասնագիտություն չունեն, զուրկ են ֆինանսական միջոցներից և ոչ էլ տիրապետում են լեզուների, արտագաղթին դիմելը անհայտություն է: Անշուշտ իրանահայության արտագաղթը վտանգի տակ է դնում գաղթօջախի կենսունակությունը, ապագայում գուցե և գոյությունը, մի հանգամանք, որը խիստ անցանկալի է Հայաստանի Հանրապետության ընթացիկ և ռազմավարական շահերի տեսակե-

տից: Մի խոսքով, իրանահայ համայնքի ազգային հեռանկարն այս տեսանկյունից դիտարկելիս, ցավոք, պետք է նշել, որ այն այնքան էլ հուսադրող չէ:

Որքան էլ հռետեստորեն հնչեն իրանահայ համայնքի ապագայի վերաբերյալ դատողությունները, անժխտելի փաստ է, որ այսօր համայնքի և Հայաստանի միջև կապերը հարաճուն կերպով զարգանում են: Համայնքի անդամների ջախջախիչ մեծամասնությունը Հայաստանը համարում է իր հայրենիքը և բնավ անտարբեր չէ նրա հոգսերի, դժվարությունների և այնտեղ տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ: Դրա խոսուն վկայությունն է այն իրողությունը, որ համայնքի շատ ներկայացուցիչներ, նույնիսկ որոնք արդեն մշտական բնակության համար տեղափոխվել են արտերկիր՝ ԱՄՆ, Կանադա, Եվրամիության այլևայլ պետություններ և այլն, չեն զլանում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում մասնակցել բարեգործական-մարդասիրական զանազան ծրագրերի իրագործմանը: Նրանցից շատերը, նույնիսկ իրենց անձնական խնայողությունների հաշվին, մասնակցում են դպրոցների, մանկապարտեզների և այլ հաստատությունների վերանորոգմանը, մարդասիրական օգնություն են ցուցաբերում մանկատներին, աշխատում են հիվանդանոցները հագեցնել նորագույն սարքավորումներով և այլն: Իրանահայությունը անկախ նրանից, թե ինչ խավի է պատկանում, ունեցվածքային ինչպիսի վիճակում է գտնվում, և նույնիսկ այժմ որ երկրում է բնակվում, եռանդուն կերպով մասնակցում է նաև ի նպաստ Լեռնային Ղարաբաղի կամ այլ ծրագրերով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվող դրամահավաքներին:

Կարևոր է նաև նշել, որ Իրանից արտերկիր արտագաղթած իրանահայերը շարունակում են մեծապես նախանձախնդիր լինել իրենց ազգային դիմագիծն ու ինքնությունը պահելու հարցում: Դրա ցայտուն վկայությունն է հանդիսանում այն իրողությունը, որ նրանք իրենց բնակություն հաստատած երկրներում ևս օր առաջ աշխատում են ստեղծել իրենց մշակութային միությունները, հայոց լեզվի և գրականության առնվազն մեկօրյա դպրոցները, զբաղվում են մշակութային գործունեությամբ, իրենց երեխաների հայեցի դաստիարակությամբ և այլն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԹԵՄԵՐԸ ԵՎ ՎԱՐՉԱ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Իրանահայերի իրավական դրության հիմքը կրոնա-եկեղեցական ինքնավարությունն է: Ինքնավարության այդ ձևը գաղութում գոյություն ունի XI դ. ի վեր երկրում հայկական գաղթօջախների սկզբնավորման օրից: Գաղութն ունեցել է ինքնավարության սեփական մարմինները՝ թեմական առաջնորդարանները:

Իրանահայ գաղութի, ինչպես նաև հայկական մյուս գաղթավայրերի թեմերը միշտ ենթարկվել են հայկական եկեղեցու Մայր աթոռին՝ էջմիածնի կաթողիկոսությանը: XII դ. սկզբից մինչև XV դ. 40-ական թվականները, այսինքն մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը, իրանահայ գաղութի թեմերը ենթարկվում էին Հռոմկլային, որտեղ գտնվում էր հայոց կաթողիկոսությունը: 1441 թ., երբ հայ Առաքելական եկեղեցու կաթողիկոսական աթոռը կրկին տեղափոխվեց էջմիածին, Իրանում գտնվող թեմերը անցան նրա իրավասության տակ: Ինչպես հայտնի է, այդ ժամանակ էջմիածինը գտնվում էր պարսից տիրապետության ոլորտում, ուստի հայոց կաթողիկոսը իր հոտը ղեկավարում էր համաձայն պարսիկ տիրակալների կողմից արձակած իրամանագրերի (ֆիրմանների)³⁰:

XVII դ. սկզբին շահ Աբբաս Ա-ի կողմից հայերի բռնի տարագրությունից հետո, ողջ իրանահայ բնակչության եկեղեցական և հասարակական գործերը ղեկավարելու համար ստեղծվում է թեմ, որի կենտրոնը դառնում է Նոր Զուղան³¹: Այս թեմի անունը ընդհուպ մինչև 1960 թ. պաշտոնապես եղել է Իրանա-Հնդկաստանի կամ Պարսկա-

³⁰ Տե՛ս Մարտիրոսյան Հ. Հ., Իրանահայ գաղութի պատմությունից (նորագույն շրջան), Հայկ. ՍՍՀ ՊԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. VIII, Իրան, Երևան, 1975, էջ 224:

³¹ Տե՛ս Ghougassian V. S., The Emergence of Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, University of Pennsylvania, 1998.

Հնդկաստանի Հայոց թեմ, որովհետև Նոր Ջուղայից Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդը հոգևոր հովիվներ է ուղարկել նաև Հնդկաստանում և Հեռավոր Արևելքի երկրներում գտնվող հայ համայնքները հովվելու համար: Թեմի առաջնորդանիստ կենտրոնը 1606 թ. մինչև օրս հանդիսանում է Նոր Ջուղան, որտեղ թեմակալ առաջնորդի նստավայրը Ս. Ամենափրկիչ վանքն է:

Այսպիսով, որպես հայ Առաքելական եկեղեցու թեմական կենտրոն, Նոր Ջուղան նշանակալից դեր էր խաղում ոչ միայն իրանահայերի, այլև մոտիկ ու հեռու հայ գաղթօջախների հայության հասարակական-մշակութային կյանքում:

Նոր Ջուղայի առաջնորդներն ի սկզբանե նշանակվում էին եջմիածնի կողմից, Վեհափառ կաթողիկոսի կոնդակով: Ջուղայի առաջնորդը համարվում էր ոչ միայն թեմի հոգևոր պետը, այլև պարսից շահերի հրովարտակներով ճանաչվում էր որպես «ազգապետ և ծայրագույն դատաւոր ժողովրդեան Հայոց Պարսկաստանի»:

Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդները, փաստորեն, կարողացել էին հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության կազմում իրենց համար ապահովել այնպիսի ինքնուրույն վիճակ Իրանի սահմաններում, ինչպիսին ձեռք էին բերել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքները Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող երկրամասերում³²:

Իրանի հյուսիսային շրջաններում հայերի հոգևոր-հասարակական կյանքը կենտրոնացված էր Ատրպատականի թեմում: Այս շրջանի հայերը հիմնականում բնիկներ են: Ատրպատականի թեմը կազմավորվել է 1833 թ. Նիկողայոս եպիսկոպոս Կարբեցիի կողմից: Մինչև 1943 թ. Իրանում գոյություն են ունեցել երկու՝ Ատրպատականի և Իրանա-Հնդկաստանի թեմերը: 1944 թ. նախկինում Իրանա-Հնդկական թեմի մեջ մտնող համայնքների մի մասից կազմվեց նոր Թեհրանի թեմը:

Այսպիսով, ներկայումս Իրանում գործում են երեք թեմեր: Դրանք են՝ 1. Հյուսիսային կամ Թավրիզի թեմը: Սա իրանահայության հնա-

³² «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 123:

գույն թեմն է, որի մասին հիշատակություններ կան դեռևս XII դարից: Այս թեմի նախկին անունը, ինչպես նշվեց, մինչև 1833 թ. եղել է Ատրպատականի թեմ, որի կենտրոնն էր Մակուի (Արտազ) Ս. Թադեոս Առաքյալ (Թադեի) վանքը: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը Ս. Թադեոսի վանքից փոխադրվել է Թավրիզ, որտեղ XIX դ. սկզբներին բավականին մեծ թվով հայեր կային: Սակայն Թուրքմենչայի պայմանագրով հայերի Երևանի և Նախիջևանի նահանգներ փոխադրվելուց հետո (մոտ 45 հազար մարդ), Թավրիզում մնացել էր ընդամենը 40 հայ ընտանիք:

1833 թ. թեմը վերանվանվել է Թավրիզի թեմ Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցիով: Սակայն ավանդաբար, ներկայումս ևս, այդ թեմը հաճախ անվանում են Ատրպատականի թեմ: Ազգային առաջնորդարանը մինչև 1936 թ. գտնվում էր Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում, Թավրիզի Ղալա թաղամասում: Հետագայում այն տեղափոխվել է նախկին թեմական դպրոցի շենքը, որը գտնվում է Թավրիզի հարավային Շարիաթի փողոցում և մինչև այժմ էլ գտնվում է այնտեղ:

1833 թվականից թեմն ունեցել է 14 առաջնորդ, որոնցից հատկապես նշանավոր են Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը և Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, որը թեմը ղեկավարել է 1913-1948 թթ.: 2000 թվականից թեմի առաջնորդն էր Նշան եպիսկոպոս Թովուզյանը (մահացել է 2009 թ.): Ներկայումս Թավրիզի թեմի առաջնորդն է Գրիգոր Ծայրագույն վարդապետ Զիֆթձյանը: Թեմի առեմնապետն է Ռուբիկ Ջանանյանը:

Վարչական առումով այս թեմի մեջ այժմ մտնում են երեք նահանգներ: Դրանք են. Արևելյան Ատրպատական (Թավրիզ կենտրոնով), Արևմտյան Ատրպատական (Ուրմիա կենտրոնով) և Արդեբիլի նահանգը (Արդեբիլ կենտրոնով): XX դարի սկզբներին թեմի տարածքում բնակվել են 30 հազար հայեր, հետագայում հայրենադարձության և արտագաղթի հետևանքով նրանց թիվը նվազել է և 1980-ական թվականներին կազմել 17 հազար: Ներկայումս թեմի տարածքում

ապրում է մոտ 3 հազար հայ բնակչություն: Նրանք հիմնականում բնակվում են Թավրիզում և Ուրմիայում, ընտանիքներ կան նաև Սալմաստում:

Թեմի տարածքում կա շուրջ 180 (որոշ տվյալներով 223) հայկական եկեղեցի, որոնցից կանգուն են 42-ը: Նշանավոր են Արտազի (Մակուի) Ս. Թադեոս և Ս. Ստեփանոս նախավկա (VII-IX դարեր) վանքերը, Թավրիզի Ս. Աստվածածին (1872 թ.), Ս. Սարգիս (1845 թ.), Սալմաստ գավառի Ղալասար գյուղի Ս. Սարգիս (1806 թ.), Խոյի Ս. Սարգիս (1120թ.), Ուրմիայի Ս. Ստեփանոս եկեղեցիները և այլն:

Ներկայումս գործող եկեղեցիներն են Ս. Սարգիս (գտնվում է Թավրիզի Լիլավա թաղամասում, կառուցվել է 1845 թ.), և Ս. Մարիամ Աստվածածին (Մարիամ Նանե), գտնվում է նույն քաղաքի Մարալան թաղամասում, կառուցվել է 18-րդ դարի վերջերին), Ս. Մարիամ Աստվածածին (գտնվում է Ղալա թաղամասում, կառուցվել է 1782 թ.), հայոց ազգային գերեզմանատան Ս. Շողակաթ մատուռ, հիմնվել է 1940 թ.:

Թավրիզի շրջակայքում գտնվում են ևս 12 այլ կանգուն եկեղեցիներ: Թավրիզի թեմի տարածքում են գտնվում հայ միջնադարյան ճարտարապետության բազմաթիվ արժեքավոր հուշարձաններ, որոնցից երեքը՝ Ս. Թադեոս Առաքյալի, Ս. Ստեփանոս Նախավկայի և Ծործորի վանքերը գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության հովանավորության ներքո: Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը գտնվում է Թավրիզի մոտակայքում, Դարաշամբ՝ գյուղից 6 կմ հեռավորության վրա: Թավրիզի հայոց թեմի առաջնորդարանի ջանքերով կառուցվել է 21 կմ երկարությամբ ճանապարհ, որպեսզի ուխտավորները դյուրությամբ այցելեն այդ նշանավոր վանքը: Ժամանակին Դարաշամբ գյուղը եղել է հայաբնակ, սակայն Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո նրա բնակիչները գաղթել են Հայաստան: Ներկայումս գյուղը զուրկ է բնակչությունից: Առհասարակ պետք է նշել, որ իրանական օրենքերի համաձայն, հայկական բոլոր պատմական հուշարձանները պահպանվում են պետության կողմից: Երկրի այն քաղաքներում, որտեղ

այս կամ այն պատճառով հայ համայնքը դադարել է գոյություն ունենալուց, հայ Առաքելական եկեղեցուն պատկանող շինությունները գտնվում են թեմերի հսկողության տակ: Որպես օրինակ կարելի է բերել Աբադան քաղաքի հայկական եկեղեցին և դպրոցը:

Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջոցներով հիմնովին վերականգնվել և վերանորոգվել է Ս. Թադեի եկեղեցական համալիրը: Որպես համաքրիստոնեական առաջին սրբատեղի և համամարդկային մշակութային արժեք, այն ներառված է մշակութային ժառանգության համաշխարհային կազմակերպության կողմից պահպանվող կառույցների շարքում: Ս. Թադեսու (Թադե) Առաքյալի վանքը գտնվում է Մակուի շրջանում, Չալրդանի Ղարաքիլիսա գյուղում: Կառուցման թվականը վերագրվում է IV-ից VI դարերին, ըստ ավանդության՝ այն հիմնադրել է Թադեսու առաքյալը: Վանքը մի քանի անգամ երկրաշարժից ավերվել և կրկին վերանորոգվել է: Վանքի քարերից մեկի վրա փորագրված գրությունը վկայում է, որ այն 1814 թ. վերանորոգվել է թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանով: Թավրիզի հայոց առաջնորդարանի ջանքերով վանքը հիմնովին վերանորոգման է ենթարկվել 1946 թ.:

Թավրիզի թեմի բարձրագույն մարմինը չորս տարով ընտրվող պատգամավորական ժողովն է՝ բաղկացած 17 անդամից: Պատգամավորական ժողովն ընտրում է 7 հոգուց բաղկացած թեմական խորհուրդ, որը երեք տարին մեկ կազմավորում է գործադիր մարմին՝ թեմական խորհուրդ:

1961 թ. Թավրիզի թեմն անջատվեց Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից և միացվեց Կիլիկիայի կաթողիկոսությանը: Ղա իրանական պետության կողմից կիրառված քաղաքական քայլ էր, որպեսզի իրանահայությունը կտրի իր կապերը Խորհրդային Հայաստանից: Համաշխարհային երկու բեկեռների միջև թափ հավաքող «սառը պատերազմի» պայմաններում, Մոհամմադ Ռզա շահի եռանդուն մասնակցությամբ տեղի ունեցած այդ քայլը տարածվեց նաև Իրանի մյուս թեմերի վրա: 1961 թ. սկսած Թավրիզի թեմական առաջնորդները նշանակվում են Անթիլիասի կողմից:

ժամանակին Թավրիզի թեմում գործել են բազմաթիվ կրթօջախներ և ազգային հաստատություններ: Առհասարակ, ընդհուպ մինչև XX դարի 30-ական թվականները այդ թեմը կարևոր դեր է խաղացել Իրանի հայ բնակչության կյանքում: Սակայն աստիճանաբար այն կորցրել է իր ունեցած առաջատար դերը, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցավ նոր կենտրոնին՝ Թեհրանին:

Ներկայումս Թավրիզում գործում է միայն մեկ հայկական դպրոց: Կա նաև հայկական մշակութային կենտրոն, գործում է «Արարատ» մարզավանը, մարզամշակութային այլ կազմակերպություններ ու մասնաձյուղեր: Ընդհանուր առմամբ այսօր Ատրպատականի թեմի շրջանակներում հայ մշակութային կյանքը խամրել է: Թավրիզի թեմի առաջնորդարանը և թեմական խորհուրդը պաշտոնապես ճանաչվել են որպես կրոնամշակութային և բարեգործական ընկերակցություն և արժանագրվել «Ատրպատականի ընդհանուր հայության առաջնորդարանի խորհուրդ» անունով:

2. Սպահանի հայոց թեմ: Մինչև 1945 թ. ողջ պարսկահայությունը՝ բացի Ատրպատականի նահանգի հայերից, մաս է կազմել հարավային իրանահայության շրջանակներում գործող թեմի, որը կազմավորվել է 1606 թ. շահ Աբբաս Ա-ի կողմից Հայաստանից հայերի բռնի տեղահանությունից հետո: Հետագայում, երբ Հարավային Իրանի հայոց թեմին են ենթարկվել Հնդկաստանի, Ճավայի և Հարավ-Արևելյան Ասիայի մի շարք այլ հայկական համայնքները, ընդհուպ մինչև 1960 թ. Սպահանի հայոց թեմը կոչվել է Իրանա-Հնդկաստանի թեմ, այնուհետև Սպահանի կամ Հարավային Իրանի թեմ, իսկ 1995 թվականից՝ Սպահանի թեմ: 1944 թ. թեմից անջատվել է Թեհրանի թեմը, իսկ 1958 թ.՝ Հնդկաստանն ու Ծայրագույն Արևելքը: Թեմի կենտրոնն է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքը, որը և հանդիսանում է թեմակալ առաջնորդի աթոռանիստը: Թեմն ընդգրկում է Սպահան, Ֆարս, Խուզիսթան, Չհարմահալ-Բախթիարի, Քոհքիլույե, Բույերահմադի, Լորեսթան, Հորմոզգան նահանգները: Թեմի ներկայիս վարչական սահմանների մեջ մտնում են հետևյալ քաղաքները. Սպահան (որի մեկ

շրջանն է Նոր Ջուղան), Շահինշահիրը, Շիրազը և այլն, որտեղ կա հայ բնակչություն:

Սպահանի թեմի հայ բնակչությունը մինչև 1979 թ. իսլամական հեղափոխությունը կազմել է 10 հազար մարդ, ներկայումս այդ թեմի իրավասության շրջանակներում ապրում է մոտ 7-8 հազար մարդ:

Դարեր շարունակ, ընդհուպ մինչև 1958 թ., Սպահանի թեմը վարչականորեն կապված է եղել Ս. Էջմիածնի կաթողիկոսության հետ: Սակայն 1958 թ. իրանական կառավարության համաձայնությամբ թեմն անջատվեց Էջմիածնից և վարչականորեն միացավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: Եվ քանի որ 1958 թ. Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայ համայնքները, անջատվելով Սպահանի թեմից, մնացին որպես Էջմիածնի կաթողիկոսության ենթակա հարանվանություններ, ուստի, ինչպես նշվեց վերևում, թեմը անվանափոխվեց և այլևս չկոչվեց Իրանա-Հնդկաստանի թեմ:

1961 թ. Բեյրութից Նոր Ջուղա ժամանեց Անթիլիասի նշանակած թեմակալ առաջնորդը: 1978-2002 թթ. Սպահանի թեմի առաջնորդն է եղել անվանի հոգևորական Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը: Ներկայումս (2005 թվականից) թեմակալ առաջնորդն է Բաբկեն եպիսկոպոս Չարյանը, թեմական խորհրդի ատենապետն է Նոել Մինասյանը:

Ընդհանուր առմամբ այս թեմում եղել են 105 եկեղեցիներ, որոնցից ներկայումս կանգուն են 30-ը: Բացի առաջնորդանիստ Ս. Ամենափրկչյան վանքից և Ս. Կատարինյան եկեղեցուց, ներկայումս Նոր Ջուղայում կան 9 եկեղեցիներ, որոնցից ամենահինը Ս. Քևորդ եկեղեցին է (1611 թ. այն կառուցվել է անվանի վաճառական խոջա Նազարի կողմից): Մյուս եկեղեցիներն են Ս. Աստվածածինը (1613), Ս. Հակոբը, Ս. Բեթղեհեմը (1628), Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Հովհաննես Մկրտիչը, Ս. Մինասը (1659), Ս. Ներսեսը, Ս. Նիկողայոսը³³: Սպահանում գործում է նաև հայ կաթողիկե եկեղեցի: Սպահանի թեմի առաջնորդության ներքո գտնվում են 23 գործող եկեղեցիներ:

³³ Տե՛ս Մինասյան Լ. Գ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971: Նույն հեղինակի Սպահանի հայոց թեմի առաջնորդները, Նոր Ջուղա, 1996:

Շիրազ քաղաքում առ այսօր գործում է Ս. Աստվածածին եկեղեցին (XVII դ.): Ի դեպ այդ եկեղեցուն է քահանայագործել և յոթը տարի շարունակ Բաբաքուհ կոչված լեռան վրա դերվիշների հետ ճգնավորություն անելուց հետո Հնդկաստան մեկնել «Ազդարար» ամսագրի հիմնադիր ու խմբագիր՝ շիրազեցի Հարություն քահանա Շնավոնյանը: Շիրազում ամենօրյա հայոց դպրոց չի եղել: Ուստի տեղի «Հայ կանանց եկեղեցասիրաց Միության» ջանքերով, տասնամյակներ շարունակ հայ մանուկներին տրվել է հայեցի դաստիարակություն ուրբաթօրյա հայերենագիտական դասընթացների միջոցով: Շիրազում գործում է նաև «Հայ տունը», որտեղ կենտրոնացել են տեղի փոքրաթիվ համայնքի կրթական, մշակութային, մարզական և այլ աշխատանքները:

Սպահանի թեմի կազմի մեջ ժամանակին մտել են նաև հայ բնակչություն ունեցող գյուղական շրջաններ: Դրանց բնակչության մեծ մասը 1946 թ. հայրենադարձվել է Հայաստան, իսկ մյուս մասը տեղափոխվել է Թեհրան: Ներկայումս Իրանի հայ համայնքում գործնականում գյուղական բնակչություն չի մնացել:

Սպահանի թեմի մեջ մտնում է նաև Պարսից ծոցի առափնյա Խուզիսթան նահանգը: Այս նահանգի նավթային արդյունաբերության քաղաքներում (Մասջեդ Սուլեյման, Ահվազ, Անդիմեշկ, Աբադան, Խորամշահր, Բանդար Մահշահր, Աղաջարի և այլն) մինչև 1980 թ. իրանա-իրաքյան պատերազմի սկսվելը եղել է բավականին մեծ թվով հայ բնակչություն: Այժմ այդ վայրերում հայեր համարյա չեն մնացել, բացառությամբ մի քանի հայ ընտանիքների և նավթային ընկերության անհատ պաշտոնյաների: Ահվազում կա Ս. Սարգիս անունով եկեղեցի: Հայկական եկեղեցիներ կան նաև Աբադանում և Բուշեհրում, որոնք չեն գործում հավատացյալներ չլինելու պատճառով:

Սպահանի թեմի իրավասության շրջանակներում ներկայումս գործում են հետևյալ գործուն հաստատությունները. 1961 թվականից Սպահանի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության բաժանմունքը և հայագիտության ամբիոնը, Հայ մարզամշակութային «Արարատ» միությունը, «Նոր Զուղայի հայ մարզամշակութային

միությունը», «Փերիո կրթասիրաց միությունը», «Հայ ուսումնասիրաց Չհարմահալ միության Նոր Ջուղայի մասնաձյուղը», «Նոր Ջուղայի հայ կանանց գթության («Կարմիր խաչ») միությունը», «Նոր Ջուղայի հայուհիների բարեգործական ընկերությունը», «Սասուն» մշակութային միությունը, «Կոմիտաս» մանկական երաժշտական դպրոցը, «Տաթև» երգչախումբը, «Հայ Դատի հանձնախումբը» և այլ հաստատություններ: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչյան վանքի բակում գտնվում է թանգարան, որտեղ պահվում և ցուցադրվում են ձեռագիր գրքեր, նկարներ, կրոնական արարողությունների հանդերձանքներ, ազգային տարազներ, կաթողիկոսների կոնդակներ, շահական հրովարտակներ, հայկական միջնադարյան ձեռագրեր, անվանի եվրոպացի նկարիչների գործեր, հայկական թագավորների պատկերներով ոսկեդրամներ և այլն:

Նոր Ջուղայից և Սպահանից բացի (ներկայումս Սպահանի ընդարձակման պատճառով Նոր Ջուղան վերածվել է նրա արվարձանի), որոշ թվով հայեր են բնակվում նաև Սպահանից մոտ 30 կմ հեռավորության վրա գտնվող Շահինշահի քաղաքում: Այստեղ գործում են երկու տարրական դպրոցներ՝ «Սրբոց Վարդանանց» և «Մասիս» անվանումներով: Գործում է նաև «Հայ համայնքի վարչությունը», «Հայ կանանց եկեղեցասեր միությունը» և մի շարք այլ միություններ և հաստատություններ:

3. Թեհրանի կամ Կենտրոնական թեմ: Այս թեմը իրանահայ համայնքի ամենաերիտասարդ և ամենամեծ թեմն է: Այն իր նշանակությամբ և բնակչության թվով ամբողջ հայ համայնքի կորիզն է: Թեմը կազմավորվել է 1944 թ., առանձնանալով Իրանա-Հնդկաստանի թեմից: Այդ ժամանակ Թեհրանի հայ բնակչությունը հաշվվում էր 25 հազար մարդ³⁴: Թեմի ստեղծման նախադրյալներն էին Թեհրանի հայ ազգաբնակչության թվի աճը, իրանահայերի հասարակական ու մշակութային հիմնական ներուժի Թեհրանում կենտրոնանալը և այլն:

³⁴ «Վերածնունդ», 1944, 18 հունիսի:

Սկզբում թեմի առաջնորդարանը գտնվել է Ս. Աստվածածին եկեղեցու տարածքում: 1972 թ. Ս. Սարգիս եկեղեցու կառուցումից հետո, նրան կից կառուցվել է առաջնորդարանի շենքը, ուր մինչև այսօր գտնվում է առաջնորդարանը:

Թեմի անդրանիկ առաջնորդ է նշանակվել Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանյանը (1944-1945 թթ.), որին հաջորդել է Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը (1945-1949 թթ.): Առաջնորդանիստը Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցին է (1973 թվականից): Թեմն ընդգրկում է Թեհրանն իր շրջակայքով և Արաք, Համադան, Մաշհադ, Գորգան, Ռաշտ, Սարի, Էնզելի, Ղազվին, Բախթարան (նախկին Քերմանշահ) քաղաքները: Թեմի կազմի մեջ են մտնում Կենտրոն, Խորասան, Մազանդարան, Գիլան նահանգների հայ համայնքները³⁵: Մինչև 1958 թ. իրանահայ մյուս թեմերի նման Թեհրանի թեմը ենթարկվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնին, այնուհետև անցել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ: 1960 թ.-ից մինչև 1999 թ. թեմակալ առաջնորդ է եղել անվանի հոգևորական Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը, որը չափազանց մեծ ներդրում է ունեցել իրանահայության հոգևոր, կրթական ու մշակութային կյանքում: Թեհրանի մի շարք դպրոցներն ու եկեղեցիները հիմնադրվել են նրա օրոք: Նրա գործունեության ընթացքում կազմվել է թեմի կանոնագիր-ծրագիրը, որի հիմքում հայ Առաքելական եկեղեցու օրենքներն էին: Այդ կանոնագրի հիման վրա են ընտրվում պատգամավորական ժողովի անդամները: Ըստ թեմի կանոնադրության, թեմակալ առաջնորդն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից՝ առանց պաշտոնավարության ժամկետը սահմանելու: Իր հերթին այդ ժողովն ընտրում է հաշվեքննիչ մարմին, ինչպես նաև թեմական խորհրդի անդամներ: Համայնքի բոլոր մարմինները պատասխանատու են թեմական խորհրդին, իսկ ինքը՝ թեմական խորհուրդը, պատասխանատու է պատգամավորական ժողովի առջև:

³⁵ Տե՛ս Բաղայան Գ., Իրան հանրագիտարան, Երևան, 2011, էջ 270-271:

2000 թվականից Թեհրանի թեմի թեմակալ առաջնորդն է Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանը, թեմի ատենապետն է Էդվարդ Բաբախանյանը: Թեմի տարածքում կա շուրջ 100 եկեղեցի, որոնցից կանգուն են 20-ը: Դրանցից 8-ը գտնվում է Թեհրանում (Ս. Գևորգ, Ս. Թադեոս-Բարթուղիմեոս, Ս. Թարգմանչաց, Ս. Սարգիս, Սրբոց Վարդանանց, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մինաս, Ս. Մարիամ Աստվածածին) Նոր Բուրաստան գերեզմանատան և «Արարատ» մարզավանի Ս. Խաչ մատուռները: Գորգանի շրջանում կա Ս. Աստվածածին մատուռը, Ռաշտ քաղաքում Ս. Մեսրոպ եկեղեցին: Եկեղեցիներ կան նաև թեմի մյուս քաղաքներում՝ Արաքում, Քալավայում, Ղարաղանում, Մաշհադում, Բախթարանում, Համադանում, Էնգելիում, Ղազվինում: Առհասարակ պետք է նշել, որ Իրանում գործող հայ Առաքելական եկեղեցու բոլոր երեք թեմերին և ընդհարապես ողջ հայ համայնքին հաջողվել է լավ վիճակում պահպանել եկեղեցիներն ու մատուռները, թեմերի հաշվեկշռի մեջ գտնվող բոլոր շինությունները, թանգարաններն ու գրադարանները: Գործող եկեղեցիներն ու շինությունները պարբերաբար վերանորոգվում են թեմական խորհուրդների կողմից հատկացված գումարների հաշվին:

Իրանի հայ համայնքի վերոհիշյալ երեք թեմերն իրարից անկախ մարմիններ են, ունեն իրենց շրջանների հետ կապված հատուկ խնդիրներ ու ներքին դրվածք: Սակայն դրանով հանդերձ, նրանք միմյանց հետ ունեն սերտ հարաբերություններ: Ընդ որում, Կենտրոնական կամ Թեհրանի թեմի առաջնորդը հանդիսանում է Իրանի միջեկեղեցական խորհրդի նախագահը: Թեմերը միմյանց հետ փոխանակում են տեղեկատվություն կրոնական, ազգային, հասարակական հարցերի վերաբերյալ: Ընդհանուր բնույթի դժվարությունների հանդիպելիս երեք թեմերն էլ հանդես են գալիս միասնաբար: Այդ երեք թեմերն առանձին-առանձին ենթարկվում են Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը: Ի դեպ, Արամ Ա կաթողիկոսը իր այցելությունների ժամանակ Իրան հայտարարել է, որ կյանքի է կոչելու թեմերի համագործակցության մի հանձնախումբ: Այդ երեք թեմերն էլ պետության կողմից ձանաչվում են որպես համայնքի հոգևոր իշխանություն-

ներ: Կառավարությունը ճանաչում է նաև այդ թեմերի աշխարհիկ իրավասությունները որպես համայնքի «ազգային իշխանություն»:

Իրանի հայկական երեք թեմերն իրենց կրոնական գործերը վարում են համաձայն հայոց Առաքելական Եկեղեցու կանոնների և ավանդույթների, ինչպես նաև յուրաքանչյուր թեմի կողմից ներկայացված կանոնադրության: Թեմերի կանոնադրությունները երևութապես կազմվում են 1860-1863 թթ. արևմտահայության համար կազմված «Ազգային սահմանադրության» հիման վրա, սակայն դրանք հարմարեցված են նաև երկրի «Կուսակցությունների և հասարակական միավորումների օրենքին» և հաստատվում են պետության կողմից: Համայնքային ընտրությունները կատարվում են ներքին գործերի նախարարության հսկողությամբ: Համապատասխան նախարարությունների հսկողությամբ են կատարվում նաև համայնքային մարմինների հասարակական գործերը, ըստ համապատասխան օրենքների, կառավարական որոշումների ու շրջաբերականների: Օրինակ, 1935 թ. Իրանի կառավարությունն ընդունել է «Իրանահայության ընտանեկան և ժառանգական օրենքների ժողովածուն», որն աննշան փոփոխություններով ուժի մեջ է առ այսօր: Հարկ է նշել, որ ընդհուպ մինչև 1967 թ. Իրանի հայ համայնքի երեք թեմերը պետության կողմից իրավական ճանաչում չունեին: 1967 թվականից դրանք որպես կրոնամշակութային, բարեգործական ընկերություններ և իրավական մարմիններ՝ ճանաչվեցին պետությանը պատկանող վարչության՝ «Սաբթե քոլի» կողմից³⁶: Իրանում իսլամական հեղափոխությունից հետո ևս երկրում ստեղծված նոր իշխանությունները թեմերը ճանաչեցին որպես ազգային իշխանության մարմիններ:

Յուրաքանչյուր թեմի գերագույն իշխանություն է համարվում պատգամավորական ժողովը: Այն վավերացնում է թեմի առաջնորդի որոշումներն ու առաջարկները, քննարկում, փոփոխման է ենթարկում և հաստատում կանոնակարգային հարցեր, իրականացնում թեմական խորհրդի և հաշվեքննիչ մարմնի ընտրությունների և գործու-

³⁶ Տե՛ս Փահլևանյան Հ. Լ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 8:

նեության հետ կապված խնդիրներ: Ըստ կանոնադրության պատգամավորական ժողովն ընտրվում է ժողովրդի կողմից ուղղակի քվեներով, 4 տարին մեկ, որն և ընտրում է թեմական խորհուրդ: Եթե պատգամավորական ժողովը ազգային կառույցների բարձրագույն ատյանն է, ապա թեմական խորհուրդը՝ գործադիր մարմինը: Թեմական խորհուրդը գործադրում է պատգամավորական ժողովի կողմից ընդունված որոշումները: Պատգամավորական ժողովի անդամները այդ ժողովի կայացրած որոշումների համաձայն՝ ղեկավարում են թեմի ազգային, հասարակական, կրոնական, կրթական, տնտեսական ու վարչական գործերը:

Շահական իշխանության տարիներին թեմական խորհուրդը գրանցված էր «Շորայե խալիֆեզարի արամանե» («Հայոց հոգևոր խորհուրդ») անվան տակ: Իսլամական հեղափոխությունից հետո թեմական խորհուրդը հավասարեցվել էր միություններին, որն անընդունելի ու վիրավորական էր հայ համայնքի համար: Հենց դա պատճառ դարձավ, որ 14 տարի ընտրություն տեղի չունենա: Ավելի ուշ, սակայն, պետությունը թեմական խորհուրդը ճանաչեց որպես իրանահայությունը ներկայացնող մարմին: 2000 թ. վերջապես թեմական խորհուրդը ստացավ պատգամավորական ժողովի ընտրությունների իրավունք:

Թեհրանի հայոց թեմի պատգամավորական ժողովը բաղկացած է 45 հոգևորական և աշխարհիկ պատգամավորներից: Պատգամավորական ժողովն ու թեմական խորհուրդն ունեն իրենց մնայուն դիվանները: Համայնքը բաղկացած է ծխերից: Պատգամավորական ժողովի պատգամավորներն ընտրվում են տվյալ թեմին ենթակա ծխական համայնքներում տեղի ունեցող փակ քվեարկությամբ: Ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացրած երկսեռ այն քաղաքացիները, ովքեր առնվազն վեց ամիս բնակվում են տվյալ ընտրական շրջանում և վճարել են ծխական տուրքը: Պատգամավորական ժողովի անդամներն ընտրվում են թաղամասի խնդիրներին քաջատեղյակ և փորձառու ու հանրահայտ գործիչներից: Ընտրվող պատգամավոր

պետք է ծանոթ լինի թաղամասի ներքին խնդիրներին, կրթական, նյութական, եկեղեցական և այլ հարցերին:

Թեմի հոգևոր պետը համարվում է թեմակալ առաջնորդը, որն առանց պաշտոնավարության ժամկետը սահմանափակելու ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից և ի պաշտոնե ղեկավարում պատգամավորական ժողովը, թեմական խորհուրդը և նրանց ենթակա բոլոր վարչական մարմինները: Իրանում երեք թեմերի առաջնորդներն էլ, բացի հոգևոր-կրոնական գործունեությունից, իրականացնում են նաև մշակութային և հայագիտական ակտիվ գործունեություն:

Պատգամավորական ժողովն իրավունք ունի ընտրել թեմական առաջնորդին, ընդունել նրա հրաժարականը, ընտրել թեմական խորհուրդ, հաստատել թեմական եկեղեցական տուրքերը, սահմանել նրանց գանձման և բաշխման ձևերը և այլ կարգի հարցեր: Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի կողմից նշանակված ենթախորհուրդներն ու հանձնախմբերն են. Ա. եկեղեցական խորհուրդները: Ամեն մի եկեղեցի ունի իր եկեղեցական խորհուրդը՝ կազմված հոգևորական ու աշխարհիկ անդամներից: Այդ խորհուրդները զբաղվում են իրենց եկեղեցու հարցերով: Բ. դատական խորհուրդ, որը զբաղվում է ապահարզանի ու ընտանեկան հարցերով: Գ. նոտարական գրասենյակ. այն ենթակա է իսլամական արդարադատության նախարարությանը և զբաղվում է ամուսնություններն ու ապահարզաններն արձանագրելով ու նման այլ հարցերով: Այս գրասենյակի բոլոր պաշտոնյաները հայեր են: Դ. Կրթական խորհուրդ, որը զբաղվում է թեմի կրթական աշխատանքներով: Այս խորհուրդն է աշխատանքի հրավիրում և վարձատրում հայոց լեզվի ուսուցիչներին: Նա է հսկում արտադասարանային աշխատանքները: Կրթական խորհրդի հսկողությամբ են կազմվում ու հրատարակվում հայոց լեզվի դասագրքերը: Ե. Կալվածքային խորհուրդ: Այս խորհուրդը զբաղվում է թեմական խորհրդի անվամբ բոլոր կալվածքները պահպանելու և առք ու վաճառքի հարցերով: Զ. Շինարարական խորհուրդ: Այս խորհուրդը մի մարմին է, որը կատարում է թեմի բոլոր կալվածքների՝ հատկապես

դպրոցների, եկեղեցիների ու այլ շենքերի նորոգումները: Է. Ծխական տուրք: Ծխական տուրք կոչված խորհուրդը Հայաստանյազ Առաքելական եկեղեցուն ենթակա հայերից գանձում է տարեկան որոշակի գումար, որը, որպես ծխական տուրք, փոխանցվում է թեմական խորհրդին: Ը. Կարիքավորներին օժանդակող մարմին: Այս մարմինն ուսումնասիրում է կարիքավոր հայ ընտանիքների վիճակը և օգնություն է ցուցաբերում նրանց: Թ. «Ա. Ավետիսյան» ազգային բուժարան: Այս բուժարանը կառավարվում է թեմական խորհրդի նշանակած խնամակալ մարմնի կողմից: Ժ. Թեմական խորհրդի գրադարան: Ի. Ֆինանսական խորհուրդ: Այս խորհուրդը զբաղվում է Առաջնորդարանի ֆինանսական գործերով:

Թեմական խորհուրդն ունի նաև հիմնադրամներ, որոնց գումարը հատկացրել են հայ բարերարները: Թեհրանի թեմական խորհրդի հսկողության ներքո գտնվում են երկու ծերանոցներ՝ «Սոսե մայրիկ» և մեկ այլ ծերանոց, որը գտնվում է Ս. Գևորգ եկեղեցու բակում: Այս երկու ծերանոցն էլ կառավարում է թեմական խորհրդին ենթակա «Հայ կանանց բարեգործական ընկերությունը»:

Վերոհիշյալ բոլոր մարմինների, խորհուրդների ու կենտրոնների աշխատանքների զեկույցները ներկայացվում են Առաջնորդարանի կենտրոնական գրասենյակ, որը գլխավորում է դիվանապետը:

Պատգամավորական ժողովի ընտրությունները որպես կանոն տեղի են ունենում սուր ներքին պայքարի և մրցակցության պայմաններում: Ընտրված պատգամավորներից ոչ բոլորն են վայելում ժողովրդի վստահությունը: Պատգամավորական ժողովում մտավորականների թիվը համեմատաբար քիչ է: 1998 թ. մի խումբ երիտասարդների կողմից կազմվել էր վիճակագրություն, որից պարզվել էր, որ թեհրանահայերի 57%-ը ծանոթ չէր կամ չէր հետաքրքրվում պատգամավորական ժողովի ու թեմական խորհրդի և ընդհանրապես ազգային կառույցների գործունեությամբ: Բնավ պատահական չէ, որ Իրան կատարած իր այցերից մեկի ժամանակ Արամ Ա կաթողիկոսը պատգամավորական ժողովի նիստի ժամանակ հայտարար-

րել էր. «Մենք մեր ազգային կյանքում պետք է կատարենք փոփոխություններ, որպեսզի իրագործվեն մեր ապագա ծրագրերը»³⁷:

Հարկ է նշել, որ թեմական մարմիններն իրավասու են զբաղվել ընտանեկան ու ժառանգության հարցերով, ինչպես նաև ամուսնության, ապահարզանի, որդեգրման, կտակի ու այլ իրավաբանական բնույթի խնդիրներով, որոնք ի հայտ են գալիս համայնքի ներսում: Քանի որ Իրանում գործող մուսուլմանական շարիաթական իրավունքը անհաշտելի է երկրի հայ քրիստոնյա բնակչության ընտանեկան-ժառանգական իրավունքների հետ, ուստի կառավարությունը առանձնացրել է դրանք՝ որպես եկեղեցական ինքնավարության շրջանակներում իրականացվող իրավական նորմերի մի խումբ:

Իրանահայ համայնքը ղեկավարող հոգևոր-կրոնական իշխանությանը հատկացված դատական և իրավական գործառնություններն ընդունված և հաստատված է Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարության կողմից: Եկեղեցին իշխանությունների կողմից դիտվում է որպես կրոնական փոքրամասնության ղեկավար մարմին: Այն ոչ միայն կարգավորում է համայնքի իրավական գործառնությունները, այլև պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի մոտ՝ պետության:

Այսպիսով, կրոնական փոքրամասնությունները իրենց դատաիրավական հարցերը կարող են լուծել ոչ թե երկրում ընդունված իսլամական շարիաթական օրենքներով, այլ իրենց համապատասխան օրենքներով:

Կասկածից վեր է, որ Իրանում հայ համայնքի գոյատևման կարևոր նախապայմաններից է եղել և մնում է հայ Առաքելական եկեղեցին: Այն համարվում է հայ կրոնական փոքրամասնության ղեկավար մարմինը, կարգավորում է իր համայնքի իրավական գործառնությունները, պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի առջև պետության: Եկեղեցին հանդիսանում է այն հզոր կրոնական, գաղափարական և հոգևոր կենտրոնը, որի շուրջը կենտրոնացած է

³⁷ Ահարոնյան Լ., Փոթորկոտ կյանքիս օրերը (հասարակական և քաղաքական հուշեր), գիրք Բ, Թեհրան, 2010, էջ 1238:

հայ համայնքի ողջ կյանքը: Առանց եկեղեցու միավորիչ ուժի, ազգային ընդհանրությունը չէր կարող երկար գոյատևել: Եկեղեցին հայկական սփյուռքում, այդ թվում նաև Իրանի հայ համայնքում, բացառիկ կարևոր դեր է խաղացել հայապահպանության և համայնքի ազգային ու եկեղեցական կյանքը կազմակերպելու առումով:

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, հարկ ենք համարում կրկին շեշտել, որ իրանահայ համայնքի իրավական դրության հիմքը կրոնա-եկեղեցական ինքնավարությունն է: Ինքնավարության այդ ձևի շրջանակներում են գործում օրենսդրական ու գործադիր մարմինները, ինչպես նաև համայնքում առկա կազմակերպությունները: Հայկական եկեղեցին պարունակում է աշխարհիկ վարչական կառուցվածքի տարրեր: Կրոնա-եկեղեցական ինքնավարությունը համայնքի հայ բնակչության համախմբման միջոց ու ձև է: Այդ ինքնավարության շրջանակներում հայ բնակչությունն օգտվում է մայրենի լեզվի, կենցաղի, ավանդույթների ու մշակույթի հիման վրա գոյատևելու հնարավորությունից:

Հատկանշական է, որ Իրանի հայ համայնքի թեմական խորհրդի ընտրություններին մասնակցում են միայն այն հայերը, որոնք Առաքելական եկեղեցու անդամներ են: Այլադավան կամ հայ կրոնական այլ հարանվանություններին պատկանող հայերը ոչ միայն ընտրության իրավունք չունեն, այլև զրկված են թեմական խորհրդում կամ եկեղեցական այլ մարմիններում ընտրվելու իրավունքից: Այսպիսով, թեմական խորհուրդը չի կարող բոլոր հայերի համար վարչական գլխավոր մարմին լինել:

Սակայն կասկածից վեր է, որ Իրանի երեք հայկական համայնքները՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական, իրենց կրոնական և աշխարհիկ կառույցների միջոցով զգալի դերակատարություն են ունեցել հայկական հոգևոր և նյութական արժեքների ստեղծման ու պահպանման, ինչպես նաև համայնքային բազում խնդիրների կարգավորման գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԴԱԿԱՆ ՀԱՅԵՐՈՎ: ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՎ

Խոսելով իրանահայ համայնքի մասին, հնարավոր չէ շրջանցել տարադավան հայերի գոյության փաստը: Ինչպես սիյուռքահայության մյուս հատվածների, այնպես էլ իրանահայության կյանքում որոշակի դեր ունեն նաև հայ կաթողիկե, հայ ավետարական-բողոքական և այլ փոքր կրոնական համայնքները:

Դեռևս XVII դ. սկզբին շահ Աբբաս Ա-ի կողմից կազմակերպած բռնագաղթի ժամանակներից Իրան փոխադրված հայ զանգվածների մեջ կային կաթոլիկ հայեր՝ Շահրիմանյան ընտանիքի գլխավորությամբ:

Ընդհանրապես Իրանում հայ կաթողիկե համայնքի գոյությունը դարերի պատմություն ունի: Հայտնի է, որ դեռևս XIV դարի սկզբից տարբեր կրոնական միաբանությունների պատկանող կաթոլիկ միսիոներները քարոզչական գործունեություն էին ծավալել Պարսկահայք նահանգում: Հատկապես Ուրմիա լճի ավազանի հայաշատ վայրերում ֆրանցիսկյան, իսկ ապա նաև դոմինիկյան միաբանության միսիոներները եռանդուն կերպով զբաղվում էին «հոգիների որսով»: Դեռևս 1318 թ. դոմինիկյան միաբան Բարդուղիմեոս Բոլոնիացու գործունեության շնորհիվ հաջողվում է Արտազի թեմն իր Սբ. Թադեի վանքով ամբողջովին կաթոլիկացնել: Ակտիվ միսիոներական գործունեության շնորհիվ կաթոլիկություն է ընդունում Մարաղան՝ իր շրջակա գյուղերով: XVII դարից սկսած ֆրանցիսկյանների, դոմինիկյանների, օգոստոսյանների (ավգուստինյանների), ձիզվիթեների, և հատկապես կարմեյանների կաթոլիկական միաբանության անդամները եռանդուն գործունեություն են ծավալում Իրան տարագրված հայերի շրջանում, հատկապես Նոր Ջուղայում և Սպահանում³⁸: Ար-

³⁸ Տե՛ս A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII Centuries, vol. I-II, London, 1939; Du Mans Raphael, Estat de la

դեն XVIII դարում, Սեֆյան, ապա և Ղաջարական տիրակալների ժամանակ Հռոմի հետ հարաբերությունները (որի գործունեության ոլորտը, հասկանալի է, ընդգրկում էր բացառապես քրիստոնեադավան համայնքները), կանոնակարգված բնույթ են ստանում:

Ներկայումս Իրանում հայ կաթողիկե համայնքներ կան Թեհրանում, Սպահանում և Շիրագում, հատ ու կենտ ընտանիքներ նաև այլ քաղաքներում: Իշխանությունները հայ կաթոլիկներին արտոնում են ունենալ իրենց եկեղեցիներն ու այլ կրոնական կառույցները, հիմնել դպրոցներ, տպարաններ, ունենալ տպագիր հանդեսներ և այլն:

Մինչև 1954 թ. Իրանի հայ կաթողիկե աթոռանիստ եկեղեցին Սպահանում էր գտնվում: Հայ կաթոլիկները Թեհրանում եկեղեցի չունեին: 1934 թ. սկսած, որպես առաջնորդ Իրանի հայ կաթողիկե թեմը կառավարում էր Մկրտիչ Թ. Ծ. վարդապետ Աբգարյանը: Այդ ժամանակ Թեհրանի հայ կաթոլիկների համայնքը եկեղեցական վարչություն չունեի, իշխանությունը կենտրոնացված էր ժողովրդապետի ձեռքում: Կաթողիկե թեմի իրավասության շրջանակների մեջ էին Նոր Ջուղա, Թավրիզ և Թեհրան քաղաքները: Ընդառաջելով հայ կաթողիկե ազգային սինոդի խնդրանքին, Հռոմի պապ Պիոս ԺԲ-ն 1954 թ. Իրանի թեմի համար եպիսկոպոս է նշանակում նույն Մկրտիչ Աբգարյանին, որը պաշտոնավարում է մինչև 1967 թ.: Այնուհետև նրան փոխարինում են Ղևոնդ եպիսկոպոս Չանտայանը (1967-1971) և Վարդան եպիսկոպոս Թեքեյանը (1972-1999): 2001 թվականից Իրանի կաթողիկե հայոց առաջնորդն է Նշան եպիսկոպոս Կարաքեհեյանը:

Մկրտիչ եպիսկոպոս Աբգարյանի ջանքերով Թեհրանում կառուցվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի օծումը տեղի է ունեցել 1954 թ. ձեռամբ կարդինալ Գրիգոր-Պետրոս կաթողիկոս-պատրիարք Աղաջանյանի: 1962 թ. հայ կաթոլիկ բարերարների ներդրումներով կառուցվեց «Ալիշան» դպրոցի շենքը, որտեղ տարբեր բաժիններում (տարրական, տղայոց և օրիորդաց) սովորում էին հայ աշա-

Perse on 1660, Paris, 1890. Բայբուրյան Վ. Ա., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, No9, էջ 39-52:

կերտներն ու աշակերտուհիները: «Ալիշան» դպրոցը համարվում էր Իրանի հայկական առաջնակարգ դպրոցներից մեկը: 1981 թ. այդ դպրոցի հսկողությունը հայ կաթիլի համայնքի հովվապետ Էմմանուել Փոլադյանը հանձնել էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն և Թեհրանի հայոց Թեմական խորհրդին:

Իրանում հայ կաթողիկե համայնքի անդամների թվաքանակի մասին հավաստի տեղեկություններ գոյություն չունեն: Վատիկանի պաշտոնական տարեկան վիճակագրական հրապարակումներում 1990-2000 թթ. ժամանակաշրջանի համար բերվում է 2200 մարդ թիվը, որը մոտ է իրականությանը: Այդ նույն աղբյուրը 2005-2008 թթ. համար տալիս է 10 հազար մարդ, որը խիստ ուռճացված է: Այդ թիվը հիմնավորվում է որպես Իրաքի վերջին պատերազմի հետևանք: Սակայն Վատիկանի այդ նույն վիճակագրության համաձայն, մինչև պատերազմը Իրաքի հայ կաթողիկե համայնքի անդամների թիվը եղել է մոտ 2000 մարդ: Դժվար է նաև հավատալ, որ Իրաքի ողջ հայ կաթողիկե բնակչությունը պատերազմի հետևանքով արտագաղթել է միայն Իրանի ուղղությամբ:

Ներկայումս, ընդհանուր առմամբ, հայ համայնքի զանգվածային արտագաղթի պայմաններում նվազել է նաև Իրանի հայ կաթողիկե համայնքի անդամների թիվը, այն չգերազանցելով երկու հազարը: Համայնքի առջև ծառայած են մի շարք հիմնախնդիրներ, որոնց հիմնական պատճառը արտագաղթն է: Արտագաղթի պատճառով փակվել են մի շարք հաստատություններ, դպրոցներ, մայրապետաց միաբանությունը և այլն: Այսօր գործում է միայն մեկ դպրոց՝ Թեհրանում «Հայ կույսերի Մարիամ» դպրոցը, որտեղ կա Ս. Նարեկի Տիրամոր մատուռը: Եկեղեցիներից գործում են Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Թեհրանում, Սբ. Վարդարանը (Աստվածամոր եկեղեցին) Սպահանում: Կաթողիկե համայնքին է պատկանում նաև «Չիլոյան» ծերանոցը:

Կասպից ծովի ափին, Մազանդարան նահանգում, 26 հազար քառ. մետր տարածության վրա կաթողիկե համայնքն ունի «Հայկաշեն» անունով մի համալիր, որտեղ ամռան ամսիներին իրենց հանգիստն են անցկացնում բազմաթիվ հայեր, կազմակերպվում են պա-

տանեկան ճամբարներ և այլն: «Հայկաշենում» գործում է նաև կաթողիկե Սբ. Անտոն եկեղեցին:

Այժմ Իրանի հայ կաթողիկե համայնքը ներկայացված է Սպահանի եպիսկոպոսությամբ, որի ղեկավարությունը համատեղության կարգով իրականացնում է հայ կաթողիկե եկեղեցու Արևելաեվրոպական թեմի առաջնորդ Նշան արքեպիսկոպոս Կարաքեհեյանը (նա համատեղում է նաև Աթենքի օրդինարիատի ղեկավարությունը): Ի դեպ, հայ կաթողիկե եկեղեցու Արևելաեվրոպական թեմը ընդգրկում է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) տարածքը, որի նստավայրը Գյումրին է: Հայ կաթողիկե եկեղեցում ողջ ծիսակատարությունը պարտադիր հայերենով է լինում: Հայ կաթողիկե համայնքի հոգևորականները հայեր են: Իրանում ապրող հայ կաթոլիկները հայախոս են: Իրանի հայ կաթողիկե համայնքում ազգային գիտակցությունը Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հետ համեմատած, բարձր է: Հայ կաթոլիկները պայքարում են իրենց ազգային դիմագիծը պահպանելու համար: Իրանի հայ կաթոլիկների կողմից պարտադիր նշվում են հայկական ազգային տոները, օրինակ, Վարդավառը (որը կաթոլիկներն անվանում են Տաղավար), Սրբոց Վարդանանց տոնը և այլն:

Հայ կաթողիկե համայնքի և պետության միջև հարաբերությունները կանոնակարգվում են թեմական խորհրդի միջնորդությամբ, իսկ եկեղեցական հարցերը (պսակադրություն, կնունք, հուղարկավորություն, ժառանգության հետ կապված հարցեր)՝ պետության հետ երկկողմ մշակված առանձին կանոնակարգով:

Հայ կաթողիկե եկեղեցուց զատ, կաթոլիկությունն Իրանում ներկայանում է նաև ասորական քաղղեական եկեղեցու ձևով: Մինչև վերջին տարիները առանձին գործել է նաև լատին եկեղեցին, սակայն պետության հետ չկանոնակարգված հարաբերությունների պայմաններում այն դուրս է մղվում և այժմ միայն սպասարկում է դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների անդամներին:

Իրանի հայ կաթողիկե համայնքի անդամները անվերապահորեն իրենց համարում են «զտարյուն հայ»: Նրանք Հայաստանի Հանրա-

պետությունը համարում են իրենց Մայր Հայրենիքը, իսկ իրենց՝ հայ ժողովրդի անբաժան մասը: Կաթողիկե հայերը ուշադիր կերպով հետևում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին և կապեր են պահպանում Հայաստանի հայ կաթողիկե համայնքի և կաթողիկե եկեղեցու հետ: Վերջին տարիներս Իրանի հայ կաթողիկե համայնքի առանձին ներկայացուցիչներ մշտական տեղափոխվել են Հայաստան և ձեռք բերելով բնակարաններ հիմնավորվել Հայրենիքում: Սակայն հայ կաթողիկեների շրջանում ևս առկա է արտագաղթ այլ երկրներ, հատկապես ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլն: Այդ երկրներում ևս նրանք վերադարձել են իրենց համայնքին:

Իրանում գոյություն ունի նաև հայ ավետարանական եկեղեցու կրոնական հարանվանություն: Իբրև կրոնական տարր Իրանի հայ բողոքականները 150-ամյա պատմություն ունեն: Առաջին հայ ավետարանական եկեղեցին հիմնադրվել է Կ. Պոլսում 1846 թվականին, որից հետո շարժումը տարածում է գտել: Իրանում նրանց հնագույն կենտրոնը Թավրիզն էր, որտեղ նրանք գործում էին ամերիկացի միսիոներների հետ: XIX դ. կեսերին Իրանի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում հայ ավետարանական գաղափարը սկսել է տարածվել հայ անհատների միջոցով, որոնց մեծ մասը եղել են Ս. Գրոց ընկերության պաշտոնյաներ: Նրանց ջանքերով ավետարանական կորիզներ ու փոքր համայնքներ են ստեղծվել Ռաշտում, Թեհրանում, Համադանում, Սուլթանաբադում և այլն³⁹: Ամերիկացի միսիոներները սատար էին կանգնում հայ ավետարանականներին, քանի որ այդ շրջանում անխնա հալածանքներ էին կիրառվում նրանց նկատմամբ: Նույնիսկ նրանց ննջեցյալները մնում էին փողոցներում առանց թաղելու իրավունք կամ տեղ ունենալու:

Թեև 1846 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ Հայ ավետարանական եկեղեցու բաժանումը Հայ Առաքելական եկեղեցուց, սակայն հայ ավետարանական եկեղեցին իր մշակույթով, իր դպրոցով,

³⁹ Տե՛ս «Նայիրի» տարեգիրք, Բ հատոր, Թեհրան, 2008, էջ 280-287:

իր լեզվով, իր գաղափարներով և իր էությամբ մնաց ազգային և իրեն անջատ չհամարեց հայ ազգից ու հայկականությունից⁴⁰:

XX դ. սկզբին Թեհրանը դարձավ բողոքական բոլոր համայնքների կենտրոնը: Հայ բողոքական եկեղեցին վարչական կառուցվածքով անկախ էր, սակայն ամերիկացի, ռուս, պարսիկ, քուրդ և հրեա բողոքականների համայնքների հետ կցված էր Իրանի ավետարանական-բողոքական եկեղեցիների միությանը:

1940-ական թվականներին Թեհրանի հայ ավետարանականները քաղաքի Ֆիշերաբադ փողոցում կազմակերպեցին Հայ ավետարանական եկեղեցին: Մինևույն ժամանակ գոյություն ուներ մեկ այլ եկեղեցի Ղավամ-էս-Սալթանե փողոցում: Այս երկու անջատ եկեղեցիները 1970 թ. գործնականապես միացան ու կազմեցին Հայ ավետարանական «Ս. Հովհաննես» եկեղեցին:

Հայ բողոքականները 1960-ական թվականների սկզբներին ունեցան իրենց համայնքի ընտրովի խորհուրդը: Բացի այդ, Թեհրանում գործում էր նաև հայ բողոքականների խորհուրդը: Այդ վարչական մարմինները կոչված էին հանրային, կրթական, կրոնական և այլ կարիքների դեպքում օգնելու հայ բողոքականներին:

Ներկայումս Թեհրանի հայ բողոքականների թիվը չի անցնում 200 հոգուց: Հայ բողոքականների փոքր համայնքներ կան նաև Նոր Ջուղայում, Թավրիզում, Արաքում և Համադանում: Նրանց ընդհանուր թիվն Իրանում անցյալ դարի 90-ական թվականներին կազմում էր մոտ 1500 մարդ: Ներկայումս արտագաղթի պատճառով այդ թիվը հաստատապես նվազել է:

Համայն Իրանում, այսօր, միայն գոյություն ունի Թեհրանի «Ս. Հովհաննես» ավետարանական եկեղեցին: Մյուս քաղաքների ավետարանական եկեղեցիները փակվել են և կամ նորադավան այլազգի անդամների շատանալու հետևանքով դադարել են հայկական լինելուց:

⁴⁰ Նույն տեղում:

Թեհրանում հայ ավետարանական համայնքն իր եկեղեցու կողքին ունի 6-դասյա մի դպրոց, որը կոչվում է Մեսրոպյան «Գոհար» դպրոց (հիմնվել է 1949 թ.): Այս դպրոցն իր հիմնադրման օրվանից հովանավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայ Ավետարանական Ընկերության կողմից: Ներկայումս այդ դպրոցը գտնվում է Ազգային Թեմականի դպրոցների ցանկում և կառավարվում է Թեհրանի Թեմական խորհրդի կողմից, ինչպես մյուս ազային դպրոցները: Ավետարանական համայնքն ունի նաև մի ժողովարան Թեհրանի Մաջիդիե թաղամասում՝ «Հոգեշունչ» անունով, մի ժողովարան Ջարքեշի թաղամասում «Շնորհալի» անվամբ և «Հայ ավետարանական երիտասարդաց միությունը»՝ «Ավետիք» անունով: Եկեղեցում գործում է նաև Կանանց միությունը: Եկեղեցին ունի իր ամսաթերթը, որը հրատարակվում է երեք ամիսը մեկ անգամ (այն կոչվում է «Սուրհանդակ», հիմնադրվել է 1980 թ.): Եկեղեցին ունի նաև «Մուդոյեան» անունով գրադարան և կիրակնօրյա դպրոց՝ երեք դասարաններով:

Թեհրանի Հայ Ավետարանական եկեղեցու առաջին ձեռնադրված հովիվն է եղել վերապատվելի Միհրան Տամպուրճյանը, որը Թեհրան է ժամանել Խարբերդից 1888 թ., իսկ 1892 թվականից ստանձնել է Թեհրանի Հայ ավետարանական եկեղեցու քարոզչի պարտականությունը: Նա Իրանի զանազան քաղաքներում մնացել և գործել է մոտ 29 տարի:

Մեր օրերում Իրանում բողոքականության և պետության հարաբերությունները առանձին գնահատման են արժանի: Մեկ բառով դրանք կարելի է անվանել բարդ: Ըստ արևմտյան աղբյուրների՝ նոր բողոքական հարանվանություններին Իրանում հաջողվել է հիմնել երկու այսպես կոչված Պարսկախոս Ավետարանական Եկեղեցի՝ յուրաքանչյուրը մոտ 3-հազարական անդամով: Վերջիններս հիմնականում գործում են Թեհրանում, թեև առանձին խմբեր կան Սպահանում: Կառուցվածքային առումով այս կառույցները գործում են «տնային խմբակների» սկզբունքով: Պարսկախոս անվանումը միտում ունի հուշելու, որ կառույցն ընդգրկում է ոչ միայն մահմեդական պարսիկներին, այլև հրեաներին, ասորիներին և այլն:

Հարկ է նշել, որ բուն մահմեդականների շրջանում քարոզչությունը անվտանգ չէ և արգելված է պետության կողմից: Այն անհարիր է նաև իսլամական հասարակության հոգեմտածելակերպին: Հայտնի է, որ իրենց գործունեության ընթացքում բողոքական եկեղեցու հոգևորականները վերջին տարիներին ունեցել են նահատակներ: Օրինակ, 1994 թ. հուլիսին սպանվեց Իրանի հայ բողոքական եկեղեցու հոգևոր պետ, վերապատվելի Թադեոս Միքայելյանը: Վերջինս հիմնել էր Թեհրանի հայոց «Գոհար» դպրոցը, որը իսլամական հեղափոխությունից հետո իր կամքով դպրոցի տնօրինությունը հանձնել էր Թեհրանի թեմի թեմական խորհրդին:

Թադեոս Միքայելյանից հետո հայ ավետարանական եկեղեցին գլխավորում է վերապատվելի Արշավիր Երիցյանը:

Իրանի Հայ Ավետարանական եկեղեցին սերտ կապերի մեջ է Հայաստանի Ավետարանական եկեղեցու հետ: Նրանց կողմից կազմակերպվում են զանազան համատեղ միջոցառումներ: Իրանի Հայ Ավետարանական եկեղեցին նյութական աջակցություն է ցուցաբերում Հայաստանի կարիքավոր երեխաներին, նվիրատվություններ է կատարում զանազան բարեգործական նպատակների համար, Հայաստանում իրագործում է զանազան ծրագրեր և այլն:

Հայ Ավետարանական եկեղեցու կանոնադրությունը, ինչպես ամհասարակ մյուս եկեղեցիներինը ևս, վավերացվում է Իրանի Իսլամական Հանրապետության ներքին գործոց նախարարության կողմից: Եկեղեցական ընտրությունները ևս տեղի են ունենում հիշյալ նախարարության վերահսկողությամբ:

Վկայությունների համաձայն բողոքական միսիոներների և հոգևորականների նկատմամբ ֆիզիկական բռնությունների, սպառնալիքների և նրանց սպանությունների հետևում կանգնած են ինչպես իսլամիստական ծայրահեղական գունավորում ունեցող կազմակերպությունները, այնպես էլ պետական հատուկ ծառայությունները, որոնք մահմեդականների շրջանում գաղտնի քարոզչություն ծավալող կառույցների և բողոքական եկեղեցիների հետևում տեսնում են ԱՄՆ-ի և Իսրայելի հատուկ ծառայություններին: Շարիաթական օրենքի հիման

վրա կրոնափոխ մահմեդականը ենթակա է մահապատժի, մահապատժի է ենթակա նաև նրան դարձի բերող քարոզիչը: Հայտնի է, որ քրիստոնեությանն են հարում մահմեդական ումմայում մարգինալ դիրք ունեցող անհատները, որոնք միևնույն ժամանակ երկրում տիրող կայունության հանդեպ առավել արմատապես տրամադրվածներն են: Վերջիններս գտնվում են վերոհիշյալ հատուկ մարմինների սևեռուն ուշադրության կենտրոնում:

Ներկայումս Իրանում պարսկախոս բողոքականների թիվը դժվար թե գերազանցի տասը հազարը: Իրանի հայ բողոքականների մոտ ևս քարոզները անց են կացվում հայերենով: Առհասարակ, միայն քարոզը, այլև պաշտամունքը, Սուրբ գիրքը և այլն բոլորը հայերեն են: Նրանց երգարաններում կան թե՛ ավետարանական երգեր և թե՛ հայկական շարականներ, որոնք պատարագի ժամանակ երգվում են:

Իրանում հայ ավետարանական եկեղեցու կապերը հայ Առաքելական և կաթողիկե եկեղեցիների հետ բարեկամական են: Ավետարանականները ևս մյուս հարանվանությունների հետ տոն օրերի մեծ մասը միասին են նշում: Այդ երեք հարանվանությունները ապրիլի 24-ին միասին կազմակերպում են համահայկական կամ միջմիութենական միջոցառումներ: Իրանի հայ ավետարանականները կապեր են պահպանում Հայաստանի ավետարանչական կենտրոնի հետ: 1991 թվականից սկսած, այսինքն Հայաստանի անկախության ծեռք բերումից հետո Իրանի հայ ավետարանական եկեղեցին նյութական աջակցություն է ցուցաբերում Հայաստանի առանձին կառույցներին:

Իրանում գործող բողոքականության հարանվանություններից է նաև Յոթերորդ օրվա շաբաթապահ (ադվենտիստական) եկեղեցին: Ժամանակին թեհրանում եղել է հարյուրի հասնող հայ համայնք, սակայն ներկայումս արտագաղթի պատճառով այդ թիվը հասել է մոտ 30-ի:

Իրանում չնչին թիվ են կազմում նաև հայ ուղղափառներն ու ունիթորները: Ուղղափառ շատ քիչ հայեր բնակվում են Ատրպատականում, իսկ ունիթորները, որոնք Սեֆյան դինաստիայի շրջանում իրանահայ համայնքում մեծ մասշտաբների հասնող «հոգիների որս» էին իրականացնում, այժմ կորցրել են իրենց հեղինակությունը, և նրանց

հարող հայերի թիվը չնչին է: Ինչ վերաբերում է «Եհովայի վկաներ» կազմակերպության իրանահայ հետևորդներին, ապա այդ մասին հստակ և հավաստի տեղեկություններ չկան: Ենթադրվում է, որ Եհովայի վկաների թիվը այդ երկրում չպետք է գերազանցի 150-ը: Մայրաքաղաքում կենտրոնացած հավատացյալները բացառապես հայեր են: Զարմանալի իրողություն է, բայց փաստ, որ պետությունը նրանց օժանդակել է շինություն-հավաքատեղի գտնելու հարցում:

Կարևոր է նշել, որ կրոնափոխությունը շատ իրանցիների (այդ թվում նաև հայերի թեև սահմանափակ չափերով) համար երկրից արտագաղթելու հավելյալ դյուրացնող միջոց է: Գաղտնիք չէ, որ արևմտյան էմիգրացիոն կառույցները որպես կանոն ընդառաջում են այդ մարդկանց, իսկ նրանց արարքը հասկանալի և ըմբռնելի է արևմտյան հասարակության կողմից⁴¹:

Հարկ է նշել, որ Իրանում հայ Առաքելական, կաթողիկե և ավետարանական եկեղեցիների կապերը բարեկամական են: Նրանց հարաբերություններում եկեղեցական տազնապ կամ կրոնական հարց գոյություն չունի, ընդհակառակը, առկա է առողջ համագործակցություն: Հայ կաթողիկե և ավետարանական համայնքների հոգևոր հովիվները կրոնական և ազգային տոների առթիվ այցելում են հայ Առաքելական եկեղեցու Թեհրանի թեմի առաջնորդարան և մասնակցում բոլոր ծեռնարկներին: Նրանք անխտիր մասնակցում են նաև հայոց ցեղասպանությանը նվիրված բոլոր միջոցառումներին: Դա կատարվում է երեք համայնքապետերի՝ հայ Առաքելական, հայ կաթողիկե և հայ ավետարանական եկեղեցիների առաջնորդների հովանավորությամբ՝ աղոթքով, պատարագով և գեղարվեստական բաժնով: Նրանց կողմից միասնաբար են նշվել նաև հայ գրերի գյուտի 1600, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելու 1700-ամյակը և այլ հոբելյանական առիթներ: Այդ երեք եկեղեցիների հովիվները զանազան առիթներով մասնակցում են նաև միջեկեղեցական ժողովներին և այլ միջոցառումների: Առհասարակ Իրանի հայ համայնքի բոլոր դավանական

⁴¹ Մանրամասն տես Արման Փոլադյանի Իրանում հայ փոքրամասնությունների նվիրված ուսումնասիրությունը www.religions.am.

խմբերը ներառված են և գործուն մասնակցություն են ունենում համայնքի ազգային-եկեղեցական կյանքում:

Իրենց հերթին հայ առաքելական եկեղեցու հոգևորականները ժամանակ առ ժամանակ հանդիպում են Իրանի այլ կրոնադավանական համայնքների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվում են համագործակցության, միջկրոնական ու միջդավանական երկխոսության, ինչպես նաև կրոնական և էթնիկ հանդուրժողականությանն առնչվող հարցեր:

Իրանի երեք հայկական համայնքներն էլ՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական, իրենց կրոնական և աշխարհիկ կառույցների միջոցով զգալի դեր են կատարել հայկական հոգևոր ու նյութական արժեքների ստեղծման ու պահպանման, ինչպես նաև համայնքային խնդիրների կարգավորման գործում:

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մինչև Իրանում սահմանադրական կարգերի հաստատումը իրանահայ համայնքի իրավական խնդիրները կարգավորվել են շահական հրովարտակաների և նահանգային ու գավառական իշխանությունների որոշումների հիման վրա: Իսկ իշխանությունների մոտ համայնքը ներկայացրել են Եկեղեցին, հանձինս թեմակալ առաջնորդի և իշխանությունների մոտ կանգնած հայ անհատների, առանց հստակ իրավական սահմանումների: Եկեղեցուն թույլատրված է եղել ներքին ինքնավարությանը համապատասխանելու ձևով վարելու իր ազգային, մշակութային, կրոնական գործերը՝ համաձայն սեփական օրենքների և ավանդույթների: Առհասարակ հայերի իրավական դրությունն ապահովված էր ոչ միայն պետական իրավունքով, այլև ավանդույթների և սովորությունների ուժով: Դարերով սրբագործված այդ արտոնությունները փոխանցվում էին մեկ կառավարությունից մյուսին:

1905-1911 թթ. սահմանադրական շարժման հետևանքով ընդունված առաջին իրանական սահմանադրության մեջ (այն հաստատվել է 1906 թ.) նկատի էր առնվել միայն երկրի բնակչության դավանանքը, առաջնորդվելով իսլամական ումմայի (համայնքի) սկզբունքով: Իսկ բնակչության լեզվական և էթնիկական հատկանիշներին ոչ մի նշանակություն չէր տրվել: Բազմազգ պետության մեջ միայն պարսկերենը հայտարարվեց որպես պետական լեզու, իսկ մահմեդականությունը դավանող բոլոր ժողովուրդներն ու ցեղերը հայտարարվեցին լոկ իրանցիներ:

Քանի որ սահմանադրության կարևորագույն մասը՝ հիմնական օրենքը, կազմված էր մահմեդական կրոնի սկզբունքներով, ուստի երկրում բնակվող ոչ մահմեդական ազգերը՝ հայերը, հրեաները, գրադաշտականները և ասորիները անվանվեցին ոչ թե ազգային, այլ

կրոնական փոքրամասնություն: Կրոնապետերի իրավասությանը հանձնվեց տվյալ համայնքի բոլոր ներքին հարցերի լուծումը: Այլ կերպ ասած՝ մահմեդական կրոնապետերի իրավունքները նույնությամբ տարածվեցին ոչ մահմեդական կրոնապետերի վրա: «Կրոնական փոքրամասնություն» հասկացությունը ինքնատիպության վերացնում էր ազգային վարչություններ ունենալու հնարավորությունը և ազգությունների ղեկավարությունը հանձնվում էր հոգևորականությանը: Ազգային փոքրամասնությունների իրավունքների այդպիսի սահմանափակումը, փաստորեն, չէր կարող արգելք չհանդիսանալ նրանց մշակույթի, ազգային դպրոցների ինքնուրույնությունը պահպանելու և առհասարակ ազգային անկաշկանդ զարգացման առջև: Ընդհանրապես սահմանադրական օրենքների ոչ մի հոդվածով փոքրամասնությունների իրավունքները չէին որոշվում: Միայն Հիմնական օրենքի այսպես կոչված հավելումների 8-րդ հոդվածի մեջ նշվում էր, որ «Իրանի պետության բնակիչները պետական օրենքի առջև հավասար են»⁴²:

Ի թիվս մյուս փոքրամասնությունների, ըստ սահմանադրության, հայերը և նրանց համայնքը ևս պաշտոնապես ճանաչվեց որպես կրոնական փոքրամասնություն, որով նրանց իրավունք էր տրվում ազատորեն դավանել իրենց կրոնը և ընտանեկան հարցերում (ամուսնություն, ամուսնալուծություն, ժառանգություն, կտակ և այլն) առաջնորդվել իրենց դավանած կրոնական օրենքներով:

Սրանով, կարելի է ասել, քաղաքացիական իրավունքի տեսակետից իրավիճակը էական փոփոխություն չկրեց, այլ օրենքով ամրագրվեց այն, ինչ արդեն իսկ գոյություն ուներ որպես չգրված օրենք:

1935 թ. Ռզա շահ Փահլավիի կառավարությունը իրապարակեց «Իրանահայության ընտանեկան և ժառանգական օրենքների ժողովածուն», որը հայ համայնքի ներքին իրավունքների ճանաչման, համակարգման և միաժամանակ վերահսկման փորձ էր: Այդ փաստաթուղթը որպես կրոնական փոքրամասնություն հայերին տրամադրում

⁴² Փահլանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 102-103:

էր ներքին ինքնավարություն, այսինքն տեղական իշխանությունները համարյա չէին խառնվում հայկական համայնքի անդամների միջև հարաբերություններին: Հայ հոգևորականությունն էլ օգտվում էր ազդեցությունից միայն իր հոտի շրջանակներում, որևէ կշիռ չունենալով հայ համայնքից դուրս գործերի վրա: Առհասարակ իրանահայ համայնքի կարգավիճակը այնպիսին էր, որ նա համարվելով կրոնական եկեղեցական համայնք, երկրի քաղաքական հարցերին միջամտելու իրավունք չուներ:

Ոգա շահի կողմից հրապարակված վերոհիշյալ փաստաթղթում անթաքույց ձևով երևում է «ազգային փոքրամասնություն» եզրի նկատմամբ վերապահ վերաբերմունք: Խնդիրը կայանում է նրանում, որ որպես պաշտոնական գաղափարախոսություն ընդունված պանիրանիզմի կողմից համաիրանական գիտակցության մեջ էթնիկ ինքնատարբերակումը դիտվել է որպես վնասակար, ավելին, Իրանի պետական շահերի տեսակետից վտանգավոր երևույթ:

1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո ընդունված սահմանադրությունը (այն գործում է 1979 թ. դեկտեմբերից) ամբողջապես խարսխված է կառավարման իսլամական ձևի կամ այսպես կոչված «վելայեթե ֆաղիհ» սկզբունքի վրա: Ղա նշանակում է, որ Իրանում ժամանակակից իրավունքը ենթակա է կրոնական նորմերին: Սահմանադրությունը երկրի քաղաքացիների համար ճանաչում է բազմաթիվ քաղաքացիական իրավունքներ, սակայն հատուկ շեշտվում է, որ այդ իրավունքները պետք է համապատասխանեն իսլամի սկզբունքներին: 1979 թ. սահմանադրությունը ազգություններ և ազգային բաժանումներ չի ճանաչում: Լինելով աստվածապետական (թեոկրատական) պետություն, Իրանի Իսլամական Հանրապետությունը ընդունում է փոքրամասնությունների կրոնական որակումը, մերժելով էթնիկական տարբերակումները: Հիմնական օրենքում ասվում է, որ «իսլամական համայնքը դա մի միասնական ազգ է», որ «բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք կամ ումմա (հոդված 11): Ղա նշանակում է, որ Իրանի տարածքում ապրող բոլոր իսլամական ժողովուրդները, անկախ իրենց լեզվից, ազգությունից և

այլ հատկանիշներից հանդիսանում են իրանցիներ և իսլամական ումմայի անդամներ: Այդ մոտեցումը խարսխված է ոչ միայն ումմայի վերաբերյալ իսլամական հանրահայտ սկզբունքի վրա, այլև ըստ էության հանդիսանում է պանիրանիզմի գաղափարախոսության մի տարատեսակ, ավելի ստույգ՝ շիականության վրա խարսխված պանիրանիզմի գաղափարախոսություն:

Սահմանադրության 19-րդ հոդվածում նշվում է, որ «իրանցիներն անկախ իրենց ազգային, ցեղային պատկանելությունից օրենքի առջև հավասար են, և մաշկի գույնը, ծագումը կամ լեզուն և այդօրինակ այլ հատկանիշները չեն կարող արտոնություն համարվել»: Իսկ սահմանադրության 20-րդ հոդվածն ազդարարում է, որ բոլոր մարդիկ, ինչ սեռից էլ լինեն, իրավունք ունեն հավասար չափով օգտվելու քաղաքական, տնտեսական, հանրային, մարդասիրական ու մշակութային բոլոր իրավունքներից ու իրավասություններից՝ իհարկե իսլամական սկզբունքների սահմաններում»: Այսպիսով, ազգի հատկանիշ է ճանաչվում կրոնը, անտեսելով հավատացյալների այլազանությունը ըստ ազգային հատկանիշի:

1979 թ. ընդունված իսլամական սահմանադրությունը ևս, հետևելով իր նախորդի 1906 թ. ընդունված սահմանադրության օրինակին, երկրի ոչ մահմեդական ազգային փոքրամասնություններին ճանաչեց որպես կրոնական փոքրամասնություններ: Սահմանադրության 13-րդ հոդվածում ասվում է. «Զրադաշտական, հրեա և քրիստոնյա իրանցիները պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնություններ են, որոնք օրենքի սահմաններում ազատորեն կարող են կատարել իրենց կրոնական ծեսերը, ինչպես նաև համաձայն իրենց կրոնքի, զբաղվել նոտարական գործերով և կրոնագիտական աշխատանքներով»⁴³: 14-րդ հոդվածում սահմանադրությունը Իրանի մահմեդական բնակչությանը հրահանգում է. իսլամի սուրբ Գրքի՝ Ղուրանի թելադրանքով Իրանի Իսլամական Հանրապետության կառավա-

⁴³ Տե՛ս Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրություն (Հիմնական օրենք), Թեհրան, 2005, էջ 39-40 (Ոչ պաշտոնական թարգմանությունը Գ. Բադայանի կողմից):

րությունը և մահմեդականները պարտավոր են ոչ մահմեդականների նկատմամբ բարյացակամ, բարեհաճ և արդար վերաբերմունք դրսևորել՝ պահպանելով վերջիններիս մարդկային իրավունքները»: Նույն հոդվածում պարզաբանվում է, որ այդ «սկզբունքը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր դավեր չեն նյութում իսլամի և Իսլամական Հանրապետության դեմ»⁴⁴:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը բացառում է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ռասայական կամ խտրական դրսևորման որևէ քայլ: Հիմնական օրենքի 19-րդ հոդվածում այդ առթիվ ասվում է. «Իրանի ժողովուրդը, անկախ էթնիկական կամ ցեղային պատկանելիությունից, օժտված է հավասար իրավունքներով և մարդու մաշկի գույնը, ռասան, լեզուն, մեկը մյուսի նկատմամբ առավելության պատճառ դառնալ չի կարող»⁴⁵:

Այսպիսով, Իրանում ոչ մահմեդականները՝ հայերը, ասորիները, հրեաները և զրադաշտականները համարվում են ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնություններ: Սակայն ակնհայտ է, որ պաշտոնապես ընդունված այդ չորս կրոնական փոքրամասնություններն ունեն իրենց էթնիկ բնորոշիչները: Այդ փոքրամասնություններից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, իր սեփական մշակութային ավանդույթները, իր էթնիկական յուրահատկության գծերը և այլն:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն, Իրանի պաշտոնական լեզուն պարսկերենն է (ֆարսի), որը հանդիսանում է պետական գրագրությունների լեզու: Այդ առթիվ ասվում է հետևյալը. «Իրանի ժողովրդի պաշտոնական գիրը և ընդհանուր լեզուն պարսկերեն լեզուն է: Պաշտոնական փաստաթղթերը, գրագրությունները, տեքստերը և դասագրքերը պետք է կազմվեն այդ լեզվով և գրով, սակայն տեղական ու էթնիկ խմբերի լեզուների օգտագործումը մամուլում և զանգվածային լրատվամիջոց-

⁴⁴ Նույն տեղում, էջ 40:

⁴⁵ Նույն տեղում, էջ 42:

ներում և պարսկերեն լեզվին զուգահեռ նրանց գրականության ազատ դասավանդումը թույլատրելի է»⁴⁶:

Մնացած շատ հարցերում, օրինակ, կրթության, առողջապահության, քաղաքացիական այլևայլ իրավունքների և այլն սահմանադրությունը չի սահմանափակում կրոնական փոքրամասնությունների իրավունքները և չի միջամտում նրանց ներքին կյանքին: Իրանում հայերն իրավունք ունեն ազատորեն կազմակերպելու իրենց ազգային կյանքը, ազատորեն դավանելու սեփական կրոնը, ունենալու իրենց կրթական հաստատություններն ու մարզական-մշակութային միությունները, զարգացնելու ազգային մշակույթը և այլն: Այդ առումով նրանք Իրանի լիիրավ քաղաքացիներն են և որպես այդպիսին մասնակցում են բոլոր տեսակի համապետական նշանակություն ունեցող ընտրություններին: Հայերն օգտվում են էթնոդավանական փոքրամասնությունների վերաբերող բոլոր իրավունքներից:

Իրանի Իսլամական Հանրապետությունում կրոնական փոքրամասնություններ ներկայացնող համայնքների իրավական հիմք է հանդիսանում «Կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ օրենքը», որը փոքրամասնություններին տրամադրում է երկրի սահմանադրությունից բխող բավականին լայն իրավունքներ իրենց ներքին գործերի և կրոնական ինքնավարության բնագավառում: Այդ օրենքը, ընդօրինակելով սահմանադրությունը, ազդարարում է, որ Իրանում կրոնական կամ էթնիկ անհանդուրժողականությունը հետապնդվում է:

Այսպիսով, 1979 թ. իսլամական վարչակարգի իշխանության գալուց հետո հայերին տրված իրավունքները պետականորեն ամրագրվեցին:

Հարկ է նշել, որ ազգային հարցը ժամանակակից Իրանում չի կարելի մեկնաբանել միանշանակ ձևով: Այդ երկրում այն մշտապես ունեցել և ներկայումս էլ ունի իր յուրահատկությունները: Այսպես, ԻԻՀ-ում փոքրամասնությունների (անկախ նրանց կրոնական-ազգային

⁴⁶ ԻԻՀ սահմանադրություն, էջ 41:

պատկանելությունից), ազգային ինքնագիտակցության ձևավորումը նրանց գիտակցության միջոց դեռևս դուրս չի մղել այս կամ այն չափով նրանց պատկանելության գիտակցությունը համաիրանական հոգեբանական ընդհանրությանը, որը պայմանավորված է պատմական ճակատագրի միասնությամբ, միասնական պետականությամբ, ավանդույթներով և վերջապես իրանական մշակույթի ողջ հավաքականությամբ, որի զարգացման մեջ անվիճելի ներդրում ունեն Իրանի բոլոր ժողովուրդները:

Իրանում հայկական «ազգային իշխանության» և պետության փոխհարաբերությունները հիմնականում կարգավորվում են Թեմական խորհրդի կամ նրա վստահված անձանց միջոցով և ամբողջովին անվերահսկելի են համայնքի անդամների կողմից: «Ազգային իշխանությունը» իր ձեռքում է պահում համայնքի ղեկը և իր հսկողությունից դուրս որևէ շփում պետական մարմինների հետ համարվում է անթույլատրելի: Ազգային կառույցը իր ուսերին է վերցրել նաև կրթական, բարեգործական, մշակութային, մարզական, քաղաքական և կալվածատնտեսական խնդիրներ:

Առհասարակ հարկ է նշել, որ «Ազգային իշխանություն» անվանումը ինքնին չափազանց հավակնոտ է, որովհետև համայնքը ազգ չէ, ոչ էլ համայնքային կառույցն է իշխանություն: Կա նաև ներքին մի երկվություն. դա հոգևոր և աշխարհիկ իշխանության խնդիրն է: Ինչպես գիտենք, թեմերը կրոնական կառույց են, իսկ Իրանում Թեմական խորհուրդը առավելապես զբաղվում է ոչ կրոնական գործերով⁴⁷:

Որպես կանոն, իրանահայ համայնքի ազգային կառույցների մեծագույն մասը գտնվում է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ազդեցության տակ:

Իրանում Պատգամավորական ժողովի ընտրություններն ընթանում են բավականին թեժ ընտրապայքարի պայմաններում: Օրինակ, վերջին 12-րդ պատգամավորական ժողովի ընտրությունների ժամանակ ՀՅԴ կուսակցության ներսում անգամ ձեռք էր առաջացել և մեծ թվով կու-

⁴⁷ Տե՛ս Ազատ Մաթյան, Իրանահայ համայնք», «Յոյս», 8 փետրվարի, 2012, թիվ 116:

սակցականներ վտարվել էին կուսակցությունից: Սակայն Պատգամավորական ժողովի ընտրությունների մեխանիզմը այնպիսին է, որ ըստ էության բացառվում է որևէ ընդդիմադիր ուժի հնարավորությունը Պատգամավորական ժողովում մեծամասնություն կազմելու համար: Կարևոր ենք համարում նաև նշել, որ իրանահայության մեջ որևէ այլ ավանդական կամ նոր ընդդիմադիր ուժի մինչև օրս չի հաջողվել ինչ որ չափով հակակշռել գործող «ազգային իշխանությանը»:

1909 թ. Իրանի ներքին գործերի մինիստրության հրամանով կրոնական փոքրամասնություններին իրավունք էր վերապահվում իրանական խորհրդարանի՝ մեջլիսի երկրորդ նստաշրջանում ունենալ մեկական պատգամավոր:

Ելնելով 1909 թ. մեջլիսի երկրորդ գումարման ընդունված օրենքի՝ ընտրական իրավունքի մասին համապատասխան հոդվածից (այն է՝ յուրաքանչյուր 50 հազար հոգուց ընտրվում է մեկ պատգամավոր) հայերը պահանջեցին, որ իրենց թույլատրվի մեջլիսում մեկի փոխարեն երկու պատգամավոր ունենալ, քանի որ այդ տարիներին իրանահայերի թիվը հասնում էր մոտ 100 հազարի: Սակայն հայ բնակչության այդ օրինական պահանջը մերժվեց:

1909 թ. նոյեմբերի 15-ին իր աշխատանքներն սկսեց մեջլիսի նստաշրջանը, որտեղ հայերն ունեցան միայն մեկ պատգամավոր՝ ի դեմս իրանահայ նշանավոր գրականագետ Հովսեփ Միրզայանի:

Մինչև 5-րդ նստաշրջանը (1925-1927) իրանահայերը մեջլիսում ունեցել են մեկ պատգամավոր: Հետագայում երկրորդ պատգամավոր ունենալու հարցը հայերի կողմից կրկին բարձրացվեց և ի վերջո համայնքին իրավունք տրվեց ունենալ նաև երկրորդ պատգամավոր:

Ներկայումս իսլամական խորհրդարանում Իրանի հայ համայնքը ներկայացված է երկու պատգամավորներով: Նրանցից մեկը ներկայացնում է Թեհրանն ու հյուսիսային իրանահայությանը, մյուսը՝ հարավային իրանահայությանը: Թեհրանի և հյուսիսային իրանահայության պատգամավորն է Կարեն Խանլարյանը, իսկ հարավային իրանահայությանը՝ Ռոբերտ Բեգլարյանը: Իրանական խորհրդարանի համար առաջադրված հայ պատգամավորների ընտրությունից առաջ պար-

տադիր կարգով նրանց թեկնածությունը պետք է հաստատվի ընտրությունները վերահսկող պետական մարմնի՝ «Սահմանադրությունը պահպանողների խորհրդի» («Շուրայ-ե նեգահբան-ե ղանուն-ե ասասի»): Ընդ որում, նրան տրամադրված է վետոյի իրավունք, այսինքն՝ կարող է մերժել կամ այլ թեկնածուի ընտրել որպես պատգամավոր:

Այսպիսով, իսլամական խորհրդարանի՝ մեջլիսի (մաջլես-ե-շուրայ-ե էսլամի) 290 պատգամավորական մանդատներից 5-ը, ըստ երկրի սահմանադրության, հատկացված են պաշտոնապես ճանաչված «կրոնական փոքրամասնություններին»: Դրանք են երկու հայերից բացի 1 զրադաշտական, 1 հրեա, 1 ասորի («նեստորական» և «քաղդեացի»՝ կաթոլիկ համատեղությամբ): Այդ առթիվ ԻԻՀ սահմանադրության մեջ նշվում է հետևյալը. «Զրադաշտները և հրեաները ընտրում են մեկական պատգամավոր, ասորիները և խալդերը ընտրում են մեկ պատգամավոր, հյուսիսի և հարավի հայ քրիստոնյաները ընտրում են մեկական պատգամավոր»⁴⁸:

Պաշտոնական քարոզչությունը 290 հոգանոց խորհրդարանում «կրոնական փոքրամասնություններին» հատկացված հինգ պատգամավորական մանդատը ներկայացնում է որպես պետության կողմից փոքրամասնությունների նկատմամբ իրազործվող բարյացակամ քաղաքականության վառ դրսևորում:

Մեջլիսի հայ պատգամավորների գործունեությունը կենտրոնացվում է հայ համայնքի՝ որպես կրոնական փոքրամասնության իրավունքների հարցերի շուրջ: Նրանք իրավասու են օգտվելու հայ բնակչության դիմումները և բողոքները քննարկելու, պետական և ղեկավար մարմիններին միջնորդություններ հարուցելու և այլ իրավունքներից: Հայ պատգամավորները խորհրդարանում պաշտպանում են հայ համայնքի ազգային, իրավական, դատական, համայնքային և այլ շահերը: Հայ պատգամավորների, ինչպես և կրոնական մյուս փոքրամասնությունների պատգամավորների գործունեությունը

⁴⁸ ԻԻՀ սահմանադրություն, էջ 64:

մեջլիսի մյուս պատգամավորների համեմատությամբ սահմանափակված է համայնքին վերաբերող հարցերի շրջանակով:

Հայ համայնքի թեմական մարմինները ևս երկրի նախարարությունների և գերատեսչությունների հետ շփվում են այդ պատգամավորների միջոցով:

Պետք է նշել, սակայն, որ իրանական խորհրդարանը (մեջլիսը) մեծ դեր չի խաղում Իրանի քաղաքական կյանքում: Իրանի Իսլամական Հանրապետությունում քաղաքական հիմնական լծակները գտնվում են երկրի առաջնորդի (րահբար), ինչպես նաև հանրապետության նախագահի ձեռքերում: Մասնավորապես առաջնորդի իրավասությունների մեջ է մտնում հարցերի լայն շրջանակ, որը գործնականում ընդգրկում է հասարակության և պետության կենսագործունեության բոլոր ոլորտները:

Ըստ երկրի սահմանադրության, խորհրդարանի հայ պատգամավորները հանդիսանում են համայնքի լիիրավ ներկայացուցիչները: Բայց նրանք նաև օրենսդիր մարմինների ներկայացուցիչ են և ոչ թե գործադիր մարմնի (ԻԻՀ-ում օրենսդիրները բավարար անկախ չեն գործադիր իշխանությունից), իսկ երկրորդ՝ «ազգային» կանոնադրության մեջ նրանց մասին չկա ոչ մի հոդված: Ղա փաստորեն նշանակում է, որ «ազգային իշխանության» համար պատգամավորներն ընդհանրապես գոյություն չունեն: Նրանք պատգամավորական ժողովի նիստերին հրավիրվում են միայն խորհրդակցական ծայնի իրավունքով, թեև դա էլ կանոնագրով նախատեսված չէ, ուստի և պատգամավորական ժողովը կարող է առհասարակ նրանց չհրավիրել (մի բան, որ նախընթաց ունեցել է): Իսկ քանի որ չգրված օրենքով պատգամավորների ընտրությունը մեծապես պայմանավորված է «ազգային իշխանության» հաստատումից, վերջինս նրանց համարում է հաշվետու: Նման պայմաններում պարզ է, որ համայնքային առումով խորհրդարանի հայ պատգամավորներից քիչ թե շատ անկախ գործունեություն չի կարելի ակնկալել, իսկ «ազգային իշխանության» վրա հսկողություն՝ առավել ևս: Իրականում խորհրդարանի հայ պատգամավորները ավելի ակտիվ են հայ անհատ-պետություն, մա-

սամբ նաև «ազգային իշխանություն»-պետություն հարաբերությունների ասպարեզում, իսկ համայնք-«ազգային իշխանություն» հարաբերությունների տեսակետից նրանք գրեթե ոչ մի դեր չունեն⁴⁹:

Ուշագրավ է նշել, որ բոլոր պատգամավորները մեջլիսի առաջին նստաշրջանում պետք է երդում տան և ստորագրեն երդման հատուկ տեքստի տակ: Ընդ որում, մահմեդական պատգամավորներն երդվում են իսլամի Սուրբ գրքի՝ Ղուրանի վրա, իսկ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներից յուրաքանչյուրը այդ երդումը տալիս է իրենց Սուրբ գրքի վրա:

Ի տարբերություն սփյուռքի մի շարք հայ զաղթօջախների, իրանահայերը որևէ լուրջ քայլ չեն կատարել իրանական խորհրդարանում մեջլիսում, հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծ առաջ քաշելու ուղղությամբ, գիտակցելով, որ ներկա պայմաններում կառավարությունը քաղաքական պատճառներով (սահմանակից Թուրքիայի հետ հարաբերությունները չվատթարացնելու միտումով) պատրաստ չէ ընդառաջ գնալու այդ քայլին: Թեև պետք է խոստովանել, որ տարբեր ժամանակներում մեջլիսի մի շարք հայ պատգամավորներ բարձրացրել են այդ հարցը: Ավելորդ չէ նշել, որ դեռևս շահական վարչակարգի ժամանակ Թեհրանի թեմական խորհրդի ջանքերով հաջողվել էր հայոց առաջնորդարանի բակում ցեղասպանությանը նվիրված մի համեստ հուշակոթող կառուցելու թույլտվություն ստանալ: Սակայն կառավարությունը խստիվ արգելում էր իրանահայերին ապրիլի 24-ին կազմակերպելու երթեր, քայլարշավներ, հանրահավաքներ և այլն:

Իսլամական հեղափոխությունից անմիջապես հետո, 1979 թ. ապրիլի 24-ին նոր իշխանությունները թույլատրեցին, որ հայերը կազմակերպեն քայլարշավ: Հաջորդ օրը իրանական հանրահայտ «Քեյհան» օրաթերթը «Մեծ ցույցեր հայերի կոտորածների տարելիցի առթիվ» խորագրի տակ գրել է. «Երեկ՝ ապրիլի 24-ին, տասնյակ հազարավոր

⁴⁹ Տե՛ս Ազատ Մաթեան, Իրանահայ համայնքի հասարակական կառույցները: Ժողովրդակա՞ն է մեր թեմերի կանոնադրությունը, «Յոյս», 8 փետրվարի, 2012 թ., թիվ. 116:

թեիրանահայեր մասնակցեցին մեծ հանրահավաքի: Այդ հանրահավաքն ու քայլարշավը, որ կազմակերպել էին թեիրանահայ հասարակական տարբեր խմբակցությունները, բողոքի ձայն էր ընդդեմ Օսմանյան կայսրության, որը կազմակերպել էր 1915 թ. կոտորածները, որին զոհ դարձան 1.5 միլիոնից ավելի հայեր: Ցուցարարները... քայլեցին դեպի Թուրքիայի դեսպանատուն»:

Ուշագրավ է նշել, որ հիշյալ քայլարշավի ժամանակ հայերին էին միացել նաև մուսուլմանները, որոնց ձեռքերում գտնվող պաստառների վրա գրված է եղել. «Մենք մուսուլմաններս նույնպես դատապարտում ենք հայերի 1915 թ. կոտորածները»:

Առհասարակ հայոց ցեղասպանության խնդրի շուրջը Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը վարում է շատ զգույշ քաղաքականություն, թույլ տալով լուկ, որ սահմանափակ բնույթի քարոզչական աշխատանք կատարվի միայն հայերեն լեզվով, հայ համանքի համեմատաբար նեղ շրջանակներում:

Թեև Իրանի Իսլամական Հանրապետությունում կրոնական փոքրամասնությունները օրենքով գորակոչվում են իրանական բանակում ծառայելու համար, սակայն նրանք, այդ թվում նաև հայերը, չեն կարող զբաղեցնել զինվորական բարձր պաշտոններ: Առհասարակ իսլամական հեղափոխությունից հետո նկատվեց պետական նշանակության պաշտոնական դիրքերից կրոնական փոքրամասնություններին տեղ չտալու միտում, որը հետզհետե խորացավ: Ներկայումս որոշ վկայությունների համաձայն, նույնիսկ թաղապետի պաշտոն զբաղեցնելու ակնհայտ հնարավորություն ունեցող և համայնքից դուրս էլ իր վարչարարարական ունակություններով հեղինակություն վայելող հայը, չգրված օրենքով ստիպված է չներկայացնել իր թեկնածությունը: ԻԻՀ սահմանադրության 115-րդ հոդվածում երկրի նախագահի ընտրության օրինակով նշվում է, որ պետության մեջ բարձր պաշտոններ զբաղեցնելու պարտադիր պայման է «պաշտոնական կրոնին (այսինքն՝ իսլամին – Վ. Բ.) պատկանելությունը»⁵⁰:

⁵⁰ ԻԻՀ սահմանադրություն, էջ 92:

Ներկայումս Իրանի բոլոր կրոնական փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմում է 200 հազար մարդ: Ընդ որում, երկրի բնակչության ընդհանուր թվի դինամիկ աճի պայմաններում (ներկայումս ԻԻՀ բնակչությունը կազմում է մոտ 75 միլիոն մարդ), կրոնական փոքրամասնությունների թիվը, գլխավորապես արտագաղթի պատճառով, գնալով անշեղորեն նվազում է:

Դժվար է ասել, թե այդ երևույթը ինչքանով է մտահոգում կառավարությանը: Սակայն վերջերս նրա կողմից կատարվող մի շարք քայլեր այնուամենայնիվ կարծես թե գալիս են վկայելու, որ երկրի կառավարող շրջանները որոշել են կրոնական փոքրամասնությունների նկատմամբ իրենց քաղաքականության մեջ մտցնել ինչ-ինչ դրական տեղաշարժեր: Այսպես, օրինակ, վերջին ժամանակներս պետությունը կրոնական փոքրամասնություններին յուրաքանչյուր տարի հատկացնում է մի որոշ բյուջե իրենց կարիքները հոգալու համար: 2012 թ. հայ համայնքին հատկացվել էր 782 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումար իրանական թիալով, որից 540 հազարը հատկացված էր Թեհրանի և հյուսիսային իրանահայությանը, իսկ 242 հազարը՝ հարավային իրանահայությանը: Համեմատության համար նշենք, որ ասորիներին հատկացվել է մոտ 300 հազար, հրեաներին՝ 300 հազար, զրադաշտականներին՝ 368 հազար ԱՄՆ դոլար: Նշենք նաև, որ հատկացումների մեծ տրամաբանությունը պայմանավորված է նրանով, որ հայկական համայնքը մյուսների հետ համեմատած համարվում է ամենախոշորը իր բնակչության թվով:

Համեմատաբար նորություն է նաև այն, որ պաշտոնականացվել է կրոնի ուսուցիչների կարգավիճակը:

Հարկ է նշել, որ ԻԻՀ նախագահ Խաթամիի նախագահության շրջանում կրոնական փոքրամասնություններին հատկացվեցին որոշ արտոնություններ: Դրանցից մեկն էր այսպես կոչված «դիեյի» մասին ընդունված օրենքը, այսինքն կրոնական փոքրամասնությունների անդամների՝ մահմեդականների արյան գնի՝ դիեյի հավասարեցումը: ԻԻՀ-ում գործող օրենքի համաձայն, մարդկային կյանքի կորստի հանգեցնող միջադեպերում, օրենքով նախատեսված պատժից

զատ, մեղավորը պարտավոր է նաև համապատասխան արյան գին վճարել, որը յուրաքանչյուր տարի որոշվում է Կենտրոնական բանկի կողմից՝ հաշվի առնելով հեղափոխության առաջնորդի տեսակետը:

Մինչև 2005 թվականը շարիաթական այդ օրենքը վերաբերում էր միայն մահմեդականներին, իսկ ոչ մահմեդականների դեպքում օրենքը ոչ մի հատուցում չէր նախատեսում ո՛չ պատժի և ո՛չ էլ «դիյե» վճարելու տեսքով: Այլ կերպ ասած, եթե մահմեդականի ձեռքով կյանքից զրկվում է մահմեդականը, ապա նա պարտավոր է, օրենքով սահմանված պատիժը կրելուց զատ, վճարել նաև «արյան գին»: Իսկ մինչև 2005 թ. մահմեդականի կողմից ոչ մահմեդական սպանելու դեպքում հանցագործը ոչ միայն ըստ օրենքի որևէ պատիժ կրելու ենթակա չէր, այլև չէր վճարում նաև «արյան գինը»: Սույն, հիրավի, խտրական մոտեցումն իր արտացոլումն էր գտել Քրեական օրենսգրքի (իսլամական պատժամիջոցների համակարգի) բոլոր հոդվածներում ու դրույթներում և բազմիցս սուր քննադատության էր ենթարկվել մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների կողմից: Ինչպես նշվեց, դրությունը միտվեց դրական փոփոխության նախագահ Խաթամիի կառավարման տարիներին: Վերջինիս կարգադրությամբ 2001 թ. ստեղծվեց «Կրոնական փոքրամասնությունների հարցերն ուսումնասիրող հատուկ կոմիտե», որը խնդիրը ներկայացրեց արդարադատության նախարարությանը: Ըստ այնմ, 2002 թ. մարտին, երկրի դատական իշխանության ղեկավար Հաշուդիի զխավորությամբ որոշում կայացվեց «Սուրբ գրքեր» ունեցող փոքրամասնությունների (քրիստոնյաների, հուդայականների և զրադաշտականների) և մահմեդականների «դիյեի» հավասարության վերաբերյալ: Երեք տարի անց՝ 2005 թ. իսլամական խորհրդարանը հաստատեց այդ որոշումը, որը որպես օրենք մտավ ուժի մեջ:

Կրոնական փոքրամասնություններին հատկացված արտոնությունների ցանկում հիշատակության արժանի է նաև երկրից դուրս մեկնելու հարցում անձնագրային դյուրացումները: Ամենայն հավանականությամբ, կրոնական փոքրամասնությունների հիմնախնդիրները իր հոգաժության առարկան դարձնելով, իրանական կառավա-

րությունը միևնույն ժամանակ փորձում է կանոնակարգումների միջոցով հնարավորինս վերահսկելի և կանխատեսելի դարձնել տարադավան էթնիկ միավորներին որպես արտերկրի ուժերի կողմից հնարավոր միջամտության լծակների:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, հարկ ենք համարում նշել, որ նախ, թեև Իրանի հայ համայնքի իրավական կարգավիճակը, ըստ սահմանադրության, ոչ թե «Իրանի քաղաքացի» ձևակերպումն է, այլ «կրոնական փոքրամասնություն» ձևակերպումը, սակայն ի տարբերություն հարևան արաբական մի շարք երկրների (Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Կատար, Բահրեյն, Օման և այլն), որտեղ քրիստոնյաների համար գրեթե անհնար է քաղաքացիություն ստանալ, Իրանում հայերը մշտապես, բոլոր ժամանակներում ունեցել են քաղաքացիություն: Այնուհետև, ի տարբերություն Ծոցի երկրների, Իրանում հայերն ունեն նաև սեփականություն ունենալու իրավունք: Թեև հայերը չեն մասնակցում Իրանի քաղաքական զարգացումներին, չեն ընտրվում պետական կառույցներում պաշտոնավարելու համար, կենտրոնանալով միայն հայապահպանության խնդիրների վրա, սակայն այդ բոլորով հանդերձ, նրանք ներգրավված են Իրանի սոցիալական և մշակութային գործընթացներում և գիտակցվում են որպես երկրի լիիրավ և արժանավոր քաղաքացիներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՍՈՒԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական համայնքների, բոլոր տեսակի կազմակերպությունների, կրթական, հայրենակցական, բարեգործական և այլ կարգի միությունների գործունեության գլխավոր նպատակը անկասկած հայոց լեզուն, հայ մշակույթը, հայ բնակչության ինքնությունը կենսունակ պահելն է, այլ կերպ ասած, հայապահպանությունը: Այդ կարևորագույն խնդիրը ինչպես սփյուռքի բոլոր համայնքներում, այնպես էլ իրանահայ համայնքում իրականացվում է դպրոցների, զանազան կրթական հաստատությունների, մշակութային ու մարզական միությունների գործունեության միջոցով:

Ինչպես սփյուռքի մյուս համայնքներում, Իրանի հայ համայնքում ևս հայապահպանման գործում մեծ դեր են խաղացել հայկական դպրոցները: Իրանահայ համայնքում դպրոցաշինությունը ունի հին ավանդույթներ: Դեռևս XVII դարի 30-ական թթ. Խաչատուր Կեսարացու ջանքերով Նոր Ջուղայում բացվել է դպրոց, որը ժամանակակիցները կոչել են համալսարան կամ ճեմարան: Համայնքում առաջին աշխարհիկ դպրոցները ստեղծվել են XIX դ. առաջին կեսերին, Նոր Ջուղայում 1833 թ., Թավրիզում՝ 1835 թ., իսկ Թեհրանում 1870 թ.: Առավել հայտնի են Նոր Ջուղայի «Ազգային կենտրոնական» (1880), Թավրիզի «Արամյան» (1835), «Հայկազյան» (1882), «Թեմական կենտրոնական» (1909), Թեհրանի «Հայկազյան» (1870) դպրոցները: Մինչ այդ, իրանահայ համայնքում գոյություն են ունեցել այսպես կոչված «խալիֆայական» դպրոցներ, որոնք սկիզբ են առել դեռևս XII-XIII դարերում: Այս դպրատուն-վարժարանները տեղավորված էին եկեղեցիների ու վանքերի խցերում և կրոնական բնույթ ունեին:

Ուսումնական գործը հետ չէր մնում նաև գավառներում, ուր սկսած XIX դ. վերջերից բացվեցին տասնյակ դպրոցներ: 70-ական թվականներին արդեն դպրոցներ կային Սալմաստի Հաֆթվան, Փայաջուկ, Ղալասար գյուղերում: Դարի վերջին և XX դ. սկզբին դպրոցներ բացվեցին Մարաղայում, Ուրմիայի, Մակուի և Ղարադաղի մի քանի գյուղերում, Համադանում, Ղազվինում, Մաշհադում, Սուլթանաբադում, Ռաշտում, Էնզելիում և այլուր:

Իրանի հայկական դպրոցները իրենց վրա կրում էին Կովկասի կրթական կենտրոնների ազդեցությունը: Հայկական դպրոցների օրինակին հետևելով, պարսկական առաջին եվրոպական տիպի դպրոցը հիմնվում է Թավրիզում 1888 թ.: Սակայն տգետ ամբոխը հարձակվում է դպրոցի վրա և ավերում շենքը: Ուստի նոր տիպի (եվրոպական) դպրոցներ Իրանում բացվում են միայն 1898 թվականից⁵¹:

Իրանում հայկական ազգային դպրոցներին իրավական երաշխիք էր տրված շահերի մի քանի ֆիրմաններով ու փաստաթղթերով: Իրենց սկզբնավորման օրից (XIX դ. 30-ական թթ.) մինչև 1936 թ. մի ամբողջ դար հայկական աշխարհիկ հանրակրթական դպրոցները համաձայն այդ երաշխիքների ունեցել են ներքին ինքնավարություն: Այդ իրավունքի արտահայտությունն են եղել սեփական ուսումնական ծրագրերը, հայերեն լեզվով ուսուցումը: Դպրոցները ստեղծվում և պահվում էին ժխականների միջոցներով և ղեկավարվում էին թեմական կամ համայնքային խորհուրդների ընտրած հոգաբարձությունների կողմից:

1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխության հետևանքով ընդունված Իրանի սահմանադրությամբ, ճիշտ է սահմանափակ ձևով, երաշխավորվում էր ազգային դպրոցների գոյությունը: Այսպես, Հիմնական օրենքի «լրացումների» 19-րդ հոդվածում խոսվում է ժողովրդական միջոցներով դպրոցների հիմնադրման մասին⁵²:

⁵¹ Տե՛ս Պատմություն Ատրպատականի հայոց թեմական կենտրոնական դպրոցի, Թեհրան, 1981:

⁵² Տե՛ս Մարտիրոսյան Հ. Հ., Իրանահայ գաղութի պատմությունից, էջ 235-236:

Սակայն չնայած այս երաշխիքին, ինչպես արդեն նշել ենք, պետության կողմից այլազգիներին «պարսկացնելու» քաղաքականություն իրագործելու նպատակով 1936 թ. Ռզա շահը հրամայեց փակել ինչպես հայկական, այնպես էլ կրոնական այլ փոքրամասնություններին պատկանող դպրոցները: Սակայն իրանահայ համայնքը չհաշտվեց դրա հետ: Տվյալ իրադրության պայմաններում անհրաժեշտ էր վարել ճկուն քաղաքականություն՝ իրավիճակից նվազագույն կորուստներով դուրս գալու համար: Հայկական բնակավայրերում սկսեցին կազմակերպվել հայոց լեզվի դասընթացներ, որոնք կոչված էին փոխարինելու հայկական դպրոցին: Ռզա շահի գահազուրկ արվելուց հետո հայկական դպրոցները 1942-1943 թթ. վերստին հնարավորություն ստացան շարունակելու իրենց գոյությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում դպրոցական շինարարությունը հատկապես մեծ թափ ստացավ Թեհրանում, որի բնակչությունն արագ աճում էր: Այդ տարիներին դպրոցական նոր շենքեր երևան եկան նաև Իրանի այլ քաղաքներում՝ Աբադանում, Մաշհադում, Ռաշտում և այլն:

Հայկական դպրոցների վերականգնումը ձևականորեն իրականացվեց Թավրիզի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանի՝ Իրանի նոր շահ Մոհամմադ Ռզա Փահլավիին հղած միջնորդության շնորհիվ⁵³: Իրականում դպրոցների վերաբացման պատճառը երկրում ստեղծված դրական տեղաշարժերն էին, որոնց ճնշման ներքո կառավարությունը հարկադրված էր վերացնել ազգային դպրոցների արգելքը:

Վերականգնելով համայնքի՝ դպրոցների վերաբերյալ ունեցած իրավունքները, իրանական կառավարությունը միաժամանակ դրանցում պարտադիր կարգով մտցրեց Իրանի լուսավորության մինիստրության տարրական դպրոցների ծրագիրը: Այդ ծրագիրն ընդունելու հետևանքով հայկական դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն փաստորեն կրկին դարձավ պարսկերենը: Այլ կերպ ասած, հայկա-

⁵³ Աճեմյան Հ., Հիշատակարան ու պատկերացույց Թեհրանի «Իսրայել Սահալյան» դպրոցների, Թեհրան, 1961, էջ 29:

կան դպրոցները «հայկական» էին միայն աշակերտների կազմով, իսկ տնօրենները և ուսուցիչների մեծ մասը պարսիկներ էին: Ղասավանդումը կատարվում էր պարսկերենով, իսկ մայրենի լեզվի ուսուցումը դուրս էր ծրագրից: Հայկական դպրոցներում ծրագրից դուրս թույլատրված էր միայն հայոց լեզվի և կրոնի ուսուցումը: Այդ երկու առարկաներն էլ մտցվեցին ոչ պարտադիր առարկաների շարքը: 1946 թ. Թեհրանի թեմական խորհրդի միջնորդությամբ կրոնը ճանաչվեց որպես պարտադիր առարկա⁵⁴: Սակայն հայոց լեզվի վերաբերյալ իշխանությունների որոշումը փոփոխության չենթարկվեց:

Թավրիզի ազգային դպրոցները փակ մնացին 20 տարի և միայն 1956-1957 թթ. կրկին վերսկսվեցին պարապմունքները:

Գավառական քաղաքներում, որտեղ չկային ազգային դպրոցներ, հայ աշակերտները հաճախում էին պարսկական դպրոցներ: Նրանք գրկված էին հայոց լեզվի և հարակից առարկաների ուսուցումից:

Համայնքի թեմական մարմինների վրա էին ընկած «հայկական» դպրոցների նյութական բազայի պահպանման ու ամրապնդման, դպրոցական շենքերի կառուցման և այլ կարգի հոգսերը: Սեփականության իրավունքների տեսակետից այդ դպրոցները համայնքի սեփականությունն էին:

Ընդհանուր առմամբ 1970-ական թվականներին Իրանի հայկական դպրոցների նյութական վիճակը ծանր էր, որովհետև միջոցները հիմնականում գոյանում էին ուսման վարձից, ունևոր մարդկանց նվիրատվություններից, կտակներից և այլն:

Իրանի հայկական դպրոցներում ուսուցումը տարվում էր արևելահայերենով: Ուսուցումը եռաստիճան էր, դպրոցներին կից գործում էին մանկապարտեզներ:

1960-ական թվականներին Իրանի ազգային դպրոցների թիվը 50 էր, որոնցից 23-ը՝ Թեհրանում, իսկ 27-ը՝ երկրի մյուս նահանգներում⁵⁵:

⁵⁴ «Վերածնունդ», 1947 թ., 12-13 նոյեմբերի:

⁵⁵ «Հայրենիքի ծայն», 1966, 6-ը նոյեմբերի:

Իրանում հայ երեխաները, բացի ազգային դպրոցներից, սովորում էին նաև ամերիկյան, ֆրանսիական, գերմանական և այլ միսիոներական դպրոցներում: Թեհրանում գործում էին արական Սան Լուի և իգական՝ ժաննա դը Արկ ֆրանսիական դպրոցները:

1978-1979 թթ. հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության կազմավորումից հետո, կրթական համակարգը Իրանում որոշակի փոփոխությունների ենթարկվեց: Դա նախ և առաջ կապված էր 1980 թ. հունիսի 13-ին հռչակված «Իսլամական կուլտուրական հեղափոխության» հետ: Մշակվեց «կրթության իսլամականացման» հայեցակարգ, որը բաղկացած էր երկու հիմնարար սկզբունքներից՝ ուսումնական պրոցեսի ձևի փոփոխություն և ուսուցման բովանդակության փոփոխություն: Ուսումնական պրոցեսի ձևի իսլամականացման հասկացության մեջ մտնում էր վարքի և բարոյա-էթիկական նորմերի բնագավառում իսլամի բոլոր պատվիրանների պահպանման անհրաժեշտությունը:

Թեհրանի կրթական և ընդհանուր վարչության շրջաբերականով բոլոր դպրոցները հայտարարվեցին պետական: Սակայն կրոնական փոքրամասնություններին թույլատրվեց ունենալ իրենց դպրոցները, որոնք այլ դպրոցների հետ ունեին համանման պայմաններ, բացի այն, որ ծրագրից դուրս մայրենի լեզվով կարող էին դասավանդվել լեզու և գրականություն, ինչպես նաև կրոն: Ոչ մուսուլման աշակերտներին իրավունք էր տրվում, ցանկության դեպքում, սովորել պարսկական դպրոցներում:

Տարբեր կառուցվածքային փոփոխությունների իրականացման հետ միաժամանակ, 1980-1985 թթ. կրթության «կուլտուրական հեղափոխության» շրջանակներում, դպրոցների և բուհերի ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի մեծ մասը նորացվեց: Տարրական դպրոցի համար կազմվեց «Իսլամական մշակույթի և կրոնական դաստիարակության վերաբերյալ» դասագիրք, ինչպես նաև նմանատիպ դասագրքեր կրոնական փոքրամասնությունների համար (համաձայն ԻԻՀ Սամ-հանադրության, իսլամի հետ միաժամանակ Իրանում պաշտոնական

կրոններ են համարվում նաև քրիստոնեությունը, հուդայականությունը և գրադաշտականությունը որպես «գրոց կրոններ»):

Նշանակալից փոփոխությունների ենթարկվեցին նաև դասագրքերի գաղափարական հիմունքները: Շահական վարչակարգի շրջանում պաշտոնական մակարդակով գոյություն ունեցող միապետական գաղափարախոսության փոխարեն, հեղափոխությունից հետո դասագրքերում արմատավորվեց աստվածապետական սկզբունքներին նվիրված գաղափարախոսությունը:

Տարրական դպրոցի պարսկերեն լեզվի, իսլամական մշակույթի, աստվածաբանության և իսլամական աշխարհայացքի (մահմեդական դպրոցների համար) և կրոնական հավատալիքների (կրոնական փոքրամասնությունների դպրոցների համար) դասագրքերի տեքստերը կազմվեցին մի այնպիսի ձևով, որպեսզի իրագործվի «իսլամական հանրապետության քաղաքացու միասնական դաստիարակչական պրոցեսը»: Դաստիարակչական գործընթացի հիմնական նպատակ էր հայտարարվում «իդեալական իսլամական անհատականության ձևավորումը»: Դասագրքերում գաղափարական առումով առանձնացվեցին երկու սկզբունքներ՝ կրոնը և հայրենասիրությունը:

Կրոնական փոքրամասնությունների համար նախատեսված դասագրքերում հատուկ ուշադրություն էր դարձվում տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև հարաբերությունների էթիկային: Ընդհանուր առմամբ ԻԻՀ դասագրքերի կողմից առաջարկվող արժեքային համակարգը կողմնորոշվում էր դեպի «ներդաշնակ անհատի» դաստիարակումը, անհատ, որի «ինտելեկտուալ ազատությունը» զուգորդվում է «բարձր սոցիալական ակտիվության» հետ:

Ուսումնական նյութերի թեմատիկայի փոփոխությունը հիմնականում վերաբերում էր հունանիտար ցիկլի առարկաներին և գաղափարական ուղղվածությանը: Բնագիտական բովանդակության դասագրքերի նյութերը որևէ էական փոփոխության չենթարկվեցին: Հետևողականորեն կիրառված «վիաքսագի» («մաքրագործման») համապետական քաղաքականության հետևանքով դպրոցի տնօրենների պաշտոններից համատարած հեռացվեցին տվյալ համայնքի ներկա-

յացուցիչները: Իրենց պաշտոններում մնացին միայն քիչ թվով, այն էլ բնագիտական առարկաների ուսուցիչները:

1981 թվականից սկսած ԻԻՀ դպրոցական կրթության համակարգում սկսեց գործել «հոգևոր դաստիարակի» ինստիտուտը: Նրա հիմնական խնդիրն էր աջակցել «աշակերտների իսլամական դաստիարակության» գործին:

1982 թ. ապրիլի 25-ին կրթադաստիարակչության նախարարության գերագույն խորհուրդը շրջաբերական հղեց հայկական դպրոցներին, որում ասվում էր, որ կրոնը պետք է դասավանդվի պարսկերեն լեզվով: Հայ և մյուս կրոնական փոքրամասնությունների կրոնի դասագիրքը ևս պետք է լիներ պարսկերեն: Այդ կերպ ասած, հայ աշակերտը քրիստոնեությունը պետք է յուրացներ իսլամի տեսանկյունից: Թեհրանի թեմական խորհուրդը շատ լուրջ, կետ առ կետ քննարկեց այդ որոշումը և եկավ այն եզրակացության, որ եթե դա գործադրվի, կրոնական փոքրամասնությունները պետք է ուրանան իրենց կրոնն ու ընդունեն իսլամը⁵⁶: Միաժամանակ իսլամական իշխանությունները սկսեցին փոխել հայոց դպրոցների տեսուչներին, նշանակելով այնպիսի մարդկանց, որոնք բացարձակապես ծանոթ չէին հայ ժողովրդի կրոնական ու ազգային առանձնահատկություններին:

Քիչ ժամանակ անց, առհասարակ օտարերկրյա բոլոր դպրոցները, այդ թվում նաև կրոնական փոքրամասնությունների դպրոցները, միառժամանակ փակվեցին: Դա հայության վճռական ընդվզման պատճառ դարձավ: Կազմակերպվեցին բողոքի ցույցեր և գործադուլներ: Իշխանությունները վերանայեցին իրենց որոշումը և կրոնական փոքրամասնությունների դպրոցները կրկին սկսեցին գործել: 80-ական թվականներին վերաբացվեցին նաև օտարերկրյա դպրոցները: Փակվեց նաև կրոնը պարսկերեն լեզվով դասավանդելու հարցը:

Այսպիսով, իրողությունն այն է, որ տարբեր ժամանակներում իրանական իշխանությունները փորձել են սահմանափակել կամ իսպառարգելել հայկական դպրոցների գործունեությունը: Այդ քաղաքակա-

⁵⁶ Ահարոնյան Լևոն, Փոթորկոտ կյանքիս օրերը (Հասարակական և քաղաքական հուշեր), Գիրք Ա, Թեհրան, 2010, էջ 708:

նության հետևանքով զգալի թվով հայ ծնողներ գերադասել են իրենց երեխաներին տալ պարսկական և կամ ոչ հայկական դպրոցներ: Ներկայումս ևս, հատկապես Թեհրանում, այդ երևույթը որոշակի տարածում է գտել:

Ընդհանրացնելով վերևում ասվածը, կարելի է արձանագրել, որ 1979 թ. հեղափոխությունից հետո ստեղծված իսլամական վարչակարգի օրոք հայկական դպրոցների կապակցությամբ էական փոփոխություններ տեղի չունեցան: Ավելի ճիշտ կլինի ասել, որ ըստ էության ամեն ինչ մնաց նույնը: Երկրում ստեղծված նոր վարչակարգը կարիք ուներ ստանալու նաև կրոնական փոքրամասնությունների աջակցությունը իր քաղաքական դեռևս անկայուն հիմքերն ամրապնդելու համար, ուստի որոշ հարցերում, այդ թվում նաև կրթության, գնաց որոշակի զիջումների: Համայնքային այդ «ազատությունները» իրանահայությանը կրկին հնարավորություն ընձեռեց բուռն թափ հաղորդել դպրոցաշինությանը և հայկական դպրոցներում հայերի դաստիարակության հիմքերի ամրապնդմանը:

Իսլամական իշխանությունների դիրքերի աստիճանական կայունացումը, պետության կողմից հայ համայնքի նկատմամբ որդեգրած որոշ «ազատականացման» քաղաքականությունը անմիջապես տվեց իր դրական պտուղները: Իսլամական վարչակարգի պայմաններում Իրանի հայ համայնքն ունի կուռ՝ կայացած համայնքային ինստիտուտներ՝ եկեղեցիներ, դպրոցներ, մարզական և մշակութային միություններ և ազգային իշխանություններ, որոնք հավաքական ջանքերով համակարգում են համայնքային կյանքն ու գործունեությունը:

Ի՞նչ վիճակում են գտնվում ներկայումս Իրանի հայկական դպրոցները: Առհասարակ այդ երկրում միջնակարգ կրթության համակարգը եռաստիճան է և բաղկացած է տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներից: Ուսումնառությունը դպրոցում սկսվում է 7 տարեկանից: Ուսումնական տարին սկսվում է արևային հիջրայի իրանական օրացույցով Մեհր ամսի 1-ից (համապատասխանում է Գրիգորյան օրացույցի սեպտեմբերի 20-21-ին), ավարտվում է խորդադ

ամսին (հունիսի 20-21-ին): Բոլոր դպրոցներում ուսուցումն անվճար է: Ծրագրային առարկաներ դասավանդող ուսուցիչները վարձատրվում են պետության կողմից, իսկ ծրագրից դուրս հայոց լեզուն և կրոն դասավանդողներին վճարում է ազգային առաջնորդարանը, որն այդ նպատակով աշակերտությունից գանձում է որոշակի գումար:

Իրավական առումով Իրանում «հայկական դպրոց» գոյություն չունի, քանի որ երկրի բոլոր դպրոցները դե-յուրե ընդգրկված են ժողովրդական կրթության ընդհանուր համակարգի մեջ: Գոյություն ունեն միայն պետական դպրոցներ, որոնցում կազմակերպված է հայ ընտանիքների (որպես կրոնական փոքրամասնություններին պատկանող հավաքականության) երեխաների ուսուցումը: Ընդ որում, հանրակրթական առարկաների գծով ուսուցման ողջ գործընթացը տեղի է ունենում պարսկերեն (ֆարսի) լեզվով: Համաձայն հաստատված պետական ծրագրի, այդ դպրոցներում շաբաթական որոշակի ժամերի քանակով աշակերտները հնարավորություն ունեն սովորելու հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի պատմություն և կրոն: Տղաների և աղջիկների ուսուցումը, ինչպես ընդունված է ամբողջ երկրում, տեղի է ունենում անջատ, սակայն նույն ծրագրով:

Տարրական դասարաններում պարսկերեն լեզվով ուսուցանվող հանրակրթական առարկաներից դուրս սահմանափակ թվով ժամեր են հատկացվում հայոց լեզվի և պատմության ուսումնասիրմանը: Ի դեպ, հայ համայնքի եկեղեցական և ազգային իշխանություններին հաջողվել է պետության առջև հիմնավորել այն փաստը, որ ազգային լեզուն մեր կրոնի, Սուրբ գրքի լեզուն է, ուստի թե՛ կրոնական և թե՛ ազգային նշանակություն ունի: Ուստի հայոց լեզուն կրթության բովանդակության մեջ ընդգրկվել է որպես ծիսական լեզու, այսինքն լեզու, որով կատարվում են կրոնական ծիսակատարությունները, աղոթքներն ու երգերը: Ծիսական լեզվի ուսուցմանը տրվել է 4 ժամ, ևս 2 ժամ կրոնի համար: Այսինքն հայկական դպրոցներում աշակերտները հայ ժողովրդի պատմությանը ծանոթանում են միայն կրոնի դասերի շրջանակներում: Ուսուցիչներն իրավասու են փոփոխություններ մտցնել ծրագրում և կրոնին նախատեսված ժամերն օգտագոր-

ծել պատմություն կամ լեզու դասավանդելու համար: Իրանի հայկական դպրոցներում մայրենի լեզվի դասավանդումը կատարվում է արևելահայերենով: Հայերեն լեզվին հատկացված ժամաքանակը չափազանց քիչ է լեզվի իմացության բավականին բարձր մակարդակ ապահովելու համար, ուստի բնականաբար հայկական դպրոցների շրջանավարտները չունեն հայ գրական լեզվին տիրապետելու բավարար կարողություն: Առկա է նաև համապատասխան ծրագիր ազգային գեղարվեստական դաստիարակության վերաբերյալ: Ամբողջ ուսուցումը կազմակերպված է մրցակցային գործընթացի ձևով, երբ խրախուսվում են լավագույնները: Իրանում կրթության նախարարությունը սահմանել է պետական չափորոշիչներ, որոնք պարտադիր են երկրում գործող բոլոր, այդ թվում նաև հայկական դպրոցների համար: Պաշտոնապես հաստատված հարաբերությունների շրջանակներում պետության և հայկական դպրոցների հարաբերություններն ընդհանուր առմամբ բնորոշվում են որպես համագործակցային: Հայկական դպրոցներում ամրացված են իրանական պետական դրոշները, փակցված են իմամ Խոմեյնիի և երկրի առաջնորդ Սեյիդ ալի Խամենեյի նկարները: Դպրոցները կանոնավոր կերպով տոնում են իրանական ազգային տոները: Հայկական ազգային և եկեղեցական տոներ նշելիս հայկական դպրոցներում իրանական խորհրդանիշների հետ մեկտեղ թույլատրվում է նաև փակցնել հայկական խորհրդանիշներ:

Ուսուցման բոլոր երեք աստիճաններում մանկավարժներն ու աշակերտները դրսևորում են առավելագույն խանդավառություն (էնտուզիազմ) արտադասարանային աշխատանքներ կատարելու վրա: Արտադասարանային աշխատանքի ժամերը օրենքով սահմանափակված չեն, ուստի դրանք հայեցի դաստիարակության հիմնական միջոցներից են: Լրացուցիչ պարապմունքների այդ գործոնը առավելագույնս օգտագործվում է հայ համայնքի երեխաներին մայրենի լեզվին, հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին ծանոթացնելու համար: Հայկական համայնքը իրավունք ունի լրացուցիչ վարձատրելու այն ուսու-

ցիչներին, որոնք պարապմունքներ են անց կացնում ինչպես ազգային ծրագրով, այնպես էլ արտադասարանային եղանակով:

Իրանում մանկավարժական գործընթացի մեջ կենտրոնական դեմքը համարվում է ոչ թե դպրոցի տնօրենը, ինչպես ընդունված է մեր դպրոցներում, այլ տեսուչը: Տեսուչների թվում կան ինչպես հայեր, այնպես էլ իրանցիներ:

Հարկ է շեշտել, որ հայկական համայնքի սեփականություն հանդիսացող շենքերում ու տարածքներում իրականացվող բոլոր միջոցառումները չեն սահմանափակվում իսլամի օրենքներով (այսինքն այդ միջոցառումներին տղաներն ու աղջիկները մասնակցություն են բերում միասին), սակայն իրանցիների մասնակցությունը այդ միջոցառումներին խիստ սահմանափակված է իրանական օրենքներով, ավելի ճիշտ արգելված է:

Հայկական դպրոցների ուսուցիչների վարձատրության չափը որոշում է պետությունը: Որպես կանոն, ուսուցիչների աշխատավարձը ցածր է, ուստի լավ ուսուցիչները այլ բարձր վարձատրվող աշխատանք գտնելու դեպքում թողնում են դպրոցը: Համայնքի ազգային իշխանությունները միջոցներ չունեն, կամ ցանկություն չեն դրսևորում միջոցներ գտնելու, որպեսզի հրավիրեն մասնագետ ուսուցիչներ: Բարեբախտաբար վերջին տարիներս հնարավորություն է ստեղծվել, որպեսզի իրանահայ ուսուցիչները վերապատրաստման դասընթացներ անցնեն Հայաստանում, որտեղ կազմակերպվում են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման անվճար դասընթացներ: Հայկական դպրոցներն իրենց ընթացիկ ծախսերը հոգալու համար կանգնած են որոշակի դժվարությունների առջև: Դպրոցական շենքերից շատերը հնացել են և կարիք ունեն հիմնական նորոգման:

Հայկական դպրոցների ծագումով հայ ուսուցչական կազմի մեծ մասը գտնվում է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ազդեցության տակ: Դժբախտաբար համայնքում վերջին տարիներս պատահում են դեպքեր, երբ հայ ծնողներն իրենց երեխաներին տալիս են պարսկական դպրոց, որի հետևանքով հայկական դպրոցներ հաճախող երեխաների թիվը նվազում է: Արտագաղթի պատճա-

ռով հայկական դպրոցների և ազգային մանկապարտեզների աշակերտների թիվը ևս միտում ունի նվազելու: Իրանի հայաբնակ քաղաքներում աշակերտների թվի գնալով նոսրացման պատճառով հայկական դպրոցներ են փակվում: Օրենքը թույլ է տալիս, որ հայ աշակերտ չունենալու դեպքում հայկական դպրոցները փակվեն, կամ դրանք վերածվեն պարսկականի:

Սակայն այս բոլորով հանդերձ պետք է խոստովանել, որ նույնիսկ նկարագրված այդ դժվարին պայմաններում, իրանահայ դպրոցները բավականին հաջող են կատարում իրենց հայապահպանման առաքելությունը:

Ներկայումս Իրանում առկա է մոտ 50 հայկական դպրոց: Թեհրանի հայկական դպրոցներն են. «Արաքս» օրիորդաց դպրոց (տարրական և ուղեցույց), ունի 284 աշակերտ, տնօրենն է Անի Մանուկյանը, «Արարատ» օրիորդաց դպրոց (տարրական և ուղեցույց), ունի 263 աշակերտ, տնօրենն է՝ Նասթարան Ղասեմին, «Գոհար» տղայոց դպրոց (ուղեցույց), ունի 106 աշակերտ, տնօրեն՝ Վահե Բաբայան, «Գյուլբենգյան» տղայոց դպրոց (տարրական), ունի 105 աշակերտ, տնօրեն՝ Ջավադ Ուչալ, «Շանթ» տղայոց դպրոց (տարրական), ունի 142 աշակերտ, տնօրեն՝ Համիդ Թեյմուրի, «Մարիամյան դպրոց» (ուղեցույց), ունի 90 աշակերտ, տնօրեն՝ Մեհրաբան Դիվբանդ, «Թունյան» օրիորդաց դպրոց (տարրական), ունի 183 աշակերտ, տնօրեն՝ Սուսան Հեշմաթի, «Թունյան» օրիորդաց դպրոց (ուղեցույց), ունի 130 աշակերտ, տնօրեն՝ Գիթի Էյվազի, «Նաիրի» տղայոց դպրոց (տարրական), ունի 172 աշակերտ, տնօրեն՝ Ֆաթեմի Բեհնամ, «Նայիրի» տղայոց դպրոց (ուղեցույց), ունի 136 աշակերտ, տնօրեն՝ Թեյմուր Արեզումանդ, «Ռոստոմ» տղայոց դպրոց (տարրական), ունի 81 աշակերտ, տնօրեն՝ Մոհամմադ Ռեզա Ֆարահաբադի:

Իրանի Իսլամական Հանրապետությունում հայկական բոլոր դպրոցները պետական են, դասավանդումը կատարվում է պետության կողմից հաստատված ծրագրերով ու երաշխավորված դասագրքերով: Մասնավոր դպրոցներ գոյություն չունեն: Բոլոր հայկական

դպրոցները պետական կրթական համակարգի կազմի մեջ են և պարտադիր իրականացնում են պետական կրթական ծրագիրը:

ԻԻՀ սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ ենթակետում ասվում է. Իրանի դպրոցներում բոլորի համար և բոլոր մակարդակներով «ապահովել անվճար ուսուցում և ֆիզիկական դաստիարակություն, ինչպես նաև բարձրագույն ուսուցման համար նպաստավոր պայմանների ստեղծում և ընդլայնում»⁵⁷:

Սահմանադրության 30-րդ հոդվածը ըստ էության կրկին անդրադառնում է այդ հարցին: Նրանում ասվում է. «Կառավարությունը պարտավոր է մինչև միջնակարգի ավարտը յուրաքանչյուրին ապահովել անվճար ուսուցում և կրթություն, ընդլայնելով բարձրագույն անվճար կրթության ցանցը, ընդհուպ մինչև երկրի ինքնաբավության հասնելը»⁵⁸:

Հայ Առաքելական եկեղեցին և հայկական միություններն իրենց հնարավորությունների սահմաններում աջակցում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ուսման հարցում:

Եթե գնահատելու լինենք ազգային կրթության վիճակը Թեիրանում և մյուս քաղաքներում, ապա պետք է նշել, որ ընդհանուր առմամբ այն բարձր է (հատկապես բնագիտական առարկաների գծով): Հայկական դպրոցների շրջանավարտները որպես կանոն դպրոցում ձեռք բերած գիտելիքների հիման վրա կարողանում են ընդունվել իրանական և արտասահմանյան համալսարաններ: Ի դեպ, իրանական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնական փոքրամասնությունները սովորում են ընդհանուր հիմունքներով: Իրանում մեծ թիվ չեն կազմում հայ այն ծնողները, որոնք ցանկանալով հնարավորին չափ արագ իրենց զավակները ինտեգրվեն հյուրընկալ հասարակության հետ՝ այդ նպատակով նրանք իրենց երեխաներին ուղարկում են պարսկական դպրոցներ:

Միջնակարգ դպրոցների հայ շրջանավարտների մի մասը գերադասում է կրթություն ստանալ իր պատմական հայրենիքում, Հայաս-

⁵⁷ ԻԻՀ սահմանադրություն, էջ 32:

⁵⁸ Նույն տեղում, էջ 47:

տանի բուհերում: Նրանց մի ոչ մեծ մասը (հատկապես ունևոր ընտանիքների զավակները) ձգտում է կրթություն ստանալ Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում և այլ զարգացած երկրներում: Ներկայումս Եվրոպայի հեղինակավոր ուսումնական հաստատություններում սովորում են որոշակի թվով իրանահայ երիտասարդներ:

Կասկածից վեր է, որ այդ հաջողությունները ձեռք են բերվում շնորհիվ ներհամայնքային դաստիարակության համակարգի կողմից դրսևորած ձկունության:

Այդ համակարգը, բացի վերը հիշատակվածներից, ներառում է հասարակական միջոցառումների մի ամբողջ համալիր, որոնց ընթացքում, օրինակի համար, Թեհրանի, Սպահանի և այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունների հայ ուսանողները օգնություն են ցուցաբերում իրենց կրտսեր ազգակիցներին: Այդ ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվում են նաև տարբեր առարկաների գծով մրցույթներ, որոնց նպատակն է առանձին առարկաների գծով բարձրացնել աշակերտների գիտելիքների մակարդակը: Բացի այդ, միջին դասարանների հայ աշակերտները, հայ ուսանողների ղեկավարությամբ առանձին առարկաների և թեմաների շուրջ գրում են ռեֆերատներ, որոնք ընթերցվում և քննարկման են ենթարկվում գիտական խմբակներում:

Իրանում գործում է «Հայ ուսանողների ընկերակցություն» կազմակերպությունը, որը նշված աշխատանքներում կատարում է վերին աստիճանի օգտակար գործ:

Հարկ է նշել, որ Իրանում ստեղծված կրթության պետական համակարգը և այդ բնագավառում գործող օրենսդրությունը ընդհանուր առմամբ ապահովում է հայերի, որպես կրոնական փոքրամասնության, ազգային ինքնության պահպանումը կրթության բնագավառում: Սակայն անհրաժեշտ է հատուկ շեշտել այն իրողությունը, որ կրթության բնագավառում ազգային ինքնության պահպանման գործում էական դեր է խաղում բուն հայ համայնքի բարձր կազմակերպվածությունը: Ոչ պակաս կարևոր դերակատարություն ունի նաև ընտանիքը, որը նախանձախնդիր է իրենց զավակների կրթության ու հայեցի

դաստիարակության գործում: Առհասարակ Իրանում ազգային ինքնության պահպանման գործում չափազանց մեծ է ընտանիքների, ինչպես նաև զանազան միությունները դերը:

Իրանահայ համայնքի դպրոցական կրթության համակարգին անմիջականորեն հարում են նաև մանկապարտեզները, որոնք, որպես կանոն, ունեն դպրոցական նախապատրաստական խմբեր: Մինչև դպրոց ընդունվելը, երեխաները հաճախում են մանկապարտեզ: Մանկապարտեզում, ի տարբերություն դպրոցների, տղաներն ու աղջիկները միասին են: Պարապմունքների ժամանակ երեխաները ծանոթանում են այբուբենի հետ: Բացի այդ, մանկապարտեզում նրանք ծանոթանում են ազգային մշակութային արժեքների, հայկական ազգային ու կրոնական տոների հետ և այլն: Ուսուցման մի մասը իրականացվում է խաղերի միջոցով: Մեծ ուշադրություն է դարձվում անգիր անելու վրա (օրինակ այբուբենի յուրաքանչյուր տառով անգիր սովորում են որևէ ոտանավոր), մայրենի լեզվով սովորում ու երգում են երգեր:

Ներկայումս Իրանում կան մոտ մեկ ու կես տասնյակ հայկական մանկապարտեզներ: Այդ երկրում հայկական մանկապարտեզների առկայությունը կարևորվում է առաջին հերթին նրանով, որ դրանք մեծապես նպաստում են երեխաների հայեցի դաստիարակության գործին: Վաղ մանկության տարիքում, մինչև դպրոցական հասակի հասնելը, երեխաները մանկապարտեզում հնարավորություն են ունենում անկաշկանդ ձևով և առանց սահմանափակումների հաղորդակից լինել իրենց մայրենի լեզվին, հայ մշակույթին, հայոց պատմությանը, հայ Առաքելական եկեղեցու սկզբունքներին և այլն, քանի որ դրանց գծով իշխանությունների կողմից մանկապարտեզներում որևէ արգելք կամ սահմանափակում չի դրվում: Մանկապարտեզները և ծերանոցները որպես սեփականություն, ամբողջովին պատկանում են համայնքին:

Ներկայումս Թեհրանի լավագույն մանկապարտեզներից մեկն է Մաջիդիե (կամ ինչպես հայերն են անվանում Ջեյթուն) թաղամասում գործող «Ալմաստ-Անդեր Ահարոնյան» ազգային մանկապարտեզը,

որը սեփական միջոցներով, ի հիշատակ իր ծնողների, կառուցել ու հայ համայնքին է հանձնել իրանահայ հայտնի բարերար և հասարակական գործիչ Լևոն Ահարոնյանը:

Հարկ է նշել, որ նախկինում իրանահայ համայնքի երիտասարդությունը հիմնականում զբաղվում էր առևտրով, արհեստներով և այլն: Սակայն այսօր մտայնությունները փոխվել են և երիտասարդությունը մեծ հետաքրքրություն և հակում է ցուցաբերում բարձրագույն կրթության նկատմամբ: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, ունևոր ընտանիքները գերադասում են, որ իրենց զավակները բարձրագույն կրթություն ստանան արևմուտքի զարգացած երկրներում: Սակայն քանի որ այդ հնարավորությունը ոչ բոլորին է տրված, ուստի Իրանում ստեղծվել են որոշակի պայմաններ հայ երիտասարդության բարձրագույն կրթության ձգտմանը ինչ-որ չափով նպաստելու համար: Ըստ այնմ, Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններից մի քանիսում ժամանակին բացվել են հայագիտական ամբիոններ և բաժանմունքներ, որոնք գործում են մինչև օրս: Այսպես, Սպահանի պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի կազմում գործում է հայոց լեզվի և գրականության ամբիոնը, որն ունի քառամյա բակալավրիատի բաժին: Հույսեր կան, որ մոտ ապագայում ամբիոնը կունենա նաև մագիստրատուրայի բաժին: Հիշյալ ամբիոնը հիմնադրվել է 1959-1960 ուսումնական տարում: Մեկ տասնամյակ անց՝ 1970 թ., Սպահանի հայոց թեմի առաջնորդարանի ջանքերով և «Գալուստ Գյուլբենկյան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցվեց ամբիոնի մասնաշենքը, որը հետագայում կոչվեց «Արմենոլոգիայի» («Հայագիտության») շենք: Տարիների ընթացքում այնտեղ դասավանդել են ինչպես հայ, այնպես էլ պարսիկ հայտնի մտավորականներ:

Ներկայումս ամբիոնի շրջանավարտների մեծամասնությունն աշխատում է Իրանի հայկական կրթօջախներում, մանկավարժական ու մշակութային կենտրոններում, ազգային-հասարակական կազմակերպություններում, ինչպես նաև պետական կառույցներում: Անցած կես հարյուրամյակի ընթացքում Սպահանի համալսարանի հայոց

լեզվի և գրականության ամբիոնում իրենց բարձրագույն կրթությունն են ստացել շուրջ 550 հայ և պարսիկ շրջանավարտներ: Հիշյալ ամբիոնի ջանքերով 2006 թ. նոյեմբերի 22 և 23-ին կազմակերպվեց գրական-մշակութային կամուրջ Իրանի և Հայաստանի միջև: Ներկայումս հայագիտական այդ ամբիոնի վարիչն է Սայիդ Քեթաբին:

1995 թվականից հայագիտական բաժին է գործում նաև Թեհրանի իսլամական «Ազադ» համալսարանում, որն ունի հայոց լեզվի և գրականության ամբիոն:

Ներկայումս հիշյալ ամբիոնի վարիչն է Երևանի պետական համալսարանի շրջանավարտ, իրանահայ Անդրանիկ Սիմոնյանը: Ավելորդ չէ նշել, որ Իսլամական «Ազադ» համալսարանը սկսել է գործել 1984 թվականից: Այն իր բաժանմունքներն ունի Իրանի տարբեր քաղաքներում: Այդ համալսարանն ընդունվելու պայմանները նույնպիսին են, ինչպես Իրանի ցանկացած այլ համալսարան:

Դեռևս 1961 թ. Թեհրանի թեմի թեմակալ առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանի նախաձեռնությամբ հիմնադրվել էր Թեհրանի հայոց թեմի կրոնագիտական երեկոյան դասընթացներ, որտեղ սրբազանը ստանձնել էր հայերենագիտական առարկաների դասավանդումը: 1975-1980 թվականներին այդ դասընթացների գործունեությունը դադարեցվել էր, սակայն հետագայում նա վերստին շարունակել էր գործել: Սկզբնական շրջանում դասընթացների տևողությունը եղել է 4 տարի, այժմ՝ 3 տարի է: Դասընթացներն ավարտելուց հետո ազգային առաջնորդարանի կողմից շրջանավարտին տրվում է հատուկ վկայական: Դասավանդվող առարկաներն էին կրոնագիտություն, հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), մատենագրություն, արդի հայ գրականություն, հայոց պատմություն, քերականություն, մանկավարժություն և հոգեբանություն: Այդ դասընթացները «Հայ կին» միության ֆինանսական օգնությամբ և Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի ղեկավարությամբ ու ներկայիս թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանի հովանավորությամբ շարունակում է իր գոյությունը: Ի դեպ, սրբազանը ստանձնել է կրոնագիտություն և բարոյագիտություն առարկայի դասավանդումը:

Հիշյալ դասընթացները կազմակերպելու դրդապատճառն այն էր, որ Թեհրանահայության թիվը ի հաշիվ երկրի տարբեր շրջաններից մայրաքաղաք տեղափոխված հայերի խիստ մեծացել էր, ստեղծվել էին հայաբնակ նոր թաղամասեր, դպրոցներ, միություններ և այլն: Դպրոցական ցանցի տարածմամբ մեծացել էր նաև հայ ուսուցիչների կարիքը հայոց լեզվի և հարակից առարկաների դասավանդման համար: Նորաբաց հայերենագիտական երեկոյան դասընթացները կոչված էին նաև նպաստել ազգային զանազան հաստատություններում աշխատող անձանց հայերեն լեզվի և հայագիտական գիտելիքների մակարդակի բարձրացմանը: Առ այսօր դասընթացն ավարտել են մոտ 850 շրջանավարտներ, որոնց զգալի մասը ներգրավվել են Թեհրանի հայոց դպրոցներում որպես ուսուցիչ, իսկ մյուսներն աշխատում են ազգային հասարակական հաստատություններում, զանազան միություններում և մամուլում:

2000 թ. հիմնադրվել է նաև Սպահանի հայոց թեմի հայերենագիտական երեկոյան դասընթացները: Նրանում ուսման տևողությունը կազմում է 2 տարի: Ուսուցումն իրականացվում է Սպահանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսների կողմից:

Թեհրանում գործում է նաև Հայկական հարցի հետ առնչվող խնդիրների ուսումնասիրության կենտրոնը: Վերը նշված հայագիտական կենտրոններում դասավանդվում են հայագիտական և ընդհանուր ուղղվածության շուրջ 50 առարկաներ:

Արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած և Իրան վերադարձած ուսանողության, այդ թվում նաև հայերի համար, ստեղծվում են որոշակի դժվարություններ այն առումով, որ կրթական մակարդակների փոխձանաչման գործընթացն Իրանում դեռ իր ավարտին չի հասել: Արտասահմանում բուհն ավարտելուց և հայրենիք վերադառնալուց հետո, օտարերկրյա դիպլոմ ունեցող մասնագետները ստանում են ժամանակավոր վկայական (երկու տարի ժամկետով): Այդ ժամկետը լրանալուց հետո նրանք պետք է հանձնեն «զնահատման քննություն» իրենց աշխա-

տանքի վայրում: Դրանից հետո միայն բարձրագույն կրթության վերաբերյալ նրանց ստացած դիպլոմը ձեռք է բերում օրինական ուժ:

Նշված գործընթացը և նրան ուղեկցող բյուրոկրատական քաշքշուկը հաճախ ստիպում է հայ ուսանողներին բուհն ավարտելուց հետո աշխատանք որոնել այլ երկրներում:

Վերջին տարիներս նկատվում է նաև մի երևույթ, որը մտահոգություն է պատճառում ինչպես ազգային մարմիններին, այնպես էլ ողջ Իրանի հայ համայնքին: Բանը նրանումն է, որ Իրանի համալսարանների հայագիտական բաժիններում գնալով հայ ուսանողների թիվը նվազում է և ընդհակառակն՝ իրանցի ուսանողների թիվը ավելանում: Օրինակ, Սպահանի պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի կազմում գործող հայոց լեզվի և գրականության ամբիոնն այսօր զուրկ է հայ ուսանողներից և այստեղ իրենց բակալավրիատի քառամյա կրթությունն են ստանում ավելի քան յոթանասուն պարսիկ ուսանողներ: Դրա պատճառը ինչպես արտագաղթն է, այնպես էլ այն, որ հայերը գերադասում են ձեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք հնարավորություն կտան իրենց Իրանում կամ թեկուզ արտասահմանում գտնել աշխատանք: Այդ մտահոգիչ երևույթի հետևանքներից մեկը անխուսափելիորեն լինում է այն, որ հայկական դպրոցները զրկվում են հայագիտական առարկաների գծով որակյալ ուսուցիչներ ունենալու հնարավորությունից: Բնականաբար նման պայմաններում հույժ կարևոր նշանակություն է ձեռք բերում Հայաստանում իրանահայ երիտասարդներից մանկավարժներ պատրաստելու գործը:

Սփյուռքի ցանկացած համայնքի կամ գաղթօջախի գոյատևման ազդակներից մեկը զանազան միությունների գոյությունն է: Սփյուռքում միությունների հիմնադրումը երբեք ինքնանպատակ չի եղել: Այն առաջին հերթին նպատակ է ունեցել տվյալ համայնքի համախմբմանը, հայապահպանության խնդիրներին սատարելը, համայնքի երիտասարդ սերնդին հայ մշակույթին, հայոց պատմությանն ու գրականությանը մերձեցնելը, նրան ազգային նվիրվածության ոգով դաստիարակելը և այլն: Իրանահայերի ազգային դաստիարակությունը

իրականացվում է ինչպես մշակութային և մարզական միություններում, այնպես էլ՝ ընտանիքում:

Տարիների ընթացքում համայնքի միութենական կյանքն այնպես է կազմակերպվել, որ այսօր գրեթե չկա մեկը, որը ինչ-որ կապվածություն չունենա որևէ միության հետ: Իրանում գործող միությունները պաշտոնապես արտոնված են գործում, գրանցված են Իրանի ներքին գործերի նախարարությունում և ունեն իրենց ներքին կանոնադրությունը:

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության 26-րդ հոդվածում միությունների վերաբերյալ ասվում է. «Կուսակցությունները, միությունները, քաղաքական և արհեստակցական կազմակերպությունները, ինչպես նաև իսլամական և պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնությունների գործունեությունն ազատ է, պայմանով, որ դրանք չխախտեն անկախության, ազատության, ազգային միասնության սկզբունքները, իսլամական նորմերը և Իսլամական Հանրապետության հիմքերը: Ոչ մեկի մասնակցությունը դրանցում չի կարելի արգելել, ինչպես նաև չի կարելի ստիպել մարդկանց՝ մասնակցելու դրանցից որևէ մեկին»⁵⁹: Իրանի հայ համայնքում ևս տարբեր ժամանակներում հիմնադրվել են բազմաթիվ միություններ, որոնց նպատակն է եղել նպաստել հայապահպանման, նոր սերնդի հայեցի դաստիարակության, նրան օտարացումից հեռու պահելու հույժ կարևոր խնդիրներին: Անցյալում եղած մի շարք մշակութային միություններ, որոնք ժամանակին կատարել են իրենց առաքելությունը, մեր օրերում դադարել են գոյություն ունենալուց: Սակայն այսօր ևս Իրանի հայ համայնքում գործում են մեծ թվով միություններ և կազմակերպություններ, որոնց գործունեության ծրագիր-կանոնագիրը հաստատված է պետության կողմից: Իրանահայ համայնքում գործող միությունների հիմնական մասը իրականում համայնքում իշխող ՀՅԴ կուսակցության մասնաճյուղերն են:

⁵⁹ ԻԻՀ Սահմանադրություն, էջ 45:

Ստորև ներկայացնում ենք Թեհրանի հայոց թեմի մարզամշակութային և այլ կազմակերպությունների անվանացանկը և նրանց վարչությունների ներկայումս գործող նախագահների կամ պատասխանատուների անունները.

1. Հայ մշակութային «Արարատ» կազմակերպություն – Հասմիկ Խալոյան,
2. Հայ մշակութային «Սիփան» միություն – Արմեն Հայրապետյան,
3. Հայ մշակութային «Նայիրի» միություն – Ալֆրեդ Քեչիշյան,
4. Հայ մշակութային «Սարդարապատ» միություն – Մուշեղ Ծատուրյան,
5. Հայ Ուսումնասիրաց «Զհարմահալ» միություն – Արշավիր Քեչիշյան,
6. «Հայ Կին» միություն – Շուշիկ Սողոմոնյան,
7. Հայ համալսարանականների Ընդհանուր միություն – Արբի Սարգսյան,
8. «Արմենուհի» միություն – Վիկտորիա Աղասյան,
9. «Անահիտ» միություն – Արաքս Կիրակոսյան,
10. «Անի» միություն – Նազիկ Մանասյան,
11. «Հայ Ուսուցիչների» միություն – Թանյա Վարդանյան,
12. Իրանահայ Գրողների միություն – Թորգոմ Հակոբյան,
13. Թեհրանի Հայ Կանանց Եկեղեցասեր միություն – Էմմա Մարտիրոսյան,
14. Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական ընկերություն – Անեթ Այվազյան,
15. Իրանի Հայ Բժիշկների միություն – դոկտոր Էդգար Շահգալոյան,
16. Հայ Բարեգործական Ընդհանուր միություն – Աստղիկ Բաթայան,
17. Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոն –

- Սուրիկ Աբնուսյան,
18. Հայ հասարակական միություն (ՀԱՅ ԱԿՈՒՄԲ) –
Վահե Գերասիմյան,
 19. Ս. Թարգմանչաց եկեղեցու կանանց եկեղեցասեր միություն –
Ռոզիկ Մարտիրոսյան,
 20. Փերիայի Կրթասիրաց միություն –
Ալբերթ Ջարգարյան,
 21. Իրանահայ արհեստավորների հավաքականության գործադիր մարմին – Հայրիկ Ավետյան:

Թեհրանի համարյա բոլոր միություններն ունեն իրենց ենթակառույցները կամ մասնաճյուղերը Իրանի հայաշատ քաղաքներում: Բացի վերը նշված միություններից, Իրանի հայ համայնքում գործում են նաև մի շարք մարզական, մշակութային, գիտական և այլ բնույթի միություններ: Այսպես, գործում է «Հայկական Հարցերի Ուսումնասիրության Կենտրոնը» (ՀՈՒՍԿ): Հայոց ցեղասպանության 50-ամյակից հետո սփյուռքի զանազան գաղութներում կազմակերպվեցին Հ. Յ. Դաշնակցության Հայ Դատի հանձնախմբեր: Դեռևս 1965 թ. Թեհրանում կազմավորվել էր Հայ Դատի գրասենյակ: 1982 թ. այդ գրասենյակը պաշտոնապես գրանցվեց որպես «Հայկական Հարցերի Ուսումնասիրության Կենտրոն» (ՀՈՒՍԿ) անվամբ: Հիշյալ կենտրոնում ներկայումս գրանցված են Հայ Դատի 500 իրանցի հայ բարեկամներ: Կենտրոնը հրատարակում է Հայ Դատին և հայոց ցեղասպանությանը առնչվող գրքեր, պատրաստում է փաստագրական ֆիլմեր, թարգմանում օտարերկրյա հեղինակների ուսումնասիրություններ և այլն: Հայ Դատի հանձնախումբը կազմակերպում է նաև զանազան քաղաքական ձեռնարկներ և միջոցառումներ, իրանահայ համայնքի լայն խավերին հաղորդակից դարձնում Հայկական հարցի ու պահանջատիրության ոլորտում նոր ձեռքբերումներին: Պարբերաբար կազմակերպվում են «կլոր սեղաններ» և դասախոսություններ, նվիրված Հայ դատին, հայոց ցեղասպանությանը և արդի քաղաքական հարցերին: Հրավիրվում են հայաստանցի, պարսիկ և օտարերկրյա դասախոսներ: ՀՈՒՍԿ-ը 2003 թվականից ամեն տարի կազմակերպում է «Հայ

դատն այսօր» խորագրով խորհրդաժողով⁶⁰: Նշված կազմակերպությունը ծավալել է նաև իրանահայության ազգային-քաղաքական շահերը հետապնդող գործունեություն, հրատարակում է հայ-իրանական դարավոր բարեկամությանը նվիրված պարսկերեն լեզվով գրքեր և այլն:

Հայ Դատի բարեկամներին Հայաստանի և Հայ Դատի օրվա իրադարձությունների մասին իրազեկ դարձնելու նպատակով պարբերաբար հրատարակվում է «Բարեկամ» տեղեկագիրը և առաքվում նշված հասցեատերերին:

ՀՈՒՍԿ-ը հավաքում է նաև Հայ Դատին առնչվող նյութեր, լուրեր, ֆիլմեր և այլ աղբյուրներ և դրանք մատչելի դարձնում համայնքի տարբեր միություններին, դպրոցներին և այլն⁶¹:

Տարիների ընթացքում Հայ Դատի հանձնախմբին հաջողվել է իր շուրջը համախմբել Հայ Դատի նկատմամբ դրական մոտեցում ունեցող պարսիկ բարեկամներին: Այդ հանձնախումբը կապ է հաստատել Իրանի պետական և ոչ պետական շրջանակների, մամուլի և մտավորականության հետ, նաև հայանպաստ հողվածներ է հղում պարսկատառ որոշ օրաթերթերին:

Թեհրանում գործում է «Վան-Վասպուրական» պատմական հարցերի ուսումնասիրության կենտրոնը, որը ստեղծվել է 1996 թ.: Նրա նպատակն է ուսումնասիրություններ կատարել Վասպուրականի պատմության և ներկա իրավիճակի մասին: Այդ նույն նպատակն է հետապնդում նաև «Վան-Վասպուրական» միությունը:

2007 թ. մայիսի 30-ին հիմնադրվել է «Իրան-Հայաստան բարեկամության միությունը» (նախագահ՝ Լևոն Ահարոնյան) հայ և պարսիկ մտավորականների ու գործարարների մասնակցությամբ: Այն ոչ պետական կազմակերպություն է, չնայած որ անդամների թվում կան նաև ԻԻՀ արտաքին գործոց նախարարությանը մոտ կանգնած շրջանակների ներկայացուցիչներ: 2012 թ. միությունը մասնաձյուղ է հիմնադրել նաև Թավրիզում: Միության նպատակներն են՝ երկու

⁶⁰ Բաղալյան Գ., Իրան հանրագիտարան, էջ 497:

⁶¹ Ահարոնյան Լևոն, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1921-1922:

երկրների ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդումն ու ընդլայնումը, ինչպես նաև Իրանի և Հայաստանի ընդհանուր նպատակների կենսագործումը՝ մշակութային, գիտատեխնիկական, գրական, արվեստի, տնտեսական և սոցիալական բնագավառներում: Միությունն արդեն հասցրել է մշակել երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, իր կազմում ընդգրկել է 5 հանձնախմբեր՝ մշակութային ու գեղարվեստական, գիտատեխնիկական, հանրային կապի, առևտրատնտեսական, մարզական և երիտասարդական:

Հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում չափազանց կարևոր դեր է խաղացել 1993 թ. իրանահայ գործարար և հասարակական գործիչ Լևոն Ահարանյանի նախաձեռնությամբ հիմնված «Իրան-Հայաստան առևտրական պալատը», որի գործունեությունը մինչև օրս դեկավարում է նրա հիմնադիրը:

Իրանահայ համայնքում բացառիկ կարևոր դերակատարություն ունի «Արարատ» մարզամշակութային միությունը, որը ստեղծվել է 1944 թ.: Այն ամբողջապես կյանքի է կոչված համայնքի միջոցների հաշվին: Թեհրանի «Արարատ» միությունն ունի 4 մասնաճյուղ, որոնք գտնվում են Արևմտյան Ատրպատական նահանգի Ուրմիա, Գյարդաբադ, ինչպես նաև Թավրիզ և Շիրազ քաղաքներում: Սպահանում ևս գոյություն ունի «Արարատ» միություն, որն անկախ է և ենթակա չէ Թեհրանի «Արարատ» միությանը:

Այդ մարզամշակութային միությունն ունի չորս՝ մարզական, արվեստի, սկաութական և երեցների բաժիններ: «Արարատ» համալիրի մեջ են մտնում Թեհրանում գտնվող 15 հազար նստատեղ ունեցող ֆուտբոլային դաշտը, թենիսի մի քանի կորտեր, լողավազան, սպորտային խաղերի դահլիճ 2 հազար հանդիսատեսների համար, մի մատուռ և այլ կառույցներ: Իրանահայերը աչքի են ընկնում իրենց մեծ հակումով դեպի սպորտը և ոչ միայն որպես սպորտային միջոցառումների դիտորդներ, այլև անմիջական զբաղվողներ: 1974 թ. Թեհրանում շահագործման է հանձնվել «Արարատ» մարզավանդ, որտեղ զբաղվում են սպորտային այնպիսի ձևերով, ինչպիսիք են ֆուտբոլը, թենիսը, բռնցքամարտը, բասկետբոլը, սեղանի թենիսը, վոլեյբոլը,

թեթև ատլետիկան, շախմատը, մարմնամարզությունը, յոզան և այլն: Մարզավանն ունի նաև մշակութային կենտրոն:

Ներկայումս սեկցիաներում կանոնավոր կերպով պարապում է մոտ 3500 մարդ: Առհասարակ պետք է նշել, որ Իրանի հայ համայնքի սպորտային հաջողությունները տպավորիչ են: «Արարատ» բասկետբոլային տղամարդկանց թիմը խաղում է իրանական ազգային առաջնության բարձրագույն լիգայում, «Արարատ» շախմատային թիմը երկրի առաջնությունում տարել է հաղթանակ, բասկետբոլի բարձրագույն լիգայի խումբ է մտել նաև կանանց «Արարատ» թիմը, հաջողություններ է գրանցում նաև ֆուտբոլային թիմը: Համայնքի առանձին հայ մարզիկներ միջազգային մրցումների ժամանակ գրավել են պատվավոր տեղեր: «Արարատ» կազմակերպության բոլոր անդամները և առհասարակ համայնքի ցանկացած ներկայացուցիչ իրավունք ունի անվճար օգտվելու մարզավանի սպորտային կառույցներից:

1964 թ.-ից սկսած Իրանում յուրաքանչյուր տարի անց են կացվում համահայկական սպորտային խաղեր, որոնց իրենց մասնակցությունն են բերում Իրանի հայաշատ քաղաքների բոլոր մարզիկներն ու մարզուհիները: Համահայկական խաղերի յուրաքանչյուր շրջանի բացման արարողությանը մասնակցում են նաև Հայաստանի Հանրապետությունից հրավիրված պաշտոնական անձինք:

Վերջին տարիներս իրանահայ համայնքի երիտասարդ մարզիկները եռանդուն մասնակցություն են ցուցաբերում Հայաստանում կազմակերպվող համահայկական խաղերին: Հյուրի կարգավիճակով Իրանում անցկացվող մրցումներին մասնակցել են նաև հայկական սպորտային թիմեր Սիրիայից, Լիբանանից, Ֆրանսիայից, Հայաստանից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Ջավախքից:

Հայ համայնքի սպորտային-դաստիարակչական համակարգի մեջ գլխավոր տեղերից մեկը, ընդհանուր կրթության հետ միաժամանակ, գրավում է դաստիարակության սկաութական համակարգը: Իրանում հայ համայնքի մշակութային և մարզական կյանքի ողջ համակարգը հիմնված է ինչպես ծնողների, այնպես էլ շարքային մասնակիցների

բարձր հասարակական ակտիվության, նախաձեռնության և գիտակցականության վրա:

Հարկ է նշել, որ Թեհրանում գործում են նաև 9 այլ մարզական-մշակութային միություններ (օրինակ «Րաֆֆի» համալիրը և այլն), որոնցից յուրաքանչյուրն ունի իր սպորտային կառույցները, խմբերը և այլն: Սպահանի հայ համայնքի մշակութային կյանքը ավելի կենտրոնացված է, քանի որ այնտեղ հայերն ապրում են ավելի համահավաք ձևով, քան Թեհրանում:

Իրանում գործող հայկական միություններից է նաև «Հայկական բարեգործական ընդհանուր միության» (ՀԲԸՄ) Թեհրանի բաժանմունքը: 1906 թ. այս միությունը հիմնադրելիս հայտնի բարերար և հասարակական գործիչ Պողոս Նուբարը և նրա գաղափարակիցներն առաջնորդվել են այն սկզբունքով, որ միությունը պետք է որևէ առնչություն չունենա քաղաքական, կուսակցական և առևտրական հանգամանքների հետ և պետք է առաջնորդվի «հայապահպանում», «եղբայր ենք մենք», «միությունը զորություն է», «հայը հայով հայուն համար» կարգախոսներով: Ի սկզբանե միության նպատակներն են հռչակվել հետևյալ սկզբունքները. օժանդակել հայ ժողովրդի և հայրենիքի բարոյական, մտավոր և մշակութային զարգացմանը, նպաստել հայ ժողովրդի և տվյալ համայնքի տնտեսական ու նյութական վիճակի բարելավմանը:

ՀԲԸՄ-ի Իրանի մասնաճյուղը հիմնվել է 1931 թ.: Այն 1946 թ. խոշոր նյութական օգնություն է տրամադրել Հայաստան ներգաղթող հայրենակիցներին: Միության Իրանի մասնաճյուղը մեծ դեր է խաղացել նաև հայ բնակչության կրթության և մշակույթի զարգացման գործում: ՀԲԸՄ-ը առանց խտրականության, առանց գաղափարական որևէ բաժանման օժանդակություն է ցույց տալիս բոլոր նրանց, որոնք դրա կարիքն ունեն:

Իրանում գործում է նաև «Հայ կանանց բարեգործական ընդհանուր միությունը», որն ավելի քան 70 տարիների ընթացքում ազգօգուտ և մարդասիրական գործունեություն է ծավալել ազգային, հասարակական, կրթական և մշակութային բնագավառներում:

Իրանի հայ համայնքի միությունների մեջ իր ուրույն տեղն ունի «Հայ համալսարանականների ընդհանուր միությունը», որը հիմնադրվել է Թեհրանում 1943 թ.: Միության նպատակն է նպաստել իրանահայ նոր սերունդների հայեցի դաստիարակությանը և խրախուսել նրանց ձգտումը ստանալու բարձրագույն կրթություն, ստեղծել սերտ համագործակցություն հայ համալսարանականների միջև, գործուն մասնակցություն ունենալ իրանահայ ազգային-հասարակական և մշակութային աշխատանքներում:

Միությունը սերտ կապերի մեջ է Իրանում և Սփյուռքում գործող նույնանպատակ միությունների ու գիտամշակութային կենտրոնների հետ, օժանդակում է Իրան-Հայաստան գիտամշակութային համագործակցության ընդարձակմանը, բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը և այլն:

Հայ համալսարանականների ընդհանուր միությունն ունի կենտրոնական հանձնախումբ, հրատարակչական բաժին և գրադարան: Միության կենտրոնատեղիում պարբերաբար կազմակերպվում են հայ արվեստագետների ցուցահանդեսներ: 1920-ական թվականներից սկսած Թեհրանում, Թավրիզում և Նոր Ջուղայում գործել են գրական միավորումներ, որոնց ջանքերով իրանահայ գաղութի տարբեր հրատարակչություններում պարբերաբար լույս են տեսել հայ հեղինակների արձակ և չափածո ստեղծագործությունները:

Դեռևս 1961 թ. մի խումբ գրող-մտավորականների նախաձեռնությամբ Թեհրանում հիմնադրվել էր «Իրանահայ գրողների միությունը»: Տարբեր տարիներ այդ միության նախագահներ են եղել Արամ Գառունեն, Մանուել Մարությանը, Անդրե Անուրյանը (Տեր-Օհանյան), Գրիշ Դավթյանը, Արսեն Մամյանը, Սուրեն Ասատրյանը, Ալֆրեդ Դանիելյանը, Ժորժ Մարտիրոսյանը, Վարանդ Քյուրքչյանը: Ներկայումս միության նախագահն է Թորգոմ Հակոբյանը:

Միությունն ունեցել է իր հրատարակությունները, որոնցից հիշատակության արժանի են «Իրանահայ արդի գրողները» և «Իրանահայ դարավերջի գրողները» ժողովածուները:

Միության ջանքերով կազմակերպվում են գրական-գեղարվեստական միջոցառումներ: Միությունը իր առաջնահերթ խնդիրներից է համարում հայ համայնքի գրական-գեղարվեստական ծիրքի տեր երիտասարդությանը սատարելը: Վերջին տարիներս Իրանահայ գրողների միությունը հաճախակի Իրան է հրավիրում Հայաստանից և Սփյուռքից գրողներ և մտավորականներ (Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան, Ռազմիկ Դավոյան, Պերճ Ջեյթունցյան, Բակուր Կարապետյան, Կարինե Խոդիկյան, Սոս Սարգսյան, Սուրեն Ղանիելյան, Ջորի Բալայան, Պողոս Սնայան, Ռոբեր Հատտեճյան և այլն):

«Իրանահայ ճարտարապետների և ճարտարագետների միությունը» (ՀՃՃՄ) հիմնականում միավորում է Իրանի հայ համայնքի տեխնիկական մտավորականությանը: Միությունը հիմնադրվել է 1985 թ.: Նրա գլխավոր նպատակն է համախմբել իրանահայ ճարտարապետներին և ճարտարագետներին, նպաստել մասնագիտական փորձառությունների փոխանցմանը, կապեր հաստատել Իրանի և արտասահմանի մասնագետների հետ և այլն:

Իրանի հայ համայնքի ուշագրավ կառույցներից է «Հայ ակումբը», որն իրենից ներկայացնում է թեհրանահայ համայնքի մշակութային-հասարակական կենտրոն, համայնքի ներկայացուցիչների հավաքատեղի: Այն հիմնադրվել է 1918 թ. և հետագա տարիների ընթացքում մեծ դերակատարում է ունեցել համայնքի մշակութային և հասարակական կյանքում: Ակումբում տեղի են ունենում բազմապիսի միջոցառումներ, այդ թվում գրական երեկոներ, թատերական ներկայացումներ, ցուցահանդեսներ, համերգներ հարսանիքներ, կրոնական ու ազգային տոներ և այլն: Հայաստանի անկախացումից հետո ակումբը սերտ կապեր էր պահպանում Հայաստանի արվեստագետների և ստեղծագործական մտավորականության հետ, կազմակերպում էր Հայաստանի զանազան համույթների, երգիչների և այլն համերգներ, նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսներ: Ակումբին կից գործում է ռեստորան: «Հայ ակումբ» են այցելում նաև Թեհրանում հավատարմագրված դիվանագետներ, տարբեր երկրներից Իրան ժամանած գործարար մարդիկ, զբոսաշրջիկներ և այլն,

քանի որ կանայք ակունքի պատերից ներս կարող են չունենալ գլխաշոր և չհագնել հիջաբ: Ղա պայմանավորված է նրանով, որ Իրանի իսլամական հեղափոխությունից հետո այդ երկրի մշակույթի և առաջնորդության նախարարության կողմից արգելվել էր նմանատիպ հայկական կենտրոններում ոչ քրիստոնյաների մուտքը: «Հայ ակունքը» այդպիսով դարձել էր մի տեսակ «քրիստոնեական կղզյակ», որտեղ հայ կանայք կարող էին չկրել իսլամական համագգեստ՝ հիջաբ: Հենց այդ պատճառով այն դարձել էր բոլոր ոչ մուսուլմանների համար նախընտրած միջավայր:

Ի դեպ, «Հայ ակունքի» հիմնադիրներից մեկը՝ ՀՅԴ կուսակցության անդամ Ստեփանյանը խոստացել էր, որ կուսակցությունը երբեք չի միջամտելու «Հայ ակունքի» գործունեությանը: Մինչև օրս այդ սկզբունքը պահպանվում է:

«Իրանահայ Ազգային և Մշակութային Միությունը» (ԻԱՄՄ) հայ համայնքի այն եզակի միություններից մեկն է, որը դուրս է ՀՅԴ կուսակցության ազդեցությունից: Միությունը հիմնադրվել է 1979 թ. սեպտեմբերին: Նրա հետևորդները եղել են կամ իրանական կոմունիստական Թուրե («Հեգբե թուրե-ե Իրան», Իրանի ժողովրդական Կուսակցություն) կուսակցության անդամներ և կամ այդ կուսակցության համակիրներ:

Իսլամական հեղափոխությունից հետո երբ Իրանում կոմունիստական կուսակցության գործունեությունն արգելվեց, այդ հողի վրա ծնունդ առավ ԻԱՄՄ: Իր գործունեության հենց սկզբնական շրջանից այն ոչ միայն հրաժարվել է անվերապահորեն ենթարկվել «ազգային իշխանություններին», այլև որդեգրել էր նրան հակառակ ուղեգիծ: Ուստի կողմերի միջև մշտապես առաջացել են տարածայնություններ, որոնք առանձին հարցերի շուրջ վեր են ածվել նույնիսկ առձակատման:

Խորհրդային Միության փլուզումից հետո միությունը սկսել է հարաբերություններ հաստատել ազգային իշխանությունների հետ, թեև առանձին հարցերի շուրջ նրանց միջև մինչև օրս էլ առկա են տարածայնություններ: ԻԱՄՄ-ն ներկայումս կազմակերպչորեն կայացած

միություն է: Միությունը մասնաճյուղեր ուներ Սպահանում և Շահին-
շահրում, որոնք վերջերս դադարել են գործելուց:

ԻԱՄՄ-ն այժմ մասնակցում է համայնքի բոլոր ազգային և կրոնա-
կան միջոցառումներին: Այն 2000 թ. Թեհրանի թեմական խորհրդի
համաձայնությամբ մասնակցեց պատգամավորական ժողովի ընտ-
րություններին և այդ ժողովում ունեցավ մեկ պատգամավոր:

ԻԱՄՄ-ն ունի կանանց, երիտասարդական և սկսնակական կազ-
մակերպություններ: Նրա ծրագրում ասվում է, որ միությունը հովա-
նավորում և աջակցում է այն բոլոր աշխատանքներին, որոնք տար-
վում են Հայ Դատի արդարացի լուծման և 1915 թ. Մեծ Եղեռնի մի-
ջազգային ճանաչման, բռնազավթված հողերի ազատագրման և իր
հայրենիքում հայ ժողովրդի համախմբման համար, որ ԻԱՄՄ-ն աշ-
խատում է հայ ժողովրդի համերաշխության, միաբանության և մայր
հայրենիքի շուրջ համախմբման գաղափարն իրականացնելու ուղ-
ղությամբ, որ միությունը պայքարում է ծուլման վտանգի դեմ՝ հանուն
հայ զանգվածների հայեցի դաստիարակության, նրանց ազգային դի-
մազծի անաղարտ պահպանման, հայոց լեզվի, պատմության և մշա-
կութային այլ արժեքների սերը նոր սերնդի սրտում վառ պահելու և
գորացնելու ուղղությամբ: Ծրագրում նաև ասվում է, որ ԻԱՄՄ-ն իրա-
նահայ թեմերը համարում է էջմիածնական և հնազանդվելով Ամե-
նայն հայոց կաթողիկոսության որոշումներին՝ պաշտպանում է Մայր
Աթոռ Ս. էջմիածնի գերակայությամբ Հայաստանյայց Առաքելական
Եկեղեցու կառույցի միասնությունը: Այնուհետև, հայ եկեղեցին համա-
րելով մեր ժողովրդի միասնության հիմնասյուներից մեկը՝ ԻԱՄՄ-ն
պաշտպանում է նրա թեմական կառույցն իր բոլոր հասարակական,
կրթական մարմիններով, շեշտելով հատկապես նրա կարևորությու-
նը սփյուռքահայության շրջանակներում:

Ներկայումս ԻԱՄՄ-ի անդամները ակտիվորեն մասնակցում են
ազգային կառույցների և համայնքային կազմակերպությունների աշ-
խատանքներին:

Հարկ է նշել, որ Իրանում գործող բոլոր հայկական միությունները
պաշտոնապես գրանցված են Իրանի Իսլամական Հանրապետությո-

յան արդարադատության նախարարությունում, հետևաբար և գործում են արտոնված: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ծրագիրն ու կանոնադրությունը:

Հայաստանի պատմության գործում բոլոր հայկական միություններն ունեն կարևորագույն դեր: Նրանց կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր ազգային ու կրոնական միջոցառումներ, իրականացվում են հայաշունչ և հայանպաստ ծրագրեր, տարբեր միջոցառումներ նվիրված հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Միությունները կազմակերպում են նաև գրական երեկոներ, դասախոսություններ, զանազան զեղարվեստական ծրագրեր: Միությունների բեմերում ելույթ են ունենում հայկական ինքնագործ պարախմբեր, երգչախմբեր, թատերախմբեր և այլն:

Իրանահայ բոլոր միություններն անխտիր հետամուտ են հետևյալ կարևոր նպատակին. ի մի հավաքելով հայ անհատներին, մանավանդ հայ պատանիներին ու երիտասարդներին մշակութային, մարզական ու սկստութային միջոցառումներով զարկ տալ նրանց մտավոր և ֆիզիկական ունակություններին, ստեղծել ընկերային սերտ և հարազատ մթնոլորտ, ուժեղացնել նրանց մեջ համագործակցության և հայեցի դաստիարակության ոգին և տարածել հայկական մշակույթը:

Միությունները տոնում են հայկական բոլոր կրոնական, ազգային և ժողովրդական տոները (Տեառնընդառաջը, Համբարձման տոնը, Ս. թարգմանչաց տոնը, Վարդավառը, Խաղողօրհներքը), բոլոր ազգային ու ժողովրդական հիշարժան տարեթվերը, կազմակերպում ներազգային քարոզչական աշխատանքներ և այլն:

Իրանի հայ համայնքն ապրում է հարուստ մշակութային կյանքով: Այդ համայնքը դարերի ընթացքում վառ ու կենդանի է պահել ոչ միայն իր լեզուն, ազգային ավանդույթներն, այլև բազմադարյան իր հարուստ ազգային մշակույթը:

Իրանում համարյա բոլոր ազգային-կրոնական տոները նշելու եզրափակիչ մասում կազմակերպվում են գրական-երաժշտական երեկույթներ, արտասանություններ, երգչախմբերի և անհատ երգիչների ելույթներ և այլն: Այդ խմբերի ելույթների լեյտմոտիվը հայրենասիրա-

կան թեմաներն են: Հարկ է նշել, որ Իրանի հայ համայնքի բոլոր երաժշտական, դրամատիկական և այլ խմբերը հանդիսանում են սիրողական:

Ազգային-եկեղեցական տոների ժամանակ, որպես կանոն, նախ իր խոսքն է ասում սովյալ թեմի թեմակալ առաջնորդը, որը ներկաներին բացատրում է սովյալ տոնի խորհուրդը:

Ժամանակ առ ժամանակ Հայաստանից Իրան են ժամանում պրոֆեսիոնալ երաժշտական, պարային, դրամատիկական և այլ կարգի կոլեկտիվներ, մեներգիչներ, ասնունքողներ և այլն, որոնց կողմից տրվող համերգներին կամ ելույթներին համայնքը երբեմն հրավիրում է նաև Թեհրանում հավատարմագրված դիվանագետների: Հայաստանի արվեստագետների և մտավորականների այցելությունները Իրանի հայաշատ քաղաքները մեծ լիցք և հպարտություն է հաղորդում համայնքին:

Իրանի հայ համայնքը սովել է բազմաթիվ տաղանդաշատ ճարտարապետներ, ճարտարագետներ, կերպարվեստի, երաժշտության, թատերական և ֆիլմարվեստի գործիչներ, որոնք իրենց ստեղծագործություններով զարգացրել են ոչ միայն հայկական մշակույթը, այլև ստեղծել գրականության և արվեստի մնայուն ստեղծագործություններ: Իրանում են ստեղծագործել անցյալի մեծ թվով տաղանդաշատ մանրանկարիչներ, գեղանկարիչներ, փիլիսոփաներ, պատմիչներ, գրողներ, երգահաններ և այլն: Այսօր ևս Իրանի հայ համայնքում գործում են բազմաթիվ գրողներ, արվեստագետներ, նկարիչներ, գիտնականներ և մտավոր գործունեության այլևայլ բնագավառների ներկայացուցիչներ:

Հաճախ Հայաստանից, ինչպես նաև Սփյուռքի տարբեր շրջաններից և արտերկրից իրանահայ համայնքի կողմից հրավիրվում են ճանաչված մշակութային և հասարակական քաղաքական գործիչներ, երաժշտական խմբեր, նկարիչներ և այլն: Հայաստանի թատերական, երաժշտական խմբերը, անհատ կատարողներն Իրանում մասնակցում են զանազան փառատոների: Երևանում կազմակերպվել է Իրանի մշակույթի օրեր, զանազան ցուցահանդեսներ և այլն: 2006 թ.

հունվար ամսին կայացած Հայաստան-Իրան միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստի շրջանակներում ստորագրվել է մի փաստաթուղթ երկու երկրների մայրաքաղաքներում Հայաստանի և Իրանի կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության մասին: Իսկ 2013 թ. ապրիլին Երևանում երկու երկրների մշակույթի նախարարների կողմից կնքվեց համաձայնագիր, որը նախատեսում է մշակութային լայն համագործություն առաջիկա մի քանի տարիների ընթացքում:

Իրանահայ համայնքի մշակութային ոլորտում մեծ դերակատարում ունի «Գրական կամուրջ» (www.lit.bridge.com) կայքէջը, որտեղ հրատարակվում են գրական-գեղարվեստական ստեղծագործություններ և հայ գրականության մասին հոդվածներ Հայաստանի և Սփյուռքի հին ու նոր հեղինակներից: Կայքը երկլեզու է, ունի հայերեն և պարսկերեն բաժիններ: Կայքի նպատակներից է նախ կամուրջ հանդիսանալ Իրանի հայ գրողների և Հայաստանի գրողների միջև և ապա նաև նպաստել Իրանի հայ և պարսիկ գրողների միջև հարաբերությունների զարգացմանը:

2008 թ. դեկտեմբերի 9-ին Թեհրանում տեղի ունեցավ իրանահայ արվեստագետների առաջին ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին վերջին վեց տասնամյակների իրանահայ ժամանակակից արվեստի տարբեր ուղղությունների և ճյուղերի պատկանող, մասնավորապես, գեղանկարչության և լուսանկարչության մոտ 600 նմուշներ: Ցուցահանդեսում ընդգրկված էին հոգևոր, կրոնական, պատմական, քաղաքական և ազատ թեմաներով ստեղծագործություններ:

Իրանահայ մամուլն ունի հարուստ պատմություն: Իրանում հայ մամուլի հրատարակությունը սկզբնավորվել է 1893 թվականից, երբ սկսեց լույս տեսնել հասարակական, գրական, քաղաքական «Շավիղ» շաբաթաթերթը: Նրա գլխավոր խմբագիրներն են եղել Հովհաննես խան Մասեհյանը և Կրթանես Փափագյանը: Իրանում մինչև օրս հրատարակվել է ավելի քան 80 անուն հայերեն պարբերական:

Ներկայումս Իրանում գործում են հայկական մամուլի հետևյալ միջոցները, ինչպես նաև հրատարակչությունները և դրանց հետ կապված հիմնարկները:

Թեհրանի «Ալիք» հաստատություն, այդ թվում նաև քաղաքական, հասարակական, գրական և մշակութային «Ալիք» օրաթերթ: Այդ օրաթերթը լույս է տեսնում 1931 թվականից Թեհրանում: Նախ որպես շաբաթաթերթ, 1935 թ. հունվարից՝ երկօրյա, այնուհետև 1941 թ. ամենօրյա օրաթերթ: Թերթն անդրադառնում է համաիրանական լուրերին, իրանահայ կյանքին, սփյուռքի և Հայաստանի իրադարձություններին, ՀՅԴ կուսակցության գաղափարախոսության հարցերին և այլն: Թերթի կուսակցական պատկանելության մասին չի նշվում, սակայն հանրահայտ է, որ այն պատկանում է ՀՅԴ կուսակցությանը: Իրանահայ համայնքում XX դ. 30-ական թվականներից սկսած մինչև օրս մեկ այլ մնայուն և տևական կյանք ունեցած այլ թերթ, «Ալիք»-ից բացի չի եղել: Անշուշտ լույս են տեսել այլ խմբակցությունների և անհատ անձանց միջոցով հրատարակվող թերթեր, սակայն դրանք երկար կյանք չեն ունեցել:

Ինչպես նշվեց, «Ալիք»-ն ունի ՀՅԴ կուսակցության գաղափարաքաղաքական ուղղվածություն, որի բովանդակության առանցքն է կազմում Հայ Դատի հետապնդումը: Համայնքի ներքին կյանքից բացի «Ալիք»-ը լուսաբանում է նաև Իրանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի առավել կարևոր խնդիրներ:

Տարբեր տարիներ «Ալիք»-ի խմբագիրներն են եղել դաշնակցական մտավորականներ Հովսեփ Թադևոսյանը, Երվանդ Հայրապետյանը, Անդրե Տեր-Օհանյանը (Ա. Ամուրյան), Հովսեփ Հովհաննիսյանը, Տաճատ Պողոսյանը, Բաղդիկ Մինասյանը, Արսեն Մամյանը, Հրայր Խալաթյանը, Էդվարդ Երիցյանը, Էդվարդ Ղահրամանյանը, Նորայր Պահլավունին, Նորայր Էլսայյանը, Սեդա Դավթյանը: Ներկայումս թերթի ընդհանուր պատասխանատուն է Արա Շահնազարյանը, իսկ գլխավոր խմբագիրը՝ Դերենիկ Մելիքյանը: Թերթի արտոնատերերն են եղել Ա. Միքայելյանը, Ա. Բադայանը, Ռ. Ստեփանյանը,

Ա. Աճենյանը: Օրաթերթը լույս է տեսնում չորս հազարից ավել տպաքանակով: Ունի սեփական կայքէջը ինտերնետում:

«Ալիք» հրատարակչությունը, որն ունի բավականին լավ նյութական բազա, հրատարակում է նաև տարբեր մասնագիտական գրականություն, օրացույցներ, գրքեր և այլն: «Ալիք»-ը հանդիսանում է Իրանի հայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքի կենտրոններից մեկը: 1997 թ. օրաթերթը տեղափոխվել է նոր, հարմարավետ շենք:

Թեհրանի մշակութային և հասարակական «Հույս» երկշաբաթերթ (արտոնատեր՝ Լևոն Ահարոնյան, խմբագիր՝ Ռոբերտ Սաֆարյան),

Թեհրանի «Լույս» մշակութային և հասարակական ամսագիր (արտոնատեր և գլխավոր խմբագիր՝ Էդվարդ Բաղդասարյան, տնօրեն՝ Ռուբիկ Սարգսյան),

Թեհրանի «Արաքս» գրական, մշակութային, հասարակական շաբաթաթերթ (արտոնատեր Անահիտ Իսայան), գլխավոր խմբագիր՝ Մովսես Քեշիշյան,

Թեհրանի «Ապագա» եռամսյա հանդես,

Սպահանի առաջնորդարանի համայնքային, հասարակական և մշակութային պարբերաթերթ «Նոր Զուղայի տեղեկատու»,

Ատրպատականի հայոց թեմի կրոնական-մշակութային լրատու «Արտագ»,

«Պայման» եռամսյա պարսկատառ ամսագիր, որը շոշափում է հայկական թեմաներ:

Թեհրանի «Նայիրի» հրատարակչություն, տնօրեն՝ Նարեկ Ամիրխանյան: Այս հրատարակչությունը տարիներ ի վեր հրատարակում է պատմական, հուշագրական, մանկական գրքեր, բառարաններ, պատի և գրպանի օրացույցներ և այլն:

Մոտ անցյալում Իրանում հրատարակվել են հետևյալ պարբերականները. «Վերածնունդ», «Բոբոխ», «Ցախսավել», «Արմենուի», «Յոյս», «Արփի», «Նավասարդ», «Ալիք» ամսագիր, «Ալիք» պատանեկան, «Ուսուցիչ» և «Հանդես» պարբերաթերթերը: «Ալիք պատա-

նեկան» պարբերաթերթը, որպես «Ալիք» օրաթերթի հավելված, վերահրատարակվում է 2010 թ. մարտ ամսից:

Իրանում հրատարակվում են նաև օրացույցներ: Օրացույց հրատարակելու մտածումը դարավոր անցյալ ունի պարսկահայ մտավորականության կողմից: Նոր Ջուղայում, Թավրիզում և Թեհրանում հրատարակվել են հայկական օրացույցներ: Ներկայումս դեռ իրենց գոյությունը պահպանում են «Րաֆֆի», «Նայիրի», «Կանթեղ» և մի շարք այլ օրացույցներ: «Րաֆֆին» հրատարակվում է 1942 թ. սկսած: Նրա հիմնադիրն է Տաճատ Պողոսյանը (այժմ այն հրատարակվում է հրատարակչական կազմի միջոցով), «Նայիրին» հրատարակվում է 1954 թվականից: Հիմնադիրն է Սամուել Սարուխանյանը, ներկայումս կազմում և հրատարակում է Սեպուհ Ամիրխանյանը: «Կանթեղ»-ը հրատարակվում է 1960 թ., հիմնադիրն է Հովհաննես Տեր-Պետրոսյանը, ներկայումս հրատարակվում է «Ալիք» հաստատության կողմից: Նոր Ջուղայում հրատարակվում են «Սերունդ» (կազմող ժողովի Գրիգորյան), «Ընտանիքի օրացույց» (կազմողներ Անահիտ Հովսեփյան և Կարինե Զոհրաբյան):

Իրանում աշխատում են «Ալիք», «Ֆարաբի» և «Արաքս» հայկական տպարանները:

Իրանում 70-ամյա անցյալ ունի նաև տարեգրքերի հրատարակությունը: Այսպես, 1927 թ. «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարագաշը հրատարակել է «Պարսկահայ տարեգիրքը», քառասուն տարի անց «Ալիք» օրաթերթի խմբագիր Տաճատ Պողոսյանի կողմից հրատարակվել է «Րաֆֆի» տարեգիրքը (Ա և Բ) հատորներ (Գ հատորը լույս է տեսել խմբագրի դստեր՝ Է. Պողոսյանի կողմից), 2004 թ. իրանահայ հայտնի գրահրատարակիչ Սեպուհ Ամիրխանյանը հրատարակել է «Նայիրի» տարեգրքի Ա հատորը, իսկ 2008 թ. Բ հատորը:

Հարկ է նշել, որ իրանահայ տեղեկատվական դաշտն ունի իր որոշ առանձնահատկությունները: Դրանցից ամենահիմնականն այն է, որ Իրանում հայ տպագիր մամուլը վերահսկողության է ենթարկվում այսպես կոչված Իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարության («Էրշադ») կողմից:

ԻԻՀ սահմանադրության մեջ մամուլի և հրատարակչության վերաբերյալ 24-րդ հոդվածը ազդարարում է. «Մամուլը և հրատարակչությունը ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետները, եթե դրանք չեն հակասում իսլամի սկզբունքներին և չեն խախտում հանրության իրավունքը»: Ի լրացումն դրա, 1979 թ. օգոստոսի 6-ին ԻԻՀ-ում ընդունվել է օրենք մամուլի մասին: Իսկ 1984 թ. ուժի մեջ մտավ մի նոր օրենք, որով մինչև օրս կարգավորվում է մամուլի բնագավառի գործունեությունը: Այդ օրենքի համաձայն, երկրի բոլոր կրոնական փոքրամասնությունների կողմից հրատարակվող մամուլը, գրքերը և առհասարակ ցանկացած հրատարակություն հսկողության և գրաքննության է ենթարկվում Իսլամական առաջնորդության և մշակույթի նախարարության կրոնական փոքրամասնությունների հարցերի գրասենյակի կողմից: Այդ գրասենյակի միջոցով է իրականացվում կրոնական փոքրամասնությունների կողմից կամ կրոնական փոքրամասնությունների մասին գրքերի հրատարակության և ամբողջ մամուլի վերահսկումը, նաև օտարերկրացի քարոզիչների ելուժուտը երկիր և այլն: Հայաստանի պատմության, իրանահայերի պատմության, Իրանի քրիստոնյաների պատմության մասին բոլոր աշխատանքները, անկախ հեղինակի ազգային պատկանելությունից գրաքննության են ենթարկվում վերոհիշյալ կառույցի կողմից և ապա միայն ստանում տպագրության թույլտվություն: Հատկապես մանրագնին գրաքննության են ենթարկվում այն աշխատանքները, որոնք պատմական կամ քաղաքական բովանդակություն ունեն, նվիրված են հայ կուսակցությունների և քաղաքական խմբակցությունների պատմությանն ու գործունեությանը: Ինչ-ինչ հարցերի հետ համաձայն չլինելու դեպքում, դրանք ենթակա են վերանայման և աշխատությունը կարող է տպագրվել միայն համապատասխան ուղղումներ իրականացնելուց հետո, կամ դրանց տպագրությունը կարող է արգելվել գրասենյակի կողմից:

Թերթ հրատարակելու համար ևս կրոնական փոքրամասնությունները պետք է դիմեն վերը նշված գրասենյակի մամուլի բաժին և միայն թույլտվությունից հետո ստանում են տպագրության իրավունք:

Կասկածից վեր է, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նոր հնարավորություններ է ընձեռում իրանահայ համայնքին, նրան հնարավորություն տալով ձեռքբերել տեղեկատվական վակուումը: Ներկայումս համայնքի ակտիվ հատվածը աստիճանաբար ներգրավվում է տեղեկատվական հոսքերի ոլորտը, մասնավորապես համահայկական տեղեկատվական դաշտ:

Ինտերնետային կայքերում տեղադրված նյութերը նախապես գրաքննության ենթարկելը տեխնիկապես գրեթե անհնար է, ուստի այս ոլորտի զարգացումը կարող է մեծապես խթանել համայնքում հասարակական քննարկումների ծավալը: Իհարկե, այդ դեպքում նույնպես հեղինակները կարող են խնդիրներ ունենալ, եթե գրաքննիչները եզրակացնեն, որ նշված կայքերում գետեղված նյութերը սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն «հակասում են իսլամի սկզբունքներին, խախտում են հանրության իրավունքը», հետևաբար վտանգ են ներկայացնում Իրանի Իսլամական Հանրապետությանը պետական և ազգային շահերի տեսանկյունից:

Այնուամենայնիվ, այս ոլորտում առաջընթացն ակնհայտ է: Իրանահայ իրականության մեջ ինտերնետային կայքերի թիվը գնալով աճում է, որը կարող է խթանել համայնքի շրջանակներում տեղեկատվական հանրույթի ձևավորմանը և համահայկական ցանցերի մեջ նրանց ակտիվ ներգրավմանը: Համակարգչային և համացանցային միջոցները հատկապես հնարավորություն են տալիս համայնքի ընդդիմադիր կամ «դժգոհ» հատվածին, որը ձգտում է համայնքի քաղաքական-գաղափարական, հասարակական, մշակութային, կրթական, կրոնական, մարզական և այլ բնագավառներում փոփոխություններ տեսնել և լսելի դարձնել իրենց ձայնը:

Դժբախտաբար առ այսօր համաիրանական հայկական ինտերնետային ռեսուրսներ չկան, որն անշուշտ ունի իր պատճառները:

Իրանահայ մամուլի սահմանափակ լինելու պատճառով իրանահայությունն առհասարակ մշտապես որոնում է իր տեղեկատվական սովին հագուրդ տալու այլընտրանքային աղբյուրներ:

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս հայ ավանդական կուսակցություններից Իրանում գործում է միայն Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, որն ունի Թեհրանի և Սպահանի կենտրոնական կոմիտեներ և դրանց ենթակա բազմաթիվ կազմակերպություններ, որոնք կազմակերպում և ղեկավարում են Իրանի ամբողջ տարածքով մեկ սփռված ՀՅԴ անդամներին: Դաշնակցությունն Իրանում իր գործունեությունը ծավալել է XX դարի սկզբից, համարյա միաժամանակ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության հետ: Այդ շրջանում իրանահայ համայնքի զգալի թվով գործիչներ տարված էին սոցիալիստական գաղափարներով և նրանցից մի քանիսը հանդիսացան միջազգային սոցիալիստական շարժման կարկառուն դեմքեր:

Սակայն հնչակյան կուսակցության գործունեությունն Իրանում կայուն հիմքեր չգտնելու պատճառով, աստիճանաբար այդ կուսակցությունը դադարեցրեց իր գործունեությունը: Նման պայմաններում Իրանում հաստատվեց ՀՅԴ կուսակցության մենիշխանություն:

Դաշնակցության գործունեությունն Իրանում առանձնակի ակտիվության հասավ 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխության շրջանում, որին նա ցուցաբերեց գործուն մասնակցություն: Այդ կուսակցության հետևորդների թիվն Իրանում կտրուկ ստվարացավ Հայաստանի առաջին Հանրապետության կործանումից և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ մեծ թվով կուսակցության շարքային անդամներ, ինչպես նաև առաջին հանրապետության ղեկավար գործիչներ, բոլշևիկյան հալածանքներից խուսափելու նպատակով 1920-ական թվականներին ստիպված էին լքել հայրենիքը և վտարանդության դիմել տարբեր երկրներ: Իրանը, որպես Հայաստանի սահմանակից երկիր, բնական է, որ լինելու էր հայ քաղաքական վտարանդության առաջին և կարևոր հանգրվանը: Իրանական հողում, որտեղ արդեն կուսակցությունն ուներ իր կառույցները, դաշնակցությունը արագորեն վերակազմակերպեց դրանք

և ստեղծեց նորերը: ՀՅԴ կուսակցության շուրջը ձևավորվեցին որոշակի գործառույթներ ունեցող ներհամայնքային կառույցներ, որոնք աստիճանաբար ձեռք բերեցին իշխանության որոշակի լծակներ: Այդ շրջանում, Իրանի տարբեր մասերում, հատկապես հայաշատ Ատրպատականում, դաշնակցական մտավորական գործիչների եռանդուն ջանքերի շնորհիվ հիմնվեցին բազմաթիվ մշակութային, մարզական և այլ կարգի հաստատություններ: Իրան տարագրված հայությունը ժամանակի ընթացքում ստացավ քաղաքացիություն և որպես երկրի լիիրավ քաղաքացի նաև իրավունք սեփականություն ունենալու և ամեն տեսակի ընտրություններին մասնակցելու, ինչպես նաև ազգային գործունեություն ծավալելու համար:

1920-ական թվականների կեսերից, հատկապես 1930-ական թվականներին, երբ Իրանում հաստատվել էր Ռզա շահ Փահլավիի դիկտատորական վարչակարգը, որի ներքին քաղաքականության բնորոշ հատկանիշներն էին երկրի համատարած «իրանացման» մոլի պանիրանական և մեծապետական-շովինիստական ուղղվածությունը, ի թիվս իրանական քաղաքական կուսակցությունների և հոսանքների, դադարեցվեց նաև դաշնակցության գործունեությունը: Ավելին, այդ կուսակցությունը ևս սկսեց ենթարկվել հալածանքների ու հետապնդումների:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1941 թ.), երբ Խորհրդային Միությունը զորքեր մտցրեց Իրան, Մոսկվան անմիջապես ձեռնամուխ եղավ կոմունիստական գաղափարների արմատավորմանը Միջին Արևելքի ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող այդ երկրում: Խորհրդային Միության հովանավորությամբ Իրանում ստեղծվեց կոմունիստական «Թուրե» («Հեզբե թուրեե Իրան» - «Իրանի ժողովրդական Կուսակցություն») կուսակցությունը: Ջգալի թվով իրանահայեր անդամակցելով նրան, դաշնակցության դեմ ծավալեցին եռանդուն գործունեություն: Թուրե կուսակցությանը հաջողվեց իր հսկողությունը հաստատել նաև Իրանի հայ համայնքի բազմաթիվ ազգային կառույցների նկատմամբ: Հայ թուրեականները կարողացան նույնիսկ երկու շրջան պատգամավոր

ունենալ Իրանի խորհրդարանում՝ մեջլիսում: Արտաշես (Արդեշիր) Հովհաննիսյանը, որը հանդիսանում էր Թուրքե կուսակցության հիմնադիրներից մեկը, 1944-1945 թվականներին հյուսիսային իրանահայության պատգամավորն էր Իրանի 14-րդ խորհրդարանում:

Այսպիսով, Իրանի հայ համայնքը պառակտվեց երկու մասի՝ կոմունիստ թուրեականների և ՀՅԴ կուսակցության հետևորդների: Այդ երկու ուժերի միջև ծավալվեց սուր պայքար, որը շարունակվեց նաև հետագայում, Խորհրդային Միության կողմից Իրանի տարածքից գործերը դուրս բերելուց հետո:

XX դ. 50-ական թվականների երկրորդ կեսին, Իրանի կառավարող շրջանները որոշակիորեն փոխեցին երկրի կրոնական փոքրամասնությունների իրավական վիճակի նկատմամբ իրենց որդեգրած վերաբերմունքը՝ հրաժարվելով նրանց «իրանացնելու» քաղաքականության բացահայտ ձևերից: Նույնիսկ ընդառաջելով համայնքի լայն հասարակայնության ցանկություններին, իրանական կառավարությունը Սպահանի համալսարանում բաց արեց հայագիտական բաժանմունք: Քիչ ավելի ուշ, 1964 թ. Թեհրանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում ևս բացվեց այդպիսի բաժանմունք:

Սակայն այդ բոլորով հանդերձ, համայնքը շարունակում էր ներքաշված մնալ գաղափարախոսական տարբեր վեճերի ու հակասությունների մեջ:

1983 թ. իսլամական իշխանությունների կողմից արգելվեց Թուրքե կուսակցության գործունեությունը: Նրա ղեկավարները ձերբակալվեցին և մեղադրվեցին լրտեսության ու պետական դավաճանության մեջ: Ինչ վերաբերում է դաշնակցությանը, ապա նոր իշխանությունները ՀՅԴ-ը համարում էին ԱՄՆ-ի շահերը պաշտպանող և երկրում նրա քաղաքականության իրականացման գործիք հանդիսացող կուսակցություն: Այդ կարծիքը փոխելու նպատակով, 1993 թ. ՀՅԴ կուսակցության Բյուրոյի անդամ Հրայր Մարությանը ժամանեց Թեհրան և հանդիպումներ ունեցավ Իրանի Ազգային անվտանգության ծառայությունների, արտաքին գործոց նախարարության և այլ պետական-պաշտոնական կառույցների ներկայացուցիչների հետ: Այդ հանդի-

պումների արդյունքում կողմերի միջև ստորագրվեցին համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր, որոնց բովանդակության մասին իրանահայ Լևոն Ահարոնյանը գրում է. «Ըստ պայմանավորվածության՝ Իրանն աշխարհի տարբեր երկրներում կարող էր իր նպատակներին հասնելու համար օգտվել «հայկական լոբբինգի» հնարավորություններից: Այլ ձևով ասած՝ ՀՅԴ-ը կծառայեր Իրանի Իսլամական Հանրապետությանը, վերջինիս մտահղացումներն իրագործելու և հարկ եղած տեղեկությունները ձեռք բերելու համար: Այն օրից, երբ Իրանի Ազգային Ապահովական Նախարարությունը համոզվեց, որ փոխարեն ՀՅԴ-ն հետ թշնամություն անելու, պետք է բարեկամություն անի, հասավ այն արդյունքին, որ աշխարհի տարբեր քաղաքականապես աշխույժ երկրներում, որտեղ ապրում են հայեր, իրենք համագործակցելով ՀՅԴ-ն հետ կարող են մեծ օգուտներ քաղել: Հենց այդ պատճառով էլ Իրանի իսլամական իշխանությունը ՀՅԴ-ն հետ իր համագործակցությունը սկսեց Թեհրանում, Բեյրութում և ավելի ուշ Հայաստանում: ... Այդպիսով, երբ հետագային երկրում ձախերին քաղաքական դաշտից հեռացրին, Իրանի հայկական համայնքներում սկսեց դադարել հայ ծախ կազմակերպությունների գործունեությունը: Միայն մնացին մի քանի այսպես ասած իշխանության շահերը չվտանգող միություններ»⁶²:

Ինչպես հայտնի է, Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո որոշ ժամանակ անց սրվեցին տարաձայնությունները մի կողմից Հայոց Համազգային Շարժման և Հայաստանի Հանրապետության իշխանությունների, մյուս կողմից ՀՅԴ-ն միջև, որի հետևանքը հանդիսացավ նրանց միջև առձակատման առաջացումը: ՀՅԴ կուսակցության բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարությանը վտարվեց Հայաստանից: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կասեցվեց ՀՅԴ կուսակցության գործունեությունը: Այս իրադարձությունները Իրանի հայ համայնքում առաջ բերեցին նոր պառակտում այսպես կոչված ծախ և աջ ուժերի միջև: Աջերը ազգա-

⁶² Ահարոնյան Լևոն, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1663:

յին առաջնորդարանի վարած քաղաքականության համակիր ուժերն էին, որոնք գտնվում էին ՀՅԴ կուսակցության անվերապահ ազդեցության ներքո, իսկ ծախսերը այդ քաղաքականության դեմ ուժերը: Միաժամանակ Իրանում գործող ՀՅԴ կուսակցության անդամները ևս բաժանվեցին երկու խմբի. մի խումբը, հետևելով Հրայր Մարությանին, գտնում էր, որ օգտվելով բոլոր հնարավորություններից, անհրաժեշտ է «պայքարել և հարվածել» Հայաստանի իշխանություններին, իսկ մյուս խումբը դեմ էր այդ քաղաքականությանը»⁶³:

Անկասկած այդ առձակատումը ծայրահեղ բացասաբար էր անդորառնում իրանահայ համայնքի և նրա միասնականության վրա:

Իրանի Իսլամական Հանրապետությունում քաղաքական կուսակցությունները պաշտոնապես գործելու իրավունք չունեն: Այդ իսկ պատճառով Հ. Յ. Դաշնակցությունը գործում է իրեն կից հասարակական, մշակութային, մարզական, կրթական, բարեգործական կազմակերպությունների կամ միությունների անվան տակ: Ինչպես բազմիցս նշել ենք, ՀՅԴ-ն փաստացի վերահսկողության ներքո են գտնվում համայնքի ոչ միայն աշխարհիկ՝ մշակութային, մարմնամարզական, գիտա-կրթական և այլ միություններն ու կազմակերպությունները, այլև եկեղեցական կառույցներն ու թեմական խորհուրդը: ՀՅԴ-ը տիրապետող դիրք ունի նույնիսկ կրթօջախների ուսուցչական անձնակազմի ընտրության հարցում:

Ըստ ՀՅԴ-ն տվյալների՝ ներկայումս Իրանում կուսակցությունն ունի մոտ 5 հազար անդամ, սակայն կան տեսակետներ, որ իրականում անդամների թիվն ավելի փոքր է: Նման իրավիճակում, երբ համայնքն հիրավի տրոհված է «կուսակցական» գերիշխող փոքրամասնության և «անկուսակցական» մեծամասնության, խաթարվում է համայնքի բարոյահոգեբանական ընդհանուր նկարագիրը, այն դարձնելով նեղ կուսակցական շահերով առաջնորդվող: Դրա արդյունքում անտարակույս տուժում է համայնքի միասնականությունը: Առհասարակ Իրանի հայ համայնքը ինչպես անցյալում, այնպես էլ ներկա ժա-

⁶³ Նույն տեղում, էջ 1069-1070:

մանակներում քաղաքական և կրոնահամայնքային հարցերում միատարր չի եղել և ներկայումս էլ չէ: Տարբեր խնդիրների շուրջ միշտ էլ առկա են եղել տարածայնություններ, որոնք համայնքը բաժանում են տարբեր բևեռների:

Այսպես կոչված «աջերի» ձեռքում է կենտրոնացած համայնքի ռեալ իշխանությունը: Ընդ որում, նրանք լուծում են իրանահայ համայնքի բոլոր հարցերը միանձնյա ձևով, հաշվի չառնելով «ձախերին» և նրանց տեսակետները: Այդ ուժերի միջև պայքարն առավել ակնհայտ է դառնում տեղական ազգային իշխանության, պատգամավորական ժողովի և այլն ընտրությունների ժամանակ, երբ երկու թևերը հակադարձվում են միմյանց:

Առհասարակ իրանահայ համայնքում կան առանձին կնճռոտ խնդիրներ, որոնք կարիք ունեն կարգավորման:

Սակայն, չնայած համայնքի ներսում գոյություն ունեցող ներհակություններին ու տարածայնություններին, հայ համայնքն իր օրակարգում ունեցել և այսօր էլ ունի խնդիրներ, որոնց շուրջը դրսևորում է միասնականություն: Այն հարցի պատասխանը, թե ինչ իրողություններ են առավելապես միավորում հայ համայնքը, միանշանակ կարելի է պատասխանել հետևյալը. համահայկական տարողություն ունեցող խնդիրները, ինչպիսիք են, օրինակ, հայրենիքի գաղափարը, Հայ Դատը, հայոց ցեղասպանության հարցը, Ղարաբաղի հիմնահարցը և այլն: Կարևորը, սակայն այն է, որ Իրանի հայ համայնքի տարբեր շերտերի ու շրջանակների միջև կա երկխոսություն, որը հույս է ներշնչում, որ զանազան մարտահրավերների առջև կանգնած համայնքը իմաստություն և ճկունություն կդրսևորի գնալու համագործակցության ճանապարհով:

Իրանում հայ ավանդական կուսակցություններից Ռամկավար Ազատական Կուսակցությունը որևէ ձևով ներկայացված չէ: Այնտեղ տարիներ է ինչ գործում է Հայ ժողովրդային Միությունը (ՀԺՄ), որը հրատարակում է «Արաքս» շաբաթաթերթը: ՀԺՄ-ի շուրջն են հիմնականում համախմբված ՀՅԴ մենատիրությունից դժգոհ սփյուռքյան

ներկայացուցիչները (ընդ որում ոչ միայն Իրանում, այլև սփյուռքյան այլ գաղթօջախներում):

Ներկայումս, չնայած իր առջև կանգնած զանազան մարտահրավերներին, իրանահայ համայնքը վաղուց կայացած, ավանդական և դարերի ճանապարհ անցած համայնք է, իր ենթակառուցվածքներով, տարաբնույթ հաստատություններով և այլն: Նրանում առկա է լավագույնս կազմակերպված համայնքային կյանք: Այդ հայադրոշմ և ավանդապահ համայնքում հայապահպանության հարցերը գտնվում են բավականին բարձր մակարդակի վրա: Համայնքի բոլոր կառույցներն արդյունավետ աշխատանք են տանում նոր սերնդին հայկական ոգով դաստիարակելու համար: Համայն Սփյուռքի համար այդ կարևոր խնդրի իրագործմանը լծված են համայնքային բոլոր կառույցներն անխտիր՝ սկսած եկեղեցական ու աշխարհիկ իշխանություններից, վերջացրած զանազան միություններով, մարզամշակութային կազմակերպություններով և այլն: Նրանց կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր ազգային ու կրոնական միջոցառումներ, մշակվում են հայաշունչ և հայանպաստ ծրագրեր, զրական երեկոներ, դասախոսություններ և այլն: Օրինակ, Իրանի հայ համայնքը ամեն տարի նշում է ապրիլի 24-ը՝ արևմտահայոց ցեղասպանության տարելիցը: Այդ միջոցառմանն անխտիր մասնակցում են բոլորը, անկախ ներհամայնքային կամ այլ կարգի խնդիրներում իրենց ունեցած տարակարծություններից ու հակասություններից: Հաճախ մասնակիցների թափորը դուրս է գալիս քայլարշավների: Իրանի մի շարք քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում և այլն, կառուցվել են Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ:

Ինչպես Սփյուռքի մյուս համայնքներում, Իրանի հայ համայնքում ևս կանոնավոր կերպով նշվում են նաև կրոնական, ազգային և պետական տոները՝ Սուրբ Ծնունդը, Ջատիկը, Ծաղկագարդը, Վարդանանց տոնը, Մայիսի 28-ը, սեպտեմբերի 21-ը և այլն: 2001 թ. իրանահայությունը մեծ շուքով նշեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելու 1700-ամյակը: Համայնքում ազգային և կրոնական ծեսերն ու ավանդույթները լավագույն ձևով են պահպանված:

Առհասարակ համայնքն ապրում է ազգային, հոգևոր-մշակութային և հասարակական աշխույժ կյանքով: Որպես կանոն, ազգային-կրոնական տոներին ու արարողություններին ինչպես միջոցառումների կազմակերպիչների, այնպես էլ մասնակիցների ակտիվությունը չափազանց բարձր է: Գործնականում չկան մարդիկ, որոնք անտարբեր լինեն նման միջոցառումների նկատմամբ: Այդ տոներն ընթանում են միասնության ու անմիջականության մթնոլորտում: Այդ կարգի միջոցառումների առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ համայնքի անդամները մշտապես շփվում են միմյանց հետ: Դա առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես երիտասարդության համար, քանի որ այդ շփումների հետևանքով ծնունդ են առնում ապագա ամուսնությունները: Համայնքի անդամները գտնում են, որ երիտասարդության շփումների այդ ձևը նպաստում է համայնքում բարոյականության սկզբունքների անաղարտ պահպանմանը: Նման համակարգը նվազագույնի է հասցնում նաև մահմեդականների հետ խառը ամուսնությունների թիվը (1-2 ամուսնություն յուրաքանչյուր երեք տարում): Պատանին կամ աղջիկը, որը դիմել է խառն ամուսնության, փաստորեն, դուրս է մնում ողջ համայնքային կյանքից, կամ պարզապես համայնքն այլևս չի ընդունում նրան: Ըստ էության համայնքում խառն ամուսնություններ այլազգիների կամ այլակրոն մարդկանց հետ համարյա չկան, եթե նույնիսկ կան առանձին դեպքեր, դրանց թիվը կարելի է հաշվել մատների վրա: Համայնքում ընտանեկան հարաբերությունները զուտ հայկական են:

Ի տարբերություն աշխարհասփյուռ մի շարք հայ համայնքների, Իրանի հայ համայնքում ծուլման վտանգ գոյություն չունի: Այն ամբողջապես հայախոս համայնք է: Չկա որևիցե հայ ընտանիք, որ հայախոս չլինի: Հայ ընտանիքները ջանքեր են գործադրում անխառն պահելու ընտանիքը, ինչպես նաև իրենց զավակներին լավ հայ դաստիարակելու համար: Թեև համայնքի անդամներն անխտիր հիանալի տիրապետում են պարսկերեն լեզվին, սակայն իրար հետ հաղորդակցվելիս, առավել ևս ընտանիքում, նրանք երբեք չեն գործածում այդ լեզուն: Իրանում հայ ընտանիքների լեզուն դա հայերենն է: Այլ

կերպ ասած, համայնքում օտարախոսություն գոյություն չունի (մի բան, որ մեծ տարածում ունի, օրինակ, ԱՄՆ-ի Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների հայության մոտ): Իրանում պարսկալեզու հայեր համարյա չկան: Համայնքում հայկական ինքնության մակարդակը չափազանց բարձր է: Հայկական ինքնության և առհասարակ հայապահպանության հարցերում վտանգներ գոյություն չունեն: Չկան նաև դավանափոխ եղած (իսլամն ընդունած) հայեր:

Իրանահայությունը դարեր շարունակ սրտանց կապված է եղել Իրանի հետ, սակայն իր ազգային ինքնության բերումով սիրել է և այսօր էլ սիրում է Հայաստանը, այն համարելով իր հայրենիքը: Նույնիսկ արևմուտքի երկրներ արտագաղթած իրանահայերը շարունակում են ջերմ սիրով սիրել իրենց «երկրորդ հայրենիքը»՝ Իրանը, երբեք չխզելով իրենց հոգևոր կապերը նրա հետ:

Հայերն Իրանում լավ համբավ են վայելում թե՛ իշխանությունների և թե՛ ժողովրդի մոտ: Ընդ որում, թե՛ իշխանությունները և թե՛ հասարակությունը բարյացակամորեն և հարգանքով է տրամադրված իրանահայերի նկատմամբ, ինչը պայմանավորված է հայերի վաստակով՝ նրանց վստահելի և օրինապահ վարքագծով, նաև էթնոդավանական փոքրամասնությունների հարցում վարչակազմի հանդուրժողական քաղաքականությամբ: Դրա ցայտուն ապացույցն է այն իրողությունը, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Իրանում հակահայկական որևէ դրսևորում տեղի չի ունեցել: Այդ երկրում հայերի վերաբերյալ դրական կարծիքը ձևավորվել է դարերի ընթացքում: Նրանք հայտնի են իրենց աշխատասիրությամբ, պրոֆեսիոնալ հմտություններով որպես լավ արհեստավորներ ու հմուտ մասնագետներ՝ ճարտարապետներ, ճարտարագետներ, բժիշկներ, իրավաբաններ, գիտնականներ և այլն, իրենց գրագիտության մակարդակով, նաև իրենց ուղղամտությամբ, պարտաճանաչությամբ, օրինապահ վարքով: Իրանցիների կողմից հայերն ընկալվում են որպես վստահելի և հավատարիմ գործընկերներ: Իշխանությունները բարձր են գնահատում հայերի ներդրած լուծման հատկապես երկրի տնտե-

սության տարբեր ոլորտներում և առհասարակ Իրանի բազմակողմանի զարգացման գործում:

Իրանի Իսլամական Հանրապետությունում կրոնական փորձամանությունները, այդ թվում նաև հայերը, զորակոչվում են բանակ: Իրանական զինված ուժերի շարքերում ևս հայ զինվորները բազմիցս ապացուցել են, որ իրենք անձնագոհ կերպով պատրաստ են իրենց քաղաքացիական պարտքը կատարելու հյուրընկալ երկրի ու նրա ժողովրդի նկատմամբ: Մասնավորապես 1980-1988 թվականների Իրան-իրաքյան պատերազմի տարիներին հայերը տարբեր ազգությունների իրանցիների հետ կողք-կողքի մարտնչել են թշնամու դեմ և տվել զոհեր: Իրաքի զինված ուժերի կողմից Թեհրան, Թավրիզ, Ուրմիա, Ահվազ, Աբադան և իրանական այլ քաղաքների ռմբակոծության և հրթիռակոծության հետևանքով ևս նահատակվել են բազմաթիվ հայեր: Ռազմաճակատներում արյուն թափած հայ զինվորների նվիրվածությունը իրանական հողին էլ ավելի է մեծացրել իշխանությունների հարգանքը իրանահայության նկատմամբ: Տարբեր առիթներով Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչները մինչև օրս այցելություններ են կատարում Իրանին պարտադրված պատերազմում զոհված հայ նահատակների ընտանիքներին, իրենց հարգանքի տուրքը մատուցելով նրանց հիշատակին:

Իրանական իշխանությունների կողմից մեծ գնահատանքի է արժանանում նաև հայերի ներդրած լուծման պատերազմի ժամանակ թիկունքային աշխատանքներում, երբ հայ գործարանատերերը, ճարտարագետներն ու բանվորները ռազմաճակատի կարիքների համար տալիս էին ռազմական նշանակություն ունեցող արտադրանք, գանազան պահեստամասեր և այլն:

Պատերազմի թեժ օրերին Թեհրանի հայոց թեմի թեմական խորհուրդը հրապարակեց հաղորդագրություն, որտեղ ասվում էր, որ հայ համայնքը հայտնում է իր պատրաստակամությունը օժանդակելու պատերազմի ճակատներին: Ըստ այնմ ստեղծվեց մի հատուկ կառույց՝ «Պատերազմի օժանդակման հայկական շտաբ» անունով, որը

լծվեց եռանդուն գործունեության ռազմաճակատներին նյութական և այլ կարգի օգնություն ցուցաբերելու համար: Բացի այդ, պատերազմի տարբեր ճակատներ գործուղվեցին հարյուրավոր հայ մասնագետներ ու արհեստավորներ՝ բժիշկներ, ճարտարագետներ, մեխանիկներ և այլն, որոնց ջանքերով ստեղծվեցին դաշտային շարժական հիվանդանոցներ, նորոգվեցին ռազմական տեխնիկայի զանազան տեսակներ և այլն:

Ինչ վերաբերում է համայնք-պետություն հարաբերություններին, ապա դրանք պաշտոնական են և հիմնված փոխադարձ հարգանքի և գործակցության վրա: Կարելի է նույնիսկ անվարան ասել, որ համայնքի և պետական շրջանակների միջև գոյություն ունեն բավականին սիրալիր ու քաղաքավարի հարաբերություններ:

Առհասարակ պետք է հատուկ շեշտել, որ իրանահայ համայնքի անդամներն Իրանում երբեք գաղթականի զգացողություն չեն ունեցել: Համայնքի մեր հայրենակիցները իրենց զգում են որպես Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ և պետական մարմինները նրանց այդպես էլ ընկալում են: Հայերն Իրանում որևէ քաղաքական պահանջ չունեն և օգտվում են էթնոդավանական փոքրամասնություններին վերաբերող բոլոր իրավունքներից: Սակայն միևնույն ժամանակ պետք է խոստովանել, որ նրանք որևէ լուրջ լծակ չունեն երկրում քաղաքական զարգացումների վրա ինչ-որ չափով ազդելու համար: Բանակի հրամանատարական կազմում և պետական ապարատում ևս հայեր չկան, թեև երկրի սահմանադրության մեջ կրոնական փոքրամասնությունների համար այդ առթիվ որևէ արգելք կամ սահմանափակում արձանագրված չէ: Սակայն դա կատարվում է չգրված օրենքներով: Հենց այդ պատճառով էլ ԻԻՀ արդի հասարակական-քաղաքական կյանքում կարելի է ասել իսպառ բացակայում են հանգուցային դեր ունեցող հայերը:

Հայ համայնքը հատկապես տնտեսական բնագավառում կատարելապես ինտեգրված է իրանական հասարակության մեջ: Չնայած հայերն առօրյա և գործնական կյանքում տեղացիների հետ խնդիրներ չունեն, սակայն հիմնականում գերադասում են շփումները հայ-

րենակիցների հետ: Մինևույն ժամանակ համանքում համարյա չկան մարդիկ, ովքեր դուրս են հայկական շրջանակներից: Բայց և առկա է մարդկանց մի խումբ կամ հավաքականություն, որը պասիվ է ազգային գործերում կամ իրեն հեռու է պահում ազգային կյանքից: Իսկ ընդհանրապես իրանահայերն աչքի են ընկնում ազգային բարձր գիտակցությամբ: Ազգային կյանքում երիտասարդության ներգրավվածությունը բավականին ընդգրկուն է:

Իրանում, ինչպես և Սփյուռքի ցանկացած երկրում, անկախ Հայաստանի գաղափարը ազգապահպանության կարևորագույն կռվանն է: Իրանի` Հայաստանին անմիջական սահմանակից լինելը անկասկած հայապահպանության համար լուրջ կռվան է հանդիսանում:

Ընդամենը մի քանի տարի առաջ իրանահայությունը հնարավորություն չունեց Հայաստանից ստանալու լիարժեք տեղեկատվություն, քանի որ երկրում արգելված էր արբանյակային հեռուստատեսության հաղորդումները: Դա պատճառաբանվում էր «օտար մշակույթի և ազդեցությունների ներխուժումը» կանխելու անհրաժեշտությամբ: Սակայն չնայած այդ արգելքին, քաղաքներում աստիճանաբար տարածվեց արբանյակային ալեհավաքների օգտագործումը: Ներկայումս հայ համայնքը առանց որևէ խոչընդոտի, արբանյակային ալեհավաքներով կարողանում է դիտել Հայաստանի հեռուստատեսության Հ1, Արմենիա, Շանթ, Կենտրոն հեռուստակենտրոնների հաղորդումները: Սակայն ավելորդ չէ նշել, որ իրանահայերի շրջանում երբեմն դժգոհություններ են հնչում առանձին հաղորդումների որակի, սփյուռքահայ կյանքի ոչ ճիշտ մեկնաբանման, հայաստանյան կյանքի բացասական իրողությունների մասին և այլն: Իրանի հայ մամուլում առաջարկներ են արվում, որ սփյուռքի հայկական համայնքների մասին ընդհանրական և ստույգ տեղեկատվություն ստանալու համար հայկական հեռուստաընկերությունները և առհասարակ զանգվածային լրատվության միջոցները Իրանում ունենան սեփական թղթակիցներ: Ցանկություն է հայտնվում նաև, որ հեռուստաընկերությունները Իրանի հայ համայնքի, նրա անցյալի և ներկայի վերաբերյալ պատրաստեն ամբողջական և բարձրորակ տեսանյութեր,

պատմա-մշակութային բնույթի հաղորդումներ, Իրանի վերաբերյալ գիտակ մարդկանց ելույթներ և այլն:

Իրանում գործում է նաև ռադիոժամ, որի տնօրենն է Մաջիդե Ջաֆարին: Ի թիվս իրանական լուրերի, ռադիոժամը ձայնասփռում է նաև տեղեկություններ Հայաստանից:

Այսպիսով իրանահայ համայնքը Հայաստանի մասին տեղեկատվություն է ստանում հիմնականում հետևյալ աղբյուրներից, արբանյակային հեռուստաընկերություն, Թեհրանի հայկական ռադիոժամ, Հայաստանի ռադիոյի արտասահմանյան հաղորդումներ, իրանահայ և սփյուռքահայ մամուլ, Հայաստանից ստացվող մամուլ, համացանց և այլն:

Խոսելով Իրանի հայ համայնքի մտավոր և տնտեսական ներուժի մասին պետք է նշել հետևյալը. մտավորականները կազմում են համայնքի միայն մի փոքր մասը (ուսուցիչներ, բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագետներ, գրողներ, համալսարանական դասախոսներ և այլն): Ակադեմիական գիտությամբ զբաղվողները եզակի անհատներ են: Տարբեր մասնագիտություններ ունեցողների մեջ քիչ չեն Հայաստանում կամ արտերկրում ուսանածները: Չնայած նշված բնագավառներում իրենց փոքրաթվությանը, Իրանում հայերը նշանակալի կշիռ ունեն նաև գիտության, ճարտարապետության, ճարտարագիտության, բժշկության, մշակութային ու կրթության բնագավառներում: Հայերի հիմնական զանգվածը արհեստավորներ են, սպասարկումների և արտադրության բնագավառների աշխատողներ, առևտրականներ, շինարարներ և այլն: Պետական ծառայությունը չի հրապուրում հայ համայնքի անդամներին: Մանավանդ որ, ինչպես նշվել է վերևում, պետական ծառայության մեջ մտնելու ճանապարհին կրոնական փոքրամասնությունների առջև առկա են որոշակի դժվարություններ ու սահմանափակումներ: Հայ համայնքի ճնշող մեծամասնությունը պատկանում է այսպես կոչված միջին խավին:

Որոշակի վիճակագրություն գոյություն չունի, թե համայնքի հայերի տասարդների քանի՞ տոկոսն է բարձրագույն կրթություն ստանում: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իրանում

բարձրագույն կրթությունը բավականին թանկ է, իսկ բուհերում մրցույթը չափազանց մեծ, մյուս կողմից նաև հաշվի առնելով Իրանի ներկա տնտեսական դժվարությունները, պետք է ենթադրել, որ նյութապես ոչ այնքան բարեկեցիկ ընտանիքները զրկված են իրենց երեխաներին բարձրագույն կրթության տալու հնարավորությունից:

Առհասարակ պետք է նշել, որ Իրանում միջնակարգ դպրոցն ավարտողների և բուհեր դիմողների թվական կազմի միջև հսկայական տարբերություն կա: Ուստի նույնիսկ շատ ընդունակ և տաղանդավոր հայ երիտասարդների չի հաջողվում ընդունվել պետական բուհեր: Այդ խնդիրը չի վերաբերում լոկ միայն հայերին, այլ ունի համապետական նշանակություն, քանի որ շատ իրանցի երիտասարդների համար ևս բավականին դժվար է հաղթահարել մրցույթի պայմանները և ընդունվել համալսարաններ: Այդ օրախնդիր հարցին ինչ-որ չափով լուծում տալու համար, Թեհրանում և այլ քաղաքներում կառավարությունը որոշեց բաց անել համալսարանների մի ցանց, որոնք կոչվում են «Իսլամական ազատ համալսարաններ»: Սակայն, օրինակ, Թեհրանում գործող «Իսլամական ազադ» համալսարանը, որն ունի նաև հայոց լեզվի և գրականության բաժին և որտեղ սովորում են զգալի թվով հայեր, իր որակով գիջում է պետական բուհերին:

Հարկ է նաև նշել, որ համալսարանավարտ հայ երիտասարդներից շատերը, աշխատատեղերի սահմանափակ լինելու պատճառով կանգնում են աշխատանք գտնելու մեծ դժվարության առջև:

Այդ բոլորով հանդերձ, վերջին քսան-քսանհինգ տարիներին հայ երիտասարդները կրթության նկատմամբ շատ ավելի մեծ հակում ունեն, և ավելի շատերն են բարձրագույն կրթություն ստանում, քան 1980-ական թվականներին էր, երբ հայերն ավելի էին հակված դեպի արհեստները: Հատկապես հետհեղափոխական շրջանում եղած տնտեսական դժվարությունները, 1980-1988 թթ. Իրան-իրաքյան ծանր պատերազմն և այլն երկրում ստեղծել էին մի վիճակ, երբ առկա նյութական խնդիրներն ավելի էին կարևորվում, քան ուսումն ու կրթությունը:

Իրանահայ երիտասարդության մոտ բնական մղում կա բարձրագույն կրթություն ստանալու Հայաստանում: Ներկայումս ոչ միայն մեծ թվով իրանահայեր, այլև իրանցիներ սովորում են Հայաստանի տարբեր ուսումնական հաստատություններում կամ ընդգրկված են հետհամալսարանական կրթական համակարգի մեջ: Սակայն դա ևս կապված է որոշակի դժվարությունների, հատկապես տնտեսական-ֆինանսական բնույթի բարդությունների հետ:

Իրանի հայ համայնքին բնորոշ է տնտեսական խոշոր ներուժի առկայությունը: Այդ համայնքի տնտեսական հիմք են հանդիսանում նախ և առաջ ապրանք արտադրող ընկերությունները և զանազան ծառայություններ առաջարկող ֆիրմաները, որոնք բավարար ակտիվությամբ գործում են արդյունաբերության ու ծառայությունների համարյա բոլոր բնագավառներում: Ներկայումս Իրանում գործում են մոտ 200 նման ձեռնարկություններ: Հայ ապրանք արտադրող ձեռնարկությունները միավորված են «Իրանի հայ արհեստավորների միության մեջ»: Այս միությունը հիմնադրվել է դեռևս 1965 թվականին իրանահայ հայտնի ճարտարագետ Թովմաս Թովմասյանի ջանքերով: Միությունը սկզբում կոչվել է «Հայ ճարտարապետների և արհեստավորների միություն», իսկ 1985 թ. այն վերանվանվել է «Իրանահայ արհեստավորների միության»: Միության նպատակն է եղել օտարազգի արհեստավորների հետ կապ հաստատելը, հայ և իրանցի արհեստավորներին մերձեցնելը և այլն:

Ներկայումս այդ միությունը կոչված է նպաստել Իրանի հայ արդյունաբերողների շահերի պաշտպանությանը ներքին շուկայում, ինչպես նաև բարձր մակարդակի վրա պահելու նրա կազմի մեջ մտնող ընկերությունների մրցողունակությունը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում «Իրանահայ արհեստավորների միությունը» Թեհրանի «Արարատ» մարզավանում կազմակերպում է տարեկան մեծ ցուցահանդեսներ, որոնց ընթացքում մոտ 250 ընկերություններ ցուցադրում են իրենց արտադրանքը: Հայաստանի խորհրդարանական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Իրանի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինժադը ասել

է, որ հայ արդյունաբերողների ցուցահանդեսը վկայում է, որ հայ համայնքը դրական ներդրում ունի երկրի զարգացման մեջ: Այդ ցուցահանդեսներից մեկն այցելելուց հետո Իրանի իսլամական խորհրդարանի նախկին նախագահ Նաթեղ Նուրին հայտարարել է. «Ես պատանեկության տարիներից շփվել եմ ձեր համայնքի հետ և պետք է նշեմ, որ դուք ունեք երկու առանձնահատկություն. նախ և առաջ դուք լավ և հմուտ վարպետներ եք, և թողարկում եք միայն որակյալ արտադրանք և երկրորդ դուք անկեղծ հուսալի համայնք եք»:

«Իրանահայ արհեստավորների միության» երկու ղեկավարներ՝ Հրայր և Նորայր Շահբազյան եղբայրները անդամակցում են «Ասիական ինդուստրիալ խմբի» (AIG) կամ «Ասիական դաշինքի» խորհրդին:

Իրանում հայ ապրանքարտադրողների դիրքերն առանձնապես ուժեղ են մեքենաշինության մեջ, օրինակ, կոմպրեսորների, սառնարանային սարքավորումների, հաստոցաշինության, էլեկտրամեքենաշինության, ինչպես նաև շինարարական սարքավորումների, քիմիական ու նավթաքիմիական սարքավորումների արտադրության բնագավառում: Առկա են նաև մի շարք այլ բնագավառներ, որտեղ Իրանի հայ համայնքի գործարար մարդիկ ձեռք են բերել մեծ հաջողություններ: Այդ բնագավառներն են սննդամթերքի, կահույքի, ռետինի, կոշիկի, հագուստեղենի և տրիկոտաժի արտադրությունը, բոլոր տեսակի մակնիշների ավտոմոբիլների վերանորոգումն ու վերասարքավորումը, առևտուրը, հյուրանոցային և զբոսաշրջիկային բիզնեսը, երկրի ներսում և արտասահմանում բեռների տեղափոխումը, մետաղների հատուկ մշակումը և այլն:

Հայ գործարարները ցավով նշում են, որ Հայաստանի և Իրանի միջև տեխնոլոգիական համագործակցությունը զարգանում է ծայրահեղ դանդաղ տեմպերով, որ Հայաստանի մի շարք ձեռնարկությունների արտադրանքը լավ սպառում կարող էր գտնել իրանական շուկայում:

Հատուկ պետք է շեշտել, որ հայ ձեռնարկատերերն իրենց կարելին անում են համայնքի կարիքավորներին սոցիալական բնույթի օգնություն ցուցաբերելու համար, ինչպես նաև չեն զլանում աջակցել

իրենց հայրենակիցներին Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Ներհամայնքային սոցիալական և հումանիտար օգնության համակարգը իր գործունեության մեջ առաջնորդվում է հետևյալ կարգախոսով. «Հայ համայնքում կարող են լինել աղքատներ, բայց երբեք չպետք է լինեն մուրացկաններ»:

Իրանի ներկայիս տնտեսական դժվարին ու անկայուն վիճակի պայմաններում համեմատական առումով հայ անգործների թիվն ավելի քիչ է, քան երկրի մյուս ժողովուրդներինը: Շնորհիվ այն բանի, որ հայերի մեծագույն մասը տիրապետում է զանազան արհեստների, համեմատաբար հեշտությամբ է գտնում աշխատանք:

Ինչպես նշել ենք վերևում, աշխատանք գտնելու դժվարության առջև հիմնականում կանգնած են բարձրագույն կրթություն ունեցող հայ երիտասարդները, մասնավոր նրանք, ովքեր իրենց կրթությունը ստացել են արտերկրում, այդ թվում նաև Հայաստանում: Բանը նրանումն է, որ ըստ իրանական օրենքների, արտասահմանյան բուհերում ձեռք բերած դիպլոմը Իրանում վերահաստատման կարիք ունի, որը կապված է բարդ վարչարարական գործընթացների ու քննությունների հետ: Բացի այդ, Իրանի Իսլամական Հանրապետությունում չգրված օրենքներով այլադավան անձինք անուղղակի ձևով մերժվում են պետական հիմնարկություններում պաշտոն ստանալու հնարավորությունից: Պետական կառույցներում ցանկացած ազգության ու կրոնի պատկանող աշխատանք որոնողը պարտավոր է լրացնել իր աշխատանքային գործունեության վերաբերյալ հատուկ հարցաբան, որտեղ հատուկ կետ կա նաև կրոնական պատկանելության մասին: Երբ այդ հարցաբանն ընդունող պաշտոնյան տեսնում է, որ դիմողը մահմեդական չէ, գործին ընթացք չի տալիս կամ ինչ որ պատճառաբանությամբ մերժում է: Այդ մոտեցման դեմ Իրանի իսլամական խորհրդարանի հայ պատգամավորները թեև փորձել են «ձայն բարձրացնել», սակայն այդ փորձերն անցել են ապարդյուն⁶⁴:

⁶⁴ Ահարոնյան Լևոն, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1192:

Շատ հազվագյուտ, կարելի է նույնիսկ ասել, բացառիկ դեպքերում է հաջողվում հայ մասնագետներին աշխատանքի ընդունվել պետական կառույցներում: Ուստի հաճախ է պատահում, որ բարձրագույն կրթությամբ հայ ճարտարապետը, ճարտարագետը, տնտեսագետը, ֆիզիկոսը և այլն, զբաղվում է վարորդությամբ, կամ իր մասնագիտությունից հեռու ինչ-որ գործով: Հենց այդ պատճառով արտերկրում համալսարանավարտ հայ երիտասարդներից շատերը ուսումը ստանալուց հետո գերադասում են չվերադառնալ Իրան, իսկ Իրանում համալսարանավարտներից շատերը, չունենալով այլ երկրնտրանք, լքում են երկիրը և դիմում արտագաղթի:

Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետությունում տնտեսական վիճակի անկայունության և դրա հետ կապված բնակչության կենսամակարդակի անկման պատճառով երիտասարդ ընտանիքներն աշխատում են քիչ զավակներ ունենալ, որն անկասկած բացասաբար է ազդում հայ համայնքի աճի վրա: Առհասարակ Իրանի հայ համայնքում ամուսնությունները համեմատաբար քիչ են: Հայ երիտասարդների համար դժվար է դարձել ընտանիք կազմելը: Դրա պատճառներից մեկն էլ բնակարանների թանկությունն է:

Կասկածից վեր է, որ ինչպես Հայաստանը կարիք ունի սփյուռքի օգնությանը, այնպես էլ սփյուռքը Հայաստանի: Իրանահայությունը Հայաստանից առաջին հերթին ակնկալում է բարոյական աջակցություն, որը կնպաստեր հայապահպանության գործին, երիտասարդության հայեցի դաստիարակությանը, մասնագետների պատրաստմանը:

Համայնքը սերտ կապեր ունի Հայաստանի հետ: Բուն իրանցիներից բացի մեծ թվով հայ զբոսաշրջիկներ են այցելում Հայաստան: Իրանահայերի մեծ մասը հետևում է հայաստանյան իրադարձություններին: Հատկապես համայնքի մտավորական խավը ոչ միայն սևեռուն հետաքրքրություն է դրսևորում Հայաստանում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ, այլև ձգտում է դառնալ դրանց մասնակիցը: Իրանահայերը, օրինակ, ակտիվ մասնակցություն են ցուցաբերում Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովներին, Հայաստանում նշվող պետական տոներին, զանազան գիտա-կրթական խորհր-

դաժողովներին և այլն: Սակայն հարկ է նշել, որ Հայաստանում կան իրողություններ, որոնք բացասաբար են ընկալվում իրանահայության շրջանում: Տարբեր առիթներով Հայաստանում բախվելով վարչական և սոցիալական խնդիրների, կամ բիզնեսի բնագավառում կրելով անհաջողություն, իրանահայերից շատերը լավագույն դեպքում Հայաստանը համարում են դեռևս կայացման գործընթացում գտնվող երկիր, իսկ վատագույն դեպքում հիասթափվելով կամ փակում են իրենց գործը և կամ հեռանում Հայաստանից:

Հայերը, ինչպես նշվեց, թեև ինտեգրվել են իրանական հասարակության մեջ, սակայն երբեմն իրենց հեռու են պահում իսլամական միջավայրից: Իրանական հասարակայնության ներսում հայերի շփումները հիմնականում աշխատանքային են, իսկ կենցաղային և այլ շփումները նվազագույն են:

Ճիշտ է, աշխատանքային գործունեության ընթացքում այդ երևույթը բացակայում է, սակայն ընտանեկան հարաբերությունների և այլ կարգի շփումների ընթացքում դա ակներև է: Այն հարցին, թե դա ինչի արդյունք է, կարելի է պատասխանել, որ կրոնական տարբերության, բարքերի և սովորությունների առանձնահատկությունների և այլն:

Իրանահայերը երկրի ներքաղաքական անցուդարձերին նվազագույն մասնակցություն են ունենում: Կարելի է նույնիսկ ասել, որ նրանք նման հարցերում դրսևորում են ծայրահեղ զգուշություն, մտավախություն ունենալով, որ իրենց ակտիվությունը կարող է սխալ մեկնաբանության արժանանալ թե՛ իշխանությունների և թե՛ իրանցիների կողմից:

Իրանահայերը մշակութային և այլ բնագավառներում համագործակցում են ԻԻՀ այլ կրոնական փոքրամասնությունների՝ զրադաշտականների, ասորիների և հրեաների, ինչպես նաև մահմեդական իրանցիների հետ: Այդ առումով ևս նրանք լիովին ներգրաված են իրանական հասարակության մեջ: Ներկայումս, թվում է, թե Իրանի մյուս էթնոդավանական փոքրամասնությունների համեմատ, հայ համայնքը ավելի շահեկան դիրքերում է գտնվում: Դա պատճառաբանվում է մի շարք գործոններով. օրինակ, կրոնական մյուս փոքրամաս-

նությունների համեմատ, որոնք խորհրդարանում ունեն մեկական պատգամավոր, ինչպես նշվել է վերևում, հայ համայնքին հատկացված է երկու տեղ: Իրանի հայերը, ասորիների և գրադաշտականների հետ համեմատած, պետականություն ունեցող համայնք են, ընդ որում, նրանց հայրենիքը Իրանի հետ սահմանակից երկիր է և նրա հետ գտնվում է բարիդրացիական հարաբերությունների մեջ: Մինչդեռ իրողությունը միանգամայն այլ է հրեա կրոնական փոքրամասնության համար: Ինչպես հայտնի է, ԻԻՀ պաշտոնական քաղաքականությունը Իսրայել պետության նկատմամբ խիստ թշնամական է:

Առհասարակ պետք է նշել, որ «կրոնական փոքրամասնություններ» շարքում հրեաները զբաղեցնում են յուրահատուկ տեղ: Ինչպես հայերը, հրեաները ևս Իրանում բնակվելու հազարամյակների պատմություն ունեն: Մինչև իսլամական հեղափոխությունը հրեաների թիվը երկրում 80 հազարի էր հասնում: 1979 թվականից հետո իսլամական իշխանությունը իրեն հռչակեց սիոնիզմի դեմ պայքարի համաշխարհային առաջամարտիկ, իսկ Իսրայել պետությունն էլ դադարեց ճանաչվել որպես այդպիսին: Այս հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չունենալ պետություն-համայնք հարաբերությունների վրա: Իշխանությունները հրեական համայնքի պատասխանատուներին հասկացրին, որ իրենց իրավունք են վերապահում համայնքին դիտարկել որպես միջազգային դրամատիրության և ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության ու իսրայելական ՄՈՍԱԴ-ի հինգերորդ շարասյուն: Այդուհանդերձ պետք է նշել, որ իսլամական հանրապետությունը հրեական համայնքի նկատմամբ սկզբից ևեթ սկսեց վարել և այժմ էլ վարում է բավական հանդուրժողական, հավասարակշիռ մոտեցում՝ վերջինս բխեցնելով իսլամի գաղափարախոսությունից և ոչ թե քաղաքականությունից: Ըստ այնմ՝ հրեաները դիտարկելի են, ինչպես և քրիստոնյաներն ու գրադաշտականները, որպես «Սուրբ Գիրք» ունեցող կամ գրոց ժողովուրդ («աիլ ալ-քիթաբ»), որը դավանում է միաստվածություն և ունի ընդհանուր մարգարեներ: Իսկ Իսրայելը Թեհրանի համար հրեա ազգի և վերջինիս իղծերի հետ կապ չունեցող ծայրահեղ ազգայնամոլական, ֆաշիս-

տական մի կազմավորում է, որն ընդամենը գործուն միջոց է միջազգային դրամատիրության և կայսերապաշտության ծեռքում:

Միանգամայն պարզ է, որ Իրանից դուրս հրեական համայնքը ընկալվում է որպես «պատանդ» հանրույթ:

Ինչ վերաբերում է զրադաշտական փոքրամասնությանը, ներկայումս պաշտոնապես զրադաշտականությունը ևս կոչվում է «Սուրբ գիրք» ունեցող կրոն՝ ի դեմս «Ավեստայի»: Ջրադաշտականությունը դասելով այդ կատեգորիային, ԻԻՀ ղեկավարությունը դրանով իսկ հաստատեց, որ Իրանի պատմությունը դիտարկում է անընդհատ (ոչ դիսկրետ) գործընթաց պետականության ունիվերսալ ընկալման տիրույթում: Սակայն ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ 1979 թ. հեղափոխությունից հետո զրադաշտականների համայնքը միշտ էլ եղել է ընդդիմադիր հայացքների տեր մի հավաքականություն: Հենց այդ պատճառով իրանական իշխանությունները, որոնք իրենց ուշադրության կենտրոնում են պահում երկրի բոլոր չորս «կրոնական փոքրամասնություններին», առավել ուշադիր են իրենց «արիական անցյալը» փառաբանող զրադաշտականների և հրեաների հանդեպ՝ այդ երկու խմբերից էլ սպասելով հավանական վտանգների հնարավորություն, որոնց գրգռիչ աղբյուրը նույնն է՝ ԱՄՆ և Իսրայելը:

Այսպիսով, վերը նշված իրողությունների առումով, Իրանի հայ համայնքն անկասկած գտնվում է առավել բարենպաստ պայմաններում: Իրանի հայ համայնքում, ինչպես առհասարակ ողջ Սփյուռքում, չափազանց մեծ է հայ Առաքելական եկեղեցու դերը: Վերջինս իր բուն գործառույթներին զուգահեռ, բացառիկ կարևոր դեր է խաղում հայապահպանության, հայ ինքնության անաղարտ պահպանման և հայ համայնքի հայրենասիրական ոգին բարձր պահելու գործում: Եկեղեցին նաև կապող օղակ է պետության և համայնքի միջև: Իրանում գոյություն չունի համայնքային գործունեության որևէ ոլորտ, որտեղ հայ Առաքելական եկեղեցին ակտիվ մասնակցություն չունենա: Հայ եկեղեցու այդ կարգավիճակը, բնականաբար, ծեռնտու է նաև իրանական իշխանություններին, քանի որ դա նրանց հնարավորությո-

յուն է տալիս ավելի արդյունավետ կերպով վերահսկել համայնքային գործունեությունը:

Իրանում հայ եկեղեցու սպասավորները ժամանակ առ ժամանակ հանդիպումներ են ունենում Իրանի այլ կրոնադավանական ներկայացուցիչների հետ, քննարկում են համագործակցության, միջկրոնական ու միջդավանական երկխոսության, նաև կրոնական և էթնիկ հանդուրժողականությանն առնչվող հարցեր:

Իրանահայ համայնքում եկեղեցու դերը առձնանահատուկ է: Այդ համայնքում, գուցե և Սփյուռքի մի շարք այլ երկրներում, եկեղեցին թերևս նախ ազգային կառույց է և հետո նոր միայն հոգևոր: Ինչպես հայտնի է 2001 թ. Հայաստանում և Սփյուռքում մեծ շուքով նշվեց Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Հենց այդ օրերին ԻԻՀ նախագահ Սեյյեդ Մոհամմադ Խաթամին հանդես էր եկել առաջարկով գումարելու համաշխարհային միջկրոնական սեմինար «Քաղաքակրթությունների երկխոսություն» թեմայով: Այդ պատճառով Իրանի կառավարությունը, ցանկանալով հայ Առաքելական եկեղեցու օրինակով ցուցադրել երկու կրոնների՝ իսլամի և քրիստոնեության միջև երկխոսության հնարավորությունը, Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդին հուշել էր հնարավորին չափ բարձր շուքով տոնել այդ հիշարժան տոնը և տոնակատարություններին մասնակցելու համար Անթիլիասից հրավիրել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ին: Նշված տոնակատարությունը ղեկավարելու նպատակով Վեհափառ Հայրապետը 2001 թ. հուլիսին ժամանեց Թեհրան: Ինչպես հայտնի է, կաթողիկոսը մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրոնական երկխոսության համոզված կողմնակիցներից ու աջակիցներից է: Հուլիսի 16-ին Արամ Ա կաթողիկոսը մասնակցեց «Մահմեդականների ու հայ քրիստոնյաների համակցությունը» թեմայով գումարված սեմինարի բացման արարողությանը: Իր այցի շրջանակներում նա հանդիպումներ ունեցավ Իրանի մի շարք պաշտոնատար անձանց և բարձրաստիճան հոգևորականների հետ, այդ թվում նաև ԻԻՀ նախագահ Սեյյեդ Մոհամմադ Խաթամիի հետ, որը հանդիպման ընթացքում դրվատանքի խոսքեր ասաց իրա-

նահայերի վերաբերյալ: Մասնավորապես վկայակոչելով անցյալի պատմությունը, նա նշեց, որ հայերը միշտ եղել են Իրանի մուսուլման ժողովրդի կողքին:

Վեհափառը հանդիպում ունեցավ նաև իսլամական խորհրդարանի նախագահ հոջաթ-օլ-էսլամ Մեհդի Քյարրուբիի հետ, որը նույնպես գովասանքով արտահայտվեց իրանահայության մասին: Նա նշեց, որ հայերը երկրի զարգացման բոլոր բնագավառներում ունեցել են իրենց ուրույն և նպաստավոր դերը:

Հուլիսի 22-ին «Արարատ» մարզավանի «Սասունցի Ղավիթ» սրահում տեղի ունեցավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված տոնակատարության բացման հանդիսավոր արարողությունը:

Թեհրանում իր այցի օրերին Արամ Ա Վեհափառի հանդիպումների ժամանակ քննարկման կարևոր նյութերից էր քրիստոնյաների և մուսուլմանների միջև կրոնական երկխոսության հարցը: Արամ Ա կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ նաև իրանական մի շարք թերթերի թղթակիցների ու խմբագրակազմի հետ և տվեց մամլո ասուլիս, որի ընթացքում նա անդրադարձավ հայ-իրանական դարավոր բարեկամությանը, Լիբանան-Իրան, Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին և այլ օրախնդիր հարցերի: Վեհափառը մասնավորապես ընդգծեց, որ Իրանում հայ համայնքը մեծ ազատություններ է վայելում և օգտվում է իրանական կառավարության ու ժողովրդի բարյացակամ վերաբերմունքից: Որ հայերն Իրանում ունեն իրենց եկեղեցիները, դպրոցները, միություններն ու կազմակերպությունները, իրենց մամուլը և ամենակարևորը լավագույնս կազմակերպված համայնքային կյանք, որի համար իրանահայությունը իր խորին երախտագիտությունն է հայտնում Իրանի իշխանություններին և իրանական բարի ու ազնիվ ժողովրդին:

Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո Իրանը առաջին պետություններից մեկն էր, որը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի անկախ գոյության իրավունքը և նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Այսպիսով հիմք դրվեց երկու

հարևան և ինքնիշխան պետությունների միջև պաշտոնական հարաբերություններին, որոնք բոլոր նախադրյալներն ունեին արագ և վերընթաց գծով զարգանալու համար: Դրա երաշխիքը նախ և առաջ կայանում էր նրանում, որ հայ-իրանական բարեկամական հարաբերություններն ունեին լավ պատմական հիմք: Այնուհետև այդ պետությունների միջև գոյություն չունեին որևէ տարածքային կամ էթնիկական հիմնախնդիր, վեճ և այլն:

Հայ-իրանական հարաբերությունների վերընթաց զարգացման գործում չափազանց կարևոր դերակատարություն ունեին Իրանի հայ համայնքը, որը տարիների ընթացքում չզլացավ իր եղբայրական նյութական ու բարոյական օգնությունը ցուցաբերելու իր նորանկախ հայրենիքին: Իրանահայության համար Հայաստանը նախ պետականություն է, ազգային հպարտության ու ներշնչանքի աղբյուր: Պատահական չէ, որ Հայաստանի անկախության ծեռք բերումից հետո իրանահայության նոր սերնդի ներկայացուցիչներից շատերը, որոնց նախնիները դարեր շարունակ ապրել են Իրանում, մշտական բնակության համար տեղափոխվեցին Հայաստան: Ժամանակին իրանահայությունը մեծ խանդավառությամբ ընդունեց Սփյուռքի նախարարության ստեղծումը, հանձինս նրա տեսնելով մի կառույց, որի միջոցով ոչ միայն հեշտանում էին շփումները հայրենիքի հետ, այլև Սփյուռքը դառնում էր հայրենիքի սևեռուն ուշադրության կենտրոն պետական մակարդակով:

Դեռևս 1991 թ., Հայաստանի անկախության հռչակումից անմիջապես հետո, ստեղծվեց Հայ գործարարների միջազգային համագումարը, որը կրում էր «Հայ գործարարների ֆորում» անվանումը: Նրա նպատակն էր աշխարհի տարբեր երկրներին ծանոթացնել Հայաստանի արդյունաբերության ու տնտեսության հնարավորությունների հետ, ինչպես նաև Հայաստանը ներգրավել միջազգային առևտրաարդյունաբերական ոլորտում: Ֆորումն ունեին նաև իր ներկայացուցիչներն Իրանում: Այդ կառույցի անդամ իրանահայ գործարարները (թվով 54 հոգի) լծվել էին եռանդուն գործունեության ի շահ Հայաստանի: Իրանահայերից ֆորումի փոխնախագահ էր ընտրվել իրանա-

հայ գործարար Լևոն Ահարոնյանը, իսկ Վահե Ջովակիմը՝ ֆորումի վարչական կառույցի անդամ: Ֆորումի գործունեությունը զգալիորեն նպաստեց Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի ընդլայնմանը հատկապես Իրանի հետ: Արդեն 1991 թվականից սկսած Հայաստանը կարողացավ օգտագործել Պարսից ծոցի և Կասպից ծովի իրանական նավահանգիստները:

1992 թ. ապրիլի 22-ին Հայաստան ժամանեց ԻԻՀ պատվիրակությունը՝ իրանական մեջլիսի հայազգի պատգամավոր Վարդան Վարդանյանի գլխավորությամբ: Պատվիրակությունն իր հետ հատուկ ինքնաթիռով Երևան էր բերել հայ համայնքի կողմից հանգանակված միջոցներով ձեռք բերված և իրանական կառավարության աջակցությամբ ուղարկված 24 տոննա դեղորայք ու սննդամթերք:

Հարկ է նշել, որ Հայաստանի անկախացումից հետո, երբ սկսվեց տարբեր երկրներում դեսպանատներ բացելու գործընթացը, որոշվեց հայկական գաղթօջախ ունեցող երկրներում դեսպանատների շենքի ձեռքբերման և կահավորման ֆինանսական ծախսերը հոգալու համար օգտվել հայկական գաղթօջախների նյութական օժանդակությունից: Այդ նույն ճանապարհն ընտրվեց Իրանում դեսպանատուն բացելու պարագայում: Թեհրանի հայոց թեմի թեմական խորհուրդը սիրահոժար կերպով Թեհրանի կենտրոնական մասում Ռուսաստանի Ղաշնության, Ֆրանսիայի, Իտալիայի և Վատիկանի դեսպանությունների հարևանությամբ գտնվող 400 քառակուսի մետր տարածք ունեցող մի երկհարկանի շենք նվիրեց Հայաստանի Հանրապետության դեսպանության համար:

Թեհրանում ՀՀ դեսպանատան բացման արարողությանը, որը տեղի ունեցավ 1992 թ. դեկտեմբերի 22-ին մասնակցում էին ԻԻՀ բարձրաստիճան պաշտոնատարներ, ԻԻՀ արտգործնախարարության ստորաբաժանումների ղեկավարներ, Թեհրանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, միջազգային զանազան կազմակերպությունների անդամներ, Իրանի հայ համայնքի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ներկայացուցիչներ, իրանական խորհրդարանի՝ մեջլիսի պատգամավորներ և այլ

պաշտոնատար անձինք: Դեսպանատան շրջակայքում և կից փողոցներում հավաքվել էին հազարավոր իրանահայեր: Հանրապետության օրիներգի «Մեր հայրենիքի» հնչյունների ներքո խուռներամ բազմության բուռն ծափահարությունների տակ ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանը և ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը բարձրացրին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ հայ ժողովրդի իղծերի, նրա ինքնության ու ազատության դրոշը: Իրանահայությունը 70 տարի շարունակ սպասել էր այդ երջանիկ օրվան և կատարվեց նրա իղծը:

Դեռևս երկու տասնամյակ առաջ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հաստատված դիվանագիտական հարաբերություններն անցել են քսանամյա մի քննաշրջան, որի ընթացքում երկու հարևան և բարեկամ երկրների հարաբերությունները մշտապես զարգացել են վերընթաց գծով: Այդ քսան տարիների ընթացքում Իրանը մշտապես եղել և մնում է հայ ժողովրդի և հայոց պետականության բարեկամների շարքում: Դրա ապացույցը և առիավատյան նշված ժամանակաշրջանում գնալով ամրապնդվող հարաբերություններն են, որոնք զարգանում են կայուն և հավասարակշռված հիմքի վրա, բարեկամության, համագործակցության, անկեղծության, վստահության և կառուցողական ոգով: Հազարամյակների պատմությամբ շաղկապված մեր երկու երկրների ժողովուրդների առավել խորը փոխըմբռնման և փոխճանաչման անհրաժեշտությունն ապագայում գնալով ավելի ու ավելի է հրամայական դառնում:

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԵՏ

- Ինչպե՞ս եք գնահատում հարաբերությունները ԻԻՀ հետ:
- Իրանը մեր տարածաշրջանի այն պետություններից է, որի հետ Հայաստանի Հանրապետությունը սահմանային, քաղաքական, ռազմական, տնտեսական կամ որևէ այլ բնույթի խնդիրներ չունի: Ելնելով հենց այդ կարևոր հանգամանքից, ինչպես նաև հիմք ընդունելով մի շարք այլ վճռորոշ գործոններ, Երևանը մշտապես շահագրգռված է եղել բնականոն հարաբերություններ պահպանել Թեհրանի հետ՝ դասելով նրան Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային և կարևոր ուղղություններից մեկը:

Առկա է նաև երկկողմ հարաբերությունների զարգացման հարցում Թեհրանի անվերապահ շահագրգռվածությունը, քանի որ երկու երկրների միջև դարերի ընթացքում ձևավորված պատմամշակութային ընդհանրությունները գրեթե անխոցելի են դարձրել այդ հարաբերությունները, որի առիավատչյան երկու մայրաքաղաքների միջև այսօր գոյություն ունեցող քաղաքական երկխոսության բարձր մակարդակն է:

Մեր երկկողմ հարաբերություններին բնորոշ են ամենաբարձր մակարդակներով հանդիպումների ու փոխայցելությունների հաճախականությունը, ստորագրված փաստաթղթերի բազմազանությունն ու առատությունը, տարածաշրջանային ու միջազգային կառույցներում ակտիվ համագործակցությունն ու երկու երկրների համար կարևորագույն հարցերի շուրջ ձևավորված դիրքորոշումների նմանությունը:

- Ինչպիսի՞ք են ներկայումս իրանահայ համայնքի և Հայաստանի միջև կապերը:

Եթե մինչև ՀՀ Սփյուռքի նախարարության կազմավորումը, իրա-

նահայ համայնքի ու Հայաստանի Հանրապետության միջև կապերն իրականացվում էին տարերայնորեն, ապա այսօր դրանք կանոնակարգված բնույթ ունեն: Մայր Հայրենիքի ու հայության մեկ այլ հատվածի՝ իրանահայության միջև դիպվածային հարաբերությունների պրակտիկայից հրաժարումը և դրանց ակտիվացումը նաև պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կողմից պարբերաբար իրականացվող համահայկական բնույթի միջոցառումների բազմազանությամբ:

Այսօր ՀՀ տարբեր նախարարությունների իրականացրած ծրագրերով մեծ թվով իրանահայեր հնարավորություն են ձեռք բերել այցելելու Մայր Հայրենիք և հաղորդակցվելու հայաստանյան իրողություններին:

Հայաստանի Հանրապետության կողմից Համայն հայության մեծագույն ողբերգության՝ Մեծ Եղեռնի 100-ամյակի ոգեկոչման աշխատանքների կազմակերպումը նույնպես հայության բոլոր հատվածներին համախմբելու մեծ ներուժ է պարունակում, որն էլ նպաստում է իրանահայ համայնքի ու Հայաստանի միջև կապերի ակտիվացմանը:

Չի կարելի անտեսել նաև «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շուրջ իրանահայության համախմբման փաստը, ինչը նույնպես նպաստում է Հայրենիքի հետ իրանահայության կապերի ամրապնդմանը:

- Ինչպիսի՞ն է հայ -իրանական հարաբերությունների հեռանկարը:

Աշխարհի հնագույն քարտեզներում Հայաստանն ու Իրանը մշտապես եղել են կողք-կողքի: Դարերի ընթացքում որոշ աշխարհագրական միավորներ ավելացել ու որոշներն իսպառ վերացել են, բայց Հայաստանն ու Իրանը հնուց անտի շարունակում են պահպանել իրենց դրացիական կապերը: Եվ քանի որ այդ դրացիությունը, հետևաբար նաև բարիդրացիությունից բխող հարաբերությունները դիմացել են ժամանակի փորձությանը, ուրեմն երաշխավորված կարելի է համարել նաև այդ հարաբերությունների շարունակականությունը:

Հայաստանն ու Իրանը երկկողմ հարաբերությունների վերահաս-

տատմանը հաջորդած 21 տարիների ընթացքում, իրավապայմանագրային դաշտի ձևավորման և փոխգործակցության մեխանիզմների մշակման միջոցով կարողացել են ստեղծել այնպիսի հուսալի հեռանակետ, որի վրա հնարավոր կլինի ապագայում կառուցել երաշխավորված և բարձր մակարդակի հարաբերություններ:

Հայ-իրանական հարաբերությունների թևակոխումը ակտիվ զարգացման փուլ, որի ապացույցն է միջպետական համագործակցության մեջ տնտեսական նշանակության ծրագրերի գերակայությունը, վկայում է երկկողմ հարաբերությունների անշրջելիության և գործընկերության հուսալիության մասին: Մեր տարածաշրջանի համար կարևոր նշանակություն ունեցող Հայաստան-Իրան գազատարը տնտեսական համագործակցության ընդամենը մի մասն է: Իրանից դեպի Հայաստան նավթամուղի կառուցումը, Հայաստան-Իրան երկաթգծի շինարարությունը կարող են նոր լիցք հաղորդել միջպետական հարաբերություններին: Միևնույն ժամանակ, այս ծրագրերի իրականացումը չի կարող զուտ հայ-իրանական հարաբերությունների մաս հանդիսանալ: Դրանց իրագործումն անմիջականորեն կապված է Իրանի տարածաշրջանային և որոշ առումներով՝ գլոբալ ռազմավարության հետ, որն ունի հստակ քաղաքական և տնտեսական բաղադրիչներ:

- Արդյոք չէ՞ք կարծում, որ հայ-իրանական հարաբերությունների զարգացման բնագավառում օգտակար ծառայություններ կարող է մատուցել նաև ժողովրդական դիվանագիտությունը:

Երբ երկու երկրների դիվանագիտական գերատեսչությունները և այդ ոլորտը համակարգող անձինք ինչ-ինչ պատճառներով հարաբերությունների հետագա զարգացման, կամ պարզապես հարաբերությունների պահպանման հարցում անհաղթահարելի դժվարությունների են հանդիպում, այդ ժամանակ ասպարեզ է իջնում խորհրդարանական դիվանագիտությունը, իսկ դրա ծախսողման պարագայում՝ ժողովրդական դիվանագիտությունը:

Իրանի հետ հարաբերությունների խնդրում ժողովրդական դիվանագիտությունն առկայանում է ամենուր և ամեն պահ՝ առանց որոշակի ուղղորդման անհրաժեշտության: Պատճառն այն է, որ մեր հարա-

բերություններում անհաղթահարելի խոչընդոտներ գոյություն չունեն: Իսկ հրատապ լուծում պահանջող բոլոր հարցերն անմիջապես կարգավորվում են, ինչի համար գոյություն ունեն առհարկի միջոցները:

- Ինչպիսի՞ն է Ձեր տեսանկյունից արդի իրանահայ համայնքը:

Իրանահայ համայնքն այս տարածաշրջանին բնորոշ առօրյա հոգսերով, իր ազգային ինքնությունը պահպանելու համար գործադրած ջանքերով և համայնքի առջև ծառայած դժվարությունների հաղթահարման համար դարերի ընթացքում կուտակած կենսավործով ու աներևակայելի կենսունակությամբ նման է Մերծավոր Արևելքում բնակվող հայության մյուս հատվածներին: Բայց այսօր, հակառակ նախորդ շրջանների, հայ համայնքի կենսունակությունը պայմանավորված է նաև այն հոգևոր սննդի առկայությամբ, որն ստանում է Մայր Հայրենիքից:

Ներկայումս իրանահայ համայնքի առաջնահերթ խնդիրներից է արտագաղթը և դրանով պայմանավորված ուժացման վտանգը: Դժվար է ասել, թե որքանով այդ ընթացքն այսօրվա աշխարհաքաղաքական իրողությունների խորապատկերի վրա կարելի է բնականոն համարել: Համեմայն դեպս այն պետք է ընդունել որպես անուրանալի փաստ և փորձել իրավիճակի բազմակողմանի վերլուծության շնորհիվ գտնել այդ անցանկալի երևույթի դրդապատճառները:

Ահա իրանահայ համայնքին բնորոշ իրավիճակը, որով էլ պայմանավորված կարելի է համարել ազգապահպանմանն ուղղված նրա ջանքերի գործադրման անհրաժեշտությունը:

- Ինչպիսի՞ն է դեսպանություն-համայնք փոխհարաբերությունները:

Իհ-ում ՀՀ դեսպանությունը համայնքի հետ առնչվող իր բոլոր հարցերը համադրում է իրանահայ երեք թեմերի ղեկավարության հետ, այդ գործելաոճը համարելով առավել արդյունավետ ու արդարացված: Բարեբախտաբար անցնող տարիների ընթացքում Թեհրանի, Ատրպատականի և Սպահանի թեմերի հետ ձևավորվել են գործնական ու բարեկամական հարաբերություններ:

Դեսպանությունը ոչ միայն Թեհրանում, այլև հայաշատ մյուս քաղաքներում համայնքային կառույցների հետ միասին կազմակերպում է

Հայաստանի Հանրապետության համար համապետական նշանակության՝ ՀՀ անկախության տոնակատարություններ և մեր պատմության ողբերգական դրվագների առիթներով սգո հանդիսություններ:

Ղեկավարություն-համայնք փոխհարաբերությունների լավագույն դրսևորումը ակնհայտ է հատկապես ՀՀ պատկան նախարարությունների կողմից կազմակերպվող համայնքային ծրագրերի գործադրման և առհասարակ, համատեղ միջոցառումների անցկացման ժամանակ:

- Որո՞նք են ներկայումս դեսպանության առջև կանգնած կարևորագույն խնդիրները:

ՀՀ դեսպանությունն իր կազմավորման առաջին իսկ օրերից, կատարելով վերադաս կազմակերպությունների առաջադրանքներն ու հանձնարարականները, ձեռնամուխ է եղել երկկողմ հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված միջոցառումների անցկացմանը, նպաստելով փոխգործակցության գործիքակազմերի մշակմանը: Հանդես է եկել հարաբերությունների խորացմանն ու բարելավմանն ուղղված առաջարկություններով:

Անցնող տարիների ընթացքում դեսպանության կարևորագույն խնդիրը եղել է երկու երկրների իրավապայմանագրային դաշտի ձևավորմանը միտված քայլերի ձեռնարկումը:

Բազմատեսակ ցուցահանդեսների ու միջոցառումների անցկացման, ինչպես նաև ամենատարբեր մակարդակներով փոխայցելությունների կազմակերպման միջոցով դեսպանությունը փորձում է նպաստել ժողովուրդների փոխճանաչմանը:

Այսօր էլ ՀՀ դեսպանությունը շարունակում է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստում են Հայաստանի միջազգային վարկի բարձրացմանը, ապահովում հայ գործարարների մուտքը իրանական շուկա և իրանցի գործարարների մասնակցությունը Հայաստանի ներդրումային ծրագրերին:

Ղեկավարությունը նաև իր առջև խնդիր է դրել դեսպանընկալ երկրում ընկալելի դարձնել մեր Հանրապետությանը հուզող հարցերը:

- Ձեր կարծիքով ներկայումս որո՞նք են իրանահայ համայնքի առջև կանգնած կարևորագույն մարտահրավերները:

Իրանահայ համայնքին հուզող արդի խնդիրները հիմնականում ամռնչվում են մեր տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ, որոնք իրենց արտացոլումն են գտնում իրանահայ համայնքի առօրյա կյանքի տարբեր ոլորտների վրա:

Այսօր համայնքային կյանքն առավելապես կրում է Սիրիայում տեղի ունեցող իրադարձությ ունների ազդեցության կնիքը:

Հայտնի է, որ Իրանը առավել քան տարածաշրջանի որևէ այլ երկիր, ներքաշված է այն իրադարձությունների մեջ, որոնցով պայմանավորված են սիրիական ճգնաժամի հանգուցալուծմանը միտված քայլերը: Այդ առումով, իրանցիներն իրենց բախտակից են համարում սիրիացիների հետ, իսկ իրանահայերը՝ սիրիահայերի:

Համայնքային կառույցների առջև ծառայած գերխնդիրներից ամենագլխակորը ահագնացող արտագաղթն է: Այն իր ծավալներով համեմատելի է միայն Իրանի հետհեղափոխական շրջանի արտագաղթի հետ: Այսօր, թեև բացակայում են հետհեղափոխական շրջանին բնորոշ խուճապային տրամադրությունները, սակայն առկա է այն նախատրամադրվածությունը, որ վաղ թե ուշ Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները տրամաբանորեն հանգեցնելու են ռազմական առձակատման:

Իրանահայությունն իր առօրյա կյանքում փորձում է հաղթահարել սոցիալ-տնտեսական բնույթի նույն դժվարությունները, որոնք գոյություն ունեն երկրի ազգաբնակչության ամենատարբեր խավերի համար: Տնտեսական աննախադեպ ծանր լուծը ստիպում է ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Իրանահայության համար այդ ուղիներից մեկը հայաստանյան շուկայում տեղ զբաղեցնելու հեռանկարն է: Սակայն Իրանի տարադրամի շուկայում տիրող իրավիճակը հնարավորություն չի տալիս իրանահայերին ավելի մեծ ծավալներով ներդրումներ կատարել Հայաստանի տնտեսության մեջ: Իրանական արժույթի աննախադեպ անկումը և արտարժույթի

ծեռքբերման հետ կապված դժվարությունները չեն նպաստում հայաստանյան տնտեսության մեջ իրանահայության ինտեգրմանը: Դրանով հանդերձ, իրանահայերի համար այսօր ամենաապահով հանգրվանը համարվում է Մայր Հայրենիքը: Այդ է պատճառը, որ նվազագույն ֆինանսական միջոցներ ունեցող իրանահայն իր ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար, շտապում է Հայաստանում ծեռք բերել որևէ կացարան:

Ցավով պետք է նշել, որ Իրանի հայաբնակ քաղաքներում աստիճանաբար նոսրանում է աշակերտության թիվը, ինչն իր հերթին բերում է հայկական դպրոցների փակմանը :

- Իրանցի մտավորականներն արդյոք անդրադառնո՞ւմ են հայկական թեմաներին, թե ոչ:

- Անշուշտ իրանցի մտավորականների տեսադաշտից չէին կարող վրիպել իրանահայությանը վերաբերող խնդիրները: Որպես Իրանի լիարժեք քաղաքացիներ, հայերը երկրի պատմության տարբեր ժամանակահատվածներում իրենց մասնակցությունն են բերել Իրանի համար կարևորագույն անցուղարձեղում: Հնարավոր չէ գտնել մի բնագավառ, որտեղ հայերը լավագույնս դրսևորած չլինեն իրենց կարողություններն ու տաղանդը:

Իրանական կինոյի ու թատերական արվեստի զարգացումը անվերապահորեն վերագրվում է հայությանը: Ճարտարապետությունը եղել և մնում է հայության մենաշնորհը: Հայերն իրենց նշանակալի դերակատարությունն են ունեցել նաև գիտության զարգացման ասպարեզում: Անթերագնահատելի է նաև հայոց մասնակցությունը երաժշտական արվեստի զարգացման գործում:

Թերևս դա է պատճառը, որ իրանցիներն իրենց երախտիքն արտահայտելու համար տարբեր առիթներով անդրադառնում են հայությանը վերաբերող թեմաներին: Քիչ չեն հայ ճարտարապետների ու ճարտարագետների մասին լույս տեսած աշխատությունները: Հրապարակում կան թատրոնում և կինոյում հայոց մասնակցության մասին հոդվածներ և վավերագրական կինոնկարներ, որոնք կարող են ուսումնասիրության առանձին նյութ հանդիսանալ :

Սակայն հայությանը հուզող ամենագլխավոր թեման՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև դրա հետևանքների վերացման խնդիրն է, որը նույնպես իր արտացոլումն է գտել իրանցի մտավորականների հրապարակումներում:

Իրանցիները քիչ թե շատ տեղեկացված են նախորդ դարասկզբին Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից և շատերն են իրենց վշտակից համարում հայության հետ: Հայոց մեծ ցավին հաղորդակից լինելու պատճառն այն է, որ իրանցիներն ամեն տարի ապրիլի 24-ին իրանահայերի կողմից կազմակերպվող առանձնահատուկ միջոցառումների ականատեսն են դառնում: Մյուս կողմից, քրիստոնյա հայերի ու մուսուլման իրանցիների միջև գոյություն ունեցող փոխադարձ հարգանքը պատճառ է հանդիսացել, որպեսզի նրանք հաղորդակից դառնան միմյանց ուրախություններին ու տխրությ ուններին:

Իրանում Հայոց ցեղասպանության թեմային այս կամ այն կերպ անդրադարձած մտավորականների ու պատմաբանների թիվը բնավ էլ քիչ չէ: Եվ ուշագրավն այն է, որ տարեցտարի նրանց թիվն ավելանում է:

Մտավորականների այդ շարքը գլխավորում է էսմայիլ Ռաիներ, ով լույս է ընծայել «Հայոց Ցեղասպանություն» խորագրով աշխատություն: Ռաիների գրչին են պատկանում նաև Միրզա Մելքոն Խանի, Եփրեմ Խանի և հայերի մասին այլ աշխատություններ:

Ռաիներ Հայոց մեծ եղեռնի մասին գրում է. «Օսմանյան կառավարությունն այդ կազմակերպված սպանությունները ներկայացնում էր որպես «հարկադրված տեղահանություն»: Հայերը ստիպված լքում էին իրենց բնակավայրերը և երկրի պատասխանատուները նույնիսկ նրանց բարի ճանապարհ էին մաղթում: Իսկ գաղթի ուղին բռնած հայերը, որևէ պատկերացում չունենալով իրենցից առաջ նույն ճանապարհն անցած հայրենակիցների մասին, հույս էին տածում, որ թեև լքում են սեփական հողն ու հայրենի երկիրը, բայց հնարավորություն կունենան նորից արարելու և շենացնելու նոր բնակավայրերը: Սա-

կայն նրանց դաժան ճակատագիր էր սպասում»:

Աբբաս Մողադդամը Հայոց Ցեղասպանության թեմային անդրադարձած մեկ այլ պարսիկ ուսումնասիրող է, ով նույնպես ներկայացրել է իր արժեքավոր տեսակետներն այդ ողբերգական իրադարձությունների մասին: Նա ծնվել է Թավրիզում և իր կյանքի մեծ մասն անցկացրել ծննդավայրում: Նա, ինչպես նշել է հեղինակը, իր պարտքն է համարել իրանցիների միասնականությանն սպառնացող վտանգի մասին ահազանգել հայրենակիցներին: Այդ նպատակով նա գրի է առել «Թրքախոսների մոտ հակահայկականության և ազգայնամոլության աճն Իրանում» ծավալուն հոդվածը, որտեղ նշում է. «Եթե այսօր մեզ՝ իրանցիներիս հարցնեն, թե հայերը որ ժամանակաշրջանից և ինչպես են բնակություն հաստատել Իրանում, կասեն, նրանք Շահ Աբբասի ժամանակ են Իրան տեղափոխվել»:

Հետազոտողի տեսակետով, թեև նման պատասխանը սխալ չէ, բայց թերի է. քանի որ, Մողադդամի բնորոշմամբ, նախքան բռնագաղթը, հայերը բնակվել են Իրանում: Այնուհետև, Աբբաս Մողադդամը, վկայակոչելով փաստավերագրական նյութերի և անկողմնակալ հետազոտողների հաղորդած տվյալները, փաստում է, որ հայերը դասվում են աշխարհի հնագույն և մեծ քաղաքակրթության տեր ազգերի շարքին ու նրանց ծագումնաբանությունը պետք է փնտրել Ուրարտական կայսրության մեջ:

Այնուհետև Աբբաս Մողադդամը հայոց պատմության վաղնջական ժամանակներից անցում է կատարում Օսմանյան շրջանի պատմությանը և անդրադառնում այդ տարածքը բռնազավթած քոչվոր ցեղերի բռնություններին և վերջապես կանգ առնում հոգևարքի մեջ գտնվող կայսրության վերջին ջանքերի և առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունները սեփական նպատակներին ծառայեցնելու երիտթուրքերի նկրտումների վրա: Հեղինակը գրում է. «Թալիաթը, էմվերը և Ջեմալը երեք թուրք փաշաներն էին, որ ոչ միայն ստանձնել էին երիտթուրքերի ղեկավարությունը, այլև վերահսկում էին կայսրության ընթացքը»:

Աբբաս Մողադդամի գրչին պատկանող մեկ այլ հոդվածի վերնա-

գիրն է. «Ես, որպես թրքախոս ազերի, իմ առջև խնդիր եմ դրել բացահայտելու օսմանցիների կողմից Հայոց ցեղասպանության իրողությունները, ինչը իմ հոգու պարտքն էմ համարում»: Հողվածի անսովոր երկարաշունչ վերնագրից անգամ կարելի է կռահել հրապարակման մեջ քննարկված նյութի մասին: Նա իր հողվածում մասնավորապես նշել է. «Այլևս հայոց ցեղասպանության փաստը հնարավոր չէ հերքել: Թուրքիայի ցեղապաշտ քեմալիստներն անգամ ի զորու չեն նախկինի պես իրենց աչառու տեսակետները թելադրել թուրքական հասարակությունում»:

Աբբաս Մողադդամը առիթ է ունեցել հայոց խնդիրներին անդրադառնալու երկու մասից բաղկացած մեկ այլ հողվածում, որը վերնագրված է. «Ցեղասպանություններն ու իրանցիների անտարբերությունը», որը նվիրված է ցեղասպանությունները մերժող Կոնվենցիային, դրա հեղինակ Լեմկինին ու Կոնվենցիայից բխող դրույթներին:

Հայոց խնդիրների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերած իրանցի մտավորականներից հիշատակման է արժանի նաև իրանական ժամանակակից արձակի հիմնադիր Մոհամմադալի Ջամալ գահեն, ով «Առաջին աշխարհամարտի անձնական հուշագրություններ» խորագրով գրքույկում նկարագրել է Մեծ Եղեռնի սահմեկեցուցիչ տեսարանները, դրոնցից մնացած տպավորությունները նրան ուղեկցել են ողջ կյանքի ընթացքում:

Հայությանը վերաբերող խնդիրներին է անդրադարձել Ռիբվար Մարուֆգադեն, ով հրապարակել է «Ցեղասպանությունը և համաշխարհային դիվանագիտությունը» խորագրով ծավալուն մի հողված, որտեղ քննության է առել իրենց բնօրրանում հայության ոչնչացման դրդապատճառները:

Ուշադրության է արժանի նաև Իրանի արտաքին քաղաքական հարցերին նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ, անվանի պատմաբան Մոհամմադեզա Դաբիրիի՝ «Հայոց սպանդն ու բռնազաղթը. Ցեղասպանություն, թե ռազմական անհրաժեշտություն» խորագրով հողվածը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԻՐԱՆԱՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ԳՈՐԾԱՐԱՐ,
ԲԱՐԵՐԱՐ ԼԵՎՈՆ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՀԵՏ

- Ձեր կարծիքով որո՞նք են Իրանի հայ համայնքի արդի խնդիրները:
- Այս օրինակում ընդհանուր ժողովրդի համար երկու կենսական խնդիր կայ՝ անգործություն եւ թանկություն, որում իրանահայերը այդ հարցերում չեն բացառում:

- Ինչպիսի՞ք են ներկայումս համայնքի և Հայաստանի միջև կապերը:
- Մենք ունենք տասնեակ միութիւններ, օրինակի համար մարզական, մշակութային, բժշկական, համալսարանական, ճարտարագետների միութիւնը եւ այլն ամէն մի հաստատութիւն յարաբերում է Հայաստանում իր համապատասխան կազմակերպութեան եւ իրար հետ յարաբերութիւն են ստեղծում, դա զգալի եւ նկատելի է մեր միութիւնների ձեռնարկներում, որ ինչ չափով ազդած են Հայաստանեան բարձր մշակութային մակարդակով ձեռնարկներից: Ի միջի այլոց տարբեր մարդիկ էլ ամէն մէկն իր չափով յարաբերութիւն է ստեղծել Հայաստանեան ժողովրդի կամ մի հաստատութեան հետ, առեւտրական ասպարեզում էլ շատ իրանահայեր կան, որոնք ունեն իրենց սեփական գործերը և Հայաստանեան գործընկերները եւ տարիներ է, որ իրար հետ համագործակցում են:

- Դուք հանդիսանում եք «Իրան-Հայաստան բարեկամական միության» նախագահը: Ի՞նչ կասեիք այդ միության ներկա գործունեության մասին:

- Նախագահ Ահմադինէժադի նախագահական երկրորդ շրջանում շատ լուրջ կերպով նախագահի գրասենեակը հովանաւորում էր բարեկամական կազմակերպութիւններին եւ այդ շրջանում տասնեակ բարեկամութեան միութիւններ կեանքի կոչւեցին. այդ միութիւնների ֆինանսական ապահովումը կապած է բարեկամ երկրի՝ օրինակ բազիլականը, որի կազմակերպողները մի խումբ զբօսաշրջիկներ են, Բրազիլիա ուղևորվելով մի քանի ամսւայ իրենց ծախսերն հանում են, բայց Իրան-Հայաստանի վերաբերեալ պիտի ասեն, որ այդ-

պիսի ֆինանսական եկամուտներ գոյութիւն չունի: Տարիներ Իրանի ներքին գործոց նախարարութիւնը Իրանի կրօնական փոքրամասնութիւններին նրանց մշակութային, մարզական եւ այլազան հարցերին մի գումար էր յատկացնում եւ մեր միութիւնն էլ իր մասն ունէր, բայց դժբախտաբար արդէն երեք տարի է, որ մենք այդ օգնութիւնը չենք ստանում, մեր եկամուտը միայն անդամավճարներից է, որ այդ գումարով այսօրայ արժէքներով ոչ մի աշխատանք չի լինի կատարել, բայց յուսահատ չենք, աշխատում ենք մի ելք գտնել, քանի որ այդ միութեան նպատակն Իրանի եւ Հայաստանի համար անհրաժեշտութիւն է:

- Հայտնի է, որ բազմաթիվ իրանահայեր բնակություն են հաստատել Հայաստանում, ինչպիսի՞ հաջողություններ ու դժվարություններ ունեն նրանք:

- Այս հարցի պատասխանը դժուար է, այսինքն տարբեր մարդիկ ունեն տարբեր ապրելակերպ, մէկն արհեստաւոր է, միւսը հանգստի է կոչել եւ զնացել է իր հայրենիքում հանգիստ կեանք վարի, մէկն էլ գործարար է, առեւտուր է անում, մի ուրիշն էլ մշակութային եւ գեղարեստական ոլորտում է աշխատում: Ես անծամբ մի քանիսին հանդիպել եմ, որ մեծ մասամբ արհեստաւորներ են և գոհ են: Առեւտրականները դժգոհում են Հայաստանում հարկային եւ դատական օրենքներից ու վարմունքից, դրանցից ամենավատն այս օրայ ժամանակաշրջանում հանգստի կոչւածներն են, Իրանում մէկ տարում մօտաւորապէս Իրանի ազգային դրամն երկու հարիւրից աւելի տոկոս արժեզրկւեց եւ այդ բերումով այդ հանգստի կոչւած մարդը, որ ստանում է մի որոշակի գումար, նրա համար դժուար կը լինի դրամ ձեռք բերելը, որպէսզի Հայաստանում ապրի:

- Ինչպիսի՞ք են համայնքի հեռանկարները:

- Հայ համայնքի հեռանկարն ենթարկւել է մի քանի ազդակների, նախ Իրանի ժողովրդի աճը 35 տարում 35 միլիոնից հասաւ 75 միլիոնի, միւս կողմից հայերի արտագաղթը, որ այդ բերումով իրանահայ համայնքը կորցրեց իր 75 տոկոսը, բայց ասում են չկայ չարիք, որ չունենայ բարիք, Իրանի դրամի արժեզրկումը բաւականին ազդել

է արտագաղթի վրայ, քանի որ մարդիկ իրենց տունը վաճառելով եւ դրամը տարադրամի վերածելով, դա այնքան մեծ գումար չի լինում, որ ենթական իր կեանքն ապահովի, բայց պիտի նկատի առնւի, որ իրանահայերը դարեր է, որ Իրանում ապրում են, սիրում են երկիրն ու ժողովրդին, իրենց հանգիստ են զգում Իրանում ապրելով: Մեր համայնքը նկատի առնելով Իրանի ժողովրդի բազմութիւնը եւ հակառակը հայերի թւի նւագումը կարելի է ասել, որ հայերն առաջւայ նման աչքի ընկնող մի փոքրամասնութիւն չեն, բայց նորից երկրում ունեն իրենց տեղն ու յարգանքը:

- Ինչպիսի՞ք են համայնք-պետություն հարաբերությունները:

- Համայնքի եւ պետութեան յարաբերութիւնները շատ լաւ եւ յարգանքով է առայժմ: Ես անձամբ որեւէ բացասական խօսք կամ հարց իրանահայերին չեմ տեսել եւ չեմ լսել, մանաւանդ Հայաստանի անկախութիւնից յետոյ, որ երկու հարեւան երկրները մեծ յարգանքով են իրար հետ յարաբերում եւ դա նկատելի կերպով ազդել է իրանահայ ժողովրդի վրայ, այսինքն իրանահայութիւնը հանդիսանում է մի ազատ եւ անկախ երկրի ժողովրդի մի մասը:

- Ինչպիսի՞ն է թեհրանահայ համայնքի ազգային հեռանկարը մեծ թափ ստացած արտագաղթի պայմաններում:

Արտագաղթը բաւականին մեծ հարւած է հասցրել իրանահայ համայնքին, մեր դպրոցների մեծ մասի աշակերտների թիւը բաւականին պակասել է, բայց մեր ազգային կառոյցը չթողեց, որ հայկական դպրոցների հիմունքները խախտւեն և նոյնութեամբ պահեց պահպանեց եւ չթողեց որ ցրիւ գայ, ներկայումս ունենք երեք մանկապարտէզ, որ կայուն են եւ աշխատում են երեք տարբեր թաղամասերում, ունենք 14 բանուկ դպրոցներ, որոնց 4-ի տեսուչները հայեր են, մնացածները պարսիկներ: Այդ դպրոցներում իրաւունք է տրւել շաբաթական 4 ժամ հայոց լեզու, հայոց պատմութիւն, շարադրութիւն, թելադրութիւն, քերականութիւն եւ Կրօն են դասաւանդում: 2012 թաւականին հայ աշակերտների թիւն 2800 էր, իսկ ոչ ազգային, պարսկական դպրոցներում ունենք մօտ 700 աշակերտներ: Իրանի Իսլամական յեղափոխութիւնից առաջ հայ աշակերտների թիւը մօտ 17000 էր, որ

ներկայումս մնացել է 25 տոկոսը: Ըստ 2012 վիճակագրության, մեր համայնքի մկրտութիւնների թիվը 219 է, պասկը 176, ապահարզանը 42, մահացութիւնը 270 է եղել, բայց պատիւ մեր ժողովրդին, որ ամէն կերպ աշխատում է չթողնի թի նւագումն ազդի իրանահայերի կեանքի վրայ եւ ներկայումս հայերի թիվը միայն թերհանում մօտաւորապէս 40,000 է կազմում:

- Ներկայումս համայնքում որո՞նք են հիմնական գործող ուժերը:

- Իրանահայութիւնը կառավարում է երեք թեմերի միջոցով, երեք թեմերն են թերհանը եւ Իրանի հիւսիսային քաղաքները, Սպահանի թեմը, որն ընդգրկում է Շիրազ, Ահւազ եւ Իրանի բոլոր հարաւային քաղաքները, Ատրպատականի թեմը, որն ընդգրկում է Արեւելեան եւ Արեւմտեան Ատրպատականների քաղաքները: Երեք թեմերն էլ պատկանում են Կիլիկիայի Կաթողիկոսական աթոռին:

Ըստ կանօնագրութեան, երեք թեմերը կառավարում են հետեւեալ կազմով.

1 - Օրէնսդրական կազմ, որը կոչւում է Պատգամաւորական ժողով, ունի երկու նախագահ, որ հերթականօրէն կառավարում են ժողովները: Դրա անդամների թիւը կապւած է շրջանի հայութեան թիւն, նախագահներից յետոյ կազմն ունի երկու քարտուղար, որ ժողովների արծանագրութիւններն են կատարում: Պատգամաւորական ժողովը համայնքի ամենաբարձր որոշող մարմինն է, նա է ընտրում թեմի հոգեւոր առաջնորդին, թեմական խորհրդին, հոգեւոր խորհրդին, հաշիւներնից մարմինն, որը թեմականի նիւթական շրջանառութիւնը և կալւածների առքն ու վաճառքը, մի խօսքով ամբողջ հաշիւները քննելով ներկայացնում է Պատգամաւորական ժողովին առ ի հաստատում: Այդ ժողովի շրջանը 4 տարի է որ ամէն մի թաղամաս համեմատ իր հայութեան թիւն որոշւած թով պատգամաւոր են ընտրում, օրինակ թերհանի կենտրոնական մասն ունի 13 պատգամաւոր, Զէյթուն (Մաջիդիէ) 9 պատգամաւոր, Սասուն(Նարմաք) թաղամասն 13 պատգամաւոր, Սուրբ Աստուածածին եկեղեցու մասը 3 պատգամաւոր, Սարդարաբադ (Հեշմաթիէ) թաղամասը 3 պատգամաւոր, գաւառները Սարի 1, Գորգան 1, Ռաշտ եւ Ղազին 1, Անգալի

1, Արաք 1 պատգամաւոր, որ ընդհանուրը դառնում է 47 պատգամաւորներ, որ դրանց թիւն աւելանում է 7 հոգի նշանակած հոգեւորականներ եւ այդպիսով ընդհանուր պատգամաւորական ժողովի անդամների թիւն լինում է 54 հոգի: Սոյն ժողովն երկու տարին մէկ կամ էլ միջին շրջանում թեմական խորհուրդի բարոյական եւ նիւթական գործունեութեան զէկոյցը եւ 2 տարեշրջանից յետոյ ընտրում է մի նոր թեմական խորհուրդ, համայնքային բոլոր հարցերը լուծուում են թեմական խորհուրդի միջոցով, որ կարիք է լինում Պատգամաւորական ժողովի հաստատման եւ վաւերացման:

Թեմական խորհուրդի կազմը, որը գործադիր մարմին է, 11 հոգի է. ունի ատենապետ, փոխատենապետ, երկու քարտուղար և նիւթական խնդիրների պատասխանատու, իսկ մնացեալը խորհրդատու անդամներ: Համայնքի բոլոր յարաբերական հարցերը պետութեան հետ կամ երկրի ներքին հարցերը, որ կապուում է հայութեանը, թեմական խորհրդի միջոցով է լուծուում: Թեմական խորհուրդն ունի զանազան ենթայբաժիններ, որոնցից ամէն մէկն ունի իր պատասխանատու պաշտօնները, օրինակ եկեղեցական խորհուրդ, կրթական խորհուրդ, ֆինանսական խորհուրդ, բուժարանի խնամակալ մարմին, դատաստանական խորհուրդ, Իրանի արհեստաւորների միութիւն, որը ենթարկուում է թեմական խորհրդին: Բացի այս, թեմական խորհուրդը ըստ պահանջի և տարբեր առիթներով կեանքի է կոչում նոր եւ յատուկ ժամանակաւոր յանձնախմբեր, օրինակ՝ Ապրիլ 24-ի կենտրոնական յանձնախումբ, որը պատշաճօրէն կազմակերպուում է Ապրիլեան ձեռնարկները, Իրանի Իսլամական յեղափոխութեան տարեդարձի տօնակատարութիւնները եւ այլն: Արտակարգ իրավիճակների ժամանակ էլ հայութիւնն այդ հարցերում անտարբեր չի լինում: Թեմական խորհուրդը մի նոր յանձնախումբ է կեանքի կոչում տուժածներին օգնելու համար:

Պատգամաւորական ժողովն ու թեմական խորհուրդն առաջնորդուում են Առաջնորդի միջոցով, որը սկսած Կիլիկիայի Աթոռից ենթակայ են Հ.Յ.Դ կուսակցութեան: Վերոյիշեալ բոլոր կազմերի անդամները սիրայօժար ներգրաւուում են աշխատանքներում:

- Հայտնի է, որ բազմաթիվ իրանահայեր բարեգործական ծրագրեր են իրականացնում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Դուք ոչ միայն մոտիկից ծանոթ եք այդ նախաձեռնություններին, այլև հանդիսանում եք դրանց ակտիվ մասնակից: Խնդրում ենք ներկայացնել, այժմ ի՞նչ ծրագրեր են իրականացվում:

- Ընդհանրապես իրանահայերը միշտ եղել են հայրենասէր եւ ըստ պատմութեան վկայութեան, Հայաստանի հանդէպ համակուած են կարօտի բուռն զգացումներով: Մի ուրիշ տեսանկիւնից էլ նայենք իրանահայութիւնը պետութիւն չի ունեցել, որ հայապահպանութեանը կապուած իր պահանջները հոգայ: Համայնքներն իրենց ուժերով իրենց բարերարների միջոցով մէկ առ մէկ կառուցել են եկեղեցիներ, դպրոցներ, մարզադաշտեր, թատերասրահներ, մարզաւան-համալիր եւ այլն: Եւ այդպիսով այդ սովորութիւնը տարածւել է մեր ժողովրդի մէջ եւ Հայաստանի անկախութիւնից յետոյ էլ այդ հայրենասիրական բարեգործութիւնն էլ փոխադրւեց հայրենիք: Ինձ ոչ ոք չէր թելադրել, միայն հեռուստացոյցում տեսնելով, որ Երեւանի 136-րդ դպրոցը հրդեհի էր մատնվել, հանգուցեալ կնոջս հետ որոշեցիմք վերակառուցել այդ 1000 տեղանոց հայկական դպրոցը, նոյնը եղաւ բնապահպանութեան թանգարանը Տիգրան մեծ 34 համարում, որը նրա վերակառուցելն ու կարգաւորելը 3 ասրի տւեւց, որից յետոյ ոչ նախարարը եւ ոչ էլ տնօրէնուիին ինձ հետ լաւ չվերաբերւեցին («Կեանքիս փոթորկոտ օրերը» գրքում մանրամասնութեամբ գրուած է): Ես Հայաստանում հիմնեցի «Հայ դպրոց» հիմնադրամը, որի աշխատող կազմի բոլոր անդամները Իրանում, Հայաստանում, Ա.Մ.Ն-ում գտնուող իրանահայեր են: Մինչև այսօր մենք Հայաստանի սահմանամերձ գիւղերում 20,000 աշակերտների համար ապահովել ենք նոր աթոռ ու սեղան: Ես գնեցի մի հանգստի բազա Հանքավանի շրջանի Փիւնիկ գիւղում 500 աշակերտների հանգստութեան համար: Քանդեցի հին շէնքերը և նորը կառուցեցի, երեք հսկայական շէնքեր մէկն աղջիկների համար, երկրորդը տղաների, իսկ երրորդը մանուկների համար: Այդտեղ պիտի բերեմ տարբեր երկրներից հայ պատանիներ հայաստանցի պատանիների հետ ծանօթանալու, ընկեր դառնալու,

իրար սիրելու, որպեսզի Հայաստանի ապագայի համար մտածեն, պիտի սփիւռքն ու հայրենիքը միասին պահեն ու պահպանեն Հայաստան աշխարհը: Բացի այդ, ես կատարել եմ մեծ շինարարություն 75 բնակարան եւ 8 առանձնատուն, այդ ծրագիրը շահադիտական է: Մի ուրիշ կալած ունեմ Երեւանի Մամիկոնեան փողոցում, կառուցում եմ մի 20 սենեականոց հիւրանոց եւ 16 սենեականի բնակարան-հիւրանոց:

Իսկ ուրիշ բարերարներն ի՞նչ են անում եւ ի՞նչ են արել այդ կապակցութեամբ, շատ տեղեակ չեմ. բայց գիտեմ, որ Թեհրանի Թեմական խորհուրդը մի մեծ տարածք է գնել Երեւան-Սեւան ճամբին Աւան թաղամասից մի քիչ հեռու դէպի Սեւան, որ իրանահայ երիտասարդներից ցանկացածին բնակարան յատկացնի: Բայց այդ ծրագիրը դեռեւս չի սկսել և այդ տարածքն էլ մնացել է նոյնութեամբ:

- Ի՞նչ հարցերում Հայաստանը կարող է օգնել իրանահայությանը:

- Այս հարցը մի յաւելեալ բացատրություն է պահանջում: Պատանեկան տարիքումս ծանօթացել եմ եւրոպական եւ ԱՄՆ-ի պետութեան օգնություններին, մանաւանդ կրթական հարցերում, որ տարբեր ոլորտներում մասնագետներին ուղարկում էին իրենց երկիր՝ ծանօթանալու արդիական տեխնոլոգիաների եւ հիւրընկալ երկրի մշակոյթի եւ դրածքի հետ: Հայաստանը ունի մի մեծ գանձարան, դա սփիւռքահայութիւնն է:

Մեր սփիւռքահայութեան կապը հայրենիքի հետ միայն 4 հեռուստաալիքների <1-ի, Շանթի, Կենտրոնի և Արմենիայի միջոցով է, այդ 4 թողարկումները շատ քիչ տարբերություններ ունեն միմեանցից և կրկնողութիւն են հարաւային Ամերիկայի այլազան, անորակ, անհետաքրքիր սերիալների, եւ դժբախտաբար հայկական սերիալներն էլ բոլորը մարդասպանութիւն են եւ կամ հետաքրքրութիւն ստեղծելու համար իրենց շրթունքներն ու բերաններն են ծռմռում մարդկանց ծիծաղեցնելու համար, տղամարդուն կանանց զգեստ են հագցնում իբրեւ մի իրանահայ պառաւի կամ ինչպէս այդ «Վերվարածները» սերիալը...

Ես հարց եմ տալիս ձեզ թէ սրանք են մեր մշակոյթը: Հայաստանի

պետությունը պիտի պահի մեր 2500 տարւայ պատմութիւնը, մշակոյթը, կենցաղն ու կրօնը եւ լեզուն, այլ ոչ թէ եթերով ցուցադրի դաստիարակչական և ընտանեկան գեղեցիկ ֆիլմերի փոխարէն ուրիշ երկրների տարբեր մշակոյթի անորակ ֆիլմեր, որին սփիւռքահայը ձեռնահասութիւն ունի շատ անելի հեռուստատեսային ծրագրեր նայելու: Ես այդ հարցում ուղղակի մեղադրում եմ Հայաստանի Հանրապետութեան իշխանութեանը, որ այդ հեռուստատեսութեան ընկերութիւններին աշխատանքի իրաւունք է տւել առանց ուսումնասիրած ծրագրերի, մինչդեռ մի մասը պէտք է յատկացւի հայ մշակոյթին, արւեստին, կրօնին և այլն:

Ընդհանրապես իրանահայութիւնը մի իսլամական երկրում մեծ դժարութեամբ պահում, պահպանում է մեր մշակոյթը: Հայերէն լեզու, կրօն, հայոց պատմութիւն ենք դասաւանդում մեր դպրոցներում, որ աշակերտն իր ազգի պատմութիւնից անտեղեակ չլինի եւ այլն, եւ դժբախտաբար չենք տեսնում այդ հարցերում մի օգնող ձեռք մեր համայնքին: Այդ հեռատատեսութեան ալիքներում, որ մեծ ոգեւորութեամբ եւ ուրախութեամբ էինք դիտում, այսօր այն աստիճանի է հասել, որ վարորդս էլ ասում է, թէ այլեւս մենք չենք հետաքրքրւում Հայաստանի հեռուստատեսութեան ծրագրերով:

- Ձեր հովանավորութեամբ Թեհրանում լույս է տեսնում «Յոյս» ամսագիրը: Տեղյակ ենք, որ կան ամսագրի հետ առնչվող որոշ դժվարութիւններ: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Մենք «Յոյս» երկշաբաթաթերթի հրատարակման համար պետութեան կողմից ոչ մի դժարութիւն չունենք. Ընդհակառակը երեք անգամ մեր երկշաբաթաթերթին պարգեւատրել են մի սահմանափակ դրամով, այսօրայ մեր դժարութիւնը թղթի արժէքն է, որ օր օրի թանկանում է: Առ ի տեղեկութիւն «Յոյս»-ը Հայաստանում էլ լաւ ընդունւել է. մենք ամէն մի համարից 500 օրինակ ուղարկում ենք Հայաստան եւ ծրիաբար ցրում:

- Հայտնի է, որ ինչպես քաղաքական, այնպես էլ ներհամայնքային խնդիրներին առնչվող հարցերում Իրանի հայ համայնքը միատարր

չի եղել, առանձին հարցերի շուրջ առկա են եղել տարածայնություններ: Ինչպիսի՞ն է ներկայումս վիճակը:

- Ղա շատ բնական է, որ մենք ասենք 40 հազարանոց համայնք չի կարող միատարր հնազանդի մի գաղափարախօսութեան. դա ակնյայտ է: 20-րդ դարի սկզբից որ այդ օրերին Իրանում գրագետների թիւը շատ չէր, բայց Թաւրիզում գոյացաւ հնչակեան կուսակցութեան առաջին մասնաճիւղը, որը համագործակցում էր Բաքւի կոմունիստների հետ, այնուհետեւ 1942 թականին գոյացաւ «թուղէ» կուսակցութիւնը, որ բաւականին զարգացաւ եւ տարածւեց. այդ կուսակցութեան հիմնադիրներից էր Արտաշէս Յովհաննիսեանը. դա մի խթան էր իրանահայերի համար, որ համագործակցում էին այդ կուսակցութեան հետ: Յիշեալ կուսակցութիւնը հովանաւորում էր Առվետական իշխանութեան կողմից: Մինչեւ 1980 թականը շատ ելեւէջներ էր ունեցել, բայց Իրանի Իսլամական յեղափոխութիւնից յետոյ նրանք միայն մի երկու տարի համագործակցեցին նոր Իրանի Իսլամական իրաւակարգի հետ այնուհետեւ նրանց մեծերն էսսան Թաբարին եւ Նուրէդին Քիանուրին ձերբակալւեցին եւ ըստ տեղեկութեան բանտում էլ մահացան: Իսկ Սովետական իշխանութեան փլուզումից յետոյ թուղէ կուսակցութիւնն էլ անցաւ պատմութեան գիրկը:

Իսկ այն հայերը, որոնք ծախսակողմեան հակումներ ունեին՝ մաոիստներ, կոմունիստներ և ունէին կազմակերպութիւններ, թուղէ կուսակցութեան կազմալուծելուց յետոյ նրանք էլ իրենց շապիկը փոխեցին դարձան ազգային, նրանք Կիլիկիայի կաթողիկոսութիւնը չեն ընդունում և խիստ էջմիածինականներ են:

Միւս կողմն էլ ունի Հ.Յ.Դ կուսակցութիւնը, որ համարեայ 20-րդ դարի սկզբից իշխում է իրանահայ համայնքին եւ 1950-ական թականներից յետոյ, երբ թե՛նը միացաւ Կիլիկիայի կաթողիկոսութեան Աթոռին, աւելի զօրեղացել է Իրանի Իսլամական Յեղափոխութիւնից յետոյ: Հ.Յ.Դ-ը մի քանի տարի Իրանի պետութեան կողմից չսիրած կուսակցութիւն էր, բայց հանգուցեալ Հրայր Մարութեանի այցից յետոյ, որը տեղի ունեցաւ 1993 թի մայիս ամսին, միանգամից դրութիւնը փոխւեց: Հ.Յ.Դ-ը ոչ միայն Իրանում, Հայաստանում, Լիբանանում,

Սիրիայում, որոշ ժամանակ լսելով ԱՄՆ-ում համագործակցում եւ օգտակար է հանդիսանում Իսլամական Իրանին:

- Ո՞ր հարցերի շուրջն է իրանահայությունը դրսևորում միասնականություն և ո՞ր հարցերի շուրջը առկա են տարածայնություններ:

- Իրանահայութիւնը իր ներքին խնդիրներում դպրոցական հարցերում, ազգային տօնակատարութիւններում եւ այլ հարցերում համախմբւած է եւ որեւէ ներքին տարածայնութիւններ գոյութիւն չունեն: Մեր համայնքի ամենամեծ խնդիրը թեմի աթոռի պատկանելութիւնն է: Մեր ժողովրդի 90-95 տոկոսը Կիլիկիայի կաթողիկոսութեան հետ ծանօթ չէ. դա արդէն մօտ 60 տարի է, որ 50-ականի տարիներին քաղաքական բերումով Հ.Յ.Դ-ի առաջարկով այդ աթոռը ներկայացաւ Իրան: Եթէ անկողմնակալ կերպով այդ կարելոր հարցը քննարկենք, պիտի ասենք, որ Կիլիկիայի կաթողիկոսութիւնը մի աթոռ է ենթակայ Հ.Յ.Դ-ին, որ նրանք օգտուում են Կիլիկիայի աթոռից քաղաքական հարցերում, համայնքի նիթական եւ բարոյական աղբիւրներից, զարմանալին դա է, որ մի քանի առիթներով «Ալիք» օրաթերթում մի լրիւ էջում տպագրուում է պրն. Հրանդ Մարգարեանի նկարը և ամբողջ էջը զարդարում է մեծ տառերով նրա կոչն ուղղւած հայ ժողովրդին միաբանութիւն քարոզելով: Բայց յայտնի չէր ինչ միաբանութիւն էր եւ ում հետ միացում: Սփյուռքահայության մի զգալի մասի մոտ մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ մեր ժողովրդի միասնության ամենահզոր կառույցը՝ եկեղեցին, միասնական չէ: Այդ հարցը կարող է եւ ենթակայ է մի օր չարամիտ քաղաքականութիւնների միջոցով մեր համեստ ու խաղաղ ժողովրդի մէջ բախումներ ստեղծի, ինչպէս որ անցեալում էլ եղել է: Մենք սահմանափակ թւով ժողովուրդ ենք, մեզ վայել չէ բաժին-բաժին դառնալը:

- Ներկայումս ինչպիսի՞ն է հարաբերությունների մակարդակը Իրանի Իսլամական Հանրապետության իշխանությունների և հայ համայնքի կառույցների միջև:

- Իրանի ժողովուրդն ու պետութիւնը միշտ յարգանքով են եղել հայերի հանդէպ, դա բնական է, քանի որ իրանահայերը բացի բարութիւն, աշխատասիրութիւն եւ համեստութիւն ուրիշ ոչ մի ան-

հանգստություն չեն առաջացրել Իրանի պետութեան համար եւ Իրանի ժողովուրդն էլ հայաշատ քաղաքներում շատ լաւ վերաբերմունք են ցուցաբերում հայերի հանդէպ, իրանցին չի օտարում որեւէ պետական եւ ազգային խնդիրներում Իրանի ժողովրդին: Պարզ կարելի է ասել, որ իրանահայ համայնքի եւ Իրանի Իսլամական պետութեան յարաբերութիւնները բարձր մակարդակի վրայ է:

- Ներկայումս որո՞նք են իրանահայ համայնքի առջև կանգնած կարևորագույն մարտահրավերները:

- Ինչպես որ նախորդ հարցերում պատասխանեցի, ներկայումս իրանահայ համայնքի ամենամեծ և առաջնահերթ խնդիրը արտագաղթն է, որ մօտ 75 տոկոս մեր համայնքի զաւակները երկրից հեռացել են, այնուհետ թանկութիւնն է եւ ապա անգործութիւնը, որ այս վերջին երկուսը միայն հայ համայնքին չի պատկանում, այլ Իրանի բոլոր ժողովրդին: Այլեւս ուրիշ տարբեր ոլորտներում, օրինակ կրօնական, դպրոցական, միութենական եւ տարբեր համայնքային հարցերում իր բնական ընթացքում է գտնուում:

- Որքանո՞վ է արդյունավետ ազգային կառույցների գործունեությունն Իրանում, արդոյք այդ կառույցները արդիականացնելու խնդիր կա՞:

- Իրանահայ համայնքի գլխաւոր ազդակներից մէկը կրօնական ծիսակատարութիւններն են, որ եթէ կարիք լինի Սրբազան առաջնորդը եւ հոգեւոր խորհուրդը ըստ կարիքի փոփոխութեան են ենթարկում եւ դա շատ ազդեցիկ մի համայնքային հարց չէ, դպրոցներն ու դասագրքերն էլ ունեն յատուկ յանձնախումբ, որ ամէն մի նոր շրջանի գրքերի հրատարակման համար նորութիւններ են նկատի առնում. մնացած համայնքային հարցերը, որ մեծ մասամբ առնչոււմ է երիտասարդութեանը միութիւններն են կատարում, ամէն մի միութիւն ունի իր աշխատանքի ծրագիրը, դա թէ մշակութային կամ մարզական ասպարէզում է, իսկ կան նաեւ մասնագիտական միութիւններ օրինակի համար բժշկական, ճարտարապետ-ճարտարագիտական և որեւէ գիտական հարցերում պատկան միութիւնն աշխատում է իր մասնագիտութեամբ, բայց օրինակի համար համալսարանական ընդհ. միու-

թիւնը, որ կազմւել է տարբեր մասնագէտ անդամներից, զբաղւում են այլազան գիտական հարցերի քննարկմամբ: Այս բոլոր բացատրութիւններով բացայայտւում է, որ ազգային իշխանութիւնը շատ դերակատարութիւն չունի համայնքի առօրեայ կեանքի վրայ. ազգային իշխանութեան ամենակարեւոր աշխատանքը եկեղեցիների կառավարելն է՝ ամուսութիւնների գրանցում, եկեղեցական պսակներ, մկրտութիւն, թաղում, ապա ապահարգանների կարգաւորում, պետական տարբեր հիմնարկների հետ յարաբերւել, որ այդ բոլորը մէկ առ մէկ ունեն իրենց բնական եւ անհրաժեշտ ընթացքը:

- Արդյոք իրանահայ համայնքը մտահո՞գ է ապագայի նկատմամբ:

- Ինչպէս իրանական առածն է ասում «Երբ մարդու գլխից ջուրն անցնում է, միանշանակ է դա մի թիզ լինի կամ տասը թիզ», այն որ չպիտի պատահեր արդէն կատարւել է, բայց պիտի խոստովանւել, որ իրանահայութիւնը մաս է կազմում Իրանի ժողովրդին, իրանահայը սիրում է Իրանը, Իրանի ժողովրդի հետ լաւածանօթ է Իրանի ժողովրդի սովորութիւններին եւ մշակոյթին եւ երբեք Իրանում իրանահայն իրեն օտար չի զգում: Իմ կարծիքով իրանահայութիւնը չնայած աւելի քիչ թուով, բայց ոչ ամբողջովին, չի լքի Իրանը եւ մեր համայնքի հիմքերը դեռեւս ամուր եւ կայուն է և դա վստահաբար կը շարունակւի:

- Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության պետական ապարատում արդյոք հայեր կա՞ն (բացի մեջլիսի զույգ հայ պատգամավորներից): Արդյոք օրենքը թույլատրո՞ւմ է, որ հայերը պետական կառույցներում պաշտոններ զբաղեցնեն:

- Սոյն հարցի պատասխանը, ցաւօք սրտի, խոստովանաւմ եմ, որ Իրանի Իսլամական յեղափոխութիւնից յետոյ ոչ պաշտօնական հրահանգով, որն անյայտ է երբ աշխատանքի դիմումնագիրը նոր տպագրած հարցաշարերն լրանում է հարցերից մէկն դիմողի պատկան կրօնն է համարեայ ոչ մուսուլման պետական հիմնարկներում դիմողն աշխատանքի չի ընդունւում: Տարիներ է, որ մեր խորհրդարանի պատգամաւորներն այդ հարցի համար բողոք են ներկայացրել, բայց ապարդիւն է մնացել, ի հարկէ դա 100 տոկոսով չի. կան հայեր, որ աշխատում են մասնագիտական պետական հիմնարկներում, բայց

պիտի ասեմ, որ ներկայումս Իրանում բազմաթիվ մասնաւոր ընկերութիւններ են հիմնուել, որ դրանց համար կրօնական պատկանելիութիւնը կարելի է հարց չէ, այլ մասնագիտութիւնն է կարելի, հայերն էլ մեծամասամբ միշտ մասնագիտական աշխատանքներում են աշխատում, պիտի շեշտեմ, որ այդ հարցը միայն հայերին չի վերաբերում, այլ բոլոր կրօնական փոքրամասնութիւններն, այսպէս ասած, ենթակայ են այդ հրահանգին:

- Ինչպէ՞ս են ընթանում ազգային կառույցների ընտրութիւնները:

- Ազգային կառույցների ընտրութիւնները բազմաթիւ չեն, միայն Պատգամաւորական ժողովի ընտրութիւններն են, որ ամէն չորս տարի մի անգամ տեղի է ունենում, ուրիշ հարցերում ժողովրդի ընդհանուր մասնակցութիւնը գոյութիւն չունի: Տարիներ է միշտ Հ.Յ.Դ-ն ինչպէս ցանկացել է այդ ընտրութիւնները կազմակերպել է, բայց բացառուում է 10-րդ պատգամաւորական ժողովի շրջանը, որ Իրանի իսլամական յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ 1980 թականին տեղի ունեցաւ, դա մի բացառիկ շրջան էր, որ կամաւոր թեկնածուների մասնակցութեամբ, որ բաւական մտաւորականներ էին մասնակցել եւ ընտրուել, ես էլ անձամբ մասնակցեցի եւ բաւականին բարձր ծայնով ընտրուեցի: Այդ շրջանում իրանահայութեան ազգային, նախկին կանօնագիրը վերամշակեց եւ հաստատելու համար ուղարկեց Անթիլիաս: Իրապէս այդ շրջանում ժողովն ուներ բարձր հոգեբանական տրամադրութիւն եւ շատ համայնքային հարցերին լուծում տրուեց, բայց հակառակը 11-րդ պատգամաւորական ժողովը, որ տեղի ունեցաւ 4 նոյեմբեր 1983 թին Հ.Յ.Դ-ը իր յետին նպատակների համար ժողովի անդամներին դարձրեց մի խումբ արհեստաւորներ եւ շատ քիչ թուով մտաւորականներ, որ այդ շրջանում, դժբախտաբար, ազգային մարմինը պետութեան հետ խնդիր ունենալու պատճառով Իրանի ներքին գործոց նախարարութիւնը ընտրութիւնների իրաւունք չէր տալիս: Առաջին ընտրութիւնը, որ կատարուեց 2000 թականին էր. այդ շրջանը կարելի է ասել, որ մի բացառիկ շրջան էր: Ժողովի վերջին տարիները զուգադիպեց Հայաստանի անկախութեանը եւ Հ.Յ.Դ-ի տարածայնութիւնը Հայաստանի նորածին հանրապետութեան

հետ, որ դա պատճառ դարձաւ կուսակցութեան շարքերում մեծ ազդեցութիւն ունենայ: Պարզ յայտնի էր, որ որոշ կուսակցականներ հակառակ էին Պատգամաւորական ժողովի որոշ ազգային հարցերի վաւերացման հետ. դա առիթ դարձաւ մի խումբ կուսակցականներ արտաքսուէն կուսակցութիւնից. այդ բոլոր դէպքերը մի նոր պայքարի ճակատ բացեց մեր համայնքի մէջ: Նարմաքում, չասենք ծախերը, այլ Հայաստանի կողմնակիցներն ու արտաքսուած կուսակցականները պայքարի անցան եւ նրանց խմբից 13 պատգամաւորներ ընտրեցին, իսկ Մաջիդիէի շրջանում մի խումբ մտաւորականներ պայքարեցին Հ.Յ.Դ-ի դէմ եւ մեծ թուվ յաջողութիւն ձեռք բերեցին մանաւանդ 2012 թականի ընտրութեան 9 պատգամաւորից միայն Հ.Յ.Դ կուսակցութիւնից ընտրեցին, բայց ընդհանուր առմամբ ժողովրդի մասնակցութիւնը գովելի չէր: Եթէ նկատի առնենք, որ ժողովրդի թիւը 40,000 լինէր, դրա միայն 15-16 տոկոսն էր այդ ընտրութիւններին մասնակցում: Ժողովուրդն այս հաւատքի է, թէ կուսակցութիւնը ում ուզում է, ընտրում է, ուրեմն ինչ կարիք կայ իր քւէարկութեան:

- Հայաստանյան կյանքի ո՞ր իրողությունների նկատմամբ են բացասաբար վերաբերվում իրանահայերը:

- Իրանահայութեան ամենակարեւոր շփումը Հայաստանի հետ 4 հեռուստատեսութեան ալիքներն են Հ1, Շանթ, Կենտրոն, Արմենիա, որ սիրողն դիտում է եւ չսիրողն էլ ալիքը փոխում է, իրանահայութիւնը Հայաստանի ժողովրդի եւ պետական կազմի հետ մեծ շփում չունի, որ ասենք իրանահայ համայնքի վրայ ազդեցութիւն ունենայ եւ հակազդեցութեան տրամադրութիւն ստեղծի: Կարող է մի խումբ իրանահայեր քննադատեն Հայաստանի պետութեան եւ նրա աշխատանքը, բայց այդ հարցը ոչ մի կերպ չի կարող ընդհանուր ազդեցութիւն թողնի մեր համայնքի վրայ, մենք եւ մեզ պէս սփիւռքահայեր միշտ դիտողի եւ լսողի դերում ենք գտնուում, միթէ որ մի առիթ ունենանք արտայայտուելու:

- Ինչ ազդակներ կարող են աշխուժացնել ազգային կյանքը համայնքում:

- Եթէ մի երկրում մարդկանց համար աշխատանք կայ, դա նշա-

նակում է դրամ էլ ծախսելու համար կայ, եւ այդ էլ տրամադրութիւն է բերում, ինչպէս նախկին հարցերում շեշտեցի, այս ներկայումս Իրանում մեծ թուով ժողովուրդը մատնւած է անգործութեան եւ իրանահայութիւնն էլ այդ հարցում չի բացառում։ դա աւելի շատ ազդում է մեր համայնքի տարբեր ձեռնարկների վրայ, օրինակի համար Հայաստանից հրաւիրեն մի թատերախումբ, նւագախումբ, պարախումբ եւ այլն եւ բացի այդ, Իրանում տարադրամի արժէքի բարձրանալը, որով պիտի վճարուի արւեստագէտ հիւրերին. տոմսերի վաճառքի գինը չի արդարացնի այդ խմբերի առօրեայ ծախսերը, ուղեւորման, հիւրանոցի եւ այլազան անխուսափելի ծախսերը, որ իրանահայ համայնքին զրկել է հայրենիքի արւեստագէտներին հիւրընկալել, իսկ մեր ազգային կեանքի ձեռնարկներն իր բնականոն ընթացքն ունի եւ չի դադարեցւել:

- Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները ի՞նչ չափով են արձագանք գտնում Իրանի հայ համայնքում:

- Իրանահայութիւնը, կարելի է ասել մեծամասնութիւնը վայելում է հայաստանեան 4 արբանեակային հեռուստատեսութեան թողարկումներ <1, Կենտրոն, Արմենիա, Շանթ լսում ենք, տեսնում ենք, տեղեկանում ենք Հայաստանի քաղաքական, ոչ քաղաքական լուրերին, տարբեր ծրագրերին: Ինչպէս նախկին էջերում գրեցի, Հայաստանի այդ վերոյիշեալ թողարկումները, որոնք բացառում են լուրերի եւ ազգային տօնակատարութիւնների ծրագրերի թողարկումից այդ հարաւային Ամերիկայի սերիալներ կամ հէնց Հայաստանի պատրաստած սերիալները, որոնք մեծ մասամբ մարդասպանութիւն եւ ւաւազակութիւն են ցուցադրում, մեր ժողովուրդին չի հետաքրքրում: Ուրիշ տեղի ունեցած հարցերը, որ Հայաստանի ժողովրդին ուրախացնում է, մեզ էլ է ուրախացնում, եթէ մի տխրութիւն է պատճառում, մենք էլ այդ հարցում ազդւում ենք. քաղաքական հարցերը մեր համայնքին հետաքրքրում է, բայց մենք միայն դիտողի դերում ենք, ինչ որ մեզ եւ բոլոր աշխարհի հայերի ցանկութիւնն է Հայաստանը դառնայ և ուժեղ եւ իրաւունքի տէր մի երկիր, իսկական ժողովուրդավար մի երկիր և կառավարութիւն. որեւէ կեղծիք չիւնի Հայաստանի ընտ-

րութիւններում: Մեր ժողովուրդը, որ 2500 տարի պատմութեան անցեալ ունի վայել չի, բացի ապրիլի 24-ի մօտ օրերին այդ հարցով եւ ամենից կարելորդ, հայ ժողովրդի պահանջատիրութեան մասին որպէս գերնպատակային խնդիր լռութեամբ չմատնուի Հայաստանի Հանրապետութեան կողմից:

- Ներկայումս քանի՞ հոգուց է բաղկացած Թեհրանի թեմական խորհուրդը և պատգամավորական ժողովը:

- Պատգամաւորական ժողովի անդամները 47 աշխարհականներ են, որ արդէն լրիւ նախկին հարցերում պատասխանել են եւ այդ թւի վրայ աւելանում է 7 նշանակովի հոգեւորականներ, որ ընդհանուր թիւն դառնում է 54 պատգամաւորներ:

Թեմական խորհուրդի թիւը 11 հոգի է մի ատենապետ, մի փոխատենապետ, երկու ատենադպիր, մի գանձապահ կամ նիւթական հարցերի պատասխանատու եւ խորհուրդատու որ այդ երկու կարելոր մարմիններին գլխաւորում է թեմիս հոգեւոր առաջնորդը ի պաշտօնէ:

- Ինչպիսի՞ ներհամայնքային մտահոգութիւններ կան:

- Ըստ նախկին բացատրութիւնների, իրանահայութեան ամենամեծ դժւարին հարցն արտագաղտը, անգործութիւնը եւ թանկութիւնն է, որ Իրանի համար դա մի բացառիկ հարց ու շրջան է: Իհարկէ, այդ անհանգստութիւնները միայն իրանահայերին չի պատկանում և արտագաղտը, թանգութիւնն ու անգործութիւնն ընդհանրական է:

- Իրանի հասարակական-քաղաքական կյանքում կա՞ն արդոյք հանգուցային դեր ունեցող հայեր:

- Այդ հարցում պիտի վկայեն, որ մենք ունենք եւ ունեցել ենք շատ բարձր մակարդակի գիտնականներ, քաղաքագէտներ, մարդիկ, որոնք ունեն Իրանից դուրս տարբեր կամ մի որոշ երկրի հետ յարաբերութիւն, որ այդ անձը իբրեւ մի իրանցի օգտագործում է Իրանի եւ իր բարեկամ երկրի յարաբերութիւնների համար եւ կարելի է ասել այդ հայերի թիւը շատ չէ, քանի որ ներկայումս Իրանն ունի մօտ 4 միլիոն արտերկրում ապրող իրանցիներ, որոնք չափազանց հմուտ կերպով թափանցել են ԱՄՆ-ի բարձր ատեաններում եւ նոյնպէս Մեծ Բրիտա-

նիայում, Չերմանիայում, Ֆրանսիայում, Քանադայում եւ ուրիշ երկրներում:

- Արդյոք Իրանի Իսլամական Հանրապետությունում հայերին արգելված է քաղաքականությամբ զբաղվել:

- Իրանում որեւէ արգելք չկայ իրանահայութեան համար, որ մասնակցեն քաղաքական աշխատանքներում, բայց մի մեծ խնդիր կայ, որ համարեայ բոլոր քաղաքական խմբերը, կուսակցութիւններն իսլամական բնոյթ ունեն այդ կարգի շրջաններում և լրիւ իսլամական մտայնութիւն է տիրում և հայի համար աշխատանքի տեղ գոյութիւն չունի: Իրանահայութիւնը միայն մի քաղաքական կազմակերպութիւն ունի Իրանում դա էլ ոչ պաշտօնական գրանցւած ՀՅԴ-ի կուսակցութիւնն է:

- Այսօր իրանահայությունն արդյոք որևէ լուրջ լծակ ունի՞ երկրում քաղաքական զարգացումների վրա ազդելու համար:

- Այդ հարցում պիտի ասեմ առաջինը ՀՅԴ-ն է, որ Իրանի պետութեան մօտ, Հայաստանում, Լիբանանում, Սիրիայում, ԱՄՆ-ում օգտակար է հանդիսանում: Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ այդ բերումով այդ պետութիւնը գնահատում է բարձր տնտեսական ոլորտում արդէն 19 տարի է, որ կազմւել է Իրան-Հայաստան առեւտրական պալատը: Այդ հաստատութիւնն ունի մեծ համբաւ Իրանի տնտեսական ոլորտում: Մինչև հիմա իրանական արտադրութիւնների 15 ցուցահանդէսներ է կազմակերպել: Այդ հաստատութիւնը դերակատար է եղել Իրանի եւ Հայաստանի միջև առեւտրական յարաբերութիւնների զարգացմանը, և ապագայի համար ծրագրներ է մշակւել, որ աւելի զարգացնի Իրանի ներդրումները Հայաստանում, ուսումնասիրւել է Հայաստանում զարգացնել անասնապահութիւնը, ծառատնկումը եւ համատեղ արտադրութիւններ կատարելու համար այս հաստատութեան կազմւելու օրից մինչեւ օրս իմ նիւթական հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ է կառավարւում եւ միակ հայկական պաշտօնական հաստատութիւնն է, որ պաշտօնապէս գրանցւած է եւ մեծամասնութեամբ պաշտօնական հանդիպումներին Երեւանում հրաւերներ է ստանում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԻՐԱՆԻ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՆՇԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՔԵՀԵՅԱՆԻ ՀԵՏ

- Ո՞ր շրջանին է վերագրում Իրանում Հայ Կաթողիկե համայնքի պատմութիւնը:

- Իրանի Հայ Կաթողիկե համայնքի պատմութիւնը կը սկսի 17-րդ դարու առաջին տարիներուն, Նախիջեանի բնակչութեան վրայ Շահ Աբբասի գործադրած բռնագաղթով:

Հայ առաքելական հաւատացեալներու հետ, Նախիջեանի մէջ կային նաեւ հայ կաթողիկէներ, որոնք եկան Իսպահան:

Նոյն շրջանին, Նախիջեանի մէջ, առաքելութիւն կը կատարէին դոմինիկեան Սիւրբանութեան կրօնաւորներ, որոնց անդամներուն մէջ կը գտնուէին նաեւ հայեր:

- Ներկայումս ի՞նչ դեր ունի Իրանի Կաթողիկե եկեղեցին համայնքի կեանքում:

- Դժբախտաբար շատ նօսրացած է ներկայիս Իրանի Կաթողիկէներու թիւը. յատկապէս 1979-ի Իրանի յեղափոխութենէն աստին: Սակայն, անոր անդամները իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն տեղւոյն՝ հայ մշակութային, կրթական, երիտասարդական, ընկերային եւ այլ զանազան միութիւններու մէջ:

Ասկէ գատ, ունինք նաև դպրոց, ծերանոց և «Հայկաշէն»ի ընդարձակ ճամբարը՝ Կասպից ծովու ափին, որոնց միջոցաւ մեր հայապահպանման նպաստը կը բերենք հայ համայնքի կեանքին:

- Ներկայումս որքան է հաշվվում հայ կաթողիկե եկեղեցու հետեւորդների թիւը Իրանի հայ համայնքում եւ ո՞ր քաղաքներում են բնակւում Հայ կաթողիկէները:

- Շուրջ 200էն 250 հոգի կը հաշուէ այսօր Իրանի հայ Կաթողիկե համայնքը: Անցեալին ունեցած ենք շուրջ 3000 հոգի, որոնցմէ աւելի քան 2700-ը արդէն մեկնած են Իրանէն՝ 1979ի յեղափոխութենէն ետք:

Հաւատացեալներ, եկեղեցիներ, հոգեւորականներ ունեցած ենք Իսպահան, Թաւրիզ, Մասշէղ Սոլէյման եւ Թեհրան:

Միայն հինգէն տասը ընտանիքներ մնացած են Իսպահան եւ Թաւրիզ՝ առանց մնայուն հոգեւորականի:

- Ներկայումս ո՞րտեղ է գտնուում Իրանի Հայ կաթողիկէ պառոջանիստ եկեղեցին:

- Իրանի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ թեմի Աթոռանիստը կը գտնուի Իսպահան եւ գրեթէ ամբողջութեամբ վերանորոգւած է: Ան կառուցւած է 1705-ին, հայր Դուկաս Ապարանցի հայ Դոմինիկեան վարդապետի ջանքերով եւ նուիրուած Աստուածամօր:

1954ին, Թեհրանի կենտրոնի մէջ, Գերշ. Մկրտիչ Աբգար Եպիսկոպոսի ջանքերով կառուցուեցաւ Ս.Գ. Լուսաւորիչ Աթոռանիստ մը որ օծուեցաւ նոյն տարին՝ Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ Կաթողիկոսի-Պատրիարքի ձեռամբ:

- Արդեօք արտագաղթը ազդեցութիւն ունեցե՞լ է Իրանի հայ կաթողիկէ համայնքի անդամների թվի վրայ:

- Արտագաղթը ծանր ազդեցութիւն ունեցած է Իրանի հայ Կաթողիկէ համայնքի անդամներուն թիւն վրայ: Անոնք, առհասարակ ունեւոր եւ աչքառու ըլլալով, առաջիններէն եղած են, որ փախել են Իրանէն եւ պատճառ դարձեր, որ չափազանց նօսրանայ համայնքի թիւը:

- Ի՞նչ կառույցներ ունի Իրանի հայ Կաթողիկէ եկեղեցին:

- Տասնեակ տարիներ Իրանի հայ կաթողիկէ համայնքը եռուն եւ կենսունակ կեանք մը ունեցած է՝ Պարսկաստանի հայ համայնքէն ներս. Իր «Ներսէս Շնորհալի» երգչախումբով, «Աւարայր» երիտասարդական միութեամբ, «Մարիամ» դպրոցական հաստատութեամբ եւ «Ալիշան» դպրոցով, իր մշակութային կենտրոնով ու թատերախումբով, «Ս.Ներսէս» գրական ֆոնդով ու աղքատախնամ կազմակերպութեամբ: Մինչեւ այսօր կը շարունակէ իր առաքելութիւնը, թէեւ ամփոփ դաշտի վրայ, բայց նուիրումով՝ «Մարիամ» հաստատութեամբ, «Զիւլյեան» հանգստեան տունով եւ «Հայկաշէն» ճամբարով:

- Ինչպէ՞ս են կանոնակարգուում հարաբերությունները Իրանի հայ կաթողիկէ համայնքի եւ պետութեան միջեւ:

- Իրանի հայ կաթողիկե համայնքը, տեղւոյն պետութեան կողմէ, պաշտօնապէս ճանչուած ու գրանցուած է 1968 էն ի վեր որպէս իրաւական անձ: Ունի պաշտօնական ներքին կանոնագիր, կնիք եւ թեմական խորհուրդ, զոր կ' ընտրէ եւ որուն կը նախագահէ Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը:

Վերոյիշեալ կանոնագիրը, 2011-ին վերատեսութեան ենթարկեցաւ եւ վերստին հաստատուեցաւ Իրանի Իսլամական հանրապետութեան ներքին գործոց նախարարութեան կողմէ:

- Արդյոք հայ կաթողիկե համայնքի անդամները մասնակցո՞ւմ են պատգամաւորական ժողովի ընտրութիւններին թէ ոչ:

- Հայ կաթողիկե Իրանահպատակ քաղաքացիները իրաւունք ունին Իրանի պատգամաւորական ժողովի ընտրութիւններուն մասնակացելու, ինչպէս նաեւ՝ Իրանի քաղաքացի բոլոր միւս փոքրամասնութիւններու անդամները:

- Ի՞նչ լեզուով են արվում ծիսակատարութիւնները հայ կաթողիկե եկեղեցում:

- Հայ Կաթողիկե Եկեղեցւոյ մէջ բոլոր ծիսակատարութիւնները կը կատարուին միշտ հայ ծէսով ու լեզուով:

- Միջին Արեւելքի ո՞ր շրջաններում հայ կաթողիկե համայնքներ կան:

- Միջին Արեւելքի բոլոր երկիրներն ալ ունին Հայ Կաթողիկե համայնքներ, որոնց իւրաքանչիւրը ունի իր սեփական եպիսկոպոսը կամ Արքեպիսկոպոսը. Սուրիա, Լիբանան Իրաք, Թուրքիա, Եգիպտոս եւ Իրան: Սուրիան ունի երեք հայ Կաթողիկե թեմեր, Հալեպ, Դամասկոս եւ Գամըշլի:

- Ինչպիսի՞ն է ազգային գիտակցւթյունը Իրանի հայ կաթողիկե համայնքում: Համայնքն ունի՞ ազգային կրթական հաստատութիւններ:

- Շատ բարձր ազգային գիտակցութիւն կայ Իրանի հայ կաթողիկե համայնքին մէջ: Անոր անդամները կը մասնակցին, մեծ մասամբ, Թեհրանի միութենական շարժումներուն եւ միշտ հայերէն կը խօսին տան մէջ:

Երկու կրթական հաստատություն ունեինք. «Մարիամ» հաստատությունը, որ ցարդ կը շարունակէ գործել թէ՛ մանչերու եւ թէ՛ աղջիկներու համար, ունենալով այսօր, մանկապարտէզէն մինչեւ միջնակարգ՝ 492 աշակերտներ: Ստիպուեցանք փակել «Ալիշան» դպրոցը 4 տարի առաջ արտագաղթի հետեւանքով, «Մարիամ» հաստատությունը կը գործէ 1936 ի վեր: «Ալիշան» դպրոցը իր դռները բացած է 1962 ին:

- Հայ առաքելականների շրջանում արդյոք երբեմն կասկածի տակ դրվո՞ւմ է ծեղանում ազգայինի գիտակցութիւնը:

-Չեմ իմացած եւ ո՛չ ալ անդրադարձած եմ եթէ հայ առաքելականների շրջանում ոեւէ մէկը համարձակած ըլլայ՝ կասկածի տակ առնել հայ կաթողիկէ հաւատացեալի մը ազգային գիտակցութիւնը: Մերինները կրնան թաւ կուսակցական չըլլալ, բայց վստահ եմ, որ անկեղծ ու հաւատաւոր ազգասէր ու հայրենասէր են:

- Հայ կաթողիկէների ինքնութեան մէջ ո՞րն է առաջատար բաղադրիչը՝ ազգայինը, թէ՞ կրօնականը:

- Հայ կաթողիկէների ինքնութեան մէջ ազգայինն ու կրօնականը անբաժանելի է մին միւսէն: Վարդանանց նշանաբանը՝ «Վասն կրօնից եւ վասն Հայրենեաց», մեր կեանքի ուղեցոյցն է:

Ինչպէս Մխիթար Աբբահայր ըսած է՝ «Մէկը միւսին չենք զոհեր»:

- Կրօնական այլ կենտրոնի պատկանելը թուլացնո՞ւմ է ազգային գիտակցութիւնը:

- Կաթողիկէ ընդհանրական եկեղեցին, մեզ համար «կրօնական այլ կենտրոն» չէ, այլ այն կենտրոնն է, որուն համար, 451 ին, մեր Սուրբ հայրերը յայտարարած էին. «Հայր կը ճանչնանք Ս. Աւետարանը եւ Մայր ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ»:

Եւ եթէ այդ «այլ կենտրոնը» չթուլացուց Վարդանանց հերոսներու ազգային գիտակցութիւնը, չի թուլացներ նաեւ մերը. այլ ընդհակառակը կը զօրացնէ զայն, վկայ մեր Մխիթարեան, Չմմառեան եւ Անարատ Յղութեան հայ Մայրապետներու վանքերն ու առաքեալները, վկայ մեր մշակոյթի օձախները, վկայ մեր երիտասարդական ու սկաուտական կազմակերպութիւնները, վկայ մեր ազգային աւանդա-

կան կուսակցութիւնները եւ հին ու նոր բարեսիրական, ազգային կազմակերպութիւններու մէջ գործող մեր հայ կաթողիկէ համայնքին զաւակները:

- Հայ կաթողիկէ եկեղեցիներում անցկացուող կրօնական ծիսակարգերը ո՞րքանով ընդհանուր եզրեր ունեն առաքելականի հետ:

- Հայ Կաթողիկէ եկեղեցիներու մէջ անցկացուող կրօնական ծիսակարգերը՝ նոյն եւ նման են հայ առաքելական կրօնական ծիսակարգերուն: Մեր քոյր երկու եկեղեցիներու՝ Ս. Պատարագի խորհրդատետոր, ժամակարգութիւնը, Ծիսակատարումի Մաշտոցը, Շարակնոցը, Ծխական օրացոյցը եւ այլն նոյնանման են:

- Ներկայումս Հայ կաթողիկէներին ինչպէ՞ս են ընկալում հայկական միւս համայնքները:

- Մեր յարաբերութիւնները Առաքելական եւ Աւետարանական համայնքներուն հետ՝ յարգալից բնական են: Երեք համայնքներու պետերս առիթն ունինք յաճախ Հանդիպելու իրարու՝ եւ որոշ աշխատանքներու մէջ՝ նոյնիսկ գործակցելու: Նոյնպէս, երեք համայնքներու հաւատացեալները, առանց նկատի առնելու իրենց համայնքային տարբերութիւնները, որպէս մէկ ազգիս զաւակներ, փոխադարձ յարգանքով ու սիրով կը վարուին եւ կը յարաբերին իրար հետ:

Մեր համայնքի զաւակները, բոլոր տեսակի միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ, իրենց մասնակցութիւնը բերելու՝ պատրաստական են ու սիրով կը բերեն, եւ փոխադարձաբար ընկալուելով որպէս նոյն ազգին պատկանող հայ քրիստոնէայ եղբայրներ առանց որեւէ բարդոյթի:

- Իրանի հայ Կաթողիկէ եկեղեցին Մխիթարեան միաբանութեան հետ կապեր ունի՞, թէ ոչ:

- Ներկայիս Իրանի հայ կաթողիկէ եկեղեցին Մխիթարեան Միաբանութեան հետ կապեր չունի: Անցեալին ունեցած է եւ քաջալերած է, որ ուսանողներ երթան Վենետիկ, Մուրատ-Ռափաէլեան գիշերօդիկ վարժարան զարգանալու եւ յատկապէս հայ լեզուի եւ մշակոյթի մէջ հմտանալու: Բաւական մեծ թվով աշակերտներ բախտը ունեցած են յաճախելու Վենետիկի Մխիթարեան վարժարան, բայց,

դժբախտաբար, Իրանի Իսլամական յեղափոխութենէն յետոյ կամաց կամաց գացողներ չեն եղած:

Հ. Վարդան Արքեպս. Քեչիշեանը եղած է ընդհանուր փոխանորդ Հայաստանի Հայ Կաթողիկէ վիճակին Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոսին կողքին: Սրբ. Յովհաննէս Եպս. Դերձակեան եղած է Առաջնորդ Միացեալ նահանգներու եւ Քանադայի: Իսկ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հմայեակ-Պետրոս ԺԷ, եղած է Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ կաթողիկոս-Պատրիարք: Այս բոլորը անդամ էին Վենետիկի Միաբանութեան: Կետիկեան Կաթողիկոսը նախապէս նոյնիսկ եղած է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր:

Ես ինքս ալ պատիւն ունեցած եմ Յունաստանի մէջ մկրտելու Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հայր Ստեփանոս վարդապետ Հարունեանէն, որ մեր ժողովրդապետը եղած է՝ Յունաստան:

Մխիթարեան հայրերու եւ Անարատ Յղութեան Քոյրերու առաքելութիւնը կը կատարուի դպրոցով ու մշակոյթով՝ հայ ժողովուրդին հոգեւոր եւ մտաւոր զարգացումին եւ հայապահպանման համար: Իսկ Չմմառեան Միաբանութեան հայրերը կը նուիրուին իրենց հաւատացեալներուն հոգ հոգւոցին, նիւթական ու ընկերային բարօրութեան եւ ազգապահպանման:

- Ձեր տեսանկիւնից ինչպիսի՞ն է իրանահայ համայնքի ազգային հեռանկարը:

- Իրանահայ, մեր նախկին նիւթապէս բարգաւաճ եւ մշակութային տեսակէտէ զարգացած, հոգեւոր եւ աշխարհիկ բազմաթիւ գործիչներ ու բարերարներ տուած հսկայ գաղթօճախը՝ շատ նօսրացած է եւ օրէ օր դեռ աւելի կը փոքրանայ: Արտագաղթը՝ Իրանահայութեան փորձանքը դարձած է: Գրեթէ բոլոր մեր ընտանիքները բաժան բաժան եղած են՝ լքելով Իրանը եւ մեկնելով յատկապէս դէպի Միացեալ նահանգներ: Ո՛ր էր թէ անոնց համար աշխատանքի կարելիութիւն ըլլար Հայաստան, որպէսզի հայրենիքէն հեռու՝ զոհ չերթային սպառնացող «ճերմակ ջարդին»:

Փառք ու պատիւ մնացորդաց, որոնք տքնաջան աշխատանքով

կը շարունակեն Հայապահպանման սուրբ գործը՝ կանգուն պահելով դպրոցները. մշակութային միութիւնները, Երիտասարդական ակումբները: Հակառակ երկրին սպառնացող դժուարութիւններուն եւ տնտեսական նեղութիւններու, մեր հոգեւոր եւ աշխարհիկ պատասխանատուները իրենց կարելին կ'ընեն գաղութին կենսունակութիւնը վառ պահելու՝ թէ՛ Թևհրան. թէ՛ Իսպահան եւ թէ՛ Թաւրիզ:

- Ինչպէս են ընկալուում հայերն Իրանում:

- Հայերը, որպէս հայ փոքրամասնութիւն, լաւ են ընկալուում Իրանի թէ՛ ժողովուրդէն եւ թէ՛ Պետութենէն, բայց չեն դադրիր քրիստոնէայ փոքրամասնութիւն ըլլալէ: Անոնք, հակառակ Իրանի քաղաքացի ըլլալուն, լիիրաւ իրաւունքներ չունին:

- Ինչպիսի՞ն են հայ կաթողիկէ համայնքի հարաբերութիւնները Հայաստանի հետ:

- Բնական: Հայ Կաթողիկէ Եկեղեցին օրինաւորապէս գրանցուած է՝ նախ 1992ին ՀՀ կրօնի խորհուրդի լողմէ եւ ապա ՀՀ Արդարադատութեան նախարարութեան մօտ:

Մենք հաւատարմօրէն հետեւած ենք թէ՛ առաջին եւ թէ՛ վերջնական գրանցումին մէջ պարունակուած յօդուածներուն: Նոյնպէս եւ Հայաստանի պետութիւնը յարգած է մեր իրաւունքները: Երբեւիցէ խնդիր չենք ունեցած եւ չունենք որեւէ հարցի վերաբերեալ Հայաստանի կառավարութեան հետ:

- Ինչպէ՞ս էք տեսնում Մերձաւոր եւ Միջիւ Արեւելքում հայ համայնքների հեռանկարը 21 -րդ դարին բնորոշ իրողութիւնների համատեքստում:

- Ազգապահպանման տեսակէտէ մտահոգիչ կը գտնենք Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայութեան ապագան:

Ասկէ 50 տարի առաջ դեռեւս աւելի քան 1 միլիոն հայ կար Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ: Այսօր, դեռեւս անոր քառորդը չէ մնացած: Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու Քանադան, Ֆրանսան եւ Եւրոպայի միւս երկիրները, Լատին Ամերիկան եւ Աւստրալիան իրենց քաշեցին մեր ժողովուրդը եւ այսօր Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ գուցէ 200.000 հայէ աւելի չկայ:

Պատճառը ըստ իս, Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներու,
ա. քաղաքական անկայունութիւնը.

բ. Շիյա եւ Սիւնի իսլամ համայնքներու՝ քաղաքական բեմի վրայ
ունեցած շարունակական խուլ մրցակցութիւնը,

գ. Տարածաշրջանի վրայ իր ոյժը բանեցնելու Իսրայէլի բացայայտ
քաղաքականութիւնը.

դ. Իսլամական երկիրներու մէջ, իրենց ապագային նկատմամբ
քրիստոնէայ համայնքներու անվստահութիւնը:

Այս բոլոր անախորժ պայմաններուն մէջ է որ կ'ապրին մեր հայ
համայնքները. եւ երբ աչքի առջեւ ունինք Իրաքի եւ յատկապէս այս
օրերուս, Սուրիոյ մեր ժողովուրդին քաշած նեղութիւններն ու չարչա-
րանքները՝ ի՞նչ ապագայ կրնայ ակնկալել Մերձաւոր եւ Միջին Արե-
ւելքէն մեր ժողովուրդը, որուն թիւը, կրթական ու մշակութային կա-
ռուցները, երիտասարդական ու տնտեսական կարելիութիւնները օր
ըստ օրէ կը տկարանան:

Ցաւալի է, շատ ցաւալի, որ ներկայ յուսահատական պայմաննե-
րուն մէջ ապրող, իր Մայր հայրենիքին կարօտը քաշող հայ ժողո-
վուրդը չկարենայ իր ազատ եւ անկախ Հայրենիքը վերադառնալ ու
չքնաղ Արարատը տեսնելով ապրիլ:

Եթէ մեր Հայրենի ղեկավարները, այդպէս մը գործեն որ աշխա-
տատեղեր բացուին եւ մեր աշխատասէր ժողովուրդը, փոխանակ
Ռուսաստանի մէջ գործ փնտռելու իր հայրենիքին մէջ գործ գտնէր ու
իր երկիրը շէնցնէր, հայ ժողովուրդը Հայաստան կը վերադառնար եւ
կը հզօրացնէր մեր պետութիւնը:

Եւ Մերձաւոր ու Միջին Արեւելքի ցեղասպանութենէն ու արքորէն
ճողոպրած մեր բազմաչարչար ժողովուրդն ալ եթէ կարենար գործ
գտնել իր պապենական հողին վրայ, աւելի եւս կը զարգանար ու կը
հզօրանար մեր Հայրենիքը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԻՐԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎԻՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՍԵՐՉԵՅ ՄԱՏԹԵՈՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում ենք ներկայացրէք Իրանի Հայ Աւետարանական համայնքը:

- Հայ Աւետարանական Համայնքի հարիւրամեայ յոբելեանը տօնակատարելու–համար նկատի առնւեց 1876 թականը (քանի որ Թեհրանի Հայ Աւետարանական եկեղեցին այդ թականին հիմնւեց) եւ այսօր 2013 թականին Հայ Աւետարանական համայնքը 137 տարի պատմութիւն ունի Իրանում: Դաւանանքով Բարեկարգեալ եկեղեցիների համոզումներն ունի:

- Ներկայումս որքա՞ն է հաշվում Իրանում Հայ Աւետարանական եկեղեցու հետետորդների թիւը, ո՞ր քաղաքներում են նրանք բնակւում:

1974 թին Թեհրանի «Ս. Յովհաննէս» եկեղեցին ունէր 200 հաղորդ անդամ, սովորական օրերին ներկայ անդամները 30-60 հոգի, իսկ տօն օրերին 300-350 հոգի: Ներգաղտի եւ արտագաղտի պատճառով, որը դեռ շարունակւում է, գիւղերի եկեղեցիները չկան, իսկ քաղաքների Արաք (Աուլթանաբադ) եկեղեցին յաճախող չկայ: Թեհրանի «Ս. Յովհաննէս» եկեղեցին կենտրոնում է և այժմ որպէս կենտրոնի եկեղեցի ունի 240 հաղորդ անդամ, իսկ Ս. Յովհաննէս» եկեղեցու հովանաւորութեան տակ կայ երկու մասնաճիւղեր հայաբնակ թաղերում Հայ Աւետ. «Հոգեշունչ» եկեղեցի յաճախող 15-25 անդամ և «Շնորհալի» եկեղեցին յաճախող 25-30 անգամ:

- Թեհրանում Հայ Աւետարանական եկեղեցին ի՞նչ կառոյցներ ունի (դպրոցներ, ժողովարաններ, միութիւններ եւ այլն):

- Հայ Աւետարանական եկեղեցին կառավարւում է Հովիւներով, Քարոզիչներով, Երիցականի, Կանանց միութեան, Սարկաւագների, Չոյկերի, Երիտասարդաց, Պատանեաց և Կիրակնօրեայ ուսուցիչ-ուհիների կազմերով, ովքեր անձնուրացաբար ծառայում են եկեղեցու հոգեւոր և ազգային ծրագրերը իրականացնելու:

- Հայ Աւետարանական եկեղեցին ունի Աստուածաբանական դա-

սարաններ «Մեսրոպեան Գոհար» դպրոցը «Ա. Յովհաննէս» եկեղեցուն կից ունի 60 տարւայ գործունէութեան անցեալ:

Դպրոցի աւելի քան 60 ամեակի յոբելեանը մեծ շուքով տօնուեց (նոյեմբեր 2009 թ.): Հրաւիրուած էին թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Սեպուհ Արք. Սարգսեանը և Իրանի Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Գերապայծառ Տէր Նշան Արք. Կարաքէհէեանը, Իրանի Իսլամական խորհրդարանում իրանահայութեան Պատգամաւորները, ազգային և մշակութային պաշտօնեաները, թեհրանի հանգստեան կոչւած տեսուչ-ուիհներ և ներկայ ուսուցիչ-ուիհներ: Դպրոցի կրթական մակարդակը շատ գոհացուցիչ է և կառավարվում է Հայ տեսչի և փոխտեսչի միջոցով և ունի պետական ուսուցիչներ:

- Հայ Աւետարանական եկեղեցին ամէն կերպ սատարում է դպրոցին: Արտագաղթի հետեւանքով ուսանողների թիւը շատ է պակսել, բայց դպրոցը գոյատևում է կրթելու մատաղ սերնդին:

- Մեր օրերում ինչպիսի՞ն են Իրանում Աւետարանական եկեղեցու յարաբերութիւնները պետութեան հետ:

- Մինչ այժմ Աւետարանական եկեղեցիների և «Գոհար» դպրոցի յարաբերութիւնները պետութեան հետ լաւ է ընթացել:

- Հայ Աւետարանական համայնքում ի՞նչ մակարդակում է եղել ազգային ինքնութիւնը եւ ինչպէ՞ս է այսօր:

- Հայ Աւետարանական համայնքում ազգային ինքնութիւնը շատ յարգւած է և փոխ-յարաբերութիւն կայ ազգային և մշակութային բոլոր կազմակերպութիւնների հետ:

- Ո՞րպէս Հայ գոյատեւելու ի՞նչ խնդիրներ ունէք:

- Քանի դեռ արտագաղթը շարունակւում է և հայերի թիւը պակասում է բնականաբար կայ մտահոգութիւն՝ կալւածների կորստի, ֆինանսական ծանր վիճակ և մտահոգութիւն գոյատեւելու մեր եկեղեցիները եւ ազգային կենտրոնները:

- Աւետարանական եկեղեցու քարոզներն ի՞նչ լեզուով է անցկացւում:

- Հայ Աւետարանական եկեղեցու պաշտամունքներն ու քարոզները հայերէն լեզուով են:

- Ազգային ինքնութեան ո՞ր բաղադրիչն է, որ աւելի առաջնային է, ազգայինը, թէ դաւանականը:

- Ազգային և դաւանական բաղադրիչներ հաւասար կերպով են ընթանում:

- Ինչպէ՞ս են Աւետարանական համայնքի եւ հայկական միւս համայնքների հարաբերութիւնները: Գոյութիւն ունի՞ համագործակցութիւն:

- Փոխադարձ յարգանք և լաւ յարաբերութիւն և համագործակցութիւն կայ Առաքելական, Կաթողիկէ և Աւետարանական համայնքների միջև:

Նոյեմբեր 2006-ից Առաքելական Եկեղեցու Առաջնորդ՝ Գերաշնորհ Տէր Սեպուհ Արք. Աարգսեանի հովանաւորութեամբ և Իրանի Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Գերապայծառ Տէր Նշան Արք. Կարաբէհէեանի հիւրընկալութեամբ և մասնակցութեամբ Հայ Աւետարանական Եկեղեցու Հովիւ Վեր. Սերգէյ Շահվերդեանի տարին մէկ անգամ Միջեկեղեցական մէկ շարաթեայ սեմինար է տեղի ունենում Առաքելական, Կաթողիկէ և Հայ Աւետարանական եկեղեցիների Կիրակնօրեայ դասարանների ուսուցիչ-ուիհիների մասնակցութեամբ: Ազգային տօներին միասնական մասնակցութիւն:

Կազմակերպոււմ է մէկ օրեայ համագումարներ Երիտասարդների և պատանիների և-կիրակնօրեայ երեխաների «Ակունք» Կենտրոնի (մարմնամտային խանգարումներով երեխաների կենտրոն) աշակերտների մասնակցութեամբ:

Միջեկեղեցական Հրատարակչութեամբ համագործակցում են Առաքելական և Կաթողիկէ և Աւետարանական եկեղեցիները:

- Արդեօք Հայ Աւետարանականներն իրենց ընկալում ե՞ն որպէս Իրանահայ համայնքի բաղադրիչ, ինչպէ՞ս են ընկալում միւս համայնքները նրանց:

- Այո: Մանաւանդ այս վերջին ութ տարիներին աւելի շատ է նշմարուում համայնքների մտերմութիւնը և համագործակցութիւնը հայ համայնքի կրօնական և ազգային և հասարակական միջոցառումներին:

- Աւետարանականների նկատմամբ որեւէ վերապահ վերաբերմունք կայ՞ հայկական շրջաններում:

- Ոչ: (Վերոյիշեալ կէտերը, փաստն է անվերապահ վերաբերմունքի):

- Իրանի Հայ Աւետարանականները Հայաստանի հետ կապեր ունե՞ն:

- Աւելի քան 12 տարի է, որ Իրանի և Հայաստանի համայնքների միջև կայ համագործակցութիւն: Մեր համայնքի մի քանի բարերար անդամների նւիրատութեամբ մինչև 2008-ի վերջը 5 կարիքաւոր սաներին կրթաթօշակ է տրամադրուել: Հայաստանի Աւետարանական Եկեղեցու երիտասարդները մասնակցել են մեր համագումարներին:

- Ինչպէ՞ս էք տեսնում իրանահայ համայնքի հեռանկարը եւ ի՞նչ դժուարութիւններ կան ազգայինը պահելու համար:

- Իրանահայութեան համայնքը շատ յարգւած է մուսուլման և այլ կրօնների փոքրամասնութիւնների կողմից, լաւ հեռանկար կարելի է սպասել իրանահայ համայնքի ազգայինը պահելու համար եթէ կանխւէր արտագաղթը:

- Ինչպիսի՞ն են Հայ Աւետարանական եկեղեցու առնչութիւնները Հայ Առաքելական եկեղեցու հետ:

- Շատ լաւ: Փաստը՝ վերոյիշեալ միասնական միջեկեղեցական ծրագրերը:

- Հայ Աւետարանական Եկեղեցու հետեւորդների մէջ արդեօք կան պարսկախօս հայեր:

- Ոչ:

- Արդեօք Հայ Աւետարանական եկեղեցու հետեւորդների մէջ կայ որեւէ հատւած, որն անտարբեր է ազգային իրողութիւնների նկատմամբ եւ իրեն հեռու է պահում ազգային կեանքից:

- Ոչ:

- Ինչպէ՞ս էք տեսնում Մերձաւոր ու Միջին Արեւելքում Հայ համայնքների հեռանկարը 21-րդ դարին բնորոշ իրողութիւնների համատեքստում:

- Աղօթում ենք առ Աստուած, որ Մերձաւոր ու Միջին Արեւելքում

հարթի բոլոր դժվարությունները, որ Հայ համայնքները միւս համայնքների ընկերակցութեամբ կերտեն խաղաղ կեանք 21-րդ դարին բնորոշող իրողութիւնների համատեքստում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայերն Իրանում ապրել են դեռևս խորը հնությունից սկսած: Սակայն Իրանի հայ համայնքը կազմակերպչորեն ձևավորվել է դեռևս XVII դարում և չորս հարյուրամյակից ավել շարունակում է իր գոյությունը: Այն հայկական սփյուռքի ավանդական և կայացած համայնքներից մեկն է: Ունի զգալի մարդկային և ֆինանսական ներուժ և տարաբնույթ կառույցներ: Համայնքն աչքի է ընկնում հայկական ինքնության պահպանման բարձր մակարդակով:

- Ներկայումս պաշտոնական վիճակագրություն Իրանում հայերի թվի մասին գոյություն չունի: Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ նրանց թիվը հասնում է հազիվ 50 հազար մարդու: Հայերի ջախջախիչ մեծամասնությունը ապրում է Թեհրանում: Իրանում հայերը քաղաքաբնակներ են, գյուղական հայ բնակչություն այլևս համարյա գոյություն չունի:

- Իրանում ոչ մահմեդականները՝ հայերը, ասորիները, հրեաները և զրադաշտականները համարվում են ոչ թե ազգային, այլ կրոնական փոքրամասնություններ:

- Իրանահայ համայնքը կազմված է սոցիալական և դավանական տարբեր շերտերից: Հիմնական հատվածը հայ առաքելականներն են, կան նաև հայ կաթոլիկներ և հայ ավետարանականներ: Համայնքում արդյունավետ կերպով գործում են Սփյուռքի կրոնական և ազգային կառույցները: Համայնքի ներսում դավանական տարբեր հատվածների միջև առկա է սերտ համագործակցություն, ինչը չի կարելի ասել գաղափարական տարբեր հատվածների մասին:

- Իրանում ինքնության պահպանման և ազգային դաստիարակության գործում բացառիկ դեր են կատարում հայ եկեղեցին, ազգային իշխանությունները և միությունները, ինչպես նաև հայրենիքի գաղափարը, կապը Հայաստանի հետ:

Իրանում երիտասարդության հայեցի դաստիարակության և առհասարակ հայապահպանման գործում զգալի է նաև ծնողների և առհասարակ ընտանիքի դերը:

- Իրանահայ համայնքը կարելի է համարել լայնորեն ճյուղավորված ցանցային կառույց. յուրաքանչյուր միություն կամ կազմակերպություն ունի իր մասնաճյուղը երկրի տարբեր քաղաքներում, որի հետևանքով բոլոր շրջանակները կապված են միմյանց հետ:

- Հայերն Իրանում հաճախում են հայկական դպրոցներ, որտեղ ուսուցման լեզուն պարսկերենն է: Միայն սահմանափակ թվով ժամեր են տրամադրված հայոց լեզվին, որն անցնում են որպես ծիսական լեզու և կրոնին:

- Իրանում հայերի շրջանում խառն ամուսնություններ գրեթե չկան: Համայնքը հայախոս է, խոսում են արևելահայերենով: Հայերն Իրանում աչքի են ընկնում ազգային ինքնության բարձր գիտակցությամբ:

- Համայնքում կան շերտեր, որոնք կամ ներգրավված չեն համայնքային կյանքում, կամ քիչ են ներգրավված, և դա ոչ թե այն պատճառով, որ հետաքրքրված չեն ազգային իրողություններով կամ անտարբեր են այդ իրողությունների նկատմամբ, այլ այն պատճառով, որ չնայած ունեն հայկական դիմագիծ, սակայն դժգոհ են ազգային իշխանությունների աշխատառձից ու գործունեությունից, թեմական ընտրություններում առողջ մրցակցության բացակայության փաստից և առհասարակ համայնքի ղեկավարման մեթոդներից: Սովորաբար մարդկանց այդ շերտը պասիվ մասնակցություն է ունենում ազգային իշխանությունների ընտրություններին:

- Իրանում թե՛ իշխանությունների և թե՛ հասարակության վերաբերմունքը հայերի նկատմամբ հարգալից է: Վերջիններս հայտնի են իրենց պարկեշտությամբ և աշխատասիրությամբ, նրանք վստահություն են վայելում, հավատարիմ են այդ երկրին ու կառավարությանը: Հայերը հանդիսանում են այդ

բազմազգ, բազմակրոն և բազմալեզու երկրի բաղադրիչը: Թե՛ հայերը և թե՛ իրանցիները միմյանց համարժեք են ընկալում: Մեծ է հայերի ներդրած լուսան Իրանի տնտեսական կյանքում: Նրանք ներգրավված են այդ երկրի սոցիալ-տնտեսական ու մշակութային համակարգում:

- Հայերն Իրանում թեև պաշտոնապես դիտարկվում են որպես երկրի կրոնական փոքրամասնություն, սակայն նրանք իրավունք ունեն մասնակցելու երկրի համապետական ընտրություններին, ձեռք բերելու սեփականություն և օգտվում են սահմանադրական այլ իրավունքներից:

- Հայերն ինտեգրված են իրանական հասարակությամբ: Իրանական իշխանությունները հայերին ճանաչում են որպես առանձին համայնք և որպես կրոնական փոքրամասնություն և ըստ այնմ թույլատրում են ծավալել ազգային գործունեություն: Հայ համայնքի և կառավարության հարաբերությունները թեև սահմանափակ են, բայց և համագործակցային են:

- Իրանի հայ համայնքն ունի իր եկեղեցական թեմերը, եկեղեցիները: Եկեղեցին պետության առջև ճանաչվում է որպես համայնքի ներկայացուցիչ և պատասխանատու:

- Իրանի հայ համայնքի օրակարգն անքակտելիորեն կապված է Սփյուռքի օրակարգի հետ, որտեղ կարևոր տեղ ունեն Հայ դատի և հայոց ցեղասպանության հարցերը: Իրանահայերը որոշակի ազատություններ ունեն նշված հարցերին անդրադառնալու առումով: Սակայն այդ օրակարգի նկատմամբ պետության մոտեցումն առանձին դեպքերում պայմանավորված է թուրք-իրանական հարաբերություններում նկատվող զիզգազներով:

- Ներկայումս իրանահայ համայնքի առջև կանգնած ամենամեծ մարտահրավերը երկրի քաղաքական և տնտեսական անկայությամբ, տարածաշրջանում ստեղծված լարված իրավիճակով պայմանավորված արտագաղթն է: Մտավախություն կա, որ այն դեռ կշարունակվի: Այս իրողությունն ա-

ռաջիկա տարիներին լրջագույն վնաս կարող է հասցնել համայնքի թվաքանակին՝ սպառնալիքի տակ դնելով Իրանում հայերի հեռանկարը: Բարեբախտաբար արտագաղթի մի շոշափելի հոսք ուղղված է դեպի Հայաստան, որտեղ զգալի թվով հայեր ձեռք են բերում բնակարան և մշտական բնակություն հաստատում հայրենիքում: Այլ կերպ ասած, տեղի է ունենում փոքր մասշտաբներով ներգաղթ:

- Հայաստանի Հանրապետության և ԻԻՀ միջև առկա է սերտ միջպետական համագործակցություն, որն ընդգրկում է բավականին ծավալուն ոլորտներ: Իրանի հետ ՀՀ հարաբերությունների սերտացման գործում զգալի դերակատարություն ունի այդ երկրի հայ համայնքը, որը կամրջող դեր է կատարում այդ հարաբերություններում:

- ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության և այդ երկրի հայ համայնքի միջև բոլոր մակարդակներում առկա է ներդաշնակ, սերտ և մտերմիկ գործակցություն: Դեսպանության և համայնքի միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:

- Առկա փաստերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ազգապահպանության հարցը Իրանի հայ համայնքում վտանգված չէ և մտահոգության տեղիք չի տալիս: Սակայն համայնքի ապագային, գուցե և նրա գոյությանը սպառնացող ամենալուրջ վտանգը արտագաղթն է այլ երկրներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նկատի ունենալով, որ ներկա պայմաններում իրանահայության արտագաղթը իրողություն է և տեսանելի ապագայի շրջանակներում այն շարունակվելու է, նպատակահարմար է, որ ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կյանքի կոչված «Արի տուն» ծրագրի շրջանակներում իրանահայության ներգաղթը Հայաստան աշխուժացնելու և քաջալերելու համար Հայաստանի կառավարությունը մշակի Իրանից ներգաղթող հայերի կեցությունը դյուրացնող օրենքներ, այդ թվում՝ նրանց քաղաքացիություն ձեռք բերելու, որոշ ժամանակ հարկերից ազատելու, սեփականություն գնելու, կրթության արտոնյալ պայմաններ տրամադրելու և այլ բնագավառներում: Չափազանց շահեկան կլինի Հայաստան ներգաղթող հայրենակիցների համար կազմակերպել անվճար մասնագիտական վերապատրաստում անցնելու կամ մասնագիտությունը փոխելու դասընթացներ, մի հանգամանք, որը լայն չափերով կիրառվում է եվրոպական երկրներում:

- Հույժ կարևոր է, որ Հայաստանը աջակցի Իրանի հայկական դպրոցների կրթական համակարգը կատարելագործելուն: Խոսքն առաջին հերթին մեթոդաբանական օգնության, Հայաստանում ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման, համապատասխան ուսուցողական գրականության տրամադրման մասին է: Իրանի հայկական դպրոցների աշակերտությունը կարիք ունի նաև հայ գրականության, հայոց լեզվի, հայոց պատմության, հայ եկեղեցու պատմության վերաբերյալ դասագրքերի ու ձեռնարկների արևելահայերենով, ինչպես նաև հայ դասական գրողների ստեղծագործությունների:

- Անհրաժեշտ է, որ մշակվեն տարբեր ծրագրեր (այդ թվում՝ հեռուստատեսային հաղորդումների, ռադիոձայնասփռ-

ման, ինչպես նաև ինտերնետային ցանցային կամ ուսուցման հեռավար ծրագրեր) հատուկ իրանահայերի համար, ինչպես նաև հանրագիտարանային էլեկտրոնային ռեսուրսներ Հայաստանի, հայության, հայ մշակութային և այլ իրողությունների վերաբերյալ, ինչը մեծ հետաքրքրությամբ կընդունվի ողջ իրանահայության, հատկապես երիտասարդության կողմից: Թե՛ ֆինանսական և թե՛ մարդկային ռեսուրսի առումով այս խնդրին կարող են աջակցել իրանահայերը:

- Նպատակահարմար է, որ Հայաստանում պարբերաբար կազմակերպվեն տարբեր ոլորտներին առնչվող միջոցառումներ, սկաուրների բանակումներ, ուսանողների հանդիպումներ, երիտասարդական հավաքներ, մարզական զանազան միջոցառումներ, լեզվի ուսուցման խմբեր, ստեղծվեն նույն մասնագիտությունները ներկայացնող մարդկանց միություններ և այլն:

- Չափազանց շահեկան կլինի նաև կազմակերպել Հայաստան ներգաղթող իրանահայերի բժշկական ապահովագրության գործը, ինչպես նաև հատուկ դասընթացների միջոցով նրանց Հայաստանի օրենսդրության հետ ծանոթացնել:

- Արդյունավետ կլինի անց կացնել Մերձավոր ու Միջին Արևելքի հայ համայնքների վերաբերյալ գիտագործնական հանդիպումներ ու քննարկումներ՝ դրանց հրավիրելով նաև իրանահայերին:

- Շահեկան կլինի, եթե Հայաստանի հեռուստատեսային ալիքները պարբերաբար հաղորդումներ կազմակերպեն Իրանի հայ համայնքի և առհասարակ ազգային կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ: Այդ ճանապարհով վերջինիս կապը Հայաստանի հետ անկասկած կուժեղանա և առհասարակ նոր լիցքեր կհաղորդվի Սփյուռքի հայ համայնքներին: Դա նաև կնպաստի Հայաստանում սփյուռքի հիմնախնդիրների ավելի ճիշտ ընկալմանը:

ЗАКЛЮЧЕНИЕ

- Армяне проживали в Иране с древнейших времен. Однако армянская община Ирана, одна из традиционных и устоявшихся общин армянской диаспоры, организационно была оформлена еще в XVII веке и более чем четыре столетия продолжает свое существование. Община обладает существенным человеческим и финансовым потенциалом, различными структурами, а также включает в себя различные идеологические и социальные слои. Община отличается высокой армянской самоидентичностью.

- В настоящее время о численности армян в Иране не существуют официальных статистических данных. Согласно неофициальным сведениям, их число не превышает 50 тысяч человек. Подавляющее большинство армян проживает в Тегеране. Армяне в Иране в основном городские жители, сельское население в настоящее время почти не существует.

- В Иране армяне, ассирийцы, евреи и зороастрийцы, т.е. народы не исповедующие мусульманскую религию, считаются не национальными, а религиозными меньшинствами.

- Армянская община Ирана состоит из различных социальных и религиозных слоев. Ее основная часть это приверженцы армянской Апостольской церкви, однако имеются также армянские католики и евангелисты. В общине эффективно функционируют различные религиозные и национальные учреждения Диаспоры. Конфессиональные слои внутри армянской общины тесно сотрудничают, между тем сотрудничество между идеологическими слоями отличается слабостью.

- В вопросе сохранения самоидентичности и национального воспитания исключительную роль играют армянская церковь, различные союзы и образовательные учреждения, идея родины и связь с Арменией. В деле воспитания армянской молодежи в духе патриотизма и преданности своей нации и сохранения национальной идентичности существенна роль родителей и семьи в целом.

- Армянскую общину Ирана можно считать широко разветвленной сетевой организацией, где каждое объединение, организация или союз имеет свое ответвление в разных городах Ирана. При такой структуре, естественно, что все звенья связаны друг с другом.

- Дети армянской общины Ирана посещают армянские школы, где преподавание ведется на персидском языке. Армянскому языку и религии предоставляется ограниченное число часов, при этом армянский язык преподается как язык религии.

- В Иране, среди армян смешанных браков почти не существует. Члены общины говорят на армянском языке (на восточно армянском языке). Армяне в Иране выделяются высоким уровнем самосознания и самоидентичности.

- В общине существуют слои, которые либо не вовлечены в деятельность общины, либо вовлечены слабо. И это не по той причине, что они безразличны или индеферентны по отношению к национальным процессам, а преимущественно по той причине, что недовольны деятельностью национальных институтов власти, прозрачностью выборов членов епархии и вообще, по их мнению, не эффективной системой управления делами общины. Обычно указанные слои членов общины принимают пассивное участие в выборах национальных властей. По этой причине в последнее время члены общины проявляют низкий интерес к выборам

органов местного самоуправления.

- В Иране отношение к армянам как со стороны властей, так и общества основывается на уважении и толерантности. Армяне выделяются своей скромностью, благопристойностью, правдивостью и трудолюбием. Они преданы этой стране и ее властям и пользуются их доверием. Армяне являются важной частью многонационального и многоязычного общества этой страны. Весьма значительна их роль в экономической жизни Ирана. Они широко вовлечены в социально-экономическую и культурную структуру этой страны.

- Хотя официальный статус армян – религиозное меньшинство, а не полноправный гражданин, однако они пользуются правом принимать участие в общегосударственных выборах, правом собственности и т. д. Конституция им предоставляет определенные права и привилегии. Местные власти воспринимают армян как определенную религиозно-конфессиональную единицу (общину). Этот статус позволяет им осуществлять самостоятельную национальную деятельность. Соответственно, отношения между армянской общиной и местными властями хотя и ограничены, однако в то же время выливаются в тесное сотрудничество. Следует также отметить, что армяне в Иране интегрированы в иранское общество.

- Армянская община разделена на церковные епархии. Церковь воспринимается как представитель и полномочный орган общины.

- Повседневная деятельность армянской общины Ирана нераздельно связана с деятельностью диаспоры, где важное место занимают Армянский вопрос и феномен геноцида армян. В этом смысле, иранские армяне всегда пользовались значительными свободами. Однако, подход госу-

дарства относительно указанной деятельности, в отдельных случаях обуславливается турецко-иранскими межгосударственными отношениями.

- Сегодня имеются тесные межгосударственные отношения между Республикой Армения и Исламской Республикой Ирана, которые охватывают довольно широкие сферы сотрудничества. В вопросах сближения и тесного сотрудничества между РА и ИРИ важную роль играет армянская община Ирана, которая фактически выступает в качестве связывающего звена в данных отношениях.

- Между посольством РА в Иране с одной стороны, и армянской общиной с другой, существует тесное и гармоничное сотрудничество во всех сферах деятельности. Отношения между посольством и общиной основываются на взаимоуважении и сотрудничестве.

- Анализ вышеизложенных фактов позволяет заключить, что вопрос национального самосохранения армянской общины Ирана не подвержен опасности. Между тем будущему общины, может быть даже ее существованию, грозит серьезная опасность. Это эмиграция в различные страны.

CONCLUSIONS

- Armenians have lived in Iran since ancient times. However, the Armenian Community of Iran was organized in the XVII century, and has existed there for more than four hundred years. It is one of the traditional and established communities in Diaspora. The Community has its strong both human and financial potential, subdivisions and various organizational structures. It also includes various ideological and social stratum. The Community is distinguished for its high level of maintaining the Armenian identity.

- The Armenians are rigorous citizens of Iran, where they enjoy both governmental and social sympathy. The Iranians accept Armenians as full-right citizens. The Armenians are involved in both social-economic and cultural system of Iran. They consider Iran as their motherland.

- At present no official statistics on the number of Armenians living in Iran is available. According to non-official sources, the figure hardly reaches the 50.000 point. The overwhelming majority of Armenians live in Tehran. In Iran Armenians are urban citizens.

- The non-muslim population of Iran – Armenians, Assyrians, Jews and Zoroastrians are considered to be religious, not national minorities.

- The Armenian Community of Iran includes various social and religious stratum. The major part of the Community consists of adherents of the Apostolic Church, though there are also Armenian Catholics and Evangelists in it. The religious and national structures of the Diaspora function efficiently in the Community. Within the Community the diverse religious groupings live in close cooperation – something that cannot be

said about different ideological factions.

- In Iran, in the course of maintaining the national identity, exceptional is the role of the Armenian Church, national authorities and associations, as well as the concept of the Motherland and the ties with Armenia. The role of parents, and, generally, the role of the Armenian family upbringing is great in the patriotic education of youth and, on the whole, in the Cause of preservation of Armenians in Iran.

- The Armenian Community of Iran can be considered as a structure with a widespread network: every association or organization has its branches in different cities of the country, due to which all the circles are interconnected.

- Armenians in Iran attend Armenian schools, where the language of instruction is Persian (Farsi). Only a limited number of hours is allocated to the Armenian language, which is taught as a language of the parish and religion.

- There are almost no mixed marriages among Armenians in Iran. The Community speaks Armenian – the Eastern Armenian language. Armenians in Iran are distinguished with a high level of national identity awareness.

- Within the Community there is a set of people, who are either not involved in the Community life or take very little participation in it. However, it is not because they are not interested in the national realities or are indifferent to them, but because, despite of their national traits, they are discontented with the work style and activities of national authorities, the absence of healthy competition in the Parish Council elections, and, by and large, with the methods of the Community management. This category of people usually participates passively in the elections of national authorities.

- The attitude to Armenians of both the authorities of the country and the society is quite respectful in Iran. Armenians are

famous for their decency and hard work, they are trustworthy and loyal to that country and the government. Armenians constitute a part of that multinational, multi-religious and multilingual country. Both Armenians and Iranians perceive each other adequately. Great is the contribution of Armenians in the economic life of Iran. They are involved in the system of the socio-economic and cultural life of that country.

- Though Armenians in Iran are officially considered a religious minority, they have the right to participate in national elections, acquire property and enjoy other constitutional rights.

- Armenians are integrated in the Iranian society. The Iranian authorities recognize Armenians as a separate community and a religious minority, and, accordingly, allow them to engage in national activities. Although despite of the relations between the Armenian Community and the Government are restrained, they are collaborative.

- The Armenian Community of Iran has its dioceses and churches. The State recognizes the Church as the representative and responsible body of the Community.

- The agenda of the Armenian Community is inseparably associated with the agenda of the Armenian Diaspora, with the key issues of Hay Dat (The Armenian Case) and the Armenian Genocide. Iranian Armenians have certain liberties in referring to the above stated issues. Nonetheless, the state approach towards that agenda in certain cases is conditioned by the visible ups and downs in the Turkish-Iranian relations.

- At present, the Armenian Community of Iran faces the greatest challenge of emigration triggered by the political and economic instability of the country and the situation created in the region. There is growing apprehension that it will persist. This reality can cause serious damage to the number of the population of the Community in the coming years, endangering

the prospects of Armenians in Iran. Fortunately, a considerable flow of emigrants head for Armenia, where many of them purchase flats and settle permanently in the Motherland. To put it another way, a small-scale emigration is under way.

- There is a close interstate relationship between the Republic of Armenia and the IRI, that covers a wide range of areas. A considerable bridging role is attributed to the Armenian Community in bringing closer the relations between RA and IRI.

- The collaboration between RA Embassy in Iran and the Armenian Community is harmonious, close and cordial at all levels. The relations between the Embassy and the Community are based on mutual respect and cooperation.

- The analysis of the available facts allows us to assume that the issue of preserving the national identity in the Armenian Community of Iran is not endangered, and bears no grounds for concern. Still, the gravest danger to its future and, probably, its existence, poses the emigration to other countries.

ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հատ. Ա, 1964, հատ. Բ, 1967:
2. Ալպոյաձեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա-Գ, Կահիրէ, 1941, 1955, 1961:
3. Ահարոնյան Լ., Փոթորկոտ կյանքիս օրերը (հասարակական և քաղաքական հուշեր), գիրք ա և Բ, Թեհրան, 2010:
4. Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
5. Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, Երևան, 1927:
6. Աճեմյան Հ., Սուրբ Թադէի վանքը, Թեհրան, 1960:
7. Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:
8. Առաքելյան Հ., Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ, («Գեղունի», 1904, թիւ 1-10):
9. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան և ապագան, մասն Ա., Վիեննա, 1911:
10. Ամուրյան Ա., Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում, 1890-1918 թթ., Թեհրան, 1950:
11. Արտակ արքեպ. Մանուկյան, Թեհրանի հայկական եկեղեցիները, Թեհրան, 1976:
12. Բաղայան Գ., Իրան, հանրագիտարան, Երևան, 2011:
13. Բաղդասարյան Էդ. (Է. Գերմանիկ), Թեհրանահայ գաղութի պատմություն, Թեհրան, 2002:
14. Բաղդասարյան Էդ. (Է. Գերմանիկ), Իրանի Քյամարա

գավառի հայկական գաղթօջախի պատմություն, Թեհրան, 2002:

15. Բաղդասարյան Էդ. (Է. Գերմանիկ), Համառոտ ակնարկ իրանահայ համայնքի պատմության, Թեհրան, 2002:

16. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:

17. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999:

18. Բայբուրդյան Վ., Իրանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, Երևան, 1984:

19. Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Երևան, 1974:

20. Բայբուրդյան Վ., Նոր Զուղա, Երևան, 2007:

21. Բայբուրդյան Վ., Էջեր իրանահայության պատմությունից XIX դարում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXIV, Երևան, 2005:

22. Բայբուրդյան Վ., Նոր Զուղայի հայկական գաղութը և կաթուղի միսիոներների կազմակերպությունները, ԳԱ «Տեղեկագիր», հասարակ. գիտություններ, 1964, No 9:

23. Բայբուրդյան Վ., Նոր Զուղայի գաղթօջախը, Հայ ժողովրդի պատմություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., հատ. IV, Երևան, 1972:

24. Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996:

25. Բայբուրդյան Վ., Նոր Զուղայի վաճառականությունը և արևմտաեվրոպական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, No 3 (34):

26. Բայբուրդյան Վ., Իրանահայերի մասնակցությունը իրանաեվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (XVI-XVII դարեր), ԳԱ «Լրաբեր հասարակական

- գիտությունների», 1984, No 9:
27. Բայբուրդյան Վ., Կոզմոյան Ռ., Հայերն Իրանում, «Հայկ. սովետ. հանրագիտարան», հատ. 4:
 28. Բայբուրդյան Վ., Հայերը Թավրիզում, «Հայկ. սովետ. հանրագիտարան», հատ. 4:
 29. Բայբուրդյան Վ., Հայերը Թեհրանում, «Հայկ. սովետ. հանրագիտարան», հատ. 4:
 30. Բայբուրդյան Վ., Հայ գաղթավայրեր, «Հայկ. սովետ. հանրագիտարան», հատ. 6:
 31. Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, «Հայկ. սովետ. հանրագիտարան», հատ. 8:
 32. Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1988 թթ.: Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից: «Հայաստան-Իրան 20 տարի համագործակցության ճանապարհով» միջազգային գիտաժողովի նյութեր, 13 մարտի 2012 թ., Երևան, 2012:
 33. Գորոյան Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
 34. Գարեգին Եպիսկոպոս, Իրանը և հայությունը, Թեհրան, 1971:
 35. Եղգարյան Հ., Իրանի Չարմահալ գավառը, Թեհրան, 1963:
 36. Երեմյան Ա., Սպահանի Փերիա գավառը, Նոր Ջուղա, 1919:
 37. Էլմար Հ. (Հովսեփ Հովհաննիսյան), Եփրեմ, Թեհրան, 1964:
 38. Իրանահայ հանրագիտարան, կազմող ժանետ Տ. Լազարյան, Երևան, 2012:
 39. Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրություն (Հիմնական օրենք), Թեհրան, 2005:
 40. Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, հ. Ա, Պէյրուք, 1962:
 41. Հաճյան Հ., Հայ և պարսիկ բարեկամությունը, Թեհ-

րան, 1945:

42. Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:

43. Մարտիրոսյան Հ. Հ., Իրանահայ գաղութի պատմությունից (նորագույն շրջան), Հայկ. ՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. VIII, Իրան, Երևան, 1975:

44. Մարտիրոսյան Հ. », Հայերի տեղաբաշխումն Իրանում (դեմոգրաֆիկ տվյալներ), Հայկ. ՍՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտոր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. IV, Իրան, 1969:

45. Մինասյան Լ., Իրանի հայկական եկեղեցիները, Նոր Ջուղա, 1983:

46. Մինասյան Լ., Իրանահայ պարբերական մամուլը (1894-1994), Նոր Ջուղա, 1994:

47. Մինասյան Լ. Գ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971:

48. Մինասյան Լ. Գ., Պատմություն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս, 1971:

49. Մինասյան Լ., Սպահանի համալսարանի գրական բաժանմունքի հայերեն ճյուղը, Թեհրան, 1971 թ.:

50. «Նաիրի» տարեգիրք, Ա և Բ հատորներ, Թեհրան, 2005, 2008:

51. Նիւթեր ազգային պատմութեան համար: Երևելի հայկազունք ի Պարսկաստան, աշխատասիրութեամբ Գալուստ Շերմազանեանի, Ռոստով (Դոնի վրա), 1891:

52. Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Երևան, 1992:

53. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. Ա, Թեհրան, 1981:

54. Վարդան Ծ. վարդապետ Դեմիրճյան, Դիվան Ատրպատականի հայոց պատմության, Թավրիզ, 1966:

55. Տասնապետյան Հ., Պատմություն հայ հեղափոխա-

կան շարժման և Հայ Հեղափոխական Ռաշնակցության, Լիբանան, 2000:

56. Տեր-Հովհաննեսնց Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. 1-2, Նոր Ջուղա, 1880:

57. «Պարսկահայ տարեցոյց», 1927-1930:

58. Պատմութիւն Ատրպատականի հայոց թեմական կենտրոնական դպրոցի, Թեհրան, 1981:

59. Փահլևանյան Հ. Լ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989:

60. Ֆրանգյան Ե., Ատրպատական, Թիֆլիս, 1905:

61. Ուային Ի., Իրանյան-ե արմանի, (Իրանի հայերը), Թեհրան, 1970 (պարսկ. լեզվ.):

62. Арабаджян А. З., Армяне Ирана, Москва, 2002.

63. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVIII в. (Роль Новой Джульфы в ирано-западноевропейских политических и экономических связях), Ереван, 1969.

64. Байбуртян В. А., Посредническавя роль новоджульфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в., “Краткие сообщения Института Народов Азии АН СССР, Москва, 1964, No 7.

65. Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.

66. Baibourtian V., Participation of Iranian Armenians in World Trade in the 17th Century, Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, Paris, 2007.

67. Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911, published in United States of America by West View Press. Colorado and in the United Kingdom by West View Press, 2001.

68. Chaqueri C., Introduction to the Armenians in Iran: A

Historical Persual; The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1998.

69. George A. Bournoutian, Armenians in Nineteenth-Century Iran. The Armenians of Iran. The Paradoxical Role of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, edited by Cosroe Chaqueri, Harvard University Press, Cambridge Massachusetts, 1998.

70. Chougassian V., The Emergence of Armenian Diosece of New Julfa in the Seventeenth Century, University of Pensilvania, 1998.

71. John Carswell, New Julfa, The Armenian Churches and Other Buildings, Clarendon Press, Oxford, 1968.

72. Waterfield R., Christians in Persia, Assirians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973.

ԿԱՅՔԷՉԵՐ

1. <http://www.Lragir.am/armsrc/comments-Irahos33471.html>.
2. <http://iranahayer.com/>.
3. <http://www.bbc.co.uk/persian/iran/story/2005/04/0504061-cy-armenians.shtml>.
4. <http://www.ca-c.org/journal/15-1998/st10Petrosian.shtml>.
5. www.iranahayer.com. www.arir.org.
6. www.araratorg.org.
7. www.armprolacy.com.

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ
ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

VAHAN BAIBURTIAN

THE ARMENIAN COMMUNITY OF IRAN
ACTUAL ISSUES

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24/4